



ՀՀ-ՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԶԵԿՈՒՅՑ



Երևան, 2025

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից:

Զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ՝ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Հետազոտությունն իրականացրել են Աննա Մելիքյանը, Նինա Հակոբյանը, Արաքս Մելքոնյանը և Հասմիկ Հարությունյանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	6
I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ	7
1.1 Միջազգային իրավական դաշտը	7
1.2 Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները	9
1.3 Եվրոպական միության մոտեցումները	10
1.4 Գործող մոդելներ	13
II. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	16
2.1. ՀՀ-ում գործող բռնագրավման և բռնազանձման ընթացակարգերը	16
2.2. Օրենքի սահմանադրականությունը	26
2.3. Վենետիկի հանձնաժողովի կարծիքը	28
III. ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	30
3.1 Ուսումնասիրությունն հարուցելու հիմքը	30
3.2 Գործը քննող դատավորները, պատասխանատուները և երրորդ անձինք	34
3.3 Դատական նիստերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ	36
3.3.1 Տեղեկության հասանելիությունը	36
3.3.2 Նիստերի հետաձգման կամ չկայացման պատճառները	37
3.3.4 Այլ հարցեր	43
IV. ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ	47
4.1. Բռնազանձման ենթակա գույքը	47
4.2. Ուսումնասիրության և ուսումնասիրվող ժամկետը	58
4.3 Գործով պատշաճ հայցվոր չհանդիսանալը	64
4.4 Ոչ պատշաճ դատարան հանդիսանալը	67
4.5 Գործի քննությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդություններ	69
4.6 Հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդություններ	74
4.7 Ուսումնասիրության շրջանակներում չընդգրկված պատասխանողներ (սոր պատասխանող ներգրավելը)	91
4.8 Դատավորներին ինքնաբացարկ և բացարկ հայտնելը	95
4.9 Իրական շահառու և փոխկապակցված անձ հանդիսանալը	102
4.10 Ապացուցման պարտականությունը բաշխելը	104
4.11 Հայցային վաղեմությունը.	119
4.12 Երրորդ անձ ներգրավելու մասին միջնորդությունները	141
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	144

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1980-ական թվականների վերջից սկսած՝ ապօրինի ծագում ունեցող ակտիվների և գույքի վերադարձը միջազգային մակարդակով հանդիսանում է քաղաքական նախապատվություն, ինչը արտացոլվում է նաև մի շարք միջազգային փաստաթղթերում՝ ընդունված ինչպես Միացյալ ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ), այդպես էլ տարածաշրջանային մակարդակում՝ Եվրոպայի խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) և Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) կողմից: Դրանցում հստակ ամրագրվում է, որ կազմակերպված հանցավորությունը եկամուտ հետապնդող գործունեություն է, ուստի դրա դեմ պայքարելու հիմնական եղանակներից պետք է լինի այն ոչ եկամտաբեր դարձնելը՝ հանցավոր ճանապարհով ձեռքբերված օգուտները վայելելու հնարավորությունից զրկելը: Այսինքն՝ ոչ միայն անձանց քրեորեն հետապնդելը, այլ նաև հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավումը:

Հետագայում հանցավոր գործունեությունից ստացված ակտիվների բռնագրավման համատեքստում գործող սկզբունքները և մեխանիզմները տարածվել են նաև հանրային ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում գույքի բռնագրավման վրա:

Միջազգային կոնվենցիաներով ստանձնած հանձնառությունները անդամ պետությունները իրագործել և տեղայնացրել են տարբեր կերպ: Հաշվի առնելով քրեադատավարական ընթացակարգերի միջոցով հանցավոր ծագում ունեցող գույքը շրջանառությունից հանելու համատեքստում տարատեսակ մարտահրավերները՝ որոշ պետություններում ընդլայնվել է պայքարի գործիքակազմը՝ անցում անելով գուտ սովորական բռնագրավումից դեպի ընդլայնված բռնագրավում և անգամ քաղաքացիական ընթացակարգերի՝ բռնագանձելու ապօրինի (հանցավոր) ծագում ունեցող գույքը՝ անկախ դատապարտվելու փաստից: Պնդվում է, որ ի տարբերություն գուտ քրեական պատժի ենթարկելուն, քաղաքացիական ընթացակարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման միջոցով կանխարգելումն ավելի արդյունավետ է, քանի որ նվազեցնում է տնտեսական շահ ապահովող հանցագործությամբ եկամուտ ստանալու, գույք ձեռք բերելու գրավչությունը¹:

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ նաև՝ ՀՀ) ապօրինի ձեռք բերված գույքի վերադարձը 2018 թվականի իշխանափոխությունից հետո ձևավորված իշխանության հայտարարված հիմնական նպատակներից մեկն է եղել: Ընդ որում՝ նախապատվություն տրվել է ոչ թե քրեական հետապնդման, այլ գույքի վերադարձի միջոցով մեխանիզմներին:

¹ Technical paper. Civil Forfeiture (Confiscation In Rem): Explanatory & Impact Study, Council of Europe, May 2012, էջ 15, հասանելի է <https://rm.coe.int/16806ebc99>

«...կոռուպցիայի դեմ պայքարում մեր կարևորագույն խնդիրը ոչ թե բանտերը լցնելն է, այլ ձեզնից գողացված գումարները լուծա առ լուծա ժողովրդին և պետությանը վերադարձնելը»²:

2019 թվականի Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության հայտարարված առաջնահերթություններից էր «ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործուն կառուցակարգերի սահմանումը և ներդրումը, դրանց միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովումը: Այս առումով կարևորվում է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրումը»³: Ռազմավարությամբ նախատեսվել էին մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ մասնագիտացված կառույցների կամ ստորաբաժանումների ստեղծումը և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ընթացակարգի ներդրումը և համապատասխան օրենքի մշակումը⁴:

2020 թվականին «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին»⁵ ՀՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունելով՝ Հայաստանում ստեղծվել է հիմնականում առանց քրեական հանցագործության համար դատապարտման, իսկ որոշ դեպքերում՝ առանց քրեական հետապնդման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման լայն մեխանիզմ:

Օրենքի ընդունման հիմնավորման մեջ խոսք է գնում «հանցավոր ճանապարհով ստացված», «հանցավոր ծագում ունեցող», «կոռուպցիոն և այլ բնույթի հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտների», «անօրինական ճանապարհով ստացված» գույքի բռնագանձման առավել արդյունավետ մեխանիզմների անհրաժեշտության մասին, ի լրումն գործող քրեադատավարական և պետական շահերի պաշտպանության քաղաքացիական մեխանիզմների:

«Հիմք ընդունելով վերոնշյալը՝ պետք է փաստել, որ չնայած ՀՀ օրենսդրությամբ արդեն իսկ արգելված է հանցագործության կատարման արդյունքում կամ կատարման նպատակով գույքի ձեռքբերումը և օգտագործումը, այդպիսի գույքի բռնագանձման արդյունավետ օրենսդրական մեխանիզմները բացակայում են: Մինևույն ժամանակ, առանց մեղադրական դատավճռի գույքի ուսումնասիրման և բռնագանձման հնարավորությունը անհրաժեշտ է ՀՀ իրավական համակարգում՝ կանխելու

² «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի Ելույթը Պաշտոնավարման 100 Օրվան Նվիրված հանրահավաքին», 17.08.2018թ., <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/08/17/Nikol-Pashinyan-100-day-rally/>.

³ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման Հավելված N 1, էջ 35, https://www.gov.am/u_files/file/anti-korupcia/razmavarutyun-2019.pdf

⁴ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման Հավելված N 2, https://www.arlis.am/Annexes/6/2022_N1351hav.2.pdf

⁵ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին՝ ՀՀ օրենք, ընդունվել է 16.04.2020թ., ուժի մեջ է մտել՝ 23.05.2020թ.

համար ապօրինի ճանապարհով ստացված եկամուտների անխոչընդոտ օգտագործումը» (Օրենքի նախագծին կից հիմնավորում, կետ 15)

Որպես Օրենքի ընդունման նպատակ նշվել է միջազգային պայմանագրերով և միջազգային կառույցների խորհրդատվական բնույթի փաստաթղթերով առաջարկվող լավագույն չափանիշները հանցավոր ակտիվների շրջանառության դեմ պայքարի ոլորտում⁶: Մինևույն ժամանակ Օրենքում ամրագրված սահմանումները և կառուցակարգերը, ի տարբերություն Օրենքի ընդունման հիմնավորմանը, նույն որոշակիությունը չունեն, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի սահմանումը շեշտադրում է գույքի՝ օրենքով նախատեսված կարգով օրինական եկամուտներով չհիմնավորվելը, այլ ոչ թե հանցավոր գործունեության արդյունք լինելը:

Օրենքի ընդունման և կիրառման համատեքստում մտահոգություններ են հնչեցվել առ այն, որ նման ընթացակարգեր կարող են օգտագործվել քաղաքական նկատառումներից ելնելով և սեփականության վերաբաշխման նպատակով, եթե չուղեկցվեն պաշտպանության արդյունավետ երաշխիքներով: Նշված մտահոգություններից ելնելով՝ մի խումբ Ազգային ժողովի պատգամավորներ դիմել են Սահմանադրական դատարան՝ Օրենքի սահմանադրականության հարցը որոշելու պահանջով: Սահմանադրական դատարանի կողմից դիմումի քննությունը տևել է երեք տարուց ավելի, և ողջ ժամանակահատվածում Օրենքի կիրառելիությունը չի կասեցվել: 2021 թվականից Գլխավոր դատախազությունը՝ ի դեմս մասնագիտացված ստորաբաժանման՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազների սկսել է ապօրինի գույքի բռնագանձման պահանջով հայցեր հարուցել նախ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, իսկ արդեն Հակակոռուպցիոն դատարանի (այսուհետև՝ ՀԿԴ) գործելու պահից՝ 2022 թվականի օգոստոսից՝ Հակակոռուպցիոն դատարան⁷:

Հարկ է նշել, որ թե՛ Օրենքի ընդունման հիմնավորման մեջ, թե՛ Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից որպես ՀՀ-ում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրման անհրաժեշտություն նշվել է հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող միջազգային կոնվենցիաներով նախատեսված հանձնառությունների կատարման կարևորությունը⁸:

⁶ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենք և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր և կից հիմնավորում, հասանելի է <https://www.e-draft.am/projects/1931/about>

⁷ Ավելի մանրամասն տե՛ս 2021 թվականի հաշվետվություն, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_46_8560333547.pdf; 2022 թվականի հաշվետվություն, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_47_8560336077.pdf

⁸ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից հրապարակված 2020 թվականի աշխատանքների վերաբերյալ հաշվետվության, էջ 1, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_45_8560330027.pdf

Ուսումնասիրության նպատակն է գնահատել Օրենքում սահմանված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ գործընթացի համապատասխանությունը միջազգային չափանիշներին՝ դատական պրակտիկայի մշտադիտարկման և իրավական դաշտի համեմատական վերլուծության միջոցով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դատական նիստերի մշտադիտարկում և ակտերի ուսումնասիրություն

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերի մշտադիտարկում: Մշտադիտարկումն իրականացվել է 2023 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում: Դիտարկվել են պատահականության սկզբունքով ընտրված 26 քաղաքացիական գործով 99 նիստեր, ընդ որում՝ յուրաքանչյուր գործով դիտարկվել է մեկից մինչև 10 նիստ: Դիտարկվել են ինչպես նախնական, այնպես էլ դատաքննության փուլում գտնվող գործեր: Մշտադիտարկումն իրականացվել է վեց դիտորդի կողմից՝ հատուկ մշակված հարցաշարի հիման վրա:

Բացի այդ, ուսումնասիրվել են դիտարկվող 26 գործերով մինչև 2024 թվականի մայիսի 31-ը հրապարակված վերաբերելի դատական ակտերը: Քանի որ Դատարանը հիմնական սկզբունքային հարցերի վերաբերյալ դիրքորոշում է հայտնում միայն եզրափակիչ դատական ակտերում, իսկ մշտադիտարկման ընթացքում որևէ գործով նման ակտ չի կայացվել, լրացուցիչ ուսումնասիրվել են նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերով հրապարակված վճիռներ և Վերաքննիչ դատարանի որոշում՝ կայացված մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի «Ապօրինի գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ՀՀ սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ 16.04.2025թ. որոշումը:

Ներպետական օրենսդրության և միջազգային կարգավորումների ուսումնասիրություն

Բացի ներկայացվածը, իրականացվել է նաև ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության և միջազգային կոնվենցիաների, ՄԻԵԴ նախադեպերի, Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական կարծիքների և այլ պետությունների օրենսդրության համեմատական վերլուծություն:

Հարցումներ և հարցազրույցներ

Վերլուծվել են հարցումներին ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված պաշտոնական տվյալները, ինչպես նաև հրապարակված տարեկան հաշվետվություններում առկա տեղեկությունները:

իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ 347 դատավորների⁹ և փաստաբանների հետ¹⁰: Փորձագիտական հարցազրույցներին մասնակցելու երկու առաջարկ ուղղվել է նաև ՀՀ գլխավոր դատախազությանը, սակայն երկու դեպքում էլ գլխավոր դատախազությունը հրաժարվել է մասնակցել¹¹:

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

1.1 Միջազգային իրավական դաշտը

1988 թվականի ՄԱԿ Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին կոնվենցիայում¹² նախատեսվում է Կոնվենցիայում նշված հանցագործությունների կատարումից ստացված կամ ձեռք բերված եկամտի, գույքի և գործիքների կամ դրանց արժեքին համարժեք գումարի բռնագրավում, որը համապատասխան դեպքերում ներառում է նաև բռնագանձում (հոդված 1, կետ «գ»; հոդված 5): Ավելին՝ Կոնվենցիան նախատեսել է բռնագրավման ենթակա գույքի օրինական ծագումն ապացուցելու բեռի տեղափոխման հնարավորություն: Այն կիրառելի է այն չափով, որքանով այդպիսի միջոցը համապատասխանում է պետության ներպետական օրենսդրության սկզբունքներին և դատավարական ընթացակարգերին (հոդված 5 (7)):

Հաջորդիվ ընդունված՝ կազմակերպված հանցավորության¹³ կամ կոռուպցիայի դեմ պայքարի¹⁴ ոլորտները կարգավորող մի շարք միջազգային կոնվենցիաներով ամրագրվում են նույն սկզբունքները, այդ թվում՝ բռնագանձման ենթակա գույքի հանցագործության հետ կապը և մեղադրյալի վրա գույքի օրինական ծագումն ապացուցելու բեռի տեղափոխման հնարավորությունը, եթե դա համահունչ է այդ պետության իրավական համակարգերին: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայով ընդունելի է համարվում գործողության մեջ դնել առանց մեղադրական վճիռ կայացնելու հանցագործության հետ կապ ունեցող գույքի

⁹ Դատավորների հետ փորձագիտական հարցազրույցները իրականացվել են 2025 թ. հունվարի 7-ին և 8-ին: Այսուհետ տեքստում հարցված դատավորներին վերաբերող մեջբերումները նշված փորձագիտական հարցազրույցներից են:

¹⁰ Փաստաբանների հետ փորձագիտական հարցազրույցները իրականացվել են 2025 թ. հունվարի 24-ին: Այսուհետ տեքստում հարցված փաստաբաններին վերաբերող մեջբերումները նշված փորձագիտական հարցազրույցներից են:

¹¹ Մասնավորապես, գրավոր պատասխանում նշվել է. «ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ հարցազրույցի կազմակերպումը նպատակահարմար չէ»: ԻՊԱԼ կողմից ուղարկված Ե/146-23.12.2024, Ե15-21.01.2025 պատասխան գրություններ:

¹² ՄԱԿ Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին կոնվենցիա, ընդունվել է 20.12.1988թ., ուժի մեջ է մտել 12.12.1993թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=80574>

¹³ ՄԱԿ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա, ընդունվել է 13.12.1957թ., ուժի մեջ է մտել 29.09.2003թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75872>

¹⁴ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա, ընդունվել է 31.10.2003թ., ուժի մեջ է մտել 07.04.2007թ., <https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021>

բռնագրավման ընթացակարգ, երբ անձի նկատմամբ հնարավոր չէ քրեական հետապնդում իրականացնել վերջինիս մահվան, փախուստի, բացակայության կամ այլ հիմնավոր պատճառներով, եթե դա համադրելի է իրավական համակարգի հետ (հոդված 54):

2005 թվականի Եւ Չանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիան (Վարչավայի կոնվենցիա)¹⁵ կենտրոնանում է դատարանի վճռով որպես պատիժ կամ պատժամիջոց նշանակված բռնագրավման վրա, որը տարածվում է հանցագործությունից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված կամ ձեռք բերված ցանկացած տնտեսական շահի, այդ թվում՝ գույքի վրա: Մյուս կողմից՝ Կոնվենցիայով նախատեսվում է համագործակցություն հանցագործության հետ առնչվող գույքի բռնագրավմանը համարժեք՝ քրեական պատժամիջոցներ չհանդիսացող, բայց գույքից գրկման միջոցների կիրառման ոլորտում, եթե հաստատված լինի, որ այդ գույքը հանդիսանում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ հանցագործություն կատարելու գործիք (հոդված 23 (5)):

Ֆինանսական գործողությունների աշխատանքային խմբի (FATF) հանձնարարականներում նույնպես պետություններին խորհուրդ է տրվում հանցավոր ճանապարհով ստացված գույքը կամ հանցագործության կատարման համար օգտագործված գործիքների բռնագրավման մեխանիզմներ ներդնել, այդ թվում՝ առանց քրեական գործով մեղադրական դատավճռի, որոնք պետք է ուղեկցվեն համապատասխան արդյունավետ երաշխիքներով: Ապացուցման բեռի տեղափոխումն ընդունելի է, եթե դա չի հակասում ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներին¹⁶:

Ինչպես տեսնում ենք, Օրենքի ընդունման հիմնավորման մեջ նշված և Գլխավոր դատախազության կողմից վկայակոչված բոլոր միջազգային գործիքներում բռնագրավումը, այդ թվում՝ բռնագանձումը, ներառյալ՝ առանց մեղադրական վճռի, կիրառելի են հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամտի կամ հանցագործության գործիք հանդիսացած գույքի նկատմամբ: Իսկ գույքի ծագման օրինականությունն ապացուցելու բեռի տեղափոխումը մեղադրյալի (պատասխանողի) վրա ընդունելի է, եթե դա համապատասխանում է ներպետական օրենսդրությանը:

¹⁵ Չանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիա, ընդունվել է 16.05.2005թ., ուժի մեջ է մտել 01.10.2008թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75327>

¹⁶ Տե՛ս Չանձնարարականներ 4, 30, 31, 38, <https://www.fatf-gafi.org/content/dam/fatf-gafi/translations/Recommendations/FATF-40-Rec-2012-Armenian.pdf.coredownload.inline.pdf>

1.2 Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ) իր վճիռներում նույնպես անդրադարձել է ԵԽ անդամ պետություններում գործող գույքի բռնագրավման և բռնագանձման մեխանիզմներին և այդ մեխանիզմներով հետապնդվող նպատակի լույսի ներքո գնահատել է դրանց նյութական և դատավարական երաշխիքները:

Գույքի բռնագանձման առնչությամբ ՄԻԵԴ-ն ընդունում է, որ պետություններին տրված է հանրության շահերի և սեփականության իրավունքի պաշտպանության մեխանիզմներն ընտրելու լայն հայեցողություն¹⁷:

Նախ, ՄԻԵԴ-ն ընդունում է, որ գույքի բռնագանձումը սեփականության իրավունքի միջամտություն է, և որպեսզի միջամտությունը համապատասխանի ՄԻԵԴ-ի կողմից սահմանված պահանջներին, այն պետք է լինի օրինական¹⁸, իրավաչափ նպատակ հետապնդի՝ այն է հանրային շահի պաշտպանությունը¹⁹, իսկ միջամտությունը համաչափ լինի հետապնդվող նպատակին²⁰:

Հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը հանդիսանում է իրավաչափ հանրային շահ, որի հիման վրա հնարավոր է սահմանափակել սեփականության իրավունքը, իսկ իրավական գործողությունների միջոցով գումարի կամ ակտիվների բռնագանձումը հանցավորության դեմ պայքարն ապահովելու անհրաժեշտ և արդյունավետ միջոց է²¹: Մինչև նույն ժամանակ հանրության շահերի պաշտպանության և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև պետք է արդարացի հավասարակշռում ապահովվի²²: Ըստ ՄԻԵԴ-ի՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի ծագման օրինականությունը ապացուցելու բեռն ընկնում է պատասխանողի վրա²³, բայց պետք է ապահովվի արդյունավետ պաշտպանության միջոցի և համապատասխան երաշխիքների առկայությունը, այդ թվում՝ զենքերի հավասարության սկզբունքը²⁴:

Քաղաքացիական վարույթներով գույքի բռնագանձմանն իր կարծիքներում անդրադարձել է նաև *Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական*

¹⁷ Տե՛ս ECtHR, Gogitidze and Others v. Georgia, no. 36862/05, 12 May 2015, §§ 97 and 108; ECtHR, Yordanov and Others v. Bulgaria, nos. 265/17 and 26473/18, 26 September 2023, § 115.

¹⁸ Iatridis v. Greece [GC], 25 March 1999, § 58; Todorov and Others v. Bulgaria, 13 July 2021, § 183.

¹⁹ Տե՛ս Raimondo v. Italy, 22 February 1994, § 30.

²⁰ JGK Statyba Ltd and Guselnikovas v. Lithuania, 5 November 2013, §§ 118 և 144; Pendov v. Bulgaria, 26 March 2020, §§ 42 և 50; Todorov and Others v. Bulgaria, §§ 187 և 215.

²¹ Denisova and Moiseyeva v. Russia, 1 April 2010, § 58, Raimondo v. Italy, § 30; Silickienė v. Lithuania, 10 April 2012, § 65.

²² G.I.E.M. S.R.L. and Others v. Italy [GC], 28 June 2018; B.K.M. Lojistik Tasimacilik Ticaret Limited Sirketi v. Slovenia, 17 January 2017, §§ 47 և 52.

²³ Gogitidze and Others v. Georgia, § 97.

²⁴ Տե՛ս, օրինակ, G.I.E.M. S.R.L. and Others v. Italy [GC], §§ 290 և 301-302, Shorazova v. Malta, 3 March 2022, § 105.

հանձնաժողովը (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով կամ Հանձնաժողով)²⁵: Հանձնաժողովը գտել է, որ նման գործիքակազմի կիրառումն ընդունելի է ոչ միայն քրեական վարույթներով, այլ քաղաքացիական ընթացակարգով ևս, այդ թվում՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձումը: Հանձնաժողովը նույնպես ընդունելի է համարել քաղաքացիական ընթացակարգով բռնագանձման դեպքում գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, որի պարագայում ապացուցման բեռը տեղափոխվում է գույքի սեփականատիրոջ վրա, եթե «*գույքի սեփականատերը ունի այդ կանխավարկածը հերքելու և «անհասանելի ապացույցի» կամ բարեխիղճ ձեռքբերողի պաշտպանությունն առաջ քաշելու իրական հնարավորություն*»²⁶: Որպես ապացուցման կիրառելի չափանիշ Հանձնաժողովը մատնանշում է ոչ թե քրեական դատավարությանը բնորոշ «*ողջամիտ կասկածից վեր*», այլ քաղաքացիական վարույթին բնորոշ «*հավանականությունների հավասարակշռում*» չափանիշը²⁷:

Իր կարծիքներից մեկում, Հանձնաժողովը հստակ նշել է, որ հանցավոր ճանապարհով գույք ձեռք բերելը և այդ գույքը օգտագործելը կանխարգելելու և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Առաջին արձանագրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությունը հավասարակշռելու տեսանկյունից երկու գործոն հատկապես կարևոր են՝

- 1) բռնագանձման ենթակա գույքի և հանցագործության միջև շոշափելի կապի առկայությունը, և
- 2) հարստության օրինականության հետադարձ ստուգման համար նախատեսված ժամանակային սահմանափակումները²⁸:

Նշված սկզբունքները ավելի մանրամասն կքննարկվեն ստորև:

1.3 Եվրոպական միության մոտեցումները

Համանման սկզբունքներ ամրագրվել են նաև ԵՄ կողմից ընդունված փաստաթղթերում, որոնք թեև Հայաստանի համար պարտադիր իրավաբանական ուժ չունեն, այնուամենայնիվ, թույլ են տալիս ավելի լավ պատկերացնել ԵՄ անդամ պետություններում գործող ընթացակարգերը և սկզբունքները, այդ թվում՝

²⁵ St'u Venice Commission, CDL-AD(2010)010, Interim Opinion on the draft Act on forfeiture in favour of the State of illegally acquired assets of Bulgaria, 16.03.2010թ., [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)010-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)010-e)

²⁶ Venice Commission, CDL-AD(2022)048, Amicus curiae brief for the Constitutional Court of Armenia on certain questions relating to the law on the forfeiture of assets of illicit origin, 19.12.2022, § 61, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2022\)048-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2022)048-e)

²⁷ Venice Commission, CDL-AD(2022)048, § 26.

²⁸ Venice Commission, CDL-AD(2024)024, Urgent Opinion on the Draft Amendments to the Law on Seizure and Confiscation of Material Benefit Derived from Criminal Activity, Montenegro, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2024\)024-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)024-e)

պատկերացում կազմել ընդլայնված բռնագրավման և առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մոդելների մասին:

Այդպես, *Հանցավորությանն առնչվող կամ հանցագործության գործիք հանդիսացող եկամուտների և գույքի բռնագանձման մասին 2005 թվականի հոկտեմբերի շրջանակային որոշմամբ*²⁹ կարգավորվում է քրեական դատավարության շրջանակներում կայացված դատավճռի հիման վրա՝ որպես պատիժ կամ պատժամիջոց կիրառված բռնագրավման գործընթացը: Որոշմամբ ամրագրվում են սովորական և ընդլայնված բռնագրավման կանոնները, ինչպես նաև կազմակերպված հանցավորության մասնակցելու համար դատապարտված անձի գույքի օրինական ծագումն ապացուցելու պարտականությունը սահմանելու հնարավորություն: Ըստ այդմ՝ ընդլայնված բռնագրավման միջոցով թույլատրվում է բռնագրավել դատապարտված անձի գույքը՝ մասամբ կամ ամբողջությամբ, եթե դատարանը համարել է հաստատված, որ գույքը ստացվել է Որոշման մեջ նշված հանցագործության համար դատապարտվելուն նախորդող ժամանակահատվածում հանցավոր գործունեությունից, կամ եթե գույքի արժեքն անհամաչափ է դատապարտված անձի օրինական եկամուտներին, իսկ դատարանը հաստատված է համարել, որ այն ստացվել է հանցավոր գործունեությունից: Որոշմամբ ամրագրվում է անդամ պետությունների իրավունքը նշված գույքից զրկելու համար կիրառել ոչ քրեադատավարական ընթացակարգեր:

ԵՄ-ում հանցագործությամբ ստացված եկամուտների և գործիքների վրա արգելանք դնելու և բռնագրավման վերաբերյալ ԵՄ 2014 թվականի հանձնարարականը (դիրեկտիվ) (այսուհետ նաև՝ Հանձնարարական)³⁰ թեև հիմնականում կարգավորում է հանցագործության միջոցով ձեռք բերված եկամտի բռնագրավումը մեղադրական դատավճռի դեպքում, այնուամենայնիվ, նախատեսում է առանց մեղադրական դատավճռի բռնագանձման հնարավորություն այն դեպքերում, երբ դատապարտումը հնարավոր չէ, օրինակ՝ մեղադրյալի հիվանդության կամ վարույթ իրականացնող մարմնից թաքնվելու պատճառով, եթե գույքը որևէ կապ ունի հանցագործության հետ: Հատկանշական է, որ Հանձնարարականում պարզաբանվում է նաև, որ ընդլայնված բռնագրավման համար դատարանում պարտադիր չէ ապացուցել, որ այդ գույքը ձեռք է բերվել հանցավոր գործունեության արդյունքում, այլ բավարար է, որ դատարանը համոզվի, այդ թվում՝ հավանականությունների հավասարակշռման ստանդարտի հիման վրա կամ ողջամտորեն ենթադրի, որ զգալիորեն ավելի հավանական է, որ նշված գույքը ձեռք է բերվել հանցավոր, ոչ թե այլ գործունեությունից:

²⁹ Council Framework Decision 2005/212/JHA of 24 February 2005 on Confiscation of Crime-Related Proceeds, Instrumentalities and Property, https://eurlex.europa.eu/eli/dec_framw/2005/212/oj/eng

³⁰ Directive 2014/42/EU of the European Parliament and of the Council of 3 April 2014 on the freezing and confiscation of instrumentalities and proceeds of crime in the European Union, <https://eur-lex.europa.eu/eli/dir/2014/42/oj/eng>.

2024 թվականի Բռնագրավման և գույքի վերականգնման վերաբերյալ ԵՄ խորհրդարանի և խորհրդի հանձնարարական³¹ ընդլայնել է այն դեպքերի ցանկը, երբ թույլատրելի է առանց մեղադրական դատավճռի բռնագրավում, երբ դատապարտումն անհնար է կասկածյալի կամ մեղադրյալի հիվանդության, վարույթ իրականացնող մարմնից թաքնվելու կամ մահվան պատճառով, ինչպես նաև վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, եթե վաղեմության ժամկետը 15 տարուց պակաս է և լրացել է վարույթը նախաձեռնելուց հետո (հոդված 15): Նշվածը թույլատրելի է, եթե հիմնավորվում է, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում անձը կդատապարտվեր, իսկ բռնագրավման ենթակա գույքը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվել է հանցագործությունից:

Այս հանձնարարականը նաև նախատեսում է հանցավոր գործունեության հետ առնչվող չբացատրվող հարստացման դեպքում բռնագրավման հնարավորություն, եթե առկա են հստակ պայմաններ: Մասնավորապես՝

- ✓ եթե սովորական կամ ընդլայնված բռնագրավումը հնարավոր չէ.
- ✓ գույքը բացահայտվել է հանցագործության վերաբերյալ քննության շրջանակներում.
- ✓ եթե դատարանը համոզված է, որ նշված գույքը ստացվել է հանցավոր կազմակերպության շրջանակներում իրականացված այնպիսի հանցավոր գործունեությունից, որից կարելի է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանալ տնտեսական շահ:

Ինչպես տեսնում ենք, ԵՄ փաստաթղթերը գույքի բռնագանձման համար, այդ թվում՝ առանց մեղադրական դատավճռի, նույնպես պահանջում են կապը այդ գույքի ձեռքբերման և հանցավոր գործունեության միջև, անգամ չբացատրվող հարստության դեպքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ միջազգային մակարդակում հստակ ամրագրված են հետևյալ սկզբունքները՝

- առաջնահերթության կարգով՝ մեղադրական դատավճռի հիմքով բռնագրավում, այդ թվում՝ ընդլայնված.
- առանց մեղադրական դատավճռի բռնագանձումը միայն, եթե հնարավոր չէ անձին ներկայացնել դատարանի առաջ որոշակի պատճառներով, օրինակ՝ մեղադրյալի մահը կամ վարույթ իրականացնող մարմնից թաքնվելը, վաղեմության ժամկետի կամ համաներման կիրառումը և այլն, եթե նույնիսկ նման պատճառների բացակայության դեպքում հավանական է, որ անձը կդատապարտվեր.
- բռնագանձվող գույքի ուղղակի կամ անուղղակի (շոշափելի) կապը հանցավոր գործունեության կամ կոռուպցիայի հետ, այդ թվում՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձումը իրականացնելու դեպքում.

³¹ Directive (EU) 2024/1260 of the European Parliament and of the Council of 24 April 2024 on asset recovery and confiscation, <https://eur-lex.europa.eu/eli/dir/2024/1260/oj/eng>

- գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե առկա են արդար հավասարակշռում ապահովող երաշխիքներ, այդ թվում՝ ապացույցի անհասանելիության և գույքի օրինականության ապացուցման հետադարձության ժամկետի սահմանափակում.
- քաղաքացիական դատավարությանը բնորոշ (օրինակ՝ հավանականությունների հավասարակշռում ապացուցման ստանդարտ), այլ ոչ թե ողջամիտ կասկածից վեր ստանդարտ.
- չբացատրվող (անհիմն) հարստացման դեպքում առանց մեղադրական դատավճռի բռնագանձման թույլատրելիությունը որոշակի դեպքերում, օրինակ՝ հանցավոր կազմակերպության հանցավոր գործունեության հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված լինելու դեպքում, եթե սովորական կամ ընդլայնված բռնագրավումը հնարավոր չէ.
- օրինական եկամուտների և գույքի արժեքի միջև էական անհամապատասխանությունը՝ որպես գույքի ապօրինի ձեռքբերման հավանական ցուցիչ:

1.4 Գործող մոդելներ

Ըստ այդմ՝ ընդհանուր առմամբ առանձնացվում են հետևյալ ընթացակարգերը.

- ✓ **սովորական բռնագրավում**, երբ վերջնական դատական ակտի հիման վրա բռնագրավվում է հանցագործության գործիքը և/կամ հանցագործությունից ստացված եկամուտը/գույքը.
- ✓ **ընդլայնված բռնագրավում**, երբ դատապարտվելուց հետո բռնագրավվում է ոչ միայն հանցագործությամբ ստացված գույքը և դրա կատարման գործիքը, այլ նաև մեղադրյալին պատկանող այլ գույքը, որի հանցավոր ծագում ունենալու հանգամանքը դատարանը հաստատված է համարել: Այս համատեքստում արդեն կարող է կիրառվել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը:
- ✓ **առանց մեղադրական դատավճռի բռնագանձում**, որը կիրառվում է, եթե օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ անձին կանգնեցնել դատարանի առաջ, այդ թվում՝ անձի մահվան կամ թաքնվելու պատճառով.
- ✓ **in rem քաղաքացիական վարույթ**, որը կիրառվում է այն գույքը բռնագանձելու համար, որը օգտագործվել է հանցագործություն կատարելու համար կամ ստացվել է հանցավոր գործունեությունից.
- ✓ **չբացատրվող (անհիմն) հարստության բռնագանձման ընթացակարգ**, որը կիրառվում է, երբ առկա է զգալի տարբերություն անձի օրինական եկամտի և պատկանող գույքի միջև, իսկ անձը չի կարողանում հիմնավորել գույքի ծագման օրինականությունը: Այս դեպքում անհրաժեշտ չէ մեղադրական դատավճռի առկայությունը³²:

³² Տե՛ս, օրինակ՝ Publications Office of the European Union. “Study on Freezing, Confiscation and Asset Recovery: What Works, What Does Not Work: Final Report.” Publications Office of the EU, 2021,

Պետությունները ունեն լայն հայեցողություն ընթացակարգերի ընտրության առումով, իսկ գործող մոդելները երկրից երկիր տարբերվում են:

Գրականության մեջ առանձնացվում են ԵՄ երկրներում գործող առանց մեղադրական դատավճռի հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման ընդհանուր չորս հիմնական մոդելներ, որոնք ներկայացվել են ԵՄ աշխատակազմի վերլուծական փաստաթղթում: Նշված մոդելները մեջբերվում են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես Հակակոռուպցիոն դատարանը իր եզրափակիչ ակտերում, այնպես էլ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը անդրադարձ են կատարել այս մոդելներին և նրանցից մեկին՝ 4-րդ մոդելին հղում արել՝ որպես ՀՀ-ում գործող մոդել: Մասնավորապես.

➤ *Մոդել 1. Դասական՝ առանց դատապարտման գույքի վերադարձ.*

Նման ընթացակարգը գործում է, երբ հնարավոր չէ իրականացնել գույքի բռնագանձում՝ վերջնական մեղադրական դատավճռի հիման վրա: Թեև հանցագործություն կատարած անձի նկատմամբ հարուցվում է քրեական վարույթ, որի արդյունքում անձը կարող էր դատապարտվել, եթե ներկայանար դատարանի առաջ, սակայն հնարավոր չէ վերջնական դատապարտող ակտ կայացնել, քանզի կասկածվող անձին հնարավոր չէ բերել դատարան՝ մահվան կամ փախուստի դիմելու պատճառով կամ հնարավոր չէ քրեական հետապնդումը շարունակել անձի տարիքի, անմեղսունակության կամ անձեռնմխելիության պատճառով:

➤ *Մոդել 2. Ընդլայնված բռնագրավում.*

Նման ընթացակարգը թույլ է տալիս բռնագրավել այն գույքը, որը անմիջականորեն կապված չէ այն հանցանքի հետ, որի կատարման համար անձը հետապնդվում է: Ըստ այդմ, բռնագանձման պահանջը տարածվում է մեղադրյալին պատկանող ավելի լայն գույքի շրջանակի վրա (կարող է բռնագանձվել անձին պատկանող ամբողջ գույքը կամ դրա մի մասը):

Ինչպես արդեն նշվել է, ոլորտը կարգավորող ԵՄ փաստաթղթերի համաձայն՝ նման գույքի ծագումը դատարանի կողմից պետք է համարվի հանցավոր: Ըստ այդմ, դատարանը պետք է հաստատի, որ գույքի հանցավոր ծագումը շատ ավելի հավանական է, քան օրինական ծագում ունենալը: Այս դեպքում հնարավոր է ապացուցման բեռի տեղափոխում մեղադրյալի վրա, եթե ներպետական օրենսդրությունը դա թույլ է տալիս: ԵՄ պետություններում այս մեխանիզմը կիրառվում է կոնկրետ հանցագործությունների համար դատապարտվելու դեպքում, իսկ ցանկը տարբերվում է պետությունից պետություն:

➤ *Մոդել 3. In rem ընթացակարգ, կամ գույքի, այլ ոչ թե անձի դեմ հարուցված վարույթ.*

<https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/8d30cd76-7292-11ec-9136-01aa75ed71a1/language-en>, “Good Practices in Accelerating the Capture of Illicitly-Acquired Assets”, UNICRI, 2024,
<https://unicri.org/sites/default/files/202407/Good%20Practices%20in%20Accelerating%20the%20Capture%20of%20Illicitly-Acquired%20Assets.pdf>

Այս ընթացակարգի շրջանակներում վարույթը հարուցվում է ապօրինի վարքագծի արդյունքում ձեռք բերված գույքն ու եկամուտները վերադարձնելու կամ հանցագործության գործիք հանդիսացած գույքը շրջանառությունից հանելու նպատակով: Այն իրականացվում է քաղաքացիական կամ վարչական ընթացակարգերով: Նման դեպքում անձին դատապարտելը պարտադիր նախապայման չէ:

➤ *Մոդել 4. Չբացատրվող հարստացում.*

Նման ընթացակարգով անձի իրական գույքն ու սեփականությունը համեմատվում են հայտարարագրված օրինական եկամտի և հնարավորությունների հետ՝ անհամապատասխանություններ բացահայտելու նպատակով: Այս դեպքում ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցանքի հետ ուղղակի կամ անուղղակի կապը պարտադիր չէ³³:

Ինչպես արդեն նշվել է, ԵՄ 2024 թվականի հանձնարարականը նախատեսում է նման միջոց միայն հանցավոր կազմակերպության հետ կապված անձի նկատմամբ, եթե դատարանը համոզված լինի, որ նշված գույքը ստացվել է հանցավոր կազմակերպության շրջանակներում իրականացրած եկամուտ գեներացնող հանցավոր գործունեությունից³⁴:

Մի շարք ԵՄ երկրներում հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագանձման հնարավորությունը գործում է միայն դատապարտելու արդյունքում, օրինակ՝ Բելգիայում³⁵, Լյուքսեմբուրգում³⁶:

Իսկ որոշ պետություններում քրեական մեխանիզմին զուգահեռ ներդրվել են նաև քաղաքացիական կամ վարչական ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ապօրինի գույքը վերադարձնել քաղաքացիական կամ վարչական դատավարության միջոցով՝ առանց հանցագործության համար դատապարտելու³⁷: Ընթացակարգը կարող է կիրառվել հանցագործությամբ ստացված եկամտի կամ չբացատրվող հարստություն կազմող գույքի դեմ, եթե հայտնի օրինական եկամուտների և գույքի միջև առկա է անհամապատասխանություն, օրինակ՝ Բուլղարիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Լիտվայում, Սլովենիայում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և այլն:

³³ Council of the European Union, Commission staff working document, Analysis of non-conviction based confiscation measures in the EU, 2019, էջ 3, հասանելի է <https://db.eurocrim.org/db/en/doc/3205.pdf>.

³⁴ Directive (EU) 2024/1260 of the European Parliament and of the Council of 24 April 2024 on asset recovery and confiscation, հոդված 16.

³⁵ Study on Freezing, Confiscation and Asset Recovery : What Works, What Does Not Work : Final Report, Country chapters, էջ 60-63.

³⁶ Study on Freezing, Confiscation and Asset Recovery : What Works, What Does Not Work : Final Report, Country chapters, էջ 414-416.

³⁷ Commission staff working document, Analysis of non-conviction based confiscation measures in the EU.

Այնուամենայնիվ, նշված պետություններում բռնագանձման հիմքերը և ընթացակարգերը տարբերվում են:

II. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱԾՏԸ

2.1. ՀՀ-ում գործող բռնագրավման և բռնագանձման ընթացակարգերը

ՀՀ-ում ինչպես նախկին, այնպես էլ գործող Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է հանցագործությամբ ձեռք բերված կամ հանցագործության գործիք հանդիսացած գույքի բռնագանձման մեխանիզմ: Բացի այդ, Դատախազությունը կարող է պետության շահերի պաշտպանության հայց հարուցել՝ հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը (համայնքին) պատճառված գույքային վնասի հատուցման նպատակով³⁸:

➤ *Քրեական դատավարության շրջանակներում գույքի բռնագրավում.*

ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետև՝ ՔՕ) նախատեսում է հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը: Մասնավորապես, ՀՀ ՔՕ 121-րդ հոդվածը սահմանում է, որ հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործության առարկան դատարանի կողմից ենթակա են պարտադիր բռնագրավման՝ անհատույց վերցման, ընդ որում՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանցից: Ավելին՝ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի կողմից քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցնելն արգելք չէ սույն հոդվածով նախատեսված հանցավոր ծագում ունեցող գույքը, եկամուտը կամ այլ տեսակի օգուտը, հանցագործության գործիքը, միջոցը կամ հանցագործության առարկան բռնագրավելու համար: Հատկանշական է, որ ՔՕ-ն սահմանում է նաև բարեխիղճ ձեռքբերողի համար երաշխիքներ:

Ինչպես տեսնում ենք, թեև ՔՕ-ն սահմանում է հանցավոր ծագում ունեցող գույքի և հանցագործության գործիքի բռնագրավման մեխանիզմ, այն տարածվում է

³⁸ 1998թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է՝ քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը (համայնքին) պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը:

միայն դատապարտված անձանց, ինչպես նաև դատարանի կողմից քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցնելու դեպքերի վրա:

➤ *Քաղաքացիական հայցով պետությանը պատճառված վնասի բռնագանձում.*

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխան՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան, որը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ներառում է հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը:

Նշված հայցը բերվում է, եթե մեղադրական դատավճռով հիմնավորվում է պետությանը (համայնքին) հանցագործությամբ պատճառված վնասը, եթե մեղադրյալի նկատմամբ քրեական դատավարության կարգով վնասի վերականգնման համար քաղաքացիական հայց չի ներկայացվել, կամ անձը չի դատապարտվել, օրինակ՝ եթե քրեական գործը կարճվել է վաղեմության ժամկետները լրանալու պատճառով³⁹, իսկ քրեական գործով մեղադրողի կողմից ներկայացված հանցագործությամբ պատճառված վնասը բռնագանձելու պահանջով քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության⁴⁰:

Քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելիս վերը նշված հայցերով կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով վնասի հատուցմանը վերաբերող կարգավորումները⁴¹: Մասնավորապես՝ անհրաժեշտ է ապացուցել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

- ✓ ոչ օրինաչափ վարքագիծը (գործողություն կամ անգործություն),
- ✓ վնաս պատճառող անձի առկայությունը,
- ✓ պատճառված վնասի առկայությունը,
- ✓ վնաս պատճառող անձի մեղքի առկայությունը,
- ✓ պատճառահետևանքային կապը ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և պատճառված վնասի միջև (տե՛ս, Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի թիվ ԵԱՆԴ/0789/02/11 որոշումը)⁴²:

³⁹ Տե՛ս, ԵԴ/1895/02/18, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421203842115

⁴⁰ 1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով:

⁴¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառաւ անձի կողմից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

⁴² Տե՛ս, օրինակ՝ ԱԴԴ/4009/02/17,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38843546786135532, ՀԿԴ/0070/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812767: ՀՀ վճռաբեկ

Քննարկվող պարագայում օրենսդրի կողմից ամրագրվել է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի որ ենթադրյալ վնաս պատճառած անձն է կրում իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը, որի ապացուցումն էլ վնաս պատճառած անձին ազատում է այն հատուցելուց:

Վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը, իսկ հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով, կրում է պատասխանող կողմը (տե՛ս, Վճռաբեկ դատարանի 26.06.2009 թվականի թիվ ԵԲԴ/0086/02/08 որոշումը):

Վնասի հատուցման հայցը հարուցվում է ընդհանուր հայցային վաղեմության կիրառմամբ, որի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այսինքն՝ դատախազությունը հնարավորություն ունի դիմել պետությանը պատճառված վնասների հատուցման պահանջով երեք տարվա ընթացքում սկսած այն պահից, երբ իմացել է իրավախախտման մասին: Ավելին, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումների, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը ստանալու պահից էլ Դատախազության համար սկսվում է հայցային վաղեմության ժամկետի ընթացքը (Վճռաբեկ դատարանի 04.06.2021 թվականի թիվ ԱՐԴ/4009/02/17 գործով որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշումներից մեկում ընդգծել է, որ դատախազության՝ պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման պահանջով հայց հարուցելու իրավունքը ծագում է անկախ այն հանգամանքից, թե արդյոք վնաս պատճառած անձը պետությանը վնաս է պատճառել հանցագործության կատարման հետևանքով, թե այլ հակաիրավական վարքագծի արդյունքում, ինչպես նաև անկախ այն հանգամանքից, թե վնաս պատճառած անձն արդյոք մեղավոր է ճանաչվել այդ արարքի կատարման մեջ, թե ոչ (տե՛ս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Նուսե Իսկոյանի թիվ ԵԱԲԴ/2855/02/15

դատարանը բազմիցս անդրադարձել է վնաս պատճառելու հետևանքով հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին: Մասնավորապես՝ արձանագրել է, որ վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման (տե՛ս, Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ՀԲԴ3/0016/02/08 որոշումը): Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ:

քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.09.2020 թվականի որոշումը):

Վերոնշյալից բխում է, որ անգամ առանց մեղադրական դատավճռի առկայության դատախազը պետության անունից հնարավորություն ունի հայցել հանցագործությամբ պատճառված վնասը, սակայն պետք է հիմնավորի վնասի, ոչ օրինաչափ վարքագծի, ինչպես նաև պատճառահետևանքային կապի առկայությունը ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև, ինչպես նաև կաշկանդված է երեք տարվա հայցային վաղեմության ժամկետով: Նշված մեխանիզմը Օրենքի հեղինակների կողմից գնահատվել է որպես ոչ արդյունավետ:

➤ *Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը.*

2020 թվականին «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքն ընդունելով՝ Հայաստանը փորձել է բռնագանձման ընթացակարգերը դարձնել ավելի ճկուն, սակայն, ինչպես կներկայացվի ստորև, Օրենքի կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան որոշ հարցերում չեն համապատասխանում միջազգային սկզբունքներին:

Այդպես, Օրենքը սահմանում է պարտավորություն մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացրած մարմնի համար ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության մասին իրենց հայտնի դառնալու պահից՝ տասնօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել իրավասու մարմնին՝ ՀՀ գլխավոր դատախազության մասնագիտացված ստորաբաժանմանը (հոդված 5): Նշված վարչությունը նաև ունի իրավասություն՝ իր նախաձեռնությամբ ուսումնասիրություն սկսելու (հոդված 5(1(6))): Վարչությունը կայացնում է որոշում՝ ուսումնասիրություն սկսելու կամ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին (հոդված 4):

Ըստ Օրենքի՝ ուսումնասիրության նպատակն է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայց հարուցելու հիմքերը պարզելու նպատակով (հոդված 3):

Ուսումնասիրություն սկսելու համար Օրենքը սահմանում է երկու նախապայման.

1. առկա է Օրենքով սահմանված հիմքերից որևէ մեկը,
2. առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ ուսումնասիրությամբ հայտնաբերվելիք ապօրինի ծագում ունեցող գույքն իր շուկայական արժեքով կարող է գերազանցել 50 մլն ՀՀ դրամը (հոդված 4):

Հատկանշական է, որ գույքի արժեքի այս շեմը պարտադիր է ապահովել և՛ ուսումնասիրություն սկսելու որոշում կայացնելիս, և՛ հայցադիմում ներկայացնելիս: Իսկ հայցային պահանջի չափի 50 մլն դրամից պակասելու

դեպքում հայցը ենթակա է մերժման⁴³: Որոշ գործերով Դատարանը գույքի արժեքը 50 մլն դրամը գերազանցելու հանգամանքը ներառել է հայցվորի ապացուցման բեռի մեջ⁴⁴:

Բռնագանձման վարույթ սկսելու համար անհրաժեշտ գույքի արժեքի նվազագույն շեմը տարբեր երկրներում տարբեր է: Որպես ուղենիշ՝ Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ շեմը չափտի լինի չափազանց ցածր՝ երաշխավորելու, որ մեխանիզմը կկիրառվի հիմնականում լուրջ հանցագործությունների արդյունքում ձեռք բերված գույքի բռնագանձման համար, և միևնույն ժամանակ համակարգը չի ծանրաբեռնվի⁴⁵:

Լիտվայում բռնագանձման գործընթաց սկսելու համար ապօրինի ձեռք բերված գույքի և անձի օրինական եկամուտների միջև տարբերությունը պետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 2,000-պատիկը (շուրջ 100,000 եվրո)⁴⁶: Սլովենիայում ֆինանսական ուսումնասիրությունը սկսվում է, եթե քրեական վարույթի շրջանակներում կասկածներ են առաջանում, որ մեղադրյալը ունի անօրինական ծագում ունեցող 50,000 եվրո արժեքը գերազանցող գույք⁴⁷: Իսկ Մոնտենեգրոյում առաջարկվող գույքի 5,000 եվրո արժեքը ցածր է համարվել, և խորհուրդ է տրվել շեմը բարձրացնել⁴⁸:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի օրենսդրությամբ սահմանված 50 մլն դրամանոց շեմը խնդրահարույց չէ միջազգային պրակտիկայի համատեքստում:

➤ *Ուսումնասիրության հիմքերը.*

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 13-րդ կետերի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը իրավասու մարմնի կողմից նախաձեռնվող ընթացակարգ է, որի նպատակն է այդ գույքի բռնագանձումը: Այն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:

⁴³ Տե՛ս ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

⁴⁴ Տե՛ս, օրինակ՝ ՀԿԴ/0155/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814124; ՀԿԴ/0014/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811534

⁴⁵ Venice Commission, CDL-AD(2024)024.

⁴⁶ Civil Property Confiscation Law (2000), <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/1bab72a273e411eaa38ed97835ec4df6>

⁴⁷ The Act on the Confiscation of Illegally Originated Assets (ZOPNI) (2011), <https://pisrs.si/pregledPredpisa?id=ZAKO6267>

⁴⁸ Venice Commission, CDL-AD(2024)024.

իսկ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը (այսուհետ՝ ուսումնասիրություն)՝ ընթացակարգ է, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն:

Օրենքի սկզբնական խմբագրությամբ նախատեսված էին ուսումնասիրությունը սկսելու համար հինգ հիմքեր, որոնցից չորսը այսպես թե այնպես առնչվում են օրենքում թվարկված հանցագործություններով քրեական վարույթին՝ անկախ անձի՝ պաշտոնատար լինելու կարգավիճակից, իսկ մեկն անմիջապես վերաբերում է պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանող գույքի ապօրինի ծագում ունենալու կասկածին, որի վերաբերյալ հիմքերը ձեռք են բերվել օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով (հոդված 5(1)): Ուսումնասիրություն կարող է նախաձեռնվել, եթե առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, որը պատկանում է քրեական գործով անցնող անձին կամ իր հետ փոխկապակցված անձի, և եթե անձը որպես մեղադրյալ է ներգրավվել օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար, կամ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնար է, կամ քրեական գործը կասեցվել է, կամ անձը դատապարտվել է (հոդված 5):

Քրեական վարույթի շրջանակներում հայտնաբերված տեղեկությունների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրությունների դեպքում պարտադիր չէ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ ունենալը, բացառությամբ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Քրեական վարույթի հետ կապված հիմքերից միայն երկուսով են նախատեսված իրավիճակներ, երբ քրեական հետապնդումը հնարավոր չէ⁴⁹, իսկ հիմքերից մեկով չի պահանջվում անգամ ցույց տալ, որ քրեական դատավարության շրջանակներում մեղադրյալի դատապարտումը հնարավոր չէ, քանի որ հիմքերից մեկը վերաբերում է այն իրավիճակին, երբ նախաձեռնված քրեական վարույթով անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ մեղադրյալին կամ իր հետ փոխկապակցված անձին

⁴⁹ Հոդված 5, 1-ին մաս: 3) առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.

ա. անձը համաներմամբ ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից,

բ. անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից,

գ. անձը մահացել է,

դ. անձն արարքի կատարման պահին չի հասել քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքին.

4) առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական հետապնդման ժամկետը կասեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք (Հոդված 5(1(2)))։ Նման մոտեցումը չի համապատասխանում վերոնշյալ միջազգային կոնվենցիաներում ամրագրված սկզբունքներին։ Այդպես, Դատարանի կողմից գործերից մեկով վկայակոչված StAR կողմից մշակված լավ պրակտիկայի ուղեցույցում պնդվում է, որ առանց մեղադրական դատավճռի բռնագանձումը երբեք չպետք է լինի քրեական հետապնդման փոխարինող միջոց այն դեպքերում, երբ առկա է հնարավորություն անձին քրեորեն հետապնդել⁵⁰։

2022 թվականի փոփոխություններով⁵¹ ավելացվել է ևս մեկ հիմք, այն է՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք (հոդված 5(1(6)))։

Օրենքը չի պահանջում ապացուցել, որ գույքը ձեռք է բերվել հանցանքի կատարման արդյունքում կամ առկա է որևէ պատճառահետևանքային կապ վերագրվող հանցագործության և ձեռք բերված գույքի միջև, ի տարբերություն վերը նշված միջազգային կոնվենցիաների և ՄԻԵԴ դիրքորոշումների։ Ավելին՝ Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ, ի թիվս այլնի, շեշտվում է նման մեխանիզմի ներդրման անհրաժեշտությունը՝ հենց հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման նպատակով⁵²։

Թեև որպես Օրենքի ընդունման հիմնական փաստարկ նշվել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները շրջանառությունից հանելը, Օրենքի ընդունված տեքստը, ինչպես նաև Օրենքի անվանումը շփոթեցնող են, և կարգավորումները ձևակերպված են այնպես, կարծես թե գույքի հանցավոր ճանապարհով, այդ թվում՝ կոռուպցիայի միջոցով ձեռք բերված լինելու հանգամանքը հիմնավորելը բռնագանձման համար այլևս կապ չունի։ Ծեշտադրվում է միայն օրինական եկամուտների և ունեցվածքի միջև անհամապատասխանությունը։

➤ *Այլ երկրներում գործող ապօրինի գույքի բռնագանձման մոդելները.*

Օգտակար է համեմատական անցկացնել այն պետությունների հետ, որտեղ գույքի բռնագանձման մեխանիզմները ներդրվել են ՀՀ-ից ավելի վաղ և ստացել են որոշակի գնահատում, այդ թվում՝ ՄԻԵԴ-ի կողմից։

⁵⁰ Good practice guide on non-conviction based(NCB) asset forfeiture, Worldbank, 2009, էջ 29-30, https://star.worldbank.org/sites/default/files/2023-11/Stolen_Asset_Recovery_A_Good_Practices_Guide_for_Non_Conviction_Based_Asset_Forefeiture_%28Stolen_Asset_Recovery_Initiative_2009%29.pdf

⁵¹ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք, ՀՕ-270-Ն, ընդունվել է 09.06.2022թ., ուժի մեջ է մտել՝ 10.07.2022թ.

⁵² «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում, <https://www.e-draft.am/projects/1931/about>

Բուլղարիայում 2005 թ.-ից գործում են առանց դատապարտման՝ քաղաքացիական ընթացակարգերի հիման վրա բռնագանձման մեխանիզմներ: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը կիրառվում է անկախ քրեական վարույթից, այդ թվում՝ դրա կասեցման կամ կարճման: Ապօրինի ծագում ունեցող գույք է համարվում այն գույքը, որի ծագման համար առկա չէ օրինական աղբյուր: Մասնագիտացված հանձնաժողովը նախաձեռնում է վարույթ, եթե առկա է ողջամիտ ենթադրություն առ այն, որ գույքը ձեռք է բերվել ապօրինի ճանապարհով, որը ձևավորվում է, եթե անձի գույքի ստուգման արդյունքում բացահայտվել է զգալի անհամապատասխանություն անձի օրինական եկամուտների հետ (հոդված 107): Ստուգումը նախաձեռնվում է, եթե անձը մեղադրվում է Օրենքում նշված հանցագործությունը կատարելու մեջ, կամ քրեական վարույթը կարճվել է կամ չի նախաձեռնվել համաներման, վաղեմության ժամկետը լրանալու, անձի անմեղսունակության կամ մահվան պատճառով կամ քրեական գործի՝ այլ պետություն փոխանցելու արդյունքում: Վարույթ կարող է նախաձեռնվել նաև այն դեպքում, երբ քրեական գործով վարույթը կասեցվել է մեղադրյալի անմեղսունակության, անձեռնմխելիության կանգնվելու վայրը անհայտ լինելու պատճառով: Բացի այդ, ստուգման հիմք է Հակակոռուպցիոն հանձնաժողովի կողմից անհամապատասխանության կամ շահերի բախման վերաբերյալ ծանուցում ստանալը կամ օրենքով սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացնելը: Մեկ այլ հիմք է ուժի մեջ մտած ակտով իրավասու մարմնից վարչական տույժ կիրառելու վերաբերյալ ստացված ծանուցումը: Ծանուցումը պիտի լինի այնպիսի իրավախախտման համար, որը կատարման պահին 50,000 բուլղարական լև (25,000 եվրո համարժեք) գերազանցող շահ կարող էր առաջացնել, որը այլ կերպ գանձել հնարավոր չէ: Անձի արդարացումը իրավական խոչընդոտ չէ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավունքը իրացնելու համար⁵³: Բուլղարիայում գործող կառուցակարգերը գնահատվել են ՄԻԵԴ-ում: Որպես հիմնական խնդիր ՄԻԵԴ-ը նշել է այն դեպքերում բռնագանձումը, երբ իրավասու մարմինը ցույց չի տվել բռնագանձվող գույքի և հանցավոր գործունեության հետ կապը⁵⁴:

Իտալիայում առանց դատապարտման բռնագանձումը կիրառվում է մաֆիայի հետ կապ ունեցող կամ ծանր հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց և նրանց գույքի նկատմամբ և իրականացվում է վարչական ընթացակարգով: Այն կարող է կիրառվել ինչպես դատապարտված, այնպես էլ չդատապարտված անձի նկատմամբ: Նշված ընթացակարգը ունի ինչպես *in rem*, այնպես էլ բռնագանձում չբացատրվող հարստության հիմքով: Հարկ է նշել, որ կիրառման համար պարտադիր նախապայմաններից մեկը՝ բավարար ապացույց ներկայացնելն է առ այն, որ նշված գույքը հանդիսանում է հանցագործությունից ստացված շահ: Ընթացակարգը կարող է կիրառվել նաև այն դեպքերում, երբ անձը մահացել է կամ թաքնվում է վարույթ իրականացնող մարմնից: Իսկ ընդլայնված բռնագրավումը գործում է որպես քրեական կամ անվտանգային միջոց, որը կիրառվում է որոշակի

⁵³ See Law on Confiscation of Illegally Acquired Property, ուժի մեջ է մտել 06.10.2023թ., <https://lex.bg/laws/ldoc/2137180227>.

⁵⁴ Yordanov et al v Bulgaria.

քրեական հանցագործությունների համար դատապարտվելու դեպքում, եթե դատապարտված անձը չի կարողանում հիմնավորել իր եկամուտների և գույքի անհամաչափ տարբերությունը: Նման դեպքում կապը կոնկրետ հանցագործության հետ պարտադիր չէ, իսկ բռնագրավումը կիրառվում է բոլոր այն գույքերի վրա, որոնք դատավորի կողմից կհամարվեն հանցավոր ծագում ունեցող⁵⁵:

Իռլանդիայում համապատասխան մարմինը իրավունք ունի նախաձեռնել վարույթ, եթե առկա են ողջամիտ հիմքեր ենթադրելու, որ անձը օգուտ է քաղել ցանկացած տնտեսական շահ տվող հանցագործությունից⁵⁶: *In rem* վարույթները իռլանդիայում կիրառվում են քաղաքացիական ընթացակարգով, իսկ պատասխանողը պետք է հիմնավորի, որ բռնագանձման ենթակա գույքը չունի հանցավոր ծագում՝ հավանականությունների հավասարակշռում ստանդարտի հիման վրա: Բռնագանձումը կիրառելի է ցանկացած այն գույքի նկատմամբ, որը գոյացել է կամ կապված է հանցավոր գործունեության հետ: Միևնույն ժամանակ կարիք չկա ապացուցելու որևէ կոնկրետ հանցագործության հետ անմիջական կապը, անգամ չի պահանջվում, որ նշված հանցագործության վերաբերյալ նախաձեռնված լինեք քրեական վարույթ⁵⁷:

Լիտվայում կիրառվում է առանց դատապարտման բռնագրավում ինչպես քրեական դատավարության (օրինակ՝ հաշտության դեպքում), այնպես էլ վարչական և քաղաքացիական ընթացակարգերի հիման վրա: Քաղաքացիական ընթացակարգի միջոցով գույքը կարող է բռնագանձվել, եթե առկա են հիմքեր հավատալու, որ նշված գույքը ձեռք չի բերվել օրինական ճանապարհով, և անձի օրինական եկամուտների ու այդ գույքի միջև տարբերությունը գերազանցում է սահմանված շեմը⁵⁸: Նման հայցը քննվում է դատախազի կողմից հարուցված հանրային շահի պաշտպանության հայցով:

Նշված միջոցը կիրառվում է, եթե

- 1) անձը կասկածվում է, մեղադրվում է կամ դատապարտվել է որոշակի տեսակի հանցագործության համար (հանցագործությունները մատնանշված են օրենքում, օրինակ՝ մարդկանց թրաֆիքինգ, փողերի լվացում, մաքսանենգություն, տնտեսական հանցագործություններ և այլն), կամ
- 2) եթե քրեական վարույթը կարճվել է, օրինակ՝ վաղեմության ժամկետը լրանալու կամ անձի մահվան հիմքով, կամ

⁵⁵ Study on Freezing, Confiscation and Asset Recovery: What Works, What Does Not Work : Final Report, Country chapters, էջ 317-320.

⁵⁶ Proceeds of Crime Acts (1996), <https://ie.vlex.com/vid/proceeds-of-crime-act-869099750>

⁵⁷ Study on Freezing, Confiscation and Asset Recovery : What Works, What Does Not Work : Final Report, Country chapters, էջ 190.

⁵⁸ Civil Property Confiscation Law (2000), <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/1bab72a273e411eaa38ed97835ec4df6>

3) անձն ազատվել է քրեական պատասխանատվությունից օրենքով սահմանված դեպքերում կամ

4) անձը ներառված է իրավապահ մարմինների կողմից վարվող կազմակերպված հանցավոր խմբերի անդամների ցուցակում, կամ

5) վերը նշված անձանց ամուսնու կամ այն անձի, ում հետ համատեղ բնակվում է վերը նշված անձը (հոդված 2 (2)):

Հատկանշական է, որ եթե անձը կասկածվում կամ մեղադրվում է վերը նշված տեսակի հանցագործություններ կատարելու մեջ, ապա քաղաքացիական ընթացակարգով բռնագանձումը չպետք է նախաձեռնվի մինչև դատախազի կողմից վերջնական ընթացակարգային որոշման կայացումը կամ դատարանի կողմից վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը (հոդված 3): Քրեական վարույթում ձեռք բերված տվյալները կարող են օգտագործվել քաղաքացիական վարույթում, իսկ քաղաքացիական վարույթում անձի կողմից տրամադրված տեղեկությունները քրեական վարույթում՝ միայն անձի համաձայնությամբ:

Սլովենիայում գույքը համարվում է անօրինական ծագում ունեցող, եթե դրա ձեռքբերումը չի հիմնավորվել օրինական եկամտով կամ իրավական ճանապարհով: Անօրինականության կանխավարկածը գործում է բոլոր այն դեպքերում, եթե անձի օրինական եկամտի ու գույքի միջև առկա է հստակ անհամաչափություն (հոդված 5):

Ֆինանսական ուսումնասիրությունը սկսվում է, եթե.

1. քրեական վարույթի շրջանակներում հաստատվում է, որ անձը կատարել է օրենքում նշված հանցագործությունը,
2. այդ անձը ունի (սեփականության իրավունքով, տիրապետում է, օգտագործում է) գույք, որի վերաբերյալ առկա են հիմքեր կասկածելու անօրինական ծագումը,
3. այդ գույքը չի հանդիսանում օրենքում նշված հանցագործությունից կամ դրա միջոցով ստացված եկամուտ⁵⁹:

Օրենքով նախատեսված կառուցակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը միախառնել է հանցավոր/ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման (բռնագանձման) գործող մի քանի մոդելի տարրեր՝

- Առանց մեղադրական դատավճռի (բացառությամբ մի հիմքի) գույքի բռնագանձման ընթացակարգը Հայաստանում կիրառելի է որպես հիմնական, այլ ոչ թե դատապարտելու անհնարինության դեպքում կիրառվող տարբերակ, ի տարբերություն վերը նկարագրված սկզբունքների ու այլ պետություններում գործող մոդելների:

⁵⁹ The Act on the Confiscation of Illegally Originated Assets (ZOPNI) (2011), <https://pisrs.si/pegledPredpisa?id=ZAKO6267>

- Ուսումնասիրության հիմքերն ընդգրկում են և՛ ընդլայնված բռնագրավման, և՛ առանց մեղադրական դատավճռի, և՛ չբացատրվող հարստության բռնագանձման տարրեր՝ չնայած այն հանգամանքին, որ այս մոդելներն ունեն տարբեր կիրառման հիմքեր և սկզբունքներ, ինչպես ներկայացվեց վերևում:
- Օրենքը չի կարգավորում մի քանի հիմքով ուսումնասիրությունը սկսելու իրավիճակը և դրանով պայմանավորված ապացուցման պարտավորությունը:
- Բացի այդ, Օրենքն ընդհանրապես չի պահանջում հանցավոր գործունեության հետ կապը հիմնավորելը, որը չի բխում ՀՀ կողմից վավերացված վերը նշված կոնվենցիաներից, և հակասության մեջ է ՄԻԵԴ-ի կողմից արտահայտված դիրքորոշումների, ինչպես նաև Օրենքի ընդունման հիմնավորումների հետ:
- Օրենքը չի սահմանում վաղեմության ժամկետ, իսկ ուսումնասիրվող հնարավոր ժամկետը չափազանց երկար է:
- Օրենքը չի նախատեսում ուսումնասիրվող ժամկետի տարբերակում՝ կախված ուսումնասիրության հիմքից, այն է՝ վերագրվող հանցագործության կատարման կամ պաշտոնավարման մեկնարկի:

Նշված մոտեցման առնչությամբ մտահոգություն են հայտնել հարցված փաստաբանները՝ նշելով, որ մոդելների հիբրիդի արդյունքում խաթարվում է նշված ընթացակարգի նպատակը, այսինքն՝ հանցավոր ճանապարհով ստացված կամ կոռուպցիայի արդյունքում ձեռք բերված գույքի շրջանառությունից հանելու փոխարեն այն վերածվում է սեփականության վերաբաշխման միջոցի:

2.2. Օրենքի սահմանադրականությունը

Օրենքի ընդունումը միանշանակ չի ընկալվել, այդ թվում՝ մասնագիտական հանրության կողմից: Հնչեցվել են տարաբնույթ մտահոգություններ Օրենքի կարգավորումների վերաբերյալ, այդ թվում՝ սեփականության իրավունքի, օրենքի հետադարձ ուժի և այլ հարցերի վերաբերյալ: 2022 թվականի փետրվարին ՀՀ ազգային ժողովի պատգամավորների մի խումբ դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ Օրենքի սահմանադրականության հարցը որոշելու պահանջով, և 2022 թվականի փետրվարի 25-ին Սահմանադրական դատարանը (այսուհետ նաև՝ ՍԴ) «Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել է վարույթ⁶⁰: Դիմումի քննարկումը տևել է մինչև 2025 թվականի

⁶⁰ ՀՀ ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով աշխատակարգային որոշում, 25.02.2022թ., ՍԴԱՌ-47, https://www.concourt.am/decision/decisions/6218d24a0d8cd_sdav-47.pdf: Գործի քննության ժամկետը երկարաձգվել է՝ ՀՀ ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննության ժամկետը երկարաձգելու, գործի դատաքննությունը հետաձգելու և դատաքննությունը նշանակելու մասին աշխատակարգային որոշում, 03.03.2022թ., ՍԴԱՌ-79, https://www.concourt.am/decision/decisions/627111b97ddc2_sdav-79.pdf

ապրիլի 16-ը, երբ ՄԴ-ն հրապարակել է որոշման եզրափակիչ մասը⁶¹, իսկ ամբողջական տեքստը կայքում հրապարակվել է ապրիլի 21-ին⁶²:

Դիմումի քննության շրջանակներում ՄԴ-ն 2022 թվականի հուլիսին որոշում է կայացրել դիմել Վենետիկի հանձնաժողով՝ կարծիք հայցելու նպատակով⁶³, ինչպես նաև հարցադրումներ է ուղղել ՀՀ գլխավոր դատախազությանը: Սահմանադրական դատարանը, 2023թ. հուլիսի 7-ին՝ Գլխավոր դատախազությանը 21 հարց ուղղելով, կասեցրել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ վարույթը⁶⁴: Ի թիվս այլնի, ՄԴ-ն հայցել է հետևյալ տեղեկությունը, թե արդյո՞ք Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանման գործունեությունը կարգավորվում է աշխատանքային պլանավորմամբ, քանի՞ դեպքում է ուսումնասիրության առարկա դարձել գույք, որի ծագումը կապված է հանցագործության հետ, ի՞նչ մեթոդաբանությամբ են համապատասխան պաշտոնատար անձի կողմից կայացվում Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ուսումնասիրվող նոր ժամանակահատված (որը կարող է ներառել 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը) սահմանելու վերաբերյալ որոշումները, ի՞նչ մեթոդաբանությամբ է գնահատվում անձի՝ ուսումնասիրությանը նախորդող ժամանակահատվածում ունեցած գույքի, այդ թվում՝ կանխիկ գումարի ծավալի օրինականությունը և այլն:

Սահմանադրական դատարանը որոշումն ընդունել է 2025թ. ապրիլի 16-ին⁶⁵: Թեև Օրենքը կամ որևէ դրույթ հակասահմանադրական չի ճանաչվել, այնուամենայնիվ, ՄԴ-ն տվել է մի շարք մեկնաբանություններ, այդ թվում՝ գույքի

⁶¹ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշում, 16.04.2025թ., ՄԴՈ-1776, https://www.concourt.am/decision/decisions/6807363e2d4aa_SDV-1776.pdf

⁶² <https://www.concourt.am/decisions/cc-decision/?year=2025>

⁶³ «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովին» խորհրդատվական կարծիք (amicus curiae) ստանալու նպատակով դիմելու և սույն գործի վարույթը կասեցնելու մասին աշխատակարգային որոշում, 08.07.2022թ., ՄԴՈ-115, https://www.concourt.am/decision/decisions/62cc35679ab0f_sdav-115.pdf

⁶⁴ «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կասեցնելու մասին, 07.05.2023թ., ՄԴՈ-84, https://www.concourt.am/decision/decisions/64abff791b2f4_sdav-84.pdf?fbclid=IwAR3NSohCyRxqnDVhdTi11e_P2XFJqeTxnPT3Zli8Nd1dE8HN0DpfXHwBwcl

⁶⁵ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով որոշում, 16.04.2025թ., ՄԴՈ-1776.

և հանցագործության միջև կապի առկայության պարտադիր լինելու կամ միայն պաշտոնավարման ժամանակահատվածում գույքի ձեռք բերված լինելու առնչությամբ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ հետագա իրավակիրառ պրակտիկայի վրա: ՄԴ-ի կողմից տրված մեկնաբանություններն ավելի մանրամասն կներկայացվեն հաջորդ հատվածումներում:

2.3. Վենետիկի հանձնաժողովի կարծիքը

2022 թվականի հուլիսին ՄԴ կողմից կայացված որոշման հիման վրա սեպտեմբերի 12-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի կողմից դիմում է ներկայացվել Վենետիկի հանձնաժողով՝ օրենքից բխող հետևյալ հարցերի առնչությամբ՝

1. Արդյո՞ք «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը համատեղելի է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտին առաջադրվող՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության եվրոպական կիրառելի ստանդարտներին,
2. Արդար դատաքննության իրավունքի և իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության նպատակով ո՞րն է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթում կողմերի միջև ապացուցման բեռի արդարացի բաշխման և ապացուցման ստանդարտների հարցում համեմատական սահմանադրական իրավունքի դիտանկյունից «ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովին» անդամակցող պետություններում լավագույն փորձը,
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 23-ին, արդյո՞ք մինչև այդ ձեռքբերված գույքի ծագման օրինականությունն ապացուցելու դատավարական պարտականությունը համատեղելի է օրենքի հետադարձ կիրառության արգելքի վերաբերյալ եվրոպական հնարավոր ստանդարտների հետ,
4. Արդյո՞ք մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ընթացակարգերի հարուցման և իրականացման համար «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով ամրագրված առավելագույն ժամկետի սահմանված չլինելը համատեղելի է իր գույքից օգտվելու իրավունքի պաշտպանության եվրոպական ստանդարտի հետ⁶⁶:

⁶⁶ «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով «ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովին» խորհրդատվական կարծիք (amicus curiae) ստանալու նպատակով դիմելու և սույն գործի վարույթը կասեցնելու մասին աշխատակարգային որոշում, 08.07.2022թ., ՄԴԱՌ-115.

Նշված հարցադրումներին Վենետիկի հանձնաժողովն անդրադարձել է 19.12.2022 թ.-ին հրապարակված կարծիքում (այսուհետ՝ Կարծիք): Առաջին հարցադրման մասով Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ ըստ օրենքի՝ գույքի ապօրինի ծագման կանխավարկածը ապացուցման բեռն թողնում է գույքի սեփականատիրոջ վրա, սակայն Իրավասու մարմինը պարտավորություն է կրում ցույց տալ, որ քննարկվող ակտիվները ապօրինի ծագում ունեն, իսկ ուսումնասիրվող անձը կարող է հերքել այդ կասկածները՝ հակառակի մասին վկայող ապացույցներ ներկայացնելով: Մյուս կողմից՝ եթե պատասխանող անձի վրա ապացուցման մեծ բեռ է դրվում, ապա գույքի բռնագանձումը կարող է ոչ համաչափ դիտարկվել անձի սեփականության իրավունքի համատեքստում⁶⁷: Ըստ այդմ՝ ապացուցման բեռն պետք է օրենքով հստակ ձևակերպված լինի (կետ 61):

Օրենքը կիրառելի է ինչպես ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված գույքի և դեպքերի, այնպես էլ նախկինում՝ մինչ օրենքի ուժի մեջ մտնելը, ձեռք բերված գույքի նկատմամբ: ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածով ամրագրված է անձի վիճակը վատթարացնող կարգավորումների հետադարձ կիրառելիության արգելքը: Հանձնաժողովը նշել է, որ նման կանոնից թույլատրվում են բացառություններ՝ կախված նրանից, թե խոսքը գնում է արդեն ավարտված, թե շարունակվող իրավահարաբերությունների մասին: Առաջին դեպքում արգելքը ավելի խիստ է, երկրորդ դեպքում հնարավոր է ունենալ առավել ճկուն մոտեցում, քանի դեռ միջամտությունը/օրենքի ազդեցությունը/ ծայրահեղ խիստ չէ: Հանձնաժողովը առաջարկել է Սահմանադրության 73-րդ հոդվածը մեկնաբանել վերոնշյալ մոտեցման լույսի ներքո, ինչը համահունչ է նաև իրավունքի գերակայության միջազգային ստանդարտներին (կետ 45-46): Այս առումով Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ ոչ քրեական գործերով օրենքի կիրառման հետադարձությունը թույլատրելի է, եթե դա բխում է հանրային շահերից և պահպանվում է համաչափության սկզբունքը⁶⁸:

Ինչ վերաբերում է գույքի բռնագանձմանը, Հանձնաժողովն ընդունել է, որ կոռուպցիայի դեմ պայքարը ենթադրում է ոչ միայն ապագային ուղղված միջոցներ, այլև անցյալում ձեռք բերված ապօրինի միջոցների նկատմամբ որոշակի գործողություններ: ՀՀ-ում ընդունված օրենքը, ըստ այդմ, վերաբերում է ոչ միայն սոսկ անցյալի դեպքերին, այլ շարունակական իրավիճակներին, այսինքն՝ գույքի ապօրինի ձեռքբերումը սկսվել է անցյալում և շարունակվում է ներկայումս: Նման մոտեցմամբ, Վենետիկի հանձնաժողովը դիտարկել է, որ օրենքի հետադարձ կիրառումը կարող է համարվել համաչափ, իսկ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքի երաշխիքները չխախտված, եթե հիմնավորվում է, որ գույքը նախկինում ձեռք է բերվել ապօրինի, քանզի ապօրինի ձեռք բերված ակտիվները չեն կարող սահմանադրական պաշտպանություն ստանալ (կետ 48):

⁶⁷ Venice Commission, CDL-AD(2022)014, Opinion on the draft Law N°08/L-121 “On the State Bureau for verification and confiscation of unjustified assets” of Kosovo, 20 June 2022, § 57, [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2022\)014-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2022)014-e)

⁶⁸ Venice Commission, CDL-AD(2016)007rev, Rule of Law Checklist, https://www.venice.coe.int/images/SITE%20IMAGES/Publications/Rule_of_Law_Check_List.pdf

Հանձնաժողովի գնահատմամբ՝ Օրենքի հետադարձ կիրառելիության վերաբերյալ կարգավորումները ինքնին անհամատեղելի չեն գործող եվրոպական ստանդարտների հետ, քանի դեռ կասկածվող անձի՝ գույքի ծագման վերաբերյալ բացատրություն տալու պարտականությունը ողջամիտ է, և այդ առնչությամբ պատասխանող կողմի ներկայացված փաստարկները պատշաճ ուսումնասիրվել են դատարանների կողմից (կետ 50):

Օրենքի հետադարձ կիրառելիության հետ կապված հաջորդ կարևոր հարցը ժամկետային սահմանափակումն ու դրանից հնարավոր բացառությունն է: Ժամկետային սահմանափակումը, ըստ Հանձնաժողովի, կարևոր է ոչ միայն սեփականատիրոջ ակնկալիքների պաշտպանության տեսանկյունից, այլև տնտեսության կայունության ապահովման համար (կետ 52):

Նախ, Հանձնաժողովը նշել է, որ դատախազությանը տրված լիազորությունը՝ սահմանված 10 տարի ժամկետից հետո գնալը, ընդհուպ մինչև 1991 թվական, բավականաչափ հստակեցված և արդարացված չէ, քանզի տպավորություն է ստեղծվում, որ բացառությունը հնարավոր է կիրառել ցանկացած դեպքում, երբ իրավասու մարմնի կողմից որոշ ապացույց է հայտնաբերվում: Ժամկետի նման ընդլայնման դեպքում, հետադարձության հնարավորությունը ծայրահեղ երկար է ստացվում, ավելին՝ ժամանակի ընթացքում այդ ժամկետը ավելի է երկարելու (կետ 53):

Հաջորդիվ, ըստ Օրենքով նախատեսված կարգավորումների, հետադարձության ժամկետի ընտրությունը թողնված է իրավասու մարմնի հայեցողությանը, որը յուրաքանչյուր գործով առանձին քննարկման առարկա է, ինչը խնդրահարույց է (կետ 54): Ավելին, դատապարտումից հետո նախատեսված չեն նաև քաղաքացիական բռնազանձման վարույթի հարուցման հստակ ժամկետները, ինչը համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքին (կետ 55):

Հանձնաժողովը եզրակացրել է, որ գույքի ծագումը հիմնավորելու բեռը պետք է լինի ողջամիտ, իսկ ուսումնասիրվող ժամանակահատվածը լինի ողջամիտ և հավասարապես կիրառվի բոլոր դեպքերում՝ չմնալով իրավասու մարմնի հայեցողությանը (կետ 62):

III. ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Ուսումնասիրություն հարուցելու հիմքը

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն (ԻՊԱՍ) հարցում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն՝ հայցելով դիտարկված գործերի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1. Ուսումնասիրության սկսելու հիմքը:
2. Ուսումնասիրության իրականացման ժամկետները (ուսումնասիրությունը սկսելու ու ավարտելու ամսաթիվը): Եթե ընթացքում ժամկետը փոփոխվել է, ապա նշել հիմքը ու փոփոխված ժամկետը:
3. Ի սկզբանե որոշված ուսումնասիրվող ժամանակահատվածը: Եթե ընթացքում ժամանակահատվածը փոփոխվել է, ապա նշել հիմքը ու փոփոխված ժամանակահատվածը⁶⁹:

Ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը հայտնել է, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց մինչև 2024 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից սկսվել է 476 ուսումնասիրություն, որոնց մեծամասնության դեպքում ուսումնասիրությունը սկսելու հիմք է ծառայել հիմնականում Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, այն է՝ *Նախաձեռնված քրեական վարույթով անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ մեղադրյալին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:*

Հատկանշական է, որ ծավալով երկրորդ խումբ կազմող ուսումնասիրությունները սկսվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա, այն է՝ *«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք (Տե՛ս Աղյուսակ 1)»⁷⁰:*

Աղյուսակ 1. 2020-2024 թթ.-ին սկսված ուսումնասիրություններն ըստ հիմքերի⁷¹.

Տարեթիվ	Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետ ⁷²	Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ ⁷³	Օրենքի 5-րդ հոդվածի	Օրենքի 5-րդ հոդվածի	Օրենքի 5-րդ հոդվածի	Օրենքի 5-րդ հոդվածի

⁶⁹ ԵՑ1-13.05.2024 գրություն.

⁷⁰ 31/8/132/24 առ 13.06.2024թ. գրություն.

⁷¹ 31/8/113/24 առ 21.05.2024թ. գրություն.

⁷² առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով.

⁷³ Նախաձեռնված քրեական վարույթով անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար

			1-ին մասի 3-րդ կետ ⁷⁴	1-ին մասի 4-րդ կետ ⁷⁵	1-ին մասի 5-րդ կետ ⁷⁶	1-ին մասի 6-րդ կետ ⁷⁷
2020	-	206	1	7	-	-
2021	-	45	2	-	18	-
2022	-	57	1	-	17	2
2023	-	48	1	-	24	9
2024 (մինչև 31.05)	1	2	1	-	9	2

Գլխավոր դատախազության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ նշված ժամանակահատվածում կատարված ուսումնասիրություններով դատարան է ներկայացվել 108 հայցադիմում, կնքվել է հաշտություն հինգ համաձայնություն, կայացվել է ուսումնասիրությունը դադարեցնելու մասին 122 որոշում⁷⁸:

հիմքեր՝ կասկածելու, որ մեղադրյալին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք.

⁷⁴ առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.

ա. անձը համաներմամբ ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից,

բ. անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից,

գ. անձը մահացել է,

դ. անձն արարքի կատարման պահին չի հասել քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքին.

⁷⁵ առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական հետապնդման ժամկետը կասեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

⁷⁶ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք.

⁷⁷ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

⁷⁸ 31/8/132/24 առ 13.06.2024թ. գրություն.

Դիտարկված 26 գործերից 22-ով (85%) ուսումնասիրությունը նախաձեռնվել է 2020 թվականի հոկտեմբերի 7-ին և 8-ին, մեկ գործով՝ 2020 թվականի սեպտեմբերի 10-ին, մեկ գործով՝ 2020 թվականի հոկտեմբերի 9-ին, մեկ այլ գործով՝ 2021 թվականի փետրվարի 16-ին, իսկ մեկ այլ գործով՝ 2022 թվականի նոյեմբերի 16-ին:

Որպես ուսումնասիրությունը սկսելու հիմք ՀՀ գլխավոր դատախազությունը բոլոր դիտարկված գործերով նշել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը: Նշված քրեական վարույթները հարուցվել են հիմնականում 2003 թվականի Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՔՕ) մեկ կամ մի քանի հոդվածներով, որոշ դեպքերում՝ հանցակցությամբ կատարված լինելու մեղադրանքով:

- ✓ Յոդված 154.2 (ընտրողի կողմից թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից կաշառք ստանալը կամ թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), հանրաքվեի քարոզչական նախաձեռնությունների կողմից ընտրողներին կաշառք տալը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը),
- ✓ Յոդված 179 (յուրացնելը կամ վատնելը),
- ✓ Յոդված 190 (հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի վճարումը)),
- ✓ Յոդված 214 (առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը),
- ✓ Յոդված 308 (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը),
- ✓ Յոդված 309 (պաշտոնեական լիազորություններն անցնելը),
- ✓ Յոդված 310 (ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը),
- ✓ Յոդված 311 (կաշառք ստանալը),
- ✓ Յոդված 314 (պաշտոնեական կեղծիքը),
- ✓ Յոդված 325 (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը),
- ✓ Յոդված 375 (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը)⁷⁹:


⁷⁹ 31/8/113/24 առ 21.05.2024թ. գրություն.

3.2 Գործը քննող դատավորները, պատասխանողները և երրորդ անձինք

➤ Գործը քննող դատավորը.

Դիտարկված գործերը քննվել են չորս դատավորի վարույթում⁸⁰: Մասնավորապես՝ 11 գործ քննվել է դատավոր Կարապետ Բադալյանի, 7 գործ՝ Լիլի Դրմեյանի, 6 գործ՝ Նարինե Ավագյանի, իսկ 2 գործ՝ Ռուդոլֆ Ավագյանի վարույթում⁸¹:

Գծապատկեր 1. Նախագահող դատավորներ.



Թեև գործերի ընտրությունն իրականացվել է պատահականության սկզբունքով, դիտարկված գործերից շուրջ կեսը գտնվել է դատավոր Բադալյանի վարույթում:

Հարցված դատավորները հայտնել են, որ դատական գործերի ինքնաշխատ համակարգը չի տարբերակում պետական շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերը և դրանք մակագրվում՝ առանց հաշվի առնելու նշված տեսակի գործերի ծավալների տարբերությունը: Արդյունքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերը, որոնք բավականին ծավալուն են, հավասարապես չեն բաշխվում՝ էականորեն ազդելով այդ գործերը քննող դատավորների ծանրաբեռնվածության վրա:

⁸⁰ Հակակոռուպցիոն դատարանում քաղաքացիական մասնագիտացմամբ առկա է հինգ դատավոր, որոնցից մեկը մշտադիտարկման ժամանակահատվածում գտնվել է նպատակային արձակուրդում, <https://court.am/hy/courts/141>

⁸¹ Նարինե Ավագյանը՝ 2022թ. հուլիսի 30-ին ՀՀ Նախագահի՝ թիվ ՆՀ-200-Ա որոշմամբ նշանակվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավոր, Կարապետ Բադալյանը՝ ՀՀ Նախագահի 2022թ. օգոստոսի 8-ին ՆՀ-220 –Ա հրամանագրով, Լիլի Դրմեյանը՝ 2022 թ. նոյեմբերի 3-ին ՀՀ Նախագահի թիվ ՆՀ-313-Ա հրամանագրով, իսկ Ռուդոլֆ Ավագյանը՝ 2023թ. մարտի 24-ին ՀՀ Նախագահի՝ թիվ ՆՀ-111-Ա հրամանագրով: Դատավորների նշանակման գործընթացի մշտադիտարկման մասին ավելի մանրամասն տե՛ս Զեկույց. Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում, հասանելի է <https://prwb.am/2023/06/20/zekuyec-7/>

➤ *Պատասխանողների բնութագիրը.*

Գործերով հիմնական պատասխանողները նախկինում եղել են պաշտոնատար անձինք կամ նրանց ընտանիքի անդամներն են, այդ թվում՝ նախկին նախագահ, վարչապետ, նախարար, ԱԺ պատգամավոր, ՍԴ նախագահ, Գլխավոր դատախազ, մարզպետ/քաղաքապետ: Դիտարկված գործերով պատասխանողների ճնշող մեծամասնությունը այլևս չեն զբաղեցնում պետական պաշտոններ, բացառությամբ չորս պատասխանողի, որոնցից երեքը հանդիսանում են ՀՀ ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցության պատգամավոր, իսկ մեկը Սահմանադրական դատարանի դատավոր է:

Դիտարկված գործերով պատասխանողների քանակը տատանվել է մեկից մինչև 17⁸², ընդ որում՝ գործերի մոտ 30%-ի դեպքում գործով ներգրավված են եղել երկու պատասխանողներ: Դիտարկված բոլոր գործերով պատասխանողներն ունեցել են ներկայացուցիչ:

Դիտարկված բոլոր գործերով հիմնական (առաջին) պատասխանողն արական սեռի ներկայացուցիչ է, իսկ երկրորդ պատասխանողի առկայության դեպքում՝ բոլոր դեպքերում երկրորդ պատասխանողը իգական սեռի ներկայացուցիչ է⁸³:

Արձանագրվել են դեպքեր, երբ անձը որպես պատասխանող ներգրավվել է միայն դատական վարույթի ընթացքում, այսինքն՝ նախկինում չի հանդիսացել ուսումնասիրվող անձ (*տե՛ս [վաղեմության ժամկետի կիրառում բաժինը](#)*):

Համապատասխանողները հիմնականում եղել են հիմնական պատասխանողի ընտանիքի անդամներ կամ մերձավոր ազգականներ, իսկ բացառիկ դեպքերում՝ փոխկապակցված իրավաբանական անձինք⁸⁴ և այլ տեսակի փոխկապակցվածությունն ունեցող անձին:

➤ *Երրորդ անձանց մասնակցությունը.*

Դիտարկված 26 գործերից 18-ում (69%) դիտարկման պահի դրությամբ գործով ներգրավված են եղել 1-ից 29 ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք: Երրորդ անձինք ներգրավվել են ինչպես կողմերի միջնորդությամբ, այնպես էլ իրենց նախաձեռնությամբ՝ գործի քննության տարբեր փուլերում:

Նրանց գտնվելու վայրը եղել է թե՛ ՀՀ տարածքում, թե՛ ՀՀ-ից դուրս: Որոշ երրորդ անձինք մասնակցել են նիստերին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով (ավելի մանրամասն տե՛ս [Երրորդ անձ ներգրավվելու մասին միջնորդություններ բաժինը](#)):

⁸² 17 պատասխանող ներգրավված է ՀԿԴ/0062/02/23 գործով:

⁸³ Դիտարկված միայն մեկ գործով ներգրավված է մեկ պատասխանող ՀԿԴ/0061/02/23:

⁸⁴ Տես, օրինակ՝ ՀԿԴ/0062/02/23,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812577; ՀԿԴ/0215/02/23,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814458

3.3 Դատական նիստերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

3.3.1 Տեղեկության հասանելիությունը

Դիտարկման առաջին ամիսներին Հակակոռուպցիոն դատարանի գործունեության վերաբերյալ հրապարակային տեղեկությունները սահմանափակ են եղել: Մշտադիտարկման մեկնարկային փուլում ՀԿԴ գործերը ներառված չեն եղել դատական տեղեկատվական համակարգի կայքում՝ Դատալեքսում (datalex.am), քանի որ տեխնիկական լուծումը չէր ապահովվել՝ ստեղծված չէր առանձին բաժին, իսկ նիստերի մասին տեղեկությունները հրապարակվում էին դատական իշխանության պաշտոնական կայքում (court.am) և փակցվում Դատարանի շենքում՝ շաբաթական կտրվածքով, ընդ որում՝ հրապարակվող տեղեկությունը չափազանց հակիրճ էր:

Ավելին՝ 2023 թվականի դեկտեմբերի վերջին շաբաթվա՝ դեկտեմբերի 25-ից 29-ի նիստերի ժամանակացույցը չի հրապարակվել court.am-ում⁸⁵:

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են անհամապատասխանություններ court.am, datalex.am կայքերում և Դատարանի շենքում փակցված տեղեկությունների միջև՝ նիստերի օրվա, ժամի կամ դահլիճի վերաբերյալ: Օրինակ՝ մի գործով datalex.am-ում նշված է եղել 15:00, իսկ court.am-ում՝ 14:00⁸⁶, կամ մեկ այլ դեպքով court.am-ում նիստի օրը նշվել է 2024 թ. հունվարի 23-ը, իսկ datalex.am-ում՝ փետրվարի 1-ը: Անհամապատասխանությունների առկայությունը Դատարանի աշխատակազմը բացատրել է տեխնիկական կամ մարդկային սխալներով⁸⁷:

«Դահլիճի համարները տարբեր են նշված: Կարգադրիչն ասում էր, որ նիստը court.am-ում նշված դահլիճում է լինելու, սակայն այն կայացավ Դատալեքսում նշված վայրում»⁸⁸:

«[Datalex](https://datalex.am)-ում նիստի մասին ոչինչ նշված չէր: Տեղեկությունը տեղադրվել է միայն նիստից հետո՝ ստեղծման ամսաթիվ՝ 2024-04-12 16:13:30»⁸⁹:

«Դատալեքսում ու court.am-ում դեկտեմբերի 18-ին նիստ չկա նշված»⁹⁰:

Մշտադիտարկողներ

⁸⁵ <https://court.am/hy?page=41>: Բացակայում են նաև մարտի 4-ի շաբաթվա նիստերը, <https://court.am/hy?page=33>

⁸⁶ <https://court.am/hy/news/1642>

⁸⁷ ՀԿԴ/0062/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812577, <https://court.am/hy/news/1687>

⁸⁸ ՀԿԴ/0062/02/23, 03.04.2024թ. նիստը., <https://court.am/hy/news/1730>, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812577

⁸⁹ ՀԿԴ/0212/02/23, 09.04.2024թ. նիստը.

⁹⁰ ՀԿԴ/0110/02/22: Ըստ դիտորդի տվյալների՝ նիստը հետաձգվել է բացվելուց անմիջապես հետո:


Բացի այդ, տեղեկության հասանելիության տեսանկյունից ամենամեծ խոչընդոտը դատական ակտերի դատալեքստում տեղադրելու ոչ միասնական մոտեցումն է ինչպես տարբեր դատական կազմերի, այնպես էլ նույն գործով նույնատիպ որոշումների առումով: Ի լրումն, հաշվի առնելով գործերի առանձնահատկությունը և դրանով պայմանավորված գործով առնվազն մեկ նիստի դնսփակ անցկացնելու պրակտիկան, այդ թվում՝ օրենքով պաշտպանվող տեղեկություններ քննարկելու հիմքով, գործերով եզրափակիչ դատական ակտերը չեն հրապարակվում: Արդյունքում Դատարանի դիրքորոշումը բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնց լուծումը թողնվում է եզրափակիչ դատական ակտով անդրադառնալուն, հասանելի չէ հանրությանը, ուստի հնարավոր չէ ծանոթանալ դատական պրակտիկային, այդ թվում՝ նախադեպային որոշումների:

Դիտարկված գործերից մեկով 347 եզրափակիչ դատական ակտը հրապարակվել է միայն եզրափակիչ մասով, իսկ նույն գործով Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշումը՝ ամբողջ ծավալով⁹¹:

3.3.2 Նիստերի հետաձգման կամ չկայացման պատճառները

Դիտարկված 99 նիստերից միայն 68-ը (68%) են տեղի ունեցել բովանդակային, այդ թվում՝ 8 դնսփակ (12%) նիստեր: 22 նիստ հետաձգվել է բացվելուց անմիջապես հետո, իսկ 10-ը՝ չի կայացել:

Գծապատկեր 2. Նիստերի կայացման մասին տվյալներ.



Նիստերի չկայացման կամ հետաձգման հիմք է ծառայել հիմնականում կողմերի բացակայությունը, դատավորի վատառողջ լինելը կամ այլ զբաղվածություն ունենալը, նոր ներկայացուցիչ ներգրավելը, պատասխանողի պատշաճ ծանուցված չլինելը, պատասխանողի(ների) և ներկայացուցիչների բացակայությունը, երբ օրինակ, պետք է ներկայացնեին իրենց դիրքորոշումը հայցի հիմքի և առարկայի փոփոխության հետ կապված և այլն:

⁹¹ ՏԵՍ 347/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

Չարկ է նշել, որ որոշ նիստեր հետաձգվել են Դատարանի շենքում ընթացող վերանորոգման աշխատանքներից գոյացած աղմուկի պայմաններում նիստի արդյունավետ անցկացման անհնարինության պատճառով:

«Նոր պատասխանողի ներկայացուցիչ էր նշանակվել, որը միջնորդեց դատարանին, որ նիստը հետաձգվի, որպեսզի նա ծանոթանա գործի նյութերին: Դատավորն առաջարկեց գործը քննել առանց պատասխանողի շահերը շոշափելու, բայց մյուս պատասխանողի ներկայացուցիչը առարկեց: Նշվեց, որ նման մոտեցումը տրամաբանական չէ, բոլորը իրար հետ փոխկապակցված են: Դրանից հետո Դատարանը միայն թույլ տվեց, որ հայցվորն ավարտի հայցի հիմքի և առարկայի ներկայացնելը, որից հետո նիստը հետաձգվեց»⁹²:

«Քանի որ դատարանի 2-րդ հարկում իրականացվում էին վերանորոգման աշխատանքներ, բարձր աղմուկ էր, և կողմերը չէին կարողանում հաղորդակցվել, ներկայացնել իրենց դիրքորոշումները, ինչպես նաև չկար բավարար տեխնիկական հնարավորություններ դիտելու ապացույց հանդիսացող սկավառակը, սրանով պայմանավորված պատասխանողի ներկայացուցիչը միջնորդեց հետաձգել դատական նիստը»⁹³:

«Դատավորի աշխատակազմից ինձ տեղեկացրին, որ դատավորը վատառողջ է: Դատարանի էլեկտրաէներգիայի մատակարարումը մոտ 4 ժամով անջատել էին պլանային վերանորոգման աշխատանքների պատճառով, և նիստը չէր կարող կայանալ»⁹⁴:

Մշտադիտարկողներ

Չատկանշական է, որ վերանորոգման աշխատանքներով պայմանավորված՝ հանրության համար նախատեսված սանդուղքից օգտվելն անհնարին էր դարձել, ուստի արձանագրվել են դեպքեր, երբ մասնակիցները բարձրանում և իջնում էին դատավորների համար նախատեսված փակ տարածքով:

Պատասխանողի նոր ներկայացուցիչ ներգրավելու դեպքում նիստը հետաձգելու վերաբերյալ ոչ բոլոր միջնորդություններն են բավարարվել: Ավելին, որոշ գործերով հայցվոր կողմը և Դատարանը կարծիք են արտահայտել, որ պատասխանող կողմը, ներկայացուցիչներ փոխելով, տարբեր միջնորդություններ բերելով, այդ թվում՝ գործով տարբեր պատասխանողների առնչությամբ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելով, փորձ է անում ձգձգել գործի քննությունը, ապացույցների բաշխումը, որը համարել են իրավունքի չարաշահում⁹⁵:

⁹² ՀԿԴ/0151/02/23 գործով 06.02.2024թ. նիստ:

⁹³ ՀԿԴ/0025/02/22 գործով 15.11.2023թ. նիստ:

⁹⁴ ՀԿԴ/0105/02/22 գործով 27.12.2023թ. նիստ:

⁹⁵ Օրինակ՝ ՀԿԴ/0013/02/22 գործով 17.11.2023թ. նիստ; 28.12.2023թ. նիստ:

«Պատկերացրեք, եթե ամեն դատական նիստին պատասխանողները որոշեն նոր փաստաթան ներգրավել, առիթ դառնա գործի քննություն հետաձգելու: Այստեղ Դատարանը չի գտնում որևիցե հարգելի հիմք»⁹⁶:

«Հայցվորը և նոր ներգրավված պատասխանողը բանավեճ ունեցան, թե գործին ծանոթանալու համար որքան ժամանակ պետք է տրամադրվի: Հայցվորը հայտնեց, որ թեև ծանոթանալու համար պետք է ժամանակ լինի, բայց մյուս կողմից՝ այլ արժեքներ էլ կան՝ պետության շահեր, կան հայցի ապահովման միջոցներ, կան վնաս կրողներ: Դատարանը կողմերին հարց տվեց, թե արդյոք չեն տեսնում միտում սույն դատական գործը ձգձգելու մասով»⁹⁷:

«Պատասխանողի նոր ներկայացուցիչը նշել է, որ նիստից ընդամենը 10 րոպե առաջ են իրեն փոխանցել հայցադիմումի օրինակը, և որևէ այլ նյութի նա չի տիրապետում: "Դատարանը նախ նշեց, որ միայն այդ հիմքով չի պատրաստվում հետաձգել նիստը: Դատարանն առաջարկեց, որպեսզի այլ պատասխանողների մասով դատավարական գործընթացները իրականացվել, հայցապահանջի հետ հարցեր պարզվեն՝ չանդրադառնալով այն պատասխանողի շահերի, որին ներկայացնելու համար ներգրավվել է նոր ներկայացուցիչ: Ներկայացուցիչը նշեց, որ նման ձևաչափ իր համար անհասկանալի է: Այլ պատասխանողների ներկայացուցիչներ նույնպես առարկեցին՝ նշելով, որ հայցապահանջը բերվել է որպես փոխկապակցված անձանց, ուստի ցանկացած հարց քննարկելը բոլորի շահերին է առնչվում, ուստի հնարավոր չէ տարանջատել որոշակի հարցադրումներ առանց անդրադառնալու հիմնական պատասխանողի հետ փոխկապակցվածությանը: Արդյունքում որոշվեց ավարտել հայցի հիմքի և առարկայի ներկայացումը, իսկ հարցադրում ուղղելը և քննարկումը իրականացնել հաջորդ նիստին: հայցապահանջը ներկայացնելուց հետո Դատարանը նշել է, որ այս անգամ ևս ընդառաջում է և հետաձգում է նիստը, դեռևս միտում չի տեսնում ձգձգելու, սակայն եթե նման բան կրկնվի, ապա Դատարանը համապատասխան գնահատական կտա: Հաջորդ նիստի օրը քննարկելիս նոր ներգրավված պատասխանողը հայցում էր երեք ամիս ժամանակ, որպեսզի գործի նյութերին ծանոթա: Դատարանը հաջորդ նիստը նշանակեց հինգ շաբաթ հետո: Հատկանշական է, որ Դատարանը հակված էր ավելի շուտ նիստ նշանակել, սակայն հայցվորի ներկայացուցիչը արձակուրդում էր գտնվելու»⁹⁸:

«Ձեր վարքագիծը վկայում է այն մասին, որ Դուք փորձում եք գործի քննությունը ձգձգել, խափանել, քանի որ Ձեր միջնորդությունը ներկայացված է իրավունքի չարաշահմամբ, նպատակ ունի գործի քննությունը ձգձգել: Դատարանն այն մերժում է, որոշումն արձանագրային է, բողոքարկման ենթակա չէ»⁹⁹:

⁹⁶ ՀԿԴ/0224/02/23, 18.03.2024թ. նիստ:

⁹⁷ ՀԿԴ/0151/02/23 գործով 06.02.2024թ. նիստ:

⁹⁸ ՀԿԴ/0151/02/23 գործով 06.02.2024թ. նիստ:

⁹⁹ ՀԿԴ/0224/02/23 գործով 18.03.2024թ. նիստ:

«Դատարանն արձանագրեց, որ ներքին համոզմունք ունի, որ պատասխանողի ներկայացուցիչների կողմից իրավունքի չարաշահում է տեղի ունենում, և փորձ է արվում ձգձգել ապացուցման պարտականությունների բաշխումը»¹⁰⁰:

«Երբ պատասխանողի ներկայացուցիչները ներկայացրեցին գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն, Դատարանը բարձրաձայնեց, որ տպավորություն կա, թե պատասխանողի ներկայացուցիչները շահագրգռված են ձգձգելու գործի ընթացքը»¹⁰¹:

«Պատասխանողի այլ ներկայացուցիչը հայտնեց, որ ըստ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հակընդդեմ հայցի ներկայացման դեպքում նիստը պետք է հետաձգվի: Դատավորը հորդորեց կարդան հողվածը, քանի որ ասվում է, որ "Դատարանը իրավունք ունի", որի կապակցությամբ դատավորը կտրուկ ասաց. «Վերջ, էլ քննարկելու հարց չկա, մի շարունակեք հետաձգելու թեման»»¹⁰²:

«Պատասխանողի ներկայացուցիչներից մեկը հայտնեց, որ հիվանդ է, տեղեկանք է բերել: Դատավորի ճշտող հարցին ի պատասխան հայտնեց, որ տեղյակ չի, թե արդյոք վարակիչ է, թե ոչ: Փաստաբանը հայտնեց, որ թոքաբորբ ունի, իրեն ցուցված է պառկած ռեժիմ, բայց քանի որ դատախազը պնդում էր, որ կա գործի քննությունը ձգձգելու միտում, եկել է: Նիստը շարունակելու հարցը քննարկելիս պատրաստակամություն հայտնեց շարունակել՝ թողնելով որոշումը դատավորի հայեցողությամբ: Նիստը շարունակվեց»¹⁰³:

Մշտադիտարկողներ

Արձանագրվել են նաև հակառակ մոտեցումն արտացոլող դեպքեր, երբ Դատարանը հետաձգել է նիստը, այն դեպքում, երբ պատասխանողի ներկայացուցիչը չի ներկայացել, թեև ակնկալվում էր, որ վերջինս պետք է դիրքորոշում հայտներ ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ:

Այդպես, գործերից մեկով հայցվորը կարծիք է արտահայտել առ այն, որ պատասխանող կողմը չի ներկայանում, չարաշահում է և դատավորին հարց է ուղղել. «Արդյո՞ք չենք կարող եզրահանգել, որ հրաժարվում է դիրքորոշում հայտնելուց: Չգիտեմ՝ արդյո՞ք Դատարանը չունի ներքին համոզմունք, որ չարաշահում են, բայց քայլեր չի ձեռնարկում»: Դատարանը նպատակահարմար գտավ մեկ նիստ ևս հրավիրել, որի ընթացքում կանդիդատնա այդ հարցին¹⁰⁴:

Որպես գործերի քննությունը ձգձգելու պատճառներից մեկը՝ հարցված փորձագետները նշել են Օրենքի սահմանադրականությունը պարզելու

¹⁰⁰ ՀԿԴ/0013/02/22 գործով 11.01.2024թ. նիստ:

¹⁰¹ ՀԿԴ/0019/02/22 գործով 27.12.2023թ. նիստ

¹⁰² ՀԿԴ/0110/02/22 գործով 21.03.2024թ. նիստ:


¹⁰³ ՀԿԴ/0110/02/22 գործով 13.02.2024թ. նիստ:

¹⁰⁴ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

անհրաժեշտությունը և դրանով պայմանավորված՝ գործի հնարավոր ընթացքը որոշելը:

Դիտարկված նիստերը սկսվել են հիմնականում ժամանակին, իսկ որոշ դեպքերում՝ մինչև 30 րոպե ուշացումով: Ուշացման պատճառների թվում են կողմերի կամ դատավորի ուշացումը, տեխնիկական խնդիրներ, ազատ դահլիճի բացակայությունը:

Գծապատկեր 3. Դատական նիստերի ոչ ժամանակին սկսվելու պատճառները:



➤ *Նիստերի դահլիճների սակավաթվություն.*

Դիտարկված նիստերի 81%-ի դեպքում, եթե նիստը տեղի է ունեցել, ապա այն անցկացվել է նախապես նշված վայրում: Նիստերը հիմնականում տեղի են ունեցել 7-րդ և 8-րդ նիստերի դահլիճներում, այնուամենայնիվ, որոշ դեպքերում նիստը տեղափոխվել է 6-րդ կամ 11-րդ նիստերի դահլիճ կամ նույն շենքում գտնվող Վերաքննիչ դատարանի դահլիճներից մեկը: Դահլիճի փոփոխության մասին դիտորդները հիմնականում տեղեկացել են կարգադրիչներից: Նիստը այլ դահլիճ տեղափոխելու հիմնական պատճառը եղել է նշանակված դահլիճում անցկացվող ավելի վաղ սկսված նիստի մինչև հաջորդ նշանակված նիստը չավարտվելը:

Որպես նիստերի կազմակերպման խնդիր՝ հարցված դատավորները նույնպես նշել են քաղաքացիական գործերով դատական կազմերին հատկացված նիստերի դահլիճների սակավաթվությունը: Ըստ հարցված դատավորների՝ որպես լուծում, նիստերի դահլիճները դատավորների միջև բաշխվել էին ըստ օրերի:

«Մոտավորապես երկու տարվա ընթացքում մենք դահլիճ չունեինք, որ նիստ անեինք: Սա մեզ խանգարել է գործերն ավելի ինտենսիվ քննել: Հաճախ էր լինում, որ մի քանի դահլիճ էինք փոխում, որ նիստ անենք: Կամ հաճախ էր լինում, որ նիստ չէինք կարողանում անել, քանի որ նիստերի դահլիճ չկա: Բայց արդեն լուծվել է այս խնդիրը: Նախկինում դահլիճների բաշխումը հետևյալ կերպ էր. քաղաքացիական գործեր քննող հինգ դատավորի համար հատկացվել էր երկու նիստերի դահլիճ, իսկ քրեական գործերը քննող 11 դատավորի՝ վեց դահլիճ: Այժմ քաղաքացիական գործերը քննող կազմերի համար ավելացվել է մեկ նիստերի դահլիճ ևս՝ քրեական գործերը քննող կազմերի հաշվին»:

Դատավոր

Մեկ այլ խնդիր է Դատարանի ֆիզիկական հասանելիությունը՝ հատկապես հաշվի առնելով Երևանի ճանապարհային երթևեկության ծանրաբեռնվածությունը:

«Առավոտյան Ազատության պողոտայում և հարակից տարածքներում խցանումներ էին, այդ պատճառով մի քանի այլ նիստեր էլ էին հետաձգվել»:

Մշտադիտարկող

3.3.3 Դռնփակության պայմաններում անցկացված նիստեր

Դիտարկված նիստերից վեցը (6%) անցկացվել են դռնփակության պայմաններում, հիմնականում բանկային գաղտնիք կամ օրենքով պաշտպանվող այլ տվյալներ հետազոտելու հիմքով:

«Մտա նիստերի դադար, մինչև սկսվելը քարտուղարը ասաց, որ նիստը դռնփակ է, քանի որ ապացույցներ են հետազոտելու, այլ ինֆորմացիա չտվեց: Court.am-ում կոնկրետ այդ օրվա նիստը դռնփակ էր նշված, իսկ datalex.am-ում էլ ինֆորմացիան առկա չէր»¹⁰⁵:

Մշտադիտարկող

Հատկանշական է, որ թեև որոշ դեպքերում նիստը սկսվելուց առաջ արդեն իսկ կողմերին հայտնի էր, որ այն անցկացվելու է դռնփակ, Դատալեքսում, դատարանում փակցված ցանկում, ինչպես նաև court.am կայքում առկա տվյալների համաձայն՝ նիստը դռնփակ էր նշված:

«Թե՛ datalex.am, թե՛ court.am կայքերում նշված էր, որ սույն գործով դատական նիստը դռնփակ էր, սակայն երբ գնացի դատարան, դատախազը ինձ ասաց, որ նիստը լինելու է դռնփակ, քանի որ պետք է հետազոտվի բանկային գաղտնիք պարունակող փաստաթղթեր»¹⁰⁶:

Մշտադիտարկող

Դիտարկված գործերից երկուսով դռնփակության պայմաններում նիստն անցկացնելու վերաբերյալ պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է¹⁰⁷: Որոշումը հրապարակված չէ, ուստի միջնորդության հիմքերը, ինչպես նաև Դատարանի դիրքորոշման հիմնավորումը հայտնի չեն:

¹⁰⁵ ՀԿԴ/0014/02/22 գործով 19.02.2024թ.նիստ:

¹⁰⁶ ՀԿԴ/0025/02/22 գործով 26.01.2024թ. նիստ:

¹⁰⁷ ՀԿԴ/0210/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով 29.05.2024 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում Պատասխանողի անունից ներկայացվել է բանավոր միջնորդություն՝ գործը դռնփակ կարգով քննելու վերաբերյալ: Դատարանի 03.06.2024 թվականի

3.3.4 Այլ հարցեր

➤ *Նիստերին մասնակցությունը.*

Դիտարկված և կայացած նիստերի մեծամասնության դեպքում մասնակիցներից մեկը կամ մի քանիսը բացակայել են: Բացակայողների թվում են եղել հիմնականում պատասխանողները կամ նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև երրորդ անձինք: Առանց բացակայող մասնակիցների նիստի շարունակության հարցը քննարկելուց հետո, Դատարանը հիմնականում որոշում է կայացրել շարունակել նիստը, եթե բացակայողները պատշաճ ծանուցված էին, և նիստին քննարկման ենթակա հարցը նրանց ներկայությունը իմպերատիվ կերպով օրենքով չէր պահանջում: Որոշ դեպքերում Դատարանը հետաձգելուց առաջ որոշել է մի քանի դատավարական գործողություններ կատարել:

➤ *Դատարան մուտք գործելը.*

Քաղաքացիական գործերով դիտարկում իրականացնող դիտորդները Դատարան և դահլիճ մուտք գործելու որևէ խոչընդոտի չեն հանդիպել: Դատարան մուտք գործելիս հիմնականում միայն սկզբնական փուլում են կարգադրիչները հարցրել անձը հաստատող փաստաթուղթ/դիտորդի վկայական և ճշտել այցի նպատակը, իսկ սարքերով ստուգում՝ համապատասխան սեռի կարգադրիչի կողմից, հիմնականում իրականացվել է մշտադիտարկման ողջ ընթացքում: Այդպես, 68 դեպքում դատարան մուտք գործելիս մշտադիտարկողից որևէ փաստաթուղթ չի պահանջվել, 13 դեպքում պահանջվել է ներկայանալ, 4 դեպքում հարցվել է անձը հաստատող փաստաթուղթ կամ մշտադիտարկողի վկայական, 4 դեպքում պահանջվել է ներկայացնել այցի նպատակը:

«Բայց այսօր նկատվեց, որ եթե դատարան են գալիս դատարանում աշխատողների ծանոթները, ապա կարգադրիչները չեն իրականացնում զննություն»:

Մշտադիտարկող

➤ *Նիստերի լուսաբանումը.*

Դիտարկված 19 (28%) նիստին ներկա էին ՉԼՄ-ների ներկայացուցիչները: Նիստերից 10-ի (53%) դեպքում պատասխանողի ներկայացուցիչներն առարկել են տեսանկարահանմանը: 11 նիստի ընթացքում Դատարանը թույլատրել է տեսանկարահանումը, այդ թվում՝ մասնակի, օրինակ՝ չներառելով պատասխանող կողմին: Կախված դիրքորոշումից՝ Դատարանը կամ թույլատրել է տեսանկարահանելը, այդ թվում՝ ուղիղ հեռարձակմամբ, կամ մասնակի է

որոշմամբ գործի քննությունը դռնփակ կարգով իրականացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է:

բավարարել միջնորդությունը, օրինակ՝ չցուցադրել պատասխանող կողմին¹⁰⁸, կամ թույլատրել է լուսանկարահանումը, բայց ոչ տեսանկարահանումը¹⁰⁹:

«Նիստի ժամանակ, երբ ՀԼՄ ներկայացուցիչը միջնորդել է տեսաձայնագրել նիստը, Պատասխանողի ներկայացուցիչը, վկայակոչելով Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, նշել է, որ «...փաստաբանը պարտավոր է ապահովել վստահորդի վերաբերյալ տվյալները հնարավորիս չհրապարակայնացնել, հետևաբար այս հիմքով խնդրեց չթույլատրել տեսալուսանկարահանել»¹¹⁰:

«Հարցվոր կողմը որևէ առարկություն չունեւ, սակայն պատասխանողի ներկայացուցիչները առարկեցին, քանի որ քննարկվելու էր իրենց վստահորդներին վերաբերող հարց և վստահորդները դեմ են արտահայտվել այդ տեղեկատվության տեսաձայնագրմանը: Դատարանը թույլ տվեց տեսաձայնագրել դատական նիստը՝ նշելով, որ դեռ այդ փուլում չեն, որ ապացույցները քննարկեն, իսկ եթե գաղտնիք պարունակող ինֆո քննարկման ենթակա լինի, Դատարանը իր նախաձեռնությամբ կարգելի տեսաձայնագրությունը»¹¹¹:

Մշտադիտարկողներ

➤ *Նիստերի դահլիճների տեխնիկական հագեցվածությունը.*

Նիստերի դահլիճները հիմնականում պատշաճ կահավորված են եղել: Հարցված դատավորները նշել են, որ Էլեկտրոնային ապացույց հետազոտելու տեսանկյունից խնդիրներ առկա չեն, քանի որ իրենց հատկացված դահլիճները կահավորված են պրոյեկտորով, հեռուստացույցի Էկրաններով և համակարգիչներով:

Մեկ դատավոր նշել է, որ պատին պրոյեկտելը ավելի արդյունավետ է, քան Էկրան օգտագործելը, քանի որ այդպես բոլոր կողմերն ավելի հստակ են տեսնում ապացույցները: Այս առումով մշտադիտարկողներից մեկը նշել է.

«Էկրան չկար, պատկերը պրոյեկտվում էր հանրության ներկայացուցիչների ետևում գտնվող պատին, ինչը դժվարեցնում էր ապացույցների դիտարկումը հանրության ներկայացուցիչների համար»¹¹²:

Մշտադիտարկող

¹⁰⁸ Օրինակ՝ ՀԿԴ/0224/02/23 գործով 11.01.2024թ. նիստ:

¹⁰⁹ Օրինակ, ՀԿԴ/0010/02/23 գործով 19.03.2024թ. նիստ; ՀԿԴ/0197/02/23 գործով 17.04.2024թ. նիստ:

¹¹⁰ ՀԿԴ/0197/02/23 գործով 17.04.2024թ. նիստ:

¹¹¹ ՀԿԴ/0110/02/22 գործով 21.03.2024թ. նիստ:

¹¹² ՀԿԴ/0025/02/22 գործով 21.12.2023թ. նիստ:

Որոշ դեպքերում, դիտորդների գնահատմամբ, նիստերի դահլիճը բավարար չէր կողմերի և/կամ հանրության ներկայացուցիչներին պատշաճ տեղավորելու համար:

«Ոչ, բավարար չէր, քանի որ 11-րդ դահլիճը բավականին փոքր էր, առկա էր ընդամենը մեկ նստատեղ հավելյալ, որտեղ ես էի նստած: Սույն դահլիճը Վարչական դատարանի նիստերի դահլիճներից էր»¹¹³:

Մշտադիտարկող

Դատարանի որոշ դահլիճներ ունեն միայն մեկ դուռ, այսինքն՝ դատավորի մուտքի և ելքի համար առանձնացված դուռ առկա չէ:

Դատական նիստերի դահլիճներից ոչ մեկում առկա չի եղել կախիչ՝ արտահագուստը կախելու համար, ուստի հանրության ներկայացուցիչների համար նախատեսված նստատեղերի մոտ կեսը զբաղեցված էր մասնակիցների վերարկուներով:

Քաղաքացիական գործերով նիստերը հիմնականում տեղի էին ունենում Հակակոռուպցիոն դատարանի երկրորդ հարկում, որը մատչելի չէ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար:

➤ *Գործի մասնակիցների վարքագիծ.*

Դիտարկված որոշ նիստերի ընթացքում արձանագրվել են լարված իրավիճակներ:

«Դատարանը, տեսնելով կողմերի լարվածությունը, ընդմիջեց դատական նիստը, որպեսզի կողմերը հանգստանան և նոր շարունակեն նիստը: Նիստի ավարտից հետո կողմերը շարունակեցին վիճել և հարցը տեղափոխեցին անձնական դաշտ: Միջադեպը ավարտվեց փոխադարձ մեղադրանքներով»¹¹⁴:

«Նիստի ընթացքում եղան որոշակի լարված պահեր, ընդմիջման ժամանակ ևս: Դատավորը հարցնում էր, թե ինչու են երկու կողմը նման ագրեսիվ պահվածք դրսևորում, հեգնում միմյանց և այլն»¹¹⁵:

«Նիստերից մեկի ընթացքում գործով նախագահող դատավորը պատասխանող կողմի ներկայացուցչին թույլ չտվեց հայտնել դիրքորոշում և միջնորդություն ներկայացնել՝ նշելով. «միայն Դուք չեք դատարանում»¹¹⁶:

¹¹³ ՀԿԴ/0197/02/23 գործով 06.05.2024թ. նիստ:

¹¹⁴ ՀԿԴ/0013/02/22 գործով 30.05.2024թ. նիստ:

¹¹⁵ ՀԿԴ/0013/02/22 գործով 30.05.2024թ. նիստ:

¹¹⁶ ՀԿԴ/0224/02/23 գործով 18.03.2024թ. նիստ:

«Մեկ անգամ նախագահող դատավորն պատասխանողին, ըստ դիտորդի, հումորով ասել է՝ «2008 թվականին լավ եք ապրել... Մաքսայինում եք աշխատել և ձևակերպել եք էժան մաքսագերծման գումարը»¹¹⁷։

Մշտադիտարկողներ

➤ *Մշտադիտարկման ընթացքում բացահայտված այլ խնդիրներ.*

Դիտորդների փոխանցմամբ՝ որոշ դատավորներ խոսել են բավականին արագ կամ ցածր ձայնով, ինչը դժվարացրել է լսելիությունը։

Ջարգված դատավորները նշել են, որ աշխատակազմի աշխատակիցների՝ օգնականի և հատկապես գործավարի վարձատրության չափը չափազանց ցածր է, իսկ ծանրաբեռնվածությունը՝ մեծ, որը հանգեցնում է աշխատակազմի հոսունության։ Բացի այդ, հաշվի առնելով գործերի ծավալուն լինելը, անհրաժեշտ է ավելացնել երկրորդ օգնականի հաստիքը։

Դատարանի աշխատակազմում տնտեսագետի ներգրավման առումով դատավորների կարծիքը տարբերվել է։ Այն դեպքում, երբ նշվել է, որ նման մասնագետի կարիք չկա, քանի որ նրանք օգտակար չեն լինի, իսկ Դատարանը չպետք է հաշվարկների մեջ խորանա, այլ գնահատի գույքի ապօրինի լինելու հանգամանքի հիմնավորվածությունը։

«Ես նայելու եմ փորձագետի կողմից տրամադրած եզրակացությունը միայն իրավական կողմը, այլ ոչ թե՝ այս թիվը ճիշտ է, թե ոչ։ Դրա համար էլ ես փորձագետ եմ։ Իսկ այլ ապացույցներում ներկայացված թվային տվյալները մենք կարող ենք ստուգել, դրա համար մեզ տնտեսագետ պետք չէ»։

Դատավոր

Իսկ նման մասնագետի անհրաժեշտությունը տեսողների կարծիքով՝ ակնկալվում է նման մասնագետից, որ վերջինս կապահովի Դատարանին ներկայացված հաշվարկների և դրանց՝ գրավոր ապացույցներում ճշգրիտ արտացոլված լինելը։ Նշվել է նաև, որ Գլխավոր դատախազության կազմում աշխատող տնտեսագետների վարձատրությունը եռակի անգամ բարձր է, քան դատարանի համար հայտարարված հաստիքի մասնագետի համար։

«Ինչպես դատավորը ունի աշխատակազմ՝ օգնական, գործավար, աջակցում են դատարանին, իսկ հիմա անհրաժեշտություն կա, հաշվի առնելով, որ գործերում գործ ունենք հաշվարկների հետ, իսկ Դատարանը պետք է հասկանա, թե արդյոք դրանք ճիշտ են կատարվել, թե ոչ, զուտ աջակցության տեսանկյունից, այդ գործառույթը, ինչպես օգնականն է որոշակի գործառույթներ կատարում, նմանատիպ աջակցող գործառույթ իրականացնի

¹¹⁷ ՀԿԴ/0100/02/23 գործով 10.01.2024թ. նիստ։

այդ տնտեսագետը: Պետք է հասկանալ, թե թվերը ճիշտ են ներառված եղել, թե ոչ: Սա ոչ թե մասնագիտական կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնող սուբյեկտ պետք է լինի, այլ ուղղակի կողմերի ներկայացված հաշվարկի ճշգրտությունը ստուգումն իրականացնի, համեմատի, թե արդյոք թվերը իդենտիկ ձևով ներառվել են հաշվարկում: Իսկ Դատարանն է որոշելու, թե արդյոք գույքի ծագումը օրինական է, թե ոչ»:

Դատավոր

Այս հարցի կապակցությամբ հարցված փաստաբաններից մեկը նշել է, որ նման նախաձեռնությունը հիմնավոր չէ՝ պնդելով, որ Դատարանը չպետք է ինքնուրույն հաշվարկներ կատարի:

IV. ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Կողմերը հաճախ ներկայացրել են բազմատեսակ և բազմաթիվ միջնորդություններ, որոնք, ի թիվս այլնի, անդրադարձել են կոնցեպտուալ հարցերի, օրինակ՝ բռնագանձման ենթակա գույքի ծավալը, դրա կապը հանցավոր գործունեության հետ, ուսումնասիրության ժամկետները, դատախազության իրավասությունը, վաղեմության ժամկետների կիրառումը և այլն: Միջնորդությունները հիմնականում վերաբերել են հայցի հիմքի և առարկայի փոփոխությանը, գործով երրորդ անձ ներգրավելուն, գործով քննությունը կասեցնելուն, հայցը կարճելուն, ոչ պատշաճ կողմ հանդիսանալուն, նոր պատասխանող ներգրավելուն, հայցային վաղեմություն կիրառելուն և բացարկ հայտնելուն: Բացի այդ, հատուկ ուշադրություն է դարձվել ապացուցման բեռի բաշխման, ինչպես նաև ապացույցների հասանելիությանը:

4.1. Բռնագանձման ենթակա գույքը

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույք (այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին) է համարվում այն գույքը, որի ձեռքբերումը սույն Օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն Օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները): Նույն հոդվածում սահմանվում է օրինական եկամուտը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի համաձայն որոշված կիրառելի իրավունքի նորմերի պահպանմամբ, ՀՀ դրամով, արտարժույթով, կրիպտոակտիվով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտներն առանց հարկերի և պարտադիր վճարների:

Օրենքով սահմանվել են մի քանի նախապայման՝

- ✓ գույքի արժեքը պետք է գերազանցի 50 մլն դրամ.
- ✓ գույքի ձեռքբերման պահին անձի օրինական միջոցները բավարար չէին այդ գույքը ձեռքբերելու համար.
- ✓ գույքը ձեռք է բերվել 1991 թ. սեպտեմբերի 21-ից հետո:

Անկախ ուսումնասիրությունը սկսելու հիմքից՝ Օրենքը չի պահանջում որևէ կապ, անգամ անուղղակի, ուսումնասիրվող անձին վերագրվող հանցանքի կամ գույքի շահառու հանդիսացող պաշտոնատար անձի կողմից կոռուպցիայի մեջ ներքաշված լինելու հետ՝ ի հակառակ որպես Օրենքի ընդունման հիմնավորում նշված փաստարկների:

➤ *Հանցագործության հետ կապը.*

Ինչպես նշվել է, բոլոր դիտարկված գործերով ուսումնասիրությունը սկսվել է քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու հիմքով: Դատարանում հայցվոր կողմը միանշանակ դիրքորոշում է հայտնել, ըստ որի՝ բռնագանձման ենթակա գույքը պարտադիր չէ, որ կապված լինի հանցանքի հետ: Հայցվորի ընդհանրական դիրքորոշումը հանգել է նրան, որ ուսումնասիրությունը սկսելու հիմք ծառայած քրեական վարույթը և դրա հիմքում ընկած հանցանքը պարզապես ազդակ են ուսումնասիրությունը սկսելու համար, և որևէ կերպ չեն կաշկանդում հրավասու մարմնին ուսումնասիրել միայն վերագրվող հանցանքի կատարման հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող գույքը, այլ ճանապարհ են բացում ուսումնասիրել անձի գույքային դրությունը Օրենքով թույլատրելի ողջ ժամանակահատվածում, այդ թվում՝ անկախ այդ ժամանակահատվածում պաշտոնատար անձ լինելու հանգամանքից, եթե պահպանվել են գույքի վերաբերյալ ապացույցներ:

Գործերից մեկով պատասխանող կողմը հայցվորի ներկայացուցչին հարց է ուղղել, թե ինչու հայցը հետ չեն վերցնում՝ հաշվի առնելով, որ պատասխանողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է: Ըստ հայցվոր կողմի՝ քրեական հետապնդումը դադարեցնելը որևէ կապ չունի այս գործի հետ: Մեղադրյալի կարգավիճակում լինելն է հիմք եղել, որ ուսումնասիրությունը սկսվել է և դրա արդյունքում հայցը հարուցվել է¹¹⁸:

Գլխավոր դատախազությունից ստացված տվյալների համաձայն՝ դիտարկված գործերին առնչվող քրեական գործերով հիմնականում քննությունը դեռևս շարունակվում էր:

Այդպես՝

- 12 անձի վերաբերյալ քրեական վարույթներով նախաքննությունը շարունակվում է¹¹⁹:

¹¹⁸ ՀԿԴ/0151/02/23 գործով 11.03.2024թ. նիստ:

¹¹⁹ Ռուբեն Հայրապետյանի, Երվանդ Չախարյանի, Տարոն Մարգարյանի, Արա Մինասյանի, Ռուբեն Նազարյանի, Սեյրան Օհանյանի, Սուրիկ Խաչատրյանի, Հովիկ Աբրահամյանի, Գագիկ

- 11 անձի վերաբերյալ քրեական վարույթները՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան¹²⁰;
- 3 անձի վերաբերյալ քրեական վարույթը ամբողջությամբ, իսկ ևս մեկի մասով՝ մասամբ կարճվել է¹²¹:

Քրեական վարույթով ստացված տվյալները հրավասու մարմինը օգտագործել է ինչպես ուսումնասիրության ընթացքում, այնպես էլ հայցի հիմքը և առարկան ձևակերպելիս և փոփոխելիս¹²²:

Այսպես, հրապարակայնորեն հասանելի տվյալների համաձայն՝ ուսումնասիրությունները սկսելու որոշման հիմնավորումներում հրավասու մարմինը նույնպես հղում է արել վերագրվող արարքի բնույթի և ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության միջև պատճառահետևանքային կապին, իսկ սկզբնական ուսումնասիրվող ժամկետ սահմանել է մինչև վերագրվող արարքի կատարման օրը: Նման պրակտիկան նույնպես ցույց է տալիս, որ հրավասու մարմինը փորձում է գործել միջազգային կոնվենցիաներով նախատեսված տրամաբանությամբ, իսկ երբ անհրաժեշտ պայմանների պահպանմամբ հնարավոր չէ լինում ապահովել ուսումնասիրության սկսելու կամ շարունակելու հիմնավորվածությունը, այդ թվում՝ հանցագործության կամ պաշտոնավարման ժամանակահատվածում 50 մլն դրամ արժեքով գույքի ձեռքբերումը, որը չի հիմնավորվում օրինական եկամուտով, հրավասու մարմինը երկարացրել է ուսումնասիրվող ժամանակահատվածը՝ ներառելու ուսումնասիրվող անձի կողմից բարձր արժողությամբ որևէ գույքի ձեռքբերման ժամկետը¹²³:

Մասնավորապես գործերից մեկով արձանագրվել է, որ ուսումնասիրություն սկսելու մասին որոշմամբ հրավասու մարմինն արձանագրել է հետևյալ հանգամանքները.

✓ *«առկա է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, այն է՝ ուսումնասիրվող անձը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի*

Խաչատրյանի, Սերգեյ Մինասյանի, Ռոբերտ Քոչարյանի, Գևորգ Կոստանյանի վերաբերյալ քրեական վարույթները գտնվում են նախաքննական փուլում: Այստեղ և հաջորդիվ «վերաբերյալ» ձևակերպումը Գլխավոր դատախազությունը գործածել է այն իմաստով, որ այդ անձի գույքի վերաբերյալ ուսումնասիրության համար հիմք է հանդիսացել տվյալ քրեական վարույթը:

¹²⁰ Հրայր Թովմասյանի, Գագիկ Ծառուկյանի, Վլադիմիր Գասպարյանի, Գագիկ Բեգլարյանի, Սմբատ Դադբաշյանի, Կարեն Սարգսյանի, Կարապետ Գուլյանի, Մանուկ Հակոբյանի, Սերժ Սարգսյանի, Սեդրակ Քոչարյանի, Արմեն Մինասյանի վերաբերյալ քրեական վարույթներից մեկը կամ մի քանիսը ուղարկվել են դատարան:

¹²¹ Արտաշես Փարսադանյանի, Անուշավան Այվազյանի, Ավետիք Դալաթյանի վերաբերյալ քրեական վարույթները կարճվել են, իսկ Երվանդ Չախարյանի վերաբերյալ երկու վարույթներից մեկն է կարճվել:

¹²² Տե՛ս, օրինակ, ՀԿԴ/0013/02/22,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533 ; ՀԿԴ/0105/02/22,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811888

¹²³ Տե՛ս, օրինակ, ՀԿԴ/0201/02/23,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

3-րդ կետով, 314-րդ հոդվածի 1-ին մասով և 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով,

- ✓ ուսումնասիրվող անձը 2015 թվականի մարտի 23-ից հանդիսացել է պաշտոնատար անձ,
- ✓ ուսումնասիրվող անձին մեղսագրվող հանրորեն վտանգավոր արարքների բնույթը, ինչպես նաև ուսումնասիրությունը սկսելու հիմքերի ստուգման արդյունքում պարզված անձին պատկանող գույքի ծավալը կարող են վկայել ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին,
- ✓ առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ ուսումնասիրությամբ հայտնաբերվելիք ապօրինի ծագում ունեցող գույքն իր շուկայական արժեքով կարող է գերազանցել Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը»¹²⁴:

Մեկ այլ դեպքում երբ պատասխանող կողմը հետաքրքրվել է, թե գույքի ապօրինի ծագում ունենալու առնչությամբ կասկածը ինչի հիման վրա է ծագել, հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ անձը եղել է պաշտոնատար անձ, ուստի կասկած է առաջացել, որ կարող է ունենալ ապօրինի ծագում ունեցող գույք՝ հաշվի առնելով իրեն վերագրվող հանցագործությունը՝ լիազորությունների չարաշահում: Ուստի ուսումնասիրությունը սկսվել է, որպեսզի ստուգվի, թե արդյոք նման գույք առկա է, թե ոչ¹²⁵:

Մինևույն ժամանակ ուսումնասիրվող ժամանակահատվածը սովորաբար երկարացվել է՝ անկախ անձի պաշտոնավարման ժամկետից կամ վերագրվող արարքի կատարման պահից:

Պատասխանող կողմը տարբեր գործերի շրջանակներում հիմնականում պնդել է, որ բռնազանձման ենթակա գույքը պետք է ունենա որևէ կապ վերագրվող հանցանքի հետ: Ի հիմնավորում նման դիրքորոշման՝ պատասխանող կողմի ներկայացուցիչներն առավել հաճախ վկայակոչել են ՄԻԵԴ-ի կողմից արտահայտված դիրքորոշումները, այդ թվում՝ Բուլղարիայի դեմ գործերով, որոնցում շեշտվում է բռնազանձման ենթակա գույքի հանցագործության հետ կապի առկայության անհրաժեշտությունը¹²⁶:

Հատկանշական է, որ հանցավորության կամ կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում ՄԻԵԴ-ը համաչափ միջամտություն է համարել հանցագործության հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող գույքի բռնազանձումը¹²⁷, իսկ այն դեպքերում, երբ անձի մասնակցությունը հանցավոր

¹²⁴ ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

¹²⁵ ՀԿԴ/0203/02/23 գործով 14.12.2023թ. նիստ:

¹²⁶ ՏԵՍ, օրինակ՝ ՀԿԴ/0212/02/23 գործով 09.04.2024թ. նիստ:

¹²⁷ Gogitidze and Others v Georgia, §§ 104-113, Telbis and Viziteu v. Romania, 26 June 2018, §§ 77-80; Իտալիայի դեմ գործերով մաֆիայի դեմ պայքարի համատեքստում Riela and Others v. Italy, 4 September 2001; Bongiorno and Others v Italy, 5 January 2010, §§ 45-51, Todorov, §§ 216 և 251-81, Mandev v Bulgaria, 21 May 2024, §§ 106-110.

գործունեությանը¹²⁸ կամ գույքի ձեռքբերման կապը հանցավոր գործունեության հետ չի հիմնավորվել ներպետական ատյաններում (այդ հիմքով հարուցված լինելու դեպքում)¹²⁹, Եվրոպական դատարանը սեփականության իրավունքի խախտում է ճանաչել:

Բուլղարիայի դեմ մի շարք գործերով ՄԻԵԴ-ն ընդգծել է հանցագործության և ձեռք բերված գույքի միջև կապի առկայության անհրաժեշտությունը¹³⁰: Հատկանշական է, որ եթե Թոդորով և այլք ընդդեմ Բուլղարիայի գործով քննարկվել է Բուլղարիայի 2005 թվականի Հանցավոր գործունեությունից ստացված գույքի բռնագրավման մասին օրենքի (Law on Confiscation of Property Obtained as a Result of Criminal Activity) լույսի ներքո, որով նման կապն ակնկալվում էր¹³¹, ապա Յորդանով և այլք ընդդեմ Բուլղարիայի գործով արդեն իսկ գնահատվել է 2012 թվականին ընդունված Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքը (Forfeiture of Unlawfully Acquired Assets Act), որում նման պահանջ չէր նախատեսվել¹³²: Մասնավորապես, Յորդանով և այլք ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ «բռնագանձումն արտոնող ներպետական դատարանները պետք է տրամադրեն որոշակի մանրամասներ այն հանցավոր գործունեության մասին, որի շրջանակներում ենթադրաբար գոյացել է բռնագանձման ենթակա գույքը, և հիմնավոր կերպով ցույց տան, որ նշված գույքը հնարավոր է, որ առաջանար նման գործունեությունից»¹³³: Նշված պահանջը հանդիսացել է պետության առավելությունը հավասարակշռելու երաշխիք:

Եվրոպական դատարանը գտել է, որ արդարացի հավասարակշռման սկզբունքը խաթարվել է, երբ գույքը բռնագանձվել է միայն այն հիմքով, որ անձը չի կարողացել ապացուցել այդ գույքը ձեռք բերելու համար անհրաժեշտ միջոցների առկայությունը՝ առանց քննարկելու համապատասխան հանցավոր գործունեության կամ վարչական իրավախախտման առկայությունը և առանց հանցավոր գործունեության և գույքի ձեռքբերման միջև կապ ցույց տալու¹³⁴:

Այս գործերով բոլոր դեպքերում հանցավոր գործունեության և ձեռք բերված գույքի միջև կապի բացակայության պայմաններում գույքի բռնագանձումը ՄԻԵԴ-ը համարել է սեփականության իրավունքի անհամաչափ միջամտություն¹³⁵:

Դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Դատարանը համաձայնել է հայցվորի ներկայացուցչի մոտեցմանն առ այն, որ որոշակի հանցագործության

¹²⁸ Rummi v. Estonia, 15 January 2015, §§ 105-109.

¹²⁹ Sѓu Todorov and Others v. Bulgaria, §§ 217-50, Mandev v Bulgaria, §§ 100-101.

¹³⁰ Sѓu Todorov and Others v. Bulgaria, Yordanov and Others v Bulgaria, Mandev v Bulgaria.

¹³¹ Sѓu Todorov and Others v. Bulgaria, §§ 93-98.

¹³² Law on Confiscation of Illegally Acquired Property in Favor of the State, entered into force on 19.11.2012, repealed by § 3, item 1 of the transitional and final provisions of the Anti-Corruption and Forfeiture of Illegally Acquired Property Act - SG, issue 7 of January 19, 2018, <https://www.ciela.net/svobodna-zona-normativi/view/2135793015/zakon-za-otnemanie-v-polza-na-darzhavata-na-nezakonno-pridobito-imushtestvo-ot-2012-g>

¹³³ Yordanov and Others v Bulgaria, § 122.

¹³⁴ Venice Commission, CDL-AD(2024)024, § 29.

¹³⁵ Կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում տե՛ս ՄԻԵԴ դիրքորոշումը Gogitidze v Georgia.

կատարման մեջ անձի մեղադրվելու կամ նույնիսկ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված լինելը դիտվում է միայն որպես ազդակ՝ ուսումնասիրություն սկսելու համար՝ հաշվի առնելով նաև այլ պայմանների առկայությունը: Ըստ Դատարանի՝ ուսումնասիրության նախաձեռնումից հետո այս վարույթները քննվում են զուգահեռաբար և որևէ կերպ չեն կանխորոշում միմյանց հանգուցալուծումը, իսկ քրեական վարույթով կայացված վերջնական դատական ակտը քաղաքացիական գործի շրջանակներում կարող է նախադատելի նշանակություն ունենալ բացառապես ՔԴՕ-ի ընդհանուր կանոններին համապատասխան, այսինքն՝ անհրաժեշտ չէ կրկին ապացուցել քրեական վարույթով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերը¹³⁶:

Հրապարակված վճիռներում և որոշումներում Դատարանը, նախ, նշել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումն ըստ Էության *in rem* վարույթ է¹³⁷, իսկ այլ գործերով, հղում անելով այլ երկրներում գործող առանց դատապարտման գույքի բռնագանձման մոդելների, եզրահանգել է, որ ՀՀ-ում գործում է չբացատրվող (անհիմն) հարստացման հիմքով բռնագանձման մոդելը¹³⁸: Այս առումով Դատարանը, բացի գույքի արժեքի և օրինական եկամուտների անհամապատասխանության գործոնից, չբացատրվող հարստության հիմքով գույքի բռնագանձման մեխանիզմներին բնորոշ այլ գործոն չի քննարկել: Գործերից մեկով Դատարանը, վկայակոչելով Օրենքի ընդունման հիմնավորման մեջ նշված փաստարկները, եզրակացրել է, որ «Օրենքի հիմնավորումը ուղղակիորեն մատնանշում է հանցավոր գործունեության և գույքերի ապօրինի ծագման միջև անուղղակի կապի հաստատման անհրաժեշտության բացակայության մասին»¹³⁹: Նշելով, որ Օրենքի ոչ բոլոր հիմքերն են նախատեսում հանցագործության հետ կապ՝ Դատարանը եզրակացրել է, որ «տվյալ դեպքում հանցավոր արարքի հետ անուղղակի կապի հաստատումը պարտադիր պայման չէ, և ակտիվները բռնագանձվում են, եթե չի ապացուցվում դրանց ստացման օրինական աղբյուրների առկայությունը»¹⁴⁰:

Մինևույն ժամանակ, Դատարանն ընդգծել է.

«...թեև եկամուտների և ծախսերի միջև առկա էական անհամապատասխանությունն ինքնին առաջացնում է ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ ողջամիտ ենթադրություն, սակայն այդ

¹³⁶ ՀԿԴ/0010/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530

¹³⁷ ՀԿԴ/0061/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812576

¹³⁸ ՏԵՍ ՀԿԴ/0201/02/23 գործով վճիռ;

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418; ՀԿԴ/0025/02/22 գործով վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշում:

¹³⁹ «Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է չբացատրվող (անհիմն) հարստացման վարույթի այն մոդելը, որի «հիմքում ընկած են անձի օրինական աղբյուրներից ստացված եկամուտների և նրա փաստացի եկամուտների համեմատության հիման վրա բացահայտված էական անհամապատասխանությունները: Հանցավոր արարքի հետ անուղղակի կապի հաստատումը պարտադիր պայման չէ: Այս դեպքում ապացուցման բեռը տեղափոխվում է պատասխանողի վրա և ակտիվները բռնագանձվում են, եթե չի ապացուցվում դրանց ստացման օրինական աղբյուրը»:

¹⁴⁰ ՏԵՍ, ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

ենթադրության, ինչպես նաև ոչ իրավաչափ վարքագծի և գույքերի ձեռքբերման միջև ուղղակի կամ անուղղակի կապի առկայության հաստատումը դուրս են քաղաքացիական գործով ապացուցման առարկայի շրջանակներից և չեն ներառվում Օրենքի տրամաբանության և օրենսդրի նպատակների մեջ»¹⁴¹:

Այս առումով հատկանշական է Դատարանի մեկնաբանությունը պատասխանող կողմի կողմից վկայակոչվող ՄԻԵԴ-ի դիրքորոշումների առնչությամբ: Հրապարակված դատական ակտերում Դատարանն արձանագրել է, որ ակտիվների ձեռքբերման և հանցավոր վարքագծի միջև կապի առկայության անհրաժեշտությունը Եվրոպական դատարանի կողմից գնահատվել է Բուլղարիայի ներպետական իրավական կարգավորումների և հատկապես ներպետական մարմինների կողմից այդ կարգավորումներին տրված մեկնաբանությունների լույսի ներքո, մասնավորապես առ այն, որ 2012 թվականի ակտն ուղղված է կոռուպցիայի և հանցավորության դեմ պայքարին (Yordanov and others v. Bulgaria, 19/02/2024, կետ 48): Հետևաբար, Դատարանի գնահատմամբ, Եվրոպական դատարանի հիշյալ վճռում արտահայտված մեկնաբանությունները և տրված գնահատականները կիրառելի են բացառապես Բուլղարիայի ներպետական օրենսդրության և ներպետական մարմինների կողմից դրան տրված մեկնաբանությունների լույսի ներքո¹⁴²:

Սույն հարցի շուրջ դատական մյուս կազմերի դիրքորոշումը հրապարակայնորեն հասանելի չէ:

➤ *Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դիրքորոշումը.*

Դիտարկված գործերից միայն մեկով է հրապարակվել Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշում: Այդ որոշմամբ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը հիմնավոր է համարել ՀՀ-ում գործող մոդելի վերաբերյալ մեկնաբանությունը: Այդպես, Վերաքննիչ դատարանը արձանագրել է.

«ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնազանձման ինստիտուտը, որով որդեգրվել է անձի օրինական աղբյուրներից ստացված եկամուտների և նրա փաստացի եկամուտների համեմատության հիման վրա բացահայտված էական անհամապատասխանությունների մոդելը»¹⁴³:

Որպես գործող մոդելների տեսակներ, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, ինչպես և ՀԿԴ-ն, մատնանշել են նույն չորս մոդելները, որոնք հիշատակվում են ԵՄ Խորհրդի աշխատակազմի կողմից պատրաստված զեկուլցում, որը հղում է անում Typologies Guide developed by the EU funded Camden Asset Recovery Inter-

¹⁴¹ ՀԿԴ/0010/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530

¹⁴² ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

¹⁴³ ՀԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

Agency Network (CARIN)¹⁴⁴ ձեռնարկին և որում ամփոփվում են ԵՄ պետություններին բնորոշ մոդելներ: Դրանք են՝ բռնագանձում քրեական վարույթի շրջանակներում (Մոդել 1), ընդլայնված բռնագանձում (Մոդել 2), քաղաքացիական վերականգնում (Մոդել 3) և չբացատրվող (անհիմն) հարստացման վարույթ (Մոդել 4)¹⁴⁵:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը նշել է.

«Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման 4-րդ մոդելը, որի հիմքում ընկած են անձի օրինական աղբյուրներից ստացված եկամուտների և նրա փաստացի եկամուտների համեմատության հիման վրա բացահայտված էական անհամապատասխանությունները: Այս մոտեցումն ապահովում է ճիշտ հավասարակշռություն, հատկապես այն դեպքերում, երբ որոշումը չի ենթադրում քրեական պատասխանատվության ենթարկել որևէ մեկին, հն հետևաբար պետությունից չի պահանջվում ապացուցել, որ ակտիվներն ընդհանրապես կապված են հանցավորության հետ: Սա կարող է ուղեկցվել ապացույցների հետ, որոնք ցույց են տալիս, որ ակտիվների սեփականատերը չունի եկամտի որևէ այլ հայտնի աղբյուր»¹⁴⁶:

Հիշեցնենք, որ նախորդիվ ներկայացված են ԵՄ երկրներում գործող անհիմն հարստացման հիմքով գույքի բռնագանձման մեխանիզմի առանձնահատկությունները, որոնք արտացոլված չեն մոդելի հակիրճ նկարագրության մեջ, այդ թվում՝ սահմանափակ թվով կոնկրետ տեսակի հանցագործություններում մեղադրվող կամ միայն պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառելիությունը:

¹⁴⁴ Commission Staff Working Document, Analysis of non-conviction based confiscation measures in the European Union, հասանելի է <https://data.consilium.europa.eu/doc/document/ST-8627-2019-INIT/en/pdf>

¹⁴⁵ Մոդել 1. Բռնագանձում քրեական վարույթի շրջանակներում: Տվյալ դեպքում առկա է սկսված քրեական վարույթ, բայց մեղադրական դատավճռի ստացումն անհնար է (անձի մահ, անձեռնմխելիություն, ապացույցների անբավարարություն և այլն): Այս դեպքում ակտիվների բռնագանձումը հնարավոր է քրեական դատավարության շրջանակներում, եթե ապացուցվում է, որ առկա է կապ հանցագործության և դրանից ստացված ակտիվների միջև:

Մոդել 2. Ընդլայնված բռնագանձում: Այս դեպքում առկա է մեղադրական դատավճիռ, որի հիման վրա կարող են բռնագանձվել դատապարտյալի ակտիվները ամբողջությամբ կամ դրանց մի մասը, այդ թվում՝ անհրաժեշտ չէ հաստատել այդ ակտիվների և հանցագործության միջև որևէ կապի առկայությունը:

Մոդել 3. Քաղաքացիական վերականգնում: Հավանականության ապացուցման շեմի հիման վրա, դատարանը հաստատում է, որ ավելի հավանական է, որ տվյալ ակտիվները հանդիսանում են հանցավոր արարքի հիման վրա ստացված: Այս դեպքում պետությունը ապացուցում է, որ հակաօրինական արարքի և ակտիվների մեջ առկա է անուղղակի կապ:

Մոդել 4. Չբացատրվող (անհիմն) հարստացման վարույթ: Այս քաղաքացիաիրավական վարույթի հիմքում ընկած են անձի օրինական աղբյուրներից ստացված եկամուտների և նրա փաստացի եկամուտների համեմատության հիման վրա բացահայտված էական

անհամապատասխանությունները: Հանցավոր արարքի հետ անուղղակի կապի հաստատումը պարտադիր պայման չէ: Այս դեպքում ապացուցման բեռը տեղափոխվում է պատասխանողի վրա և ակտիվները բռնագանձվում են, եթե չի ապացուցվում դրանց ստացման օրինական աղբյուրը:

¹⁴⁶ ՀԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

Վերաքննիչ դատարանն անդրադարձել է նաև *in rem* վարույթներին՝ նշելով, որ այդ տեսակի վարույթները հարուցվում են, երբ չկան բավարար ապացույցներ դատավճիռ կայացնելու համար, սակայն դրանք կարող են բավարար լինել ակտիվները ապօրինի դիտելու համար, որը պետք է իրականացվի հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշով:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ Օրենքի կառուցակարգերից ելնելով՝ քաղաքացիական ընթացակարգին անցնելուց առաջ անգամ չի պահանջվում փորձել հասնել մեղադրական դատավճռի հիմքով բռնագրավմանը կամ ցույց տալ քրեական դատավարության միջոցով դատապարտում և բռնագրավում ապահովելու անհնարինությունը: Բոլոր դիտարկված գործերով ուսումնասիրվող անձը, նույն ինքը հիմնական պատասխանողը, հանդիսացել է քրեական վարույթով մեղադրյալ: Դիտարկման պահին գործերից զգալի մասով նախաքննությունը դեռ շարունակվում էր, այսինքն՝ քրեադատավարական ընթացակարգով բռնագրավում անելու անհնարինության հանգամանքը դեռևս հաստատուն չէր: Նշված գործերով մեղադրյալները չէին թաքնվել վարույթ իրականացնող մարմնից, չէին մահացել, և նրանց նկատմամբ չէր կիրառվել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը»:

Վերաքննիչ դատարանը նույնպես գտել է, որ Օրենքի 5-րդ հոդվածի դիսպոզիցիայով նշված հիմքերից որևէ մեկի առկայությունը պարզապես հիմք է հրավասու մարմնի համար՝ ուսումնասիրություն սկսելու: Ըստ որոշման՝

«Իրավասու մարմինը ոչ թե բացահայտում է սույն Օրենքով նախատեսված հանցանքներից մեկի հետևանքով հնարավոր ապօրինի եկամուտ ձեռք բերելու փաստի առկայությունը, այլ պարզում է ակտիվների և օրինական եկամուտների միջև տարբերությունը, որի անհամապատասխանության դեպքում այդ եկամուտները դիտվում են որպես անօրինական»¹⁴⁷:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել նաև ԶԿԴ դիրքորոշումն առ այն, որ ակտիվների ձեռքբերման և հանցավոր վարքագծի միջև կապի առկայության անհրաժեշտությունը Եվրոպական դատարանի կողմից գնահատվել է Բուլղարիայի ներպետական իրավական կարգավորումների և հատկապես ներպետական մարմինների կողմից այդ կարգավորումներին տրված մեկնաբանությունների լույսի ներքո¹⁴⁸:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ ԶԿԴ-ն, թե՛ Վերաքննիչ դատարանը թեև վկայակոչում են Օրենքի ընդունման հիմնավորման մեջ նշված հիմքերը, այն է՝ հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը, այնուամենայնիվ գործի քննության համատեքստում չեն ակնկալում, որ հայցվորը պարտավոր է

¹⁴⁷ ԶԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

¹⁴⁸ Նույն տեղում.

հիմնավորել, որ խնդրո առարկա գույքը ձեռք է բերվել նշված գործունեության արդյունքում:

➤ *Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.*

Այս առումով հարկ է նշել, որ ՄԴ-ում դիմումի քննության համատեքստում պատասխանող Ազգային ժողովը նշել է, որ Օրենքն ընդունվել է որպես կոռուպցիայի կանխարգելման և հանցավորության նվազեցմանն ուղղված համակարգային բարեփոխումների բաղադրիչ (*տե՛ս ՄԴՈ-1776, կետ 99*):

ՄԴ-ն արձանագրել է, որ Օրենքի հիման վրա գույքի բռնագանձման միջոցով սեփականության իրավունքին միջամտության օրենսդրի հետապնդած նպատակներն են (1) կոռուպցիայի դեմ պայքարը և (2) հանցավորության դեմ պայքարը, որոնք համարել է իրավաչափ (*տե՛ս ՄԴՈ-1776, կետ 101*):

Անդրադառնալով գույքի հանցավոր գործունեության հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունենալու անհրաժեշտության հարցին՝ ՄԴ-ն, հղում անելով ՄԻԵԴ դիրքորոշումներին, նշել է, որ Եվրոպական դատարանի վճիռներում միջամտության համաչափության պահանջի բաղադրիչ է դիտարկվել, մասնավորապես, բռնագանձման ենթակա գույքի և բռնագանձման վարույթի համար հիմք հանդիսացող հանցանքի միջև կապի առկայությունը¹⁴⁹: Արդյունքում Բարձր դատարանը եզրահանգել է, որ սեփականության հիմնական իրավունքի սահմանափակման «նվազագույն նշանոցը» ՄԻԵԴ վճռով սահմանված լինելու պայմաններում Օրենքով հետապնդվող՝ հանցավորության դեմ պայքարի նպատակով միջամտության համաչափությունը կարող է ապահովվել միայն, եթե Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերի՝ 24-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակցության մեջ, մեկնաբանությունը պարունակի բռնագանձման ենթակա գույքի՝ համապատասխան հանցանքի հետ այնպիսի կապը հիմնավորելու պահանջ, որը ներառում է տվյալ անձին վերագրվող հանցանքի՝ իր համար տնտեսական օգուտ գեներացնելու հնարավորությունը (*տե՛ս ՄԴՈ-1776, կետ 160*):

Իսկ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված պաշտոնատար անձանց պատկանող կամ վերագրվող՝ բռնագանձման ենթակա գույքի կազմը որոշակիացնելու առումով Սահմանադրական դատարանը նշել է, որ Օրենքը կարող է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակի շրջանակում հետապնդել այնպիսի գույքի հայտնաբերման և բռնագանձման խնդիր, որը ձեռք է բերվել պաշտոնավարման մեկնարկից հետո, ներառյալ՝ պաշտոնավարման ավարտից հետո և չի հիմնավորվում օրինական եկամուտներով: Իսկ պաշտոնեական լիազորություններն ստանձնելուց առաջ

¹⁴⁹ «Յորդանովն ընդդեմ Բուլղարիայի» գործով այս դատարանը նշել էր, որ որպեսզի գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտությունը համապատասխանի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին, ներպետկան դատարանից ակնկալվում է, որ այն տրամադրի այն հանցանքի կամ զանցանքի վերաբերյալ որոշ տվյալներ, որի կատարման արդյունքում է ենթադրաբար ձեռք բերվել բռնագանձման առարկա գույքը, և ցույց տա, որ ողջամտորեն հնարավոր էր կապ այդ իրավախախտման և խնդրո առարկա գույքի միջև:

ձեռք բերված գույքի բռնագանձումը դուրս է գալիս հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակի շրջանակից, և հետևաբար՝ չի կարող համատեղելի համարվել համաչափության սկզբունքի հետ (*տե՛ս ՄԴՈ-1776, կետ 147*):

ՄԴ-ն գտել է, որ քաղաքացիական դատավարության կարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ընթացակարգը և՛ պիտանի, և՛ անհրաժեշտ գործիքակազմ է՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը տնտեսական շրջանառությունից դուրս բերելու և թեմատիկ միջազգային փաստաթղթերով ստանձնած՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի շրջանառությունը կանխելու և այն բռնագանձելու հարցերում ՀՀ մասնակցությամբ միջազգային համագործակցության շրջանակում ունեցած պարտավորությունների կատարման համար (*տե՛ս ՄԴՈ-1776, կետեր 163-164*):

Այսպես, Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ Օրենքի մնացած նախապայմանների պահպանման պայմաններում, պաշտոնատար անձի վերաբերյալ (կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում) սկսված ուսումնասիրության դեպքում բռնագանձման պահանջը պետք է վերաբերի օրինական եկամուտներով չհիմնավորվող այն գույքի բռնագանձմանը, որը ձեռք է բերվել պատասխանողի կողմից իր պաշտոնի ստանձնումից հետո, իսկ Օրենքով հետապնդվող՝ հանցավորության դեմ պայքարի նպատակի շրջանակում՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ պատասխանողին վերագրվող հանցանքին առնչվող այն գույքի բռնագանձումը, որի ձեռքբերման օրինականությունը չի հիմնավորվում վերջինիս կողմից (*տե՛ս ՄԴՈ-1776, կետեր 150; 165*):

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ գույքի բռնագանձման ենթակա լինելու հարցը որոշելիս.

- ✓ Թե՛ Հակակոռուպցիոն դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը գտնում են, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմը, անկախ ուսումնասիրության հիմքից, արտացոլում է չբացատրվող հարստության հիմքով բռնագանձման մոդելը:
- ✓ Ծեշտադրվում է նշված մոդելին բնորոշ միայն մեկ գործոն՝ գույքի և օրինական եկամտի անհամապատասխանությունը, իսկ ուսումնասիրության նպատակ դիտվում է ոչ թե իրավասու մարմնի կողմից Օրենքով նախատեսված հանցանքներից մեկի հետևանքով հնարավոր ապօրինի եկամուտ ձեռք բերելու փաստի առկայության բացահայտում, այլ ակտիվների և օրինական եկամուտների միջև տարբերության պարզում:
- ✓ Հաշվի առնելով Օրենքի կարգավորումները՝ չի պահանջվում ցույց տալ քրեական դատավարության շրջանակներում դատապարտելու և բռնագրավման անհնարինությունը:

- ✓ Չի պահանջվում հիմնավորել խնդրո առարկա գույքի կապը վերագրվող հանցանքի կամ այլ անօրինական գործունեության հետ: Հանցանքին առնչվելը դիտարկվում է որպես ուսումնասիրությունը սկսելու ազդակ: Իսկ նման կապի պարտադիր առկայության մասին ՄԻԵԴ-ի կողմից արտահայտված դիրքորոշումը համարել են համատեքստով պայմանավորված, այլ ոչ թե ուղենիշային:

Նշված մոտեցումը համահունչ չէ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշմանն առ այն, որ հանցավորության դեմ պայքարի համատեքստում բռնազանձման ենթակա կարող է ներկայացվել միայն այն գույքը, որի ծագումը ունի ուղղակի կամ անուղղակի կապ հանցավոր գործունեության հետ:

4.2. Ուսումնասիրության և ուսումնասիրվող ժամկետը

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունն ընթացակարգ է, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն:

Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրության նյութերով հայտնի հանգամանքները՝ Իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը ներառում է ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը, որը չի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին, բացառությամբ այն դեպքի, երբ ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սահմանված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են: Նման դեպքում Իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը:

Գործերի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ ուսումնասիրությունը ոչ միշտ է կատարվում սահմանված ուսումնասիրվող ժամկետի ժամանակահատվածի շրջանակներում, այլ որոշ դեպքերում ներառում է դրանից առաջ ուսումնասիրվող անձի գույքային դրության վերաբերյալ հանգամանքներ և փաստեր: Միևնույն ժամանակ այդ ժամանակահատվածի սահմանումը որևէ կերպ չի կարգավորվում և փաստացի դատախազության հայեցողությամբ է որոշվում:

Այս առումով կարելի է առանձնացնել հետևյալ խնդիրներ.

- ✓ Իրավասու մարմնի՝ ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու հայեցողությունը, որը իրացվում է ոչ թե որպես բացառություն, այլ՝ կանոն.
- ✓ Ուսումնասիրվող ժամանակահատվածից ավելի վաղ ժամանակահատվածի վերաբերյալ վերլուծություն իրականացնելու հայեցողությունը, որը հանգեցնում է տարբերակված մոտեցման.
- ✓ Օրենքի ընդունումից հետո ուսումնասիրվող ժամանակահատվածի շարունակաբար երկարումը.
- ✓ Երկարատև հետադարձության պայմաններում ապացույցների (ան)հասանելիությունը:

➤ *Իրավասու մարմնի ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու հայեցողությունը.*

Բոլոր ուսումնասիրված գործերի դեպքում դատախազությունը սահմանել է ուսումնասիրվող նոր՝ Օրենքով նախատեսված 10 տարին գերազանցող ժամանակահատված:

Դիտարկված 26 գործերից 14-ով (54%) ուսումնասիրվող ժամանակահատվածը ներառել է 1990-ական թվականները՝ ընդհուպ մինչև 05.10.1992թ., իսկ ամենակարճը եղել է 15 տարի՝ 2008-ից մինչև 2023 թվական: Դիտարկված գործերով ուսումնասիրվող ժամանակահատվածը տատանվել է 15-ից մինչև 30 տարի: Միջինացված ժամկետը կազմել է 23 տարի¹⁵⁰:

Վենետիկի հանձնաժողովը Գլխավոր դատախազության հայեցողությամբ ուսումնասիրվող ժամանակահատված սահմանելու իրավասությունը խնդրահարույց է համարել, իսկ ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ այլ պետություններում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենսդրությունը գնահատելիս ընդգծել է ողջամիտ ժամկետային սահմանափակում դնելու կարևորությունը¹⁵¹:

Ուսումնասիրված այլ պետություններում սահմանված են ավելի հստակ և կարճ ժամկետներ: Օրինակ՝ Բուլղարիայի 2005 թվականի «Հանցավոր գործունեությունից ստացված գույքի բռնագրավման մասին» օրենքով սահմանված էր 25 տարվա ժամանակահատված, որը չափազանց երկար է համարվել ՄԻԵԴ-ի կողմից¹⁵², և արդեն իսկ 2012 թվականին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսվել է 10 տարվա առավելագույն ժամկետ, որը չի կարող հետադարձությամբ երկարացվել:

Գործերից մեկով պատասխանողի ներկայացուցիչը հայտարարել է, որ Օրենքում սահմանված 10 տարվա ժամկետը պատրանքային բնույթ է կրում, քանի որ սահմանում է ժամկետ, բայց դրանից դուրս ուսումնասիրություն է արվում,

¹⁵⁰ Տվյալները ամփոփվել են Գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 31/8/113/24 առ 21.05.2024թ. գրություն; 31/8/20/25 առ 20.01.2025թ. գրություն.

¹⁵¹ Venice Commission, CDL-AD(2022)048, կետ 54; 2024 CDL-AD(2024)024, կետ 28, 33-34.

¹⁵² St' u Todorov and Others v Bulgaria.

երկարացվում է: Հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ երկարացման դեպքում միշտ չէ, որ ի վնաս է կատարվում ուսումնասիրությունը, քանի որ հնարավոր է՝ եկամուտներ հաստատվեն¹⁵³:

Փաստացի՝ Օրենքով որպես կանոն հաստատված 10-ամյա ժամկետը մշտապես գերազանցվել է, և ուսումնասիրվող նոր ժամանակահատվածի սահմանումը հանդիսացել է ոչ թե բացառություն, այլ՝ կանոն:

➤ *Ուսումնասիրվող ժամանակահատվածից ավելի վաղ ժամանակահատվածի վերաբերյալ վերլուծություն իրականացնելու հայեցողությունը:*

Դիտարկված գործերով ուսումնասիրվող ժամանակահատվածը չի համընկել անձին վերագրվող հանցանքի կատարման կամ պաշտոնավարման ժամկետների հետ:

Այսպես, Գլխավոր դատախազության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ ուսումնասիրության շրջանակներում վերլուծվող ժամանակահատվածը գործից գործ տարբերվում է¹⁵⁴:

Օրինակ, ըստ Գլխավոր դատախազության՝ ուսումնասիրվող անձանցից մեկի վերաբերյալ ուսումնասիրվող ժամանակահատված նախ սահմանվել է 2010թ.-ի հոկտեմբերի 8-ից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, իսկ այնուհետև՝ 1996 թվականի մարտի 14-ից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, իսկ եկամուտների և ծախսերի վերլուծությունը կատարվել է սկսած 1991 թվականից: Մեկ այլ դեպքում նման հաշվարկ կատարվել է 1994 թվականից և այլն:

Նիստերի ընթացքում նշված հարցը քննարկելիս որևէ հստակ հիմնավորում չի տրվել, թե ինչու չի ուսումնասիրվել պատասխանողի ավելի վաղ ժամանակահատվածում գույքային դրությունը, որը կարող էր վճռորոշ նշանակություն ունենալ գույքի ծագման օրինականության հարցում:

«Պատասխանողի ներկայացուցիչը հետաքրքրվեց, թե ինչու չի հետազոտվել 1978 թվականից մինչև 2003 թվականը պատասխանողի ունեցած աշխատավարձերը և այլ եկամտի աղբյուրները: Ի պատասխան՝ հայցվորի ներկայացուցիչը նշեց, որ եկամուտները սկսել են ստուգվել 1996 թվականից: Պնդեց, որ «որևէ պարտադիր սկզբնակետ չկա, որովհետև ինչ թիվ էլ վերցվի, դրանից առաջ թիվ կա, որը նույնպես կարիք ունի ստուգման: Բացի դա, աշխատավարձերը խորհրդային շրջանում այդքան բարձր չեն եղել, և 1993 թվականին 1 միլիոն ռուբլին փոխվել է 5000 դրամի հետ»¹⁵⁵:

Մեկ այլ գործով պատասխանողի ներկայացուցիչը հարց է ուղղել հայցվորի ներկայացուցչին, թե ինչու հաշվի չեն առել պատասխանողի 34 տարվա

¹⁵³ ՀԿԴ/0203/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814434

¹⁵⁴ Գլխավոր դատախազության 31/8/20/25 առ 20.01.2025 թ. գրություն.

¹⁵⁵ ՀԿԴ/0151/02/23, 11.032024թ. նիստ:

աշխատանքային փորձը, վերջինս 1963 թվականից աշխատել է, իսկ ուսումնասիրության շրջանակներում հաշվի են առել միայն 1997 թվականից սկսած տվյալները: Հարցին ի պատասխան, թե արդյոք անձը չէր կարող ունենալ խնայողությունն այսքան տարվա աշխատանքային փորձ ունենալու դեպքում, հայցվորի ներկայացուցիչը հակադարձել է, որ ծախս էլ է ունեցել անձը՝ հավելելով, որ խնայողությունների մասով փորձ չի արվել պարզել դրանց առկայությունը, իսկ հասանելի տվյալները 1997 թվականից են, ինչպես և հաշվարկը¹⁵⁶:

Դիտարկված գործերով արձանագրվել է, որ Գլխավոր դատախազությունը ոչ միասնական մոտեցում է ցուցաբերել ուսումնասիրվող անձի՝ մինչև ուսումնասիրվող ժամանակահատվածը եղած գույքային դրությունը գնահատելու ուղղությամբ, ինչն ազդել է անձի վճարունակությունը և գույքի ձեռքբերման օրինականությունը գնահատելու վրա¹⁵⁷:

Գործերից մեկով վերջնական դատական ակտում Դատարանը նշել է, որ.

«...ուսումնասիրության ամբողջականությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Իրավասու մարմինը անհրաժեշտաբար պետք է ուսումնասիրի նաև անձի գույքային դրությունը ուսումնասիրության ժամանակահատվածին նախորդող շրջանում: Այս իմաստով ուսումնասիրությունը «գրոյական» կետից սկսելու դեպքում, երբ դա, ըստ Իրավասու մարմնի, կատարվում է «անձի վիճակը չվատթարացնելու» սկզբունքից ելնելով, պետք է առնվազն հիմնավորվի, որ ուսումնասիրվող ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածում անձը չի ունեցել եկամուտներ, կամ նրա կողմից կատարված ծախսերը գերազանցել են ստացված եկամուտները: Այդպիսի հիմնավորման բացակայության պայմաններում ստացվում է, որ ուսումնասիրությունը «գրոյական» կետից սկսելով՝ ուսումնասիրվող անձի վիճակը առավել վատթարանում է, քանի որ հաշվարկում չեն ներառվում նրա եկամտի մնացորդները, մինչդեռ դա կարող է էական ազդեցություն ունենալ կատարված հաշվարկի և ըստ այդմ՝ ապօրինի որակված գույքի ծավալի վրա: Ընդ որում, ուսումնասիրվող ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածում ձեռք բերված գույքերի կամ դրամական միջոցների վերաբերյալ Իրավասու մարմնի եզրահանգումները պետք է ուղղված լինեն ցույց տալու ուսումնասիրվող ժամանակահատվածի մեկնարկին ուսումնասիրվող անձի մոտ առկա ողջ գույքային զանգվածը, և միայն եկամուտների և ծախսերի բացասական տարբերության դեպքում Իրավասու մարմինը կարող է հաշվարկը սկսել «գրոյական» կետից»¹⁵⁸:

Ավելին՝ Դատարանը գործերից մեկով նշել է հետևյալը.

«Այն պարագայում, երբ Իրավասու մարմինը ուսումնասիրության ժամկետի մեջ ներառում է ուսումնասիրությանը նախորդող տասը տարուց առավել

¹⁵⁶ ՀԿԴ/0203/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814434

¹⁵⁷ ՀԿԴ/0201/02/23 գործով հացը ամբողջությամբ մերժվել է, այդ թվում՝ քանի որ անձի եկամուտները ոչ ամբողջությամբ էին գնահատվել:

¹⁵⁸ ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

երկար ժամանակահատված, ուսումնասիրության շրջանակներում, մասնավորապես՝ ապացույցների հավաքման գործընթացում, անհրաժեշտ է դրսևորել ջանասիրության («due diligence») առավել բարձր աստիճան՝ հաշվի առնելով, որ ուսումնասիրությունը կարող է վերաբերել առավել քան 30 տարի առաջ ընկած ժամանակահատվածին, ինչն էլ իր հերթին կարող է ենթադրել պատասխանողի աշխատանքային կամ եկամուտ ենթադրող այլ գործունեության ոչ պատշաճ կամ ոչ ամբողջական փաստաթղթավորում, իրավասու պետական մարմիններում փաստաթղթերի չպահպանվածություն կամ ոչնչացում և այլն»¹⁵⁹ :

➤ *Փորձագիտական կարծիք.*

Հարցված դատավորները միակարծիք էին առ այն, որ ուսումնասիրության շրջանակներում պետք է ուսումնասիրվի նաև ուսումնասիրվող անձի՝ մինչև ուսումնասիրվող ժամանակահատվածը եղած գույքային դրությունը, որպեսզի եզրակացությունները լինեն փաստահեն և արտացոլեն անձի իրական կարողությունը ուսումնասիրվող ժամկետի մեկնարկի պահին:

Ըստ հարցված դատավորներից մեկի՝ ուսումնասիրվող ժամանակահատվածի առավելագույն ժամկետը Օրենքով սահմանված 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո և մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածն է, իսկ ուսումնասիրության ժամանակահատվածը (վերլուծությունը) կարող է ձգվել մինչև անգամ 1920 թվականը, օրինակ, եթե պահպանվել են ապացույցներ, բայց Օրենքի իմաստով՝ բռնազանձման պահանջ կարող է ներկայացվել միայն ուսումնասիրվող ժամանակահատվածում ձեռք բերված գույքի վերաբերյալ:

«Դատախազությունը, որպես ելակետ ընդունելով ուսումնասիրվող ժամանակահատվածը, պետք է ուսումնասիրի մինչև այդ պահն ընկած ժամանակահատվածը, որպեսզի հասկանանք՝ մինչև 1991 թվականը գրոյականո՞վ ենք հաշվարկը անում, թե՞ ամեն դեպքում որևէ գույք ունեցել է անձը: Այսինքն՝ եթե հնարավորություն ունեն գնալ մինչև 1980-ները, տվյալ ունեն, սկսում են 1980-ներից, որ այսքան աշխատավարձ է ունեցել, իսկ 1991 թվականից կամ ուսումնասիրվող պահից արդեն ֆիքսում են, որ ունեցել է այսքան գումար: Դա էլ է որոշ խնդիր առաջացնում կողմերի մոտ: Նշում են, որ եթե դու ուսումնասիրվող ժամանակահատված ես սահմանել, դրանից առաջ որևէ ուսումնասիրություն չես կարող իրականացնել, բայց միևնույն ժամանակ չեն տալիս պատասխանը, թե արդյո՞ք գրոյական պետք է սկսել, թե՞ ոչ: Կա մոտեցում նաև, որ մինչև 1991 թվականը/ուսումնասիրվող ժամանակահատվածը պետք է հաշվել միայն եկամուտները, իսկ ծախսերը՝ ոչ, ու դրական ելակետից սկսել ուսումնասիրվող ժամանակահատվածը»:

Դատավոր

➤ *ՄԴ դիրքորոշումը.*

¹⁵⁹ Նույն տեղում:

իրավասու մարմնի կողմից մինչև պաշտոնավարման մեկնարկն ընկած ժամանակահատվածի ուսումնասիրությունն իրականացնելը Սահմանադրական դատարանը ինքնին խնդրահարույց չի համարել, եթե նման վերլուծության նպատակն է ստուգել անձի գույքային դրությունը՝ պարզելու, թե արդյոք նա բավարար միջոցներ է ունեցել արդեն պաշտոնավարման մեկնարկից հետո իր օրինական եկամուտներով գույքի ձեռքբերման համար կամ որևէ այլ՝ Օրենքի նպատակին համահունչ հանգամանքներ պարզելու նպատակով: Մինևույն ժամանակ ՍԴ-ն հստակ արձանագրել է, որ «որպես բռնագանձման ենթակա գույք պետք է դիտարկվի բացառապես Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով այն գույքը, որը ձեռք է բերվել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմաստով պաշտոնի ստանձնման պահից հետո, քանի որ մինչ այդ ձեռք բերված գույքի բռնագանձումը դուրս է հանրային իշխանության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակից»:

Իսկ եթե անձի մոտ հայտնաբերվում է որևէ գույք, որը ձեռք է բերվել մինչև պաշտոնավարման մեկնարկի պահը և որը չի հիմնավորվում օրինական եկամտով, «դրա նկատմամբ չի կարող ծագել Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածն այն պատճառաբանությամբ, որ Օրենքով հետապնդվող հանրային շահը հանրային ծառայության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարն է՝ դրա կանխարգելման միջոցով» (տե՛ս ՍԴ-1776, կետ 148): Սահմանադրական դատարանը արձանագրել, որ մինչև պաշտոնեական լիազորություններն ստանձնելը ձեռք բերված գույքի դրա բռնագանձումը դուրս է գալիս հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակի շրջանակից, և հետևաբար՝ չի կարող համատեղելի համարվել համաչափության սկզբունքի հետ (տե՛ս ՍԴ-1776, կետ 147):

Իսկ հանցագործության հետ առնչություն ունենալու հիմքով ուսումնասիրություն սկսելու դեպքում ուսումնասիրվող ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածի վերաբերյալ տվյալներ հավաքագրելու առումով թեև հստակ չի անդրադարձել, այնուամենայնիվ, նշել է, որ գույքի բռնագանձման համար անհրաժեշտ է որոշ հավաստիությամբ ցույց տալը, որ բռնագանձման ենթակա գույքը կարող էր գնեցնացված լինել հանցավոր վարքագծի արդյունքում (տե՛ս ՍԴ-1776, կետ 161): Վերը նշված սկզբունքի հետ համադրության մեջ մեկնաբանելով այս դրույթը՝ կարելի է եզրահանգել, որ ուսումնասիրվող ժամկետին նախորդող ժամանակահատվածի վերաբերյալ տվյալների հավաքագրումը այս դեպքում էլ պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ պարզելու անձի գույքային դրությունը և հնարավորությունը գույքը ձեռքբերել օրինական եկամտի հաշվին, թե՞ հանցավոր գործունեությունից:

Ինչպես տեսնում ենք, և՛ ՀԿԴ-ն, և՛ ՍԴ-ն ոչ միայն խնդիր չեն տեսնում, այլ նաև հայցվոր կողմից ակնկալում են, որ ուսումնասիրվող ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածում անձի գույքային դրությունը պետք է ուսումնասիրվի, որպեսզի ուսումնասիրվող ժամանակահատվածի պահի դրությամբ ճշգրիտ գնահատվի անձի եկամուտները և, ըստ այդմ, գույքի

ձեռքբերման համար բավարար միջոցներ ունենալու հնարավորությունը: Ու եթե ՀԿԴ-ն կենտրոնանում է մինչև ուսումնասիրվող ժամանակահատվածի մեկնարկը անձի եկամուտների և ծախսերի հաշվարկի վրա և չի քննարկում ուսումնասիրվող ժամանակահատվածի սահմանման սահմանափակումների, այդ թվում՝ պաշտոնավարման կամ ենթադրյալ հանցագործության կատարման և վերագրվող արարքի հետ կապի անհրաժեշտությունը, ապա ՄԴ-ն շեշտադրում է, որ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը կարող է տարածվել միայն վերագրվող արարքի համատեքստում կամ պաշտոնավարման ընթացքում ենթադրյալ կոռուպցիայի հետ կապի առկայության դեպքում, այսինքն՝ փաստացի նեղացնում է իրավասու մարմնի կողմից հայցապահանջում ներառվող հնարավոր գույքի ծավալը:

Դիտարկված գործերով իրավասու մարմինը հայցապահանջում կիրառել է իր կողմից սահմանված ժամանակահատվածում ձեռք բերված ցանկացած գույք, որի ձեռքբերման համար, ըստ հայցվորի, պատասխանողը միջոցներ չունեն, և չի կաշկանդվել վերագրվող հանցագործության կատարման կամ անձի պաշտոնավարման ժամկետներով: Ուստի նման մոտեցումը համահունչ է ՄԴ դիրքորոշմանը:

4.3 Գործով պատշաճ հայցվոր չհանդիսանալը

Գլխավոր դատախազության և դրա առանձնացված ստորաբաժանման՝ ապօրինի գույքի բռնագանձման հայցով Հակակոռուպցիոն դատարան դիմելու լիազորություն չունենալու հարցը հանդիսացել է հիմնական խնդիրներից մեկը, որը այս խումբ գործերով բարձրացվել է պատասխանողների կողմից: Դիտարկված գործերով պատասխանող կողմը ներկայացրել է գործի քննությունը կարճելու միջնորդություն՝ վիճարկելով հայցվորի առանձնացված ստորաբաժանման իրավասությունը:

Գործերից մեկով պատասխանողի ներկայացուցիչները պնդել են, որ քաղաքացիական հարաբերություններում կողմը պետք է իրավաբանական անձ լինի, իսկ որպեսզի լինի, պետք է գրանցված լինի իրավաբանական անձանց ռեեստրում: Ըստ հայցվորի՝ իրավասությունը կարգավորվում է կանոնադրությամբ ու Գլխավոր դատախազի որոշմամբ, որով սահմանվել են Ապօրինի ծագում ունեցող գույքի վարչության լիազորությունները: Ըստ պատասխանող կողմի՝ նշված դեպքում իրավասությունը տրվել է Գլխավոր դատախազի որոշմամբ, որով հաստատվել են կառուցվածքի փոփոխությունները: Նշված որոշումը նորմատիվ ակտ չէ, այլ լոկալ, հետևաբար, այն չի կարող համարվել իրավունքի աղբյուր և չի կարող առաջացնել իրավական հետևանքներ: Պատասխանող կողմը պնդել է, որ հրապարակված չեն այդ ակտերը, ուստի և չեն կարող առաջացնել հետևանքներ: Բացի այդ, նշվել է, որ ուսումնասիրություն իրականացնող և հայց ներկայացնող վարչությունը չի հանդիսանում առանձին մարմին և, հետևաբար, Վարչությունը չի կարող համարվել իրավասու մարմին: Պատասխանող կողմը պնդել է, որ իրավասու մարմին գոյություն չունի ու

միջնորդել է կարծել գործը: Դատարանը մերժել է միջնորդությունը՝ նշելով, որ Վարչությունը ստեղծելիս Գլխավոր դատախազը գործել է իր լիազորությունների սահմաններում¹⁶⁰:

Մեկ այլ գործով պատասխանող կողմը պնդել է, որ դատախազության լիազորությունների շարքից ակնհայտ է դառնում, որ քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելու լիազորությունը տեղավորվում է միայն պետական շահերի պաշտպանության համար հայց հարուցելու լիազորության մեջ: Ընդ որում՝ կիրառվում է պետական, և ոչ հանրային շահ ձևակերպումը: Պնդվել է, որ վարույթի շրջանակներում էական է, որ հայց հարուցելու համար լինի հենց քաղաքացիաիրավական հիմք և պետության շահ՝ իրավական շահագրգռվածությունը, և ոչ թե հանրային իրավական՝ պատասխանատվություն ենթադրող հիմք: Ըստ այդմ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սպառնիչ են սահմանված իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը, իսկ Օրենքը սահմանում է բացառապես ընթացակարգային հարցեր, դրանով սահմանված չէ պետության մոտ իրավունքի ծագման կամ սեփականատիրոջ մոտ պարտականության ծագման նոր հիմք, որի հիման վրա իրավասու մարմինը պետության շահերի պաշտպանության համար իրավասու լինելը դիմելու դատարան: Ըստ այդմ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված են իրավունքների և պարտականությունների ծագման սպառնիչ հիմքերը, իսկ Օրենքը չի սահմանում նոր իրավունքների կամ պարտականությունների ծագման հիմք: Դատարանն արձանագրել է, որ հայցադիմումը ներկայացնելու պահին գործող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցի հարուցումը¹⁶¹:

Գործերից մեկով պատասխանողը պնդել է, որ Գլխավոր դատախազի տեղակալը չի հանդիսանում իրավասու մարմնի կազմի անդամ կամ ներկայացուցիչ, ուստիև իր անվամբ ուղարկված հարցումները ու դրանց պատասխանները անթույլատրելի ապացույց են¹⁶²:

Մեկ այլ գործով պատասխանող կողմը առարկել է հայցվոր կողմի թիմում դատախազության տնտեսագետի մասնակցությանը: Հիմնական փաստարկն այն էր, որ միայն դատախազական լիազորություն իրականացնող անձը կարող է ներկայացնել դատախազությանը, այսինքն՝ տնտեսագետի լիազորությունները պատշաճ չեն: Հայցվորը պնդել է, որ նշված հարցի վերաբերյալ արդեն իսկ հայտվել է դիրքորոշում այլ գործերով: Մասնավորապես, դատախազությունը պետական մարմին է, որի ղեկավարը կարող է աշխատակցին լիազորել ներկայացնել այն: Այս դեպքում տնտեսագետը Դատախազության ղեկավարի

¹⁶⁰ ՀԿԴ/0149/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814025; որոշումը առկա չէ դատալեքսում

¹⁶¹ ՀԿԴ/0010/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811927

¹⁶² ՀԿԴ/0024/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811544

տեղակալի կողմից լիազորված անձ է: Դատարանը մերժել է նշված միջնորդությունը՝ նշելով, որ ԶԴՕ-ի իմաստով՝ տնտեսագետը հանդես է գալիս ի պաշտոնե ներկայացուցչի՝ Գլխավոր դատախազի տեղակալի կողմից լիազորված անձ, որը գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ լիազորող անձի հետ¹⁶³:

Իրավասությունը վիճարկող միջնորդությունները Դատարանի կողմից բոլոր դեպքերում մերժվել են:

Հարցված փաստաբաններից մեկը նշել է, որ *«Օրենքի ֆունդամենտալ խնդիրներից մեկը այն է, որ դատախազությունը նման լիազորություն չունի, իսկ եթե դատախազությունը նման լիազորություն չունի, մնացածը դառնում է հակասահմանադրական»*:

Դատախազության իրավասության հարցը քննարկվել է նաև Օրենքի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ դիմումի քննության շրջանակներում: Այսպես, ՄԴ դիմողը նշել է, որ Օրենքով որպես անձի գույքի օրինականության ուսումնասիրություն իրականացնելու համար իրավասու մարմին է սահմանվել Դատախազությունը, ինչը խնդրահարույց է, քանի որ Սահմանադրության 176-րդ հոդվածով դատախազության լիազորությունները սահմանված են սպառնալից կերպով: Դատախազությունն օժտվում է մի լիազորությամբ, որը նախատեսված չէ Սահմանադրությամբ, իսկ պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման լիազորությունը բացառիկ է, և պետք է նեղ մեկնաբանվի: Ըստ դիմողի դիրքորոշման՝ ապօրինի ծագում ունեցող գույքը չի կարող համարվել պետության գույքային շահերին վնաս, այլ խոսքը հանրորեն վտանգավոր արարքի և հանրային շահերին հասցվող վնասի մասին է, չի համապատասխանում պետական շահերի պաշտպանության գործառույթին, ուստի Սահմանադրության 176-րդ հոդվածի տեսանկյունից Դատախազությանն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ իրականացնելու լիազորություն չէր կարող վերապահվել: Դիմողը նաև նշել է, որ և՛ քրեական վարույթը, և՛ ապօրինի ծագում ունեցող գույքի ուսումնասիրությունն իրականացվում է մեկ մարմնի կողմից, որը կարող է մեկ վարույթից ստացված տեղեկությունն առանց խոչընդոտի օգտագործել մեկ այլ վարույթում, իսկ Օրենքը դատախազությանը օժտում է մի շարք առավելություններով, որոնք հակասության մեջ են ինչպես մրցակցության հիմնարար սկզբունքի, այնպես էլ՝ միջազգային փորձի հետ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու և նման որոշման կայացմանը հանգեցրած ուսումնասիրություններ անցկացնելու լիազորությունները բխում են Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասից: Նշվել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու լիազորությունը նախատեսված է Օրենքով՝ 20-րդ հոդվածով, այսինքն՝ օրենսդիրը, իր հայեցողական

¹⁶³ ՀԿԴ/0151/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814038

լիազորությունից օգտվելով, համարել է նման հայց հարուցելու հիմքերի առկայությունը որպես «բացառիկ դեպք»: Քննարկելով հանրային և պետական շահի հասկացությունները՝ Օրենքով հետապնդվող շահը՝ հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը, ՄԴ-ն դիտարկել է որպես հանրային շահի հետապնդելու ցուցիչ, որոնք ձեռք են բերում պետական շահի որակ և, ապա՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով ներկայացված պահանջների բավարարման նյութական շահառուն Հայաստանի Հանրապետությունն է: Արդյունքում՝ ՄԴ-ն եզրակացրել է, որ նշված երկու հանգամանքների համակցությունը բավարար է, որպեսզի այս տեսակի վարույթներով ներկայացված հայցերը դիտարկվեն որպես Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով «պետական շահերի պաշտպանության» հայցեր: Սահմանադրական դատարանը գտել է, որ Սահմանադրությունը Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հնարավորությունը կապում է բացառապես նման իրավասության, ինչպես նաև դրա իրականացման կարգի՝ օրենքով սահմանված լինելու հետ՝ առանց որևէ այլ վավերապայման նշելու (*տե՛ս ՄԴՈ-1776, կետեր 369-371*):

Անկախ պատասխանող կողմերի բերած փաստարկների՝ և՛ ՀԿԴ-ն, և՛ Սահմանադրական դատարանը միանշանակ համարել են, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելը, այդ թվում՝ դրան նախորդող գործողությունները, հավասարեցվում են պետական շահերի պաշտպանությանը, ուստի Գլխավոր դատախազությունը գործում է Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

4.4 Ոչ պատշաճ դատարանի հանդիսանալը

Հակակոռուպցիոն դատարանը ստեղծելուց առաջ և անմիջապես հետո փորձագիտական համայնքում կարծիքները կիսվել էին առ այն, թե արդյոք ՀՀ-ում անհրաժեշտ է մասնագիտացված դատարանի ստեղծումը, թե ոչ, և որոնք են նման դատարանի ստեղծման իրական դրդապատճառները: Հարցված փաստաբաններից մեկը կարծիք է հայտնել, որ նման դատարանի ստեղծման հիմնական նպատակը ոչ թե կոռուպցիայի դեմ ավելի արդյունավետ պայքար մղելն է, այլ պայմաններ ստեղծել, որպեսզի ՀԿԴ-ն կաշկանդված չլինի ընդհանուր իրավասության դատարանների պրակտիկայով, այլ կիրառի Հայաստանի իրավական համակարգին խորթ ընթացակարգեր, այն էլ միայն մասամբ ներմուծված, կամ էլ ընդհանուր կարգավորումները կիրառի այլ կերպ:

«Նման ընթացակարգ այս ձևով աշխատացնելու միակ տարբերակը դա առանձին դատարան ստեղծելն էր, քանի որ որևէ այլ կերպ հնարավոր չէր լինի աշխատել: Հակառակ դեպքում միջնորդությունների մի մեծ մասը լրջագույն խնդիր էին առաջացնելու ընդհանուր իրավասության դատարանի դատավորի մոտ, ով ստիպված կլիներ երկու տարբեր ընթացակարգեր կիրառել քաղաքացիական գործ քննելիս՝ ապօրինի գույքի բռնագանձման և մնացած բոլոր դեպքերում, դա իր մոտ դիտունաս կառաջացներ»:

Հարկ է նշել, որ մշտադիտարկման շրջանակներում ՀԿԴ ստեղծման և գործունեության հայեցակարգային հարցեր չեն բարձրացվել, իսկ պատշաճ դատարան հանդիսանալու հարցը բարձրացվել է մեկ գործով՝ կոնկրետ իրավիճակում:

Այդպես, ներկայացվել է կարճման միջնորդություն: Ըստ պատասխանող կողմի՝ հիմնական պատասխանողը վեճի առարկա գույքային միավորները ձեռք է բերել Ռուսաստանի Դաշնությունում ծավալած գործունեությունից ստացած միջոցներով և մինչև ՀՀ քաղաքացիություն ստանալը: Այս առումով պատասխանող կողմը նշել է, որ ՀՀ տարածքում ձեռք բերված գույքը պետք է կարգավորվի ներդրումային ոլորտը կարգավորող իրավական դաշտի նորմերով, ուստի ՀԿԴ-ն պատշաճ դատարան չի հանդիսանում: Հայցվորի ներկայացուցիչը պնդել է, որ պատասխանողը 2017 թվականից հանդիսացել է նաև ՀՀ քաղաքացի, և հայտնաբերված՝ նրան պատկանող ենթադրաբար ապօրինի ծագմամբ գույքերը գտնվում են ՀՀ տարածքում, ուստի տվյալ դեպքում ներդրումային համաձայնագիրը կիրառելի չէ, և վեճը լուծելիս պետք է առաջնորդվել Օրենքի պահանջներով:

Նշված գործով Դատարանը եզրահանգել է, որ սույն գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննության ենթակա չլինելու վերաբերյալ փաստարկներն անհիմն են, քանի որ անկախ պատասխանողի երկքաղաքացի լինելու և ՌԴ-ում մշտապես բնակվելու հանգամանքներից՝ Օրենքի հիման վրա ներկայացված գույքի բռնագանձման հայցով վարույթը ենթակա է քննության ՀՀ հակակոռուպցիոն դատարանում: Դատարանը գտել է, որ ըստ էության, նշված գույքը չի հանդիսանում ներդրում, այլ դիտարկվում է որպես օրինական եկամուտներով չհիմնավորվող գույք, որը ենթակա է բռնագանձման հոգուտ պետության Օրենքի հիման վրա, ինչը բացառում է վեճի լուծման ցանկացած այլ կարգ, բացի Օրենքով սահմանվածից: Դատարանը եզրահանգել է, որ ՀՀ տարածքում գտնվող ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի սեփականատիրոջ կամ իրական շահառուի՝ օտարերկրյա պետության ռեզիդենտ կամ քաղաքացի լինելու հանգամանքները Օրենքի կարգավորումների տեսանկյունից կարևորություն չունեն, եթե գույքը գտնվում է ՀՀ տարածքում, և դրա վրա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի իմաստով տարածվում է ՀՀ իրավասությունը:

Հատկանշական է, որ Դատարանը վկայակոչել է Օրենքի ընդունման հիմնավորումների և Գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնության (ՍԹԱՐ /StAR/) «Գողացված ակտիվների վերականգնում. Լավ փորձի ուղեցույց դատվածության վրա չհիմնված ակտիվների բռնագրավման համար» ձեռնարկը: Դրանց հիման վրա Դատարանն արձանագրել է, որ Օրենքով նախատեսված վարույթի իրականացման ոլորտն ընդգրկում է նաև այն դեպքերը, երբ վարույթի որևէ «տարրերից» գտնվում է օտարերկրյա պետության իրավասության ներքո: Մասնավորապես՝

- ✓ եթե ուսումնասիրվող անձը մշտապես բնակվում է օտարերկրյա պետության տարածքում կամ հանդիսանում է այդպիսի երկրի քաղաքացի, սակայն Օրենքի իմաստով նրան պատկանող «գույքը», որի (կամ դրա արժեքի) բռնագանձման հայց է ներկայացված, գտնվում է ՀՀ տարածքում,
- ✓ եթե ուսումնասիրվող անձը ՀՀ քաղաքացի է կամ մշտապես բնակվում է ՀՀ-ում, սակայն Օրենքի իմաստով նրան պատկանող «գույքը», որի (կամ դրա արժեքի) բռնագանձման հայց է ներկայացված, գտնվում է օտարերկրյա պետության տարածքում:

Ընդ որում՝ այս գործով Դատարանն ընդգծել է, որ Օրենքով նախատեսված վարույթը հանդիսանում է գույքի դեմ ուղղված (*in rem*) վարույթ (որոշակի առանձնահատկություններով): Դատարանը մերժել է պատասխանող կողմի՝ գործի վարույթը կարճելու մասին միջնորդությունը¹⁶⁴:

Մեկ այլ գործով պատասխանողների ներկայացուցչի կողմից ներկայացվել է նաև գործն ըստ առարկայական ենթակայության վերահասցեագրելու վերաբերյալ միջնորդություն, որը Դատարանի արձանագրային որոշմամբ մերժվել է¹⁶⁵:

4.5 Գործի քննությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդություններ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ի թիվս այլ հիմքերի, Դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտի օրինական ուժի մեջ մտնելը կամ Դատարանը ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում որոշել է դիմել Սահմանադրական դատարան:

Դիտարկված գործերից հինգով պատասխանող կողմը ներկայացրել է գործի քննությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդություններ՝

- ✓ երկու գործով՝ քրեական գործով եզրափակիչ դատական ակտ կայացված չլինելու, և
- ✓ երեք գործով՝ Սահմանադրական դատարան դիմելու անհրաժեշտություն առաջանելու հիմնավորումներով:

➤ *քրեական գործով վարույթի առկայությամբ պայմանավորված գործով քննության կասեցում.*

¹⁶⁴ ՀԿԴ/0061/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812576

¹⁶⁵ ՀԿԴ/0024/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811544

Քրեական վարույթի առկայությամբ և դրանով կայացվելիք եզրափակիչ ակտի լույսի ներքո քաղաքացիական գործով քննության կասեցման միջնորդություն բերվել է գործերից երկուսով:

Գործերից մեկով որպես հիմք վկայակոչվել է հիմնական պատասխանողի մասնակցությամբ քրեական գործով եզրափակիչ դատական ակտի կայացման կարևորությունը, քանի որ քրեական գործով հաստատվելու կամ հերքվելու է, որ բռնագանձման համար հայցվող գույքը փաստացի պատկանում է հիմնական պատասխանողին, իսկ նշված հանգամանքը դրվել է քաղաքացիական գործով հայցի փաստական հիմքում և գործի լուծման համար ունի էական նշանակություն: Հայցվորը պնդել է, որ նշված գույքերի վերաբերյալ փաստարկները հիմնված են ոչ միայն քրեական գործով ստացված տվյալների, այլև ինքնուրույն ուսումնասիրությունների վրա, իսկ պատասխանողին փաստացի պատկանելու հանգամանքը քաղաքացիական վարույթի շրջանակներում հիմնավորման ենթակա փաստ է, և եթե հայցվորի վրա կորվի այդ փաստը ապացուցելու պարտականությունը, ապա կներկայացվեն ապացույցներ: Դատարանը գտել է, որ ինքնին քրեական և քաղաքացիական գործերում առկա փաստերի նույնությունը հիմք չէ գործի կասեցման համար, քանի որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով գույքի պատկանելիությունը որոշելը առանձնահատուկ է հենց ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերով դատական վարույթին, և ըստ այդմ՝ պատասխանողին գույքը պատկանելու վերաբերյալ հայցվորի փաստարկները կարող են ինչպես հիմնավորվել, այնպես էլ հերքվել քաղաքացիական վարույթի շրջանակներում համապատասխան ապացույցների և ապացուցողական փաստերի ներկայացման միջոցով: Ըստ Դատարանի՝ վերոնշյալ քրեական գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտը սույն գործի քննության համար նախադատելի նշանակություն կարող է ունենալ բացառապես անձի (սուբյեկտ) և նրա կատարած արարքի (հանցագործության օբյեկտիվ կողմ) վերաբերյալ փաստերի տեսանկյունից: Դատարանը գտել է, որ քրեական գործով եզրափակիչ դատական ակտ կայացված չլինելու հանգամանքը որևէ կերպ չի բացառում սույն գործի քննությունը շարունակելու հնարավորությունը¹⁶⁶:

Մեկ այլ գործով պատասխանող կողմը նույնպես միջնորդել էր կասեցնել քաղաքացիական գործով քննությունը այն հիմքով, որ պատասխանողը հանդիսանում է քրեական գործով մեղադրյալ և հնարավոր է, որ այդ քրեական վարույթով եզրափակիչ դատական ակտով կհաստատվեն փաստեր, որոնք էական նշանակություն կունենան այդ գործի լուծման համար: Դատարանը նշել է, որ քաղաքացիական գործով քննությունը գտնվում է նախնական դատաքննության փուլում, հետևաբար Դատարանը զրկված է վարույթը կասեցնելու միջնորդության հիմնավորվածությունները ստուգելուց, քանի որ դեռևս չի որոշվել, թե որ փաստերն են ապացուցման ենթակա, ուստի Դատարանը չի կարող պարզել, թե արդյոք կա պատահառահետևանքային կապ քրեական գործով եզրափակիչ ակտի և սույն

¹⁶⁶ ՀԿԴ/0010/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811927

գործի միջև: Դատարանը գտել է, որ միջնորդությունը անհիմն է, մերժել է այն արձանագրային որոշմամբ¹⁶⁷:

Նշված երկու դեպքում էլ անդրադարձ չի կատարվել այն հանգամանքին, թե արդյոք քրեական վարույթի շրջանակներում, եթե կայացվի մեղադրական վճիռ, հնարավոր չի լինի կիրառել բռնագրավում, թե դա անհնարին է, ուստիև կիրառվում է քաղաքացիական ընթացակարգ:

➤ *ՄԴ դիմելու միջնորդությունները.*

ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Դիտարկված գործերից 3-ով պատասխանող կողմը ներկայացրել է գործի քննությունը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու միջնորդություններ:

Այսպես, դիտարկված գործերից մեկով պատասխանողի ներկայացուցիչը ներկայացրել է ՄԴ դիմելու միջնորդություն՝ Ապոլինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը ՀՀ Սահմանադրության 79-րդ կետին հակասող ճանաչելու մասին: Պատասխանող կողմը պնդել է, որ ուսումնասիրությունն իրականացվել է ապոլինի կարգով, քանի որ այն սկսելու օրենքով նախատեսված որևէ հիմք առկա չէր: Այս գործով ՀՀ գլխավոր դատախազության մասնագիտացված ստորաբաժանում ստեղծելու պահին պատասխանողի նկատմամբ քրեական վարույթը կարճվել էր: Ըստ պատասխանող կողմի՝ ուսումնասիրությունը կարող էր նախաձեռնվել, երբ ստորաբաժանման ստեղծման պահին առկա էր ընթացիկ քրեական գործ, որով անձը ներգրավված է որպես մեղադրյալ: Այս նախապայմանն ապահովելու համար, ըստ պատասխանողի ներկայացուցչի, Գլխավոր դատախազը 2020 թվականի սեպտեմբերի 24-ին վերացրել է 2020 թվականի օգոստոսի 28-ին կայացված՝ պատասխանողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, իսկ արդեն սեպտեմբերի 25-ին ուսումնասիրություն սկսելու զեկուցագիր է ներկայացվել: Ըստ պատասխանողի ներկայացուցչի՝ դրանով Գլխավոր դատախազի կողմից արհեստական հիմք է ստեղծվել: Պատասխանողի ներկայացուցիչը հատկապես պնդել է, որ ըստ Օրենքի՝ *"ի հայտ է եկել"* եզրույթը նշանակում է, որ նախկինում իրավասու մարմինը տեղյակ չի եղել, իսկ հանգամանքը ի հայտ է եղել սեպտեմբերի 3-ից հետո (մասնագիտացված ստորաբաժանման ստեղծումից հետո), իսկ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու հիմքով չէր կարող համարվել ի հայտ

¹⁶⁷ ՀԿԴ/0212/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814453

եկած: Պատասխանողի ներկայացուցիչը պնդել է, որ "ի հայտ է եկել" եզրույթի նման օգտագործումը չի համապատասխանում որոշակիության սկզբունքին, և միջնորդել է սահմանադրականությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Հայցվոր կողմի դիրքորոշման համաձայն՝ առկա իրավական հիմքերը բավարար են ուսումնասիրությունը սկսելու համար: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ մեկ այլ վարույթով մեղադրյալը, որից այս գործը առանձնացվել է, հնարավորություն չի ունեցել ծանոթանալու գործի նյութերին, իսկ նշված դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ Գլխավոր դատախազը իրավունք ունի վերացնել որոշումը վեց ամսվա ընթացքում, և հենց այդ լիազորությունը իրացրել է:

Դատարանը մերժել է միջնորդությունը՝ հիմնավորելով, որ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքի սահմանադրականությունը արդեն իսկ քննվում է Սահմանադրական դատարանում: Դատարանը նշել է, որ ՍԴ դիմելու համար պահանջվում է "հիմնավոր կասկած", որը նախատեսում է ավելի բարձր շեմ, քան պատասխանող կողմի նշած "փորձիչատե" կասկածը: Դատարանը գտել է, որ նշված հարցը ավելի շատ վերաբերում է ապացույցի թույլատրելիությանը, որին այլ փուլում բարձրացնելու դեպքում, դատական ակտում կանդրադառնա Դատարանը¹⁶⁸ (սույն գործով ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելիս Դատարանն անդրադարձել է այս հարցին):

Մեկ այլ գործով դատական նիստի ընթացքում պատասխանող կողմը միջնորդել է Դատարանին դիմել ՍԴ՝ հակընդդեմ հայց բերելու իրավունքի համատեքստում: Գործով պատասխանողը ներկայացրել էր հակընդդեմ հայց, որը Հակակոռուպցիոն դատարանը մերժել էր, իսկ Վերաքննիչ դատարանը թողել էր այդ որոշումը անփոփոխ: Պատասխանողը պնդել է, որ դատական պաշտպանության մեխանիզմները հստակ չեն, չեն համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքներին, ուստի անհրաժեշտ է կասեցնել գործի քննությունը մինչև ՍԴ-ն որոշում կկայացնի: Դատարանը մերժել է միջնորդությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամբողջ Օրենքի սահմանադրականության հարցն է քննարկվում ՍԴ-ում, ապա իմաստ չի տեսել մի իրավադրույթի մասով դիմել Սահմանադրական դատարան¹⁶⁹:

Մեկ այլ գործով դատական նիստի ընթացքում երրորդ անձի ներկայացուցիչն է ներկայացրել միջնորդություն՝ խնդրելով Դատարանից առանձնացնել մի վարույթում քննվող գործը, որպես առանձին վարույթ: Ներկայացուցիչը նշել է, որ

¹⁶⁸ ՀԿԴ/0203/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814434, 12/14/2023, Դատարանի որոշումը Դատալեքս դատական տեղեկատվական համակարգում տեղադրված չէ:

¹⁶⁹ ՀԿԴ/0019/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814443, Դատարանի որոշումը Դատալեքս դատական տեղեկատվական համակարգում տեղադրված չէ:

մեկ այլ գործ կա, որին ուզում է միացվի այդ գործը, որտեղ առանձին պահանջ ներկայացնող երրորդ անձ կհանդիսանա սույն գործով երրորդ անձը: Նշել է, որ եթե շարունակենք քննությունը այս գործով, երրորդ անձին պատկանող գույքը բռնագանձվի, հետագայում այլ հայցի բավարարման դեպքում ոչ արդյունավետ դատական պաշտպանության խնդիր է ստեղծվում: «Իր վարույթում գտնվող գործերը միացնել» եզրույթը պետք է այնպես մեկնաբանվի, որ հնարավոր լինի Հակակոռուպցիոն դատարանում քննվող գործն ընդհանուր իրավասության դատարանում քննվող գործի հետ միավորել: Եթե Դատարանը գտնի, որ հնարավոր չէ գործերի առանձնացումը, ապա միջնորդել է, որպեսզի Դատարանը դիմի Սահմանադրական դատարան, քանի որ նեղ մեկնաբանումը խախտում է արդյունավետ դատական պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունքը:

Դատարանը առանձնացման մասով ներկայացուցչի միջնորդությունը մերժել է այն հիմքով, որ քաղաքացիական գործին են ցանկանում միացնել առանձնացված գործը, իսկ ՔԴՕ-ն նախատեսում է տվյալ Դատարանում՝ տվյալ դատավորի վարույթում գործերի միավորումը¹⁷⁰: Իսկ ՀԿԴ միայն դատախազությունը կարող է հայց ներկայացնել: Եթե այլ սուբյեկտներին այդ իրավունքը վերապահվի, ապա ՀԿԴ-ն չի տարբերվի քաղաքացիական դատարանից¹⁷¹: Դատարանը գտել է, որ տվյալ դեպքում Սահմանադրական դատարան դիմելու անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ օրենսդրական կարգավորումը հստակ է¹⁷²:

➤ *Փորձագիտական կարծիք.*

Այս առումով հարցված դատավորները նշել են, որ թեև ստացել են բազմաթիվ միջնորդություններ Սահմանադրական դատարան դիմելու և գործի քննությունը կասեցնելու վերաբերյալ, մերժել են բոլոր միջնորդությունները՝ համարելով, որ դրա անհրաժեշտությունը չկա: Ընդհանուր առմամբ, որպես մերժման հիմք նշվել է այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանը ունի գործիքակազմ, որի միջոցով կարող է ցանկացած պահի կասեցնել Օրենքի կիրառելիությունը, սակայն դա չի արել, ուստի վարույթը կասեցնելու անհրաժեշտություն և պարտավորություն առկա չէ: Դատավորներն ընդգծել են նաև, որ իրենց վարույթում գտնվող գործով քննությունը շարունակելու անհնարինություն չեն

¹⁷⁰ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2. Առաջին ատյանի դատարանն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը մեկ վարույթում միացնելու իր վարույթում քննվող մի քանի միատեսակ գործեր, որոնցով գործին մասնակցող անձինք լրիվ կամ մասնակի համընկնում են, եթե դրանց միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը:

¹⁷¹ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533.

Դատարանի որոշումը Դատալեքս դատական տեղեկատվական համակարգում տեղադրված չէ:

¹⁷² 18.04.2025թ. ՀՕ-81-Ն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքով լրացումներ են կատարել ՔԴՕ 123-րդ հոդվածում, ըստ որոնց՝ Քաղաքացիական գործի հարուցումից հետո մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը կողմերը կարող են ներկայացնել հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթներում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մի քանի գործերը մեկ վարույթում միացնելը թույլատրելու մասին միջնորդություն (հոդված 123, մաս 2.1):

տեսել, ինչը օրենքով նախատեսված նախապայման է վարույթը կասեցնելու համար: Նշվել է նաև, որ գործը պետք է լուծվի ողջամիտ ժամկետում:

Հարցված դատավորներից մեկը նշել է, որ ի տարբերություն այլ դեպքերի, երբ օրենսդրության որևէ նորմի սահմանադրականությունն է վիճարկվում, և քննվող գործի նկատմամբ կիրառելի է բացառապես այդ նորմը, ուստի անհնարինության առկայության պայմաններում է գործով վարույթը կասեցվում, ապա այս դեպքում վիճարկվում է ամբողջ օրենքը, որն աննախադեպ է: Քննության այն փուլերում, երբ բարձրացվել է Օրենքի սահմանադրականության հարցը, կարիք չի եղել գործի քննությունը կասեցնել, օրինակ՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխության վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս սահմանադրականության հարցի բարձրացումը չի խոչընդոտում, անհնարին չի դարձնում այդ հարցի քննարկումը:

Հարցված դատավորներից մեկը նշել է նաև, որ Օրենքը նոր է, և Օրենքի դատական պրակտիկայի ձևավորման անհրաժեշտություն կա, որպեսզի Սահմանադրական դատարանի համար տեսանելի լինի, թե ինչ ուղղությամբ են գնում Օրենքի մեկնաբանությունները դատարաններում, ինչպես նաև գնահատվի այդ մեկնաբանությունների ճիշտ կամ սխալ ուղղությամբ գնալու հանգամանքը:

«Դատավորները կաշկանդված չեն Օրենքի կիրառման հարցում, պարզապես մեկնաբանությունները պետք է տրվեն այնպես, որպեսզի սահմանադրականության հետ կապված խնդիր չառաջանա»:

Դատավոր

Փորձագիտական հարցազրույցների անցկացման պահին Սահմանադրական դատարանի որոշումը դեռևս չէր հրապարակվել, և հարցված փորձագետները վստահ չէին, թե արդյոք վիճարկվում է ողջ Օրենքի սահմանադրականության հարցը, թե որոշակի կարգավորումների: Հարցված դատավորներից մեկը նշել է, որ Օրենքում կիրառված կարգավորումներից ոմանք միանշանակ չեն և հնարավոր է, որ ՍԴ-ն դրանցում խնդիր տեսնի:

ՍԴ որոշմամբ թեև որևէ դրույթ Սահմանադրությանը չհամապատասխանող չի ճանաչվել, այնուամենայնիվ, Որոշմամբ տրվել է ուսումնասիրություն սկսելու հիմքերով պայմանավորված բռնագանձման ենթակա գույքի ավելի նեղ շրջանակ, քան կիրառվում էր Գլխավոր դատախազության կողմից:

4.6 Հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդություններ

Ներկայացված հայցերով Գլխավոր դատախազությունը պահանջել է բռնագանձել ՀՀ-ում կամ ՀՀ տարածքից դուրս գտնվող անշարժ և շարժական գույք, այդ թվում՝ շինություններ, իրավաբանական անձանց մասնաբաժին, ավտոմեքենաներ, դրամական միջոցներ, պահանջի իրավունք և այլն: Իսկ այն դեպքերում, երբ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք

բերողի, կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, դատախազությունը պահանջել է պատասխանողից բռնագանձվել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի չափով գումար:

Մշտադիտարկած գործերով մինչև 2024 թվականի մայիսի 31-ը 26 գործերից 18-ով (69%) հայցվոր կողմը ներկայացրել է հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխություն կատարելու վերաբերյալ միջնորդություն: Մինչև 2024 թվականի մայիսի 31-ը դիտարկված գործերով ներկայացվել է 24 միջնորդություն, որոնցից մի մասի դեպքում որոշումը դատալեքսում տեղադրված չէ, առկա են միայն նշումներ նման միջնորդությունները ներկայացնելու ու դատարանի կողմից բավարարելու մասին գործով հրապարակված այլ դատական ակտերում¹⁷³: Երկու գործով ներկայացվել է հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ երկու միջնորդություն, իսկ մեկ գործով՝ 5 միջնորդություն, բոլորը բավարարվել են¹⁷⁴:

Նման միջնորդություններ ներկայացվել են ինչպես հայցադիմումը վարույթ ընդունելուց կարճ ժամանակ անց¹⁷⁵, այնպես էլ՝ ամիսներ անց, անգամ ապացուցման բեռը բաշխելուց հետո¹⁷⁶:

Դիտարկման ժամանակահատվածում ներկայացված բոլոր միջնորդությունները, բացի մեկից, բավարարվել են: Բոլոր բավարարված միջնորդությունների դեպքում Դատարանը գտել է, որ հայցվորը իրացնում է իր տնօրինչական իրավունքները: Միջնորդությունները բավարարելիս Դատարանը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները և եզրահանգել, որ երբ հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվում է օրենքով սահմանված ձևական պահանջներին համապատասխան, ինչպես նաև առկա չեն միջնորդությունը մերժելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ, 152-րդ հոդվածի 8-րդ կամ օրենքով սահմանված այլ հիմքեր, միջնորդությունը ենթակա է բավարարման:

Անկախ միջնորդության մեջ նշված հիմնավորումներից, հայցապահանջի ավելացման կամ նվազեցման հանգամանքից՝ Դատարանը բոլոր գործերով գտել է, որ հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխության դեպքում այն շարունակում է հանդիսանալ պետության գույքային շահերի պաշտպանության նպատակով հարուցված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ, այսինքն՝ փոփոխություն թույլատրելու դեպքում չի փոփոխվելու այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը

¹⁷³ ՏԵՍ, օրինակ՝ ՀԿԴ/0062/02/23, ՀԿԴ/0197/02/23, ՀԿԴ/0100/02/23

¹⁷⁴ ՀԿԴ/0010/02/22

¹⁷⁵ ՏԵՍ, օրինակ՝ ՀԿԴ/0010/02/23,

¹⁷⁶ ՏԵՍ, օրինակ՝ ՀԿԴ/0025/02/22,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

սկզբնապես հարուցվել է, ինչպես նաև հայցը դուրս չի գալու ՀԿԴ ենթակայության սահմաններից¹⁷⁷:

Հատկանշական է, որ որոշ դեպքերում Դատարանը չի անդրադարձել պատասխանողի առարկություններին¹⁷⁸, իսկ որոշ գործերով որոշման մեջ նաև ներառել է պատասխանողի ներկայացուցչի առարկություններին պատասխան¹⁷⁹:

Դիտարկված գործերից միայն մեկով է Դատարանը մերժել հայցի հիմքը և/կամ առարկան փոփոխելը թույլատրելու մասին միջնորդությունը, քանի որ այն ներկայացվել է ապացուցման բեռը կողմերի միջև բաշխելուց հետո, իսկ հայցվորը, ըստ Դատարանի, չի կարողացել հիմնավորել ժամկետի բացթողման հարգելի լինելը¹⁸⁰:

Հարկ է նշել, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում ոչ միշտ են հրապարակվում հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդության առնչությամբ կայացված որոշումները: Արձանագրվել են դեպքեր, երբ նույն գործով նման միջնորդություն ներկայացվել է առնվազն երկու անգամ, իսկ «Դատալեքս» տեղեկատվական համակարգում հրապարակվել է միայն մեկ որոշումը: Իսկ նախկինում այլ միջնորդության ներկայացման և արձանագրային որոշմամբ բավարարման մասին նշված է այլ ակտերում՝ որպես գործի հանգամանք՝ առանց մանրամասների¹⁸¹:

Հրապարակայնորեն հասանելի միջնորդությունների վերաբերյալ որոշումների վերլուծությունը, ինչպես նաև նիստերի դիտարկումը ցույց են տալիս, որ որպես հայցի հիմքն ու առարկան փոփոխելու անհրաժեշտության հիմք հայցվոր կողմը նշել է հիմնականում հետևյալ բնույթի հանգամանքներ՝

- ✓ հայցվորի համար անհայտ փաստի վերաբերյալ նոր ապացույցի, այդ թվում՝ քրեական վարույթից ստացման լույսի ներքո վերահաշվարկի անհրաժեշտություն:
- ✓ պատասխանողի դիրքորոշումից ելնելով կամ մինչև հայցադիմում ներկայացնելը հայցված, բայց նոր ստացված տեղեկությունների լույսի ներքո վերահաշվարկի անհրաժեշտություն:
- ✓ նոր պատասխանող ներգրավելու պայմաններում վերահաշվարկի կամ/և հայցապահանջի՝ համապատասխանողների միջև վերաբաշխում:
- ✓ շղթայական փոփոխությունների պայմաններում հայցադիմումը նոր խմբագրությամբ ներկայացնելու անհրաժեշտություն:

¹⁷⁷ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533;

ՀԿԴ/0224/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814477;

ՀԿԴ/0110/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890

¹⁷⁸ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

¹⁷⁹ ՀԿԴ/0224/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814477

¹⁸⁰ ՀԿԴ/0197/02/23 գործով 17.04.2024թ. նիստ:

¹⁸¹ Տե՛ս՝ ՀԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

- ✓ վրիպակների ուղղում.
- ✓ մինչև հայց ներկայացնելը ձեռք բերված ապացույցները իրենց կողմից հաշվի չառնելը և այլն:

Օրինակ, գործերից մեկով, որով միջնորդությունը բավարարվել է, ըստ հայցվորի՝ փոփոխության անհրաժեշտությունն առաջացել էր, քանի որ ստացել են Մաքսային ծառայությունից հայտարարագրեր, որոնք հայցել էին, սակայն մինչև հայց ներկայացնելը դեռ չէին ստացել: Բացի այդ, պատասխանողի աշխատավարձի վերահաշվարկ է կատարվել, քանի որ պարզվել է, որ հայցվորը ունի գործատուից տրված տեղեկանք, որի առկայությունը վրիպել էր նրանց ուշադրությունից, ու հայցում միջին ամսական աշխատավարձի՝ Վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա¹⁸²:

Հայցի հիմքը և առարկան փոփոխելու միջնորդությունների քննարկման շրջանակներում պատասխանող կողմը ներկայացրել է մի շարք առարկություններ, այդ թվում՝

- ✓ հայցվորի՝ հայցի հիմքն ու առարկան փոփոխելու իրավասության բացակայություն, բացառությամբ պահանջից հրաժարվելու դեպքում. բավարարելու դեպքում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահի փոփոխություն, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է.
- ✓ գումարի բռնագանձման պահանջի ավելացման դեպքում իրավունքի և օրենքով պահպանվող շահի փոփոխություն.
- ✓ անորոշ/երկակի պահանջի (գույքի կամ դրա բռնագանձման անհնարինության դեպքում արժեքի բռնագանձման պահանջի) ներկայացման անթույլատրելիություն.
- ✓ հայցի հիմքի և առարկայի ավելացման դեպքում փոփոխությունը որպես նոր հայց դիտվելու և դրանից բխող վաղեմության ժամկետի կիրառման անհրաժեշտություն.
- ✓ քրեական վարույթից ստացված տվյալների օգտագործմամբ հայցի հիմքը փոփոխելու դեպքում անմեղության կանխավարկածի խախտում.
- ✓ սկզբնական հայցադիմումում չընդգրկված փաստարկները հայցի հիմքի և առարկայի փոփոխելու վերաբերյալ միջնորդության մեջ ներառելու անթույլատրելիություն¹⁸³:

Գործերից մեկով պատասխանողն առարկել է հայցի հիմքը և առարկան փոփոխելու մասին միջնորդությանը, նշելով, որ միջնորդությամբ ներկայացվել է պահանջ բռնագանձել այնպիսի գույքեր, որոնց բռնագանձման պահանջ նախկինում չի ներկայացվել, այդ գույքերն ուսումնասիրության շրջանակներում և ուսումնասիրության արդյունքների մասին եզրակացության մեջ քննարկման

¹⁸² ՀԿԴ/0197/02/23 գործով 17.04.2024թ. նիստ:

¹⁸³ ՀԿԴ/0110/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890

առարկա չեն դարձվել, ուստի պահանջի ավելացումը դատավարական տեսանկյունից համարել է անթույլատրելի մի շարք հիմքերով.

- ✓ Իրավասու մարմինը հայց հարուցելու իրավունք է ձեռք բերում միայն այն դեպքում, երբ պատասխանողի նկատմամբ կայացրել է «Ուսումնասիրություն սկսելու մասին» որոշում, կազմել է «Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ» նախնական ամփոփագիր և կազմել է «Ուսումնասիրության արդյունքների մասին» եզրակացություն:
- ✓ Գույքի «ապօրինի» ծագում ունենալու վերաբերյալ դիրքորոշումն իրավասու մարմինը պետք է ձևավորի բացառապես ուսումնասիրության ամփոփման արդյունքում, այլ ոչ թե դատարանում:
- ✓ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքն իրավասու մարմինն լիազորություն (իրավունք) է վերապահում հայց ներկայացնել միայն այնպիսի գույքի կապակցությամբ, որն ուսումնասիրության շրջանակներում իրավասու մարմնի կողմից ուսումնասիրվել է և համարվել է «ապօրինի ծագում ունեցող», իսկ հակառակ դեպքում դատախազությունը դուրս է գալիս իր լիազորությունների շրջանակից: Եթե փորձ է կատարվում հայցի առարկան ավելացնել այնպիսի գույքով, որը ուսումնասիրության արդյունքների մասին եզրակացության մեջ քննարկման առարկա չի դարձվել, ապա նման քայլը դատարանի կողմից պետք է արգելվի, քանի որ նման գույքի մասով դատարան դիմելու (կամ գործի քննության փուլում լրացուցիչ հայցապահանջ ներկայացնելու) ընթացակարգը ի սկզբանե պահպանված չէ:
- ✓ հայցի առարկայի «առավելագույն» շեմը «Ուսումնասիրության արդյունքների մասին» եզրակացության մեջ մատնանշված, «ապօրինի ծագում ունեցող» համարված գույքի ծավալն է:
- ✓ Գործի դատական քննության փուլում իրավասու մարմինը կարող է միայն նվազեցնել հայցի առարկան:

Վերոգրյալից ելնելով՝ պատասխանողների ներկայացուցիչը խնդրել է միջնորդությունը մասնակի (այն գույքերի մասով, որոնք ուսումնասիրության շրջանակներում և դրա արդյունքների մասին եզրակացության մեջ քննարկման առարկա չեն դարձվել) մերժել:

Դատարանը գտել է, որ միջնորդությամբ ներկայացված հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը ըստ էության իրենից ներկայացնում է հստակեցում, տեխնիկական վրիպակների շտկում, հետևաբար չի փոխվում օրենքով պահպանվող շահը կամ իրավունքը (պետական շահը), որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, ինչպես նաև հայցի քննարկումը դուրս չի հակակոռուպցիոն դատարանի ենթակայության սահմաններից, ուստի

մերժման հիմք չկա: Դատարանը չի անդրադարձել պատասխանողի կողմից վերը նշված առարկություններին¹⁸⁴:

Գործերից մեկով պատասխանողի ներկայացուցիչը բերել է նաև այլ փաստարկ՝ նշելով, որ միջնորդությունը ենթակա չէ քննարկման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունն հնարավոր է միայն այն դեպքում, երբ գործը քննվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, իսկ սույն գործը քննվում է մասնագիտացված դատարանի կողմից: Նշված գործով Դատարանը գտել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով Օրենքով սահմանված չեն հայցի առարկայի (հիմքի) փոփոխություն թույլատրելու վերաբերյալ հատուկ դրույթներ, հետևաբար, կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումները¹⁸⁵:

Հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխությունն թույլատրելու մասին միջնորդության քննարկման շրջանակներում միջնորդությամբ ներկայացված հայցապահանջների բովանդակային քննարկում Դատարանը չի կատարել, այդ թվում՝ հայցվորի անփութության դեպքում վերահաշվարկի կատարման անհրաժեշտությունը ծագելու դեպքում, այլ կերպ չի անդրադարձել հայցապահանջների հիմնավորվածության հարցին՝ նշելով, որ դա դատական քննության հետագա փուլում քննարկվելիք հարց է:

Բոլոր դեպքերում Դատարանը նշել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի առարկայի (հիմքի) փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է քննության, իսկ դրա հիմնավորվածությունը ենթակա է գնահատման բացառապես օրենքով սահմանված ընդհանուր պահանջների պահպանման տեսանկյունից: Արդյունքում նման բոլոր միջնորդությունները բավարարվել են, քանի որ Դատարանը գտել է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության կանոններին համապատասխան, իսկ հայցվորը իրացրել է իր տնօրինչական լիազորությունը:

- *Գլխավոր դատախազության՝ որպես հայցվորի, հայցի հիմքը և/կամ առարկան փոփոխելու իրավասությունը.*

Դիտարկված որոշ գործերով պատասխանողի ներկայացուցիչները պնդել են, որ Օրենքը հայցվորի համար սահմանափակում է տնօրինչականության սկզբունքը հայցի հիմքը և/կամ առարկան փոփոխելու տեսանկյունից, քանի որ Իրավասու մարմինը հայց կարող է հարուցել միայն ուսումնասիրության արդյունքներով կազմված եզրակացության հիման վրա:

Գործերից մեկով պատասխանողի ներկայացուցիչը հատուկ շեշտել է, որ միջնորդությունը քննարկելիս Դատարանը պետք է անդրադառնա նաև

¹⁸⁴ ՀԿԴ/0010/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530

¹⁸⁵ ՀԿԴ/0105/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811888

օրինականության սկզբունքին և գնահատի՝ արդյո՞ք ուսումնասիրության ժամկետի ավարտից և եզրակացություն տրամադրելուց հետո իրավաչափ է հավելյալ ուսումնասիրություններ, շտկումներ, փոփոխություններ, հավելյալ հաշվարկներ, հնարավոր ապացույցների հավաքագրում կատարելը: Պատասխանողների ներկայացուցիչը, հղում անելով Օրենքով սահմանված եռամյա ժամկետին, ընդգծել է, որ եթե Դատախազությունը երեք տարվա ընթացքում չի կարողանում ավարտին հասցնել ուսումնասիրությունը, տրամադրել եզրակացություն և ներկայացնել հայցադիմում, ապա պահանջը լրամշակելու ու փոփոխելու հնարավորություն պետք է չունենա, քանի որ հակառակ դեպքում հայցի առարկան փոփոխելու միջոցով դատախազությունը հնարավորություն է ստանում պարբերաբար նախկինում բերված թերի հայցը լրամշակել և, ըստ էության, իրականացնել ապօրինի գործողություն, այն է՝ շարունակել հետազոտությունը, ինչի իրավունքը չունի երեք տարին անցնելուց հետո: Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ նշելով, որ հայցվոր կողմը իրացնում է իր տնօրինչական իրավունքները և դա չարաշահում չի հանդիսանում, իսկ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու միջնորդության քննարկման շրջանակներում միջնորդությամբ ներկայացված հայցապահանջների բովանդակային քննարկում Դատարանը չի կատարում, չի անդրադառնում հայցապահանջների հիմնավորվածության հարցին¹⁸⁶:

Գործերից մեկով պատասխանողի ներկայացուցիչը պնդել է, որ լրացումներն անթույլատրելի են, քանի որ միջնորդության մեջ նշված հանգամանքներ պետք է պարզվեին ուսումնասիրության ժամանակ, այլ ոչ թե նախնական դատական նիստի ընթացքում պարզ դառնային իրավասու մարմին: Ներկայացվող հայցը չպետք է ուսումնասիրության ծավալներից և շրջանակներից, դրա ամփոփիչ եզրակացությամբ ամրագրված տեղեկությունների շրջանակից դուրս գա¹⁸⁷:

Մեկ այլ գործով պատասխանող կողմը պնդել է, որ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված ապացույցները պետք է արտացոլվեին իրավասու մարմնի կողմից կազմված եզրակացության մեջ, ուստի ներկայացված հայցն ակնհայտ անհիմն է, ինչը պետք է արժանանա համապատասխան դատավարական գնահատականի¹⁸⁸:

Երկու դեպքում էլ միջնորդությունը բավարարելիս Դատարանը արձանագրել է, որ հայցվորը իրացնում է իր իրավունքը, և եթե միջնորդությունը ներկայացվում է օրենքով սահմանված ձևական պահանջներին համապատասխան, ինչպես նաև առկա չեն միջնորդությունը մերժելու հիմքեր, միջնորդությունը ենթակա է բավարարման:

Գործերից մեկով ի պատասխան պատասխանող կողմի առարկությանն առ այն, որ հայցվորը իրավունք չունի ուսումնասիրության ավարտից հետո նոր տվյալներ ձեռքբերել, Դատարանը, բավարարելով միջնորդությունը, արձանագրել է, որ

¹⁸⁶ ՀԿԴ/0225/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814476

¹⁸⁷ ՀԿԴ/0010/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530

¹⁸⁸ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո իրավասու մարմնի կատարած գործողությունները ուսումնասիրության շարունակություն չեն հանդիսանում: Ուսումնասիրությունն «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ուժով իրականացվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի առկայության վերաբերյալ (Օրենք, հոդ. 18,20), և այն որևէ կերպ չի սահմանափակում կամ կաշկանդում հայց հարուցելուց հետո հայցվորի դատավարական՝ տնօրինչական և այլ իրավունքների իրականացումը: Իսկ հաշվարկները հայցի հիմքերում ներառված են և դրանց բացակայությանը մասին պնդումներն անհիմն են¹⁸⁹:

Սահմանադրական դատարանը նույնպես գտել է, որ Դատախազությունն Օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում հանդես է գալիս որպես հայցվոր կողմ՝ ընդհանուր հիմունքներով (տե՛ս ՄԴՈ-1776, կետ 247):

- *հայցի հիմքը և առարկան փոփոխելու դեպքում օրենքով պահպանվող շահի փոփոխություն.*

Պատասխանող կողմի հիմնական առարկություններից մեկը եղել է այն, որ հայցի հիմքը և առարկան փոխելով՝ փոխվում է նաև իրավունքը և օրենքով պահպանվող շահը:

Գործերից մեկով, որի շրջանակներում պահանջը տարածվել է նաև պատասխանողների օրինական գույքի վրա՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման անհնարինության պատճառով, պատասխանողի ներկայացուցիչը նշե է, որ առնվազն օրինական գույքի բռնագանձում պահանջելու մասով օրենքով պահպանվող այն շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, փոխվում է, ուստի փոփոխությունը չի կարող թույլատրելի լինել: Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ արձանագրելով, որ քաղաքացիական գործով սկզբնապես ներկայացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ, հետևաբար՝ հայցը սկզբնապես հարուցվել է պետության գույքային շահերի պաշտպանության նպատակով: Սույն միջնորդությամբ ներկայացված փոփոխված հայցով հայցվորը, ելնելով տնօրինչականության սկզբունքից, լրացնում և ճշգրտում է հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը, ինչով պայմանավորված՝ լրացնում է պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը, որը ևս ուղղված է պետության գույքային շահերի պաշտպանությանը: Հետևաբար՝ միջնորդության բավարարման և հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու դեպքում չի փոփոխվելու այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է¹⁹⁰:

Մեկ այլ գործով, որի շրջանակներում հայցվոր կողմը ներկայացրել է նոր պատասխանող ներգրավելու և դրանով պայմանավորված հայցի հիմքն ու

¹⁸⁹ ՀԿԴ/0208/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814448

¹⁹⁰ ՏԵՍ, օրինակ՝ ՀԿԴ/0013/02/22,

https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

առարկան փոփոխելու միջնորդություն, պատասխանողի ներկայացուցիչը պնդել է, որ հայցի առարկայի փոփոխությունը հանգեցնում է պահպանվող շահի փոփոխության: Մասնավորապես, օրենքով պահպանվող շահը պետական շահն է, որը չի կարող դրսևորվել ուսումնասիրության կողմ չդարձած անձի իրավունքների անհամաչափ սահմանափակման միջոցով: Ըստ պատասխանողի ներկայացուցչի, ուսումնասիրություն իրականացնող դատախազը, չունենալով համապատասխան գիտելիքներ, առանց տեղազնություն իրականացնելու գնահատելով գույքի փաստացի վիճակը, հաշվարկում է գույքի միջին շուկայական արժեքը, որի լիազորությունը չունի, ուստի պետության շահը չի կարող դրսևորվել այնպիսի գործողություններում, որում վերջինս՝ ի դեմս իր պետական մարմինների, գործելու իրավասություն չունի¹⁹¹:

Նշված բոլոր գործերով Դատարանը գտել է, որ օրենքով պահպանվող շահը չի փոխվում:

- *Քրեական գործի տվյալների հիման վրա կատարված փոփոխությունը և անմեղության կանխավարկածը.*

Մի քանի գործով որպես հայցի հիմքի և առարկայի փոփոխության պատճառ հայցվորը նշել է քրեական վարույթ իրականացնող մարմնից նոր տեղեկությունների ստացումը և դրանց լույսի ներքո համապատասխան վերահաշվարկ կամ այլ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Գործերից մեկով հայցի առարկայի փոփոխություն կատարելու վերաբերյալ միջնորդություն ներկայացվել է Նախաքննության փուլում ձեռք բերված տեղեկությունների լույսի ներքո, երբ ըստ հայցվորի՝ պարզվել է, որ որոշակի գույքի իրական շահառուն գործով հիմնական պատասխանողն է, ուստի հայցի առարկայի փոփոխությունը՝ հայցի առարկայի լրացման ձևով պետք է կատարվի, քանի որ պահանջվող գույքերն ընդգրկված են եղել սկզբնական հայցում: Փոփոխությամբ պահանջվել է պատասխանողներից մեկին պատկանող գույքի արժեքը բռնագանձել հիմնական պատասխանողից, ինչպես նաև ներգրավել նոր պատասխանող, որից նույնպես գանձել մեկ այլ պատասխանողի հետ համատեղ սեփականությամբ պատկանող գույքը: Նախաքննության ընթացքում ստացված ցուցմունքների հիման վրա ձեռք բերված տվյալների օգտագործումը, ըստ պատասխանող կողմի, խախտում է Սահմանադրությամբ ամրագրված անձի անմեղության կանխավարկածը, քանի որ նման փաստը կարող է հաստատված համարվել միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

Դատարանը նշել է, որ Օրենսդիրը սահմանել է հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու հստակ և սպառիչ հիմքեր, ուստի այդպիսի միջնորդությունը չի կարող մերժվել դրանցից տարբերվող որևիցե այլ հիմքով: Հետևաբար, հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ հայցվորի կամահայտնության դեպքում Դատարանը ստուգում է բացառապես վերոնշյալ

¹⁹¹ ՀԿԴ/0105/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811888

պահանջների պահպանվածությունը: Ըստ այդմ՝ Դատարանը գտել է, որ եզրակացությամբ ամփոփված ուսումնասիրության արդյունքները կարող են քննության առարկա դառնալ բացառապես գործի ըստ էության քննության շրջանակներում գույքի բռնագանձման պահանջի հիմնավորվածությունը գնահատելիս, և դրանք ինքնին չեն կարող հիմք դառնալ հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու համար: Իսկ քանի միջնորդությունը ներկայացվել է դատավարական կարգի պահպանմամբ, և ՔԴՕ 170-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում միջնորդությունը ենթակա է բավարարման: Իսկ ուսումնասիրության օրինականությունը խախտված լինելու վերաբերյալ մյուս փաստարկների մասով Դատարանը գտել է, որ դրանք միջնորդության հիմնավորվածությունը գնահատելու տեսանկյունից որևէ նշանակություն չունեն¹⁹²:

Մեկ այլ գործով պատասխանող կողմը առարկել է՝ նշելով, որ նախաքննություն իրականացնող մարմնից ստացված նոր տվյալը անձի անմեղության կանխավարկածը ոտնահարելու պայմաններում ստացվող տեղեկություն է, այդ հանգամանքը չի կարող դրվել հայցի հիմքում, քանի որ այն փաստակազմից զուրկ է, չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ուստի այդ փաստը դեռևս ենթադրություն է: Դատարանը չի անդրադարձել այս փաստարկին, իսկ միջնորդությունը բավարարել է՝ նշելով, որ եթե առկա չեն ՔԴՕ 170-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված մերժման հիմքեր, ապա միջնորդությունը ենթակա է բավարարման¹⁹³:

➤ *Հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը որպես նոր պահանջ.*

Դիտարկված գործերով հայցի առարկայի փոփոխության դեպքում հայցապահանջը և՛ ավելացվել է, և՛ նվազել: Պատասխանողներից ոմանք պնդել են, որ հայցադիմումը ներկայացնելուց հետո հայցվորը իրավասու էր միայն նվազեցնել պահանջը:

Որոշ գործերով հայցի առարկայի ավելացման եղանակով փոփոխության դեպքում պատասխանող կողմը պնդել է, որ հայցվորի գործողություններն ըստ էության պետք է համարվեն նոր հայցադիմումի ներկայացում, այլ ոչ թե հայցի հիմքի ու առարկայի փոփոխություն այն դեպքում, երբ անձի դեմ կա ներկայացված նյութաիրավական պահանջ, և ներկայացվում է դրա հետ չկապակցված ցանկացած այլ պահանջ:

Գործերից մեկով Դատարանը, արձագանքելով պատասխանողի ներկայացուցիչների առարկություններին առ այն, որ գումարի բռնագանձման պահանջի ավելացման դեպքում փոխվում է հայցի հիմքն ու առարկան, և որ հայցվորի իրավունքը կարող է իրացվել նոր հայց բերելով, այլ ոչ թե՝ լրացման

¹⁹² ՀԿԴ/0105/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811888

¹⁹³ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

միջոցով, նշել է, որ հայցվորը վնասի հատուցման պահանջ չի ներկայացրել, այլ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, և նույն հայցի առարկայի շրջանակներում գումարի պահանջը լրացնելը հայցվորի տնօրինչական իրավունքների տիրույթում է: Իսկ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու միջնորդությունը նոր հայց չէ՝ անկախ դրա ծավալներից, քանի որ կողմերը չեն փոփոխվել, իսկ պահանջը մնացել է նույնը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին: Իսկ հայցվորն իր տնօրինչական իրավունքի իրականացման շրջանակներում փոփոխության է ենթարկել հայցի հիմքերը և պահանջը այն սահմաններում, որ միջնորդության մերժելու հիմքեր չեն առաջացնում¹⁹⁴:

Մեկ այլ գործով, ըստ պատասխանողի, ի սկզբանե հայցը հարուցվել է ենթադրյալ ապօրինի գույք բռնագանձելու վերաբերյալ պահանջով, մինչդեռ դատախազությունը փորձել է ենթադրյալ ապօրինի գույքի բռնագանձումը կատարել նաև անձանց պատկանող օրինական եկամուտներով հիմնավորվող գույքերի հաշվին: Պատասխանողը նշել է, որ իր վստահորդների մասով փոփոխությունը ամբողջությամբ ենթակա է մերժման, քանի որ ինչպես իրավունքը, այնպես էլ օրենքով պահպանվող շահը փոփոխվում են, և ներկայացվում է նոր հայցադիմում: Դատարանը բավարարել է հայցվորի միջնորդությունը՝ նշելով, որ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն ներկայացնելն ինքնին չի կարող դիտվել որպես դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքի խախտում, իսկ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու միջնորդության քննարկման շրջանակներում միջնորդությամբ ներկայացված հայցապահանջների բովանդակային քննարկում Դատարանը չի կատարում¹⁹⁵:

Մեկ այլ գործով Դատարանը, արձագանքելով պատասխանող կողմի առարկությանն առ այն, որ պահանջի ավելացման դեպքում այն պետք է դիտարկվի որպես նոր հայց, դրանք համարել է անհիմն, քանի որ հայցվորը վնասի հատուցման պահանջ չի ներկայացրել, այլ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, և նույն հայցի առարկայի շրջանակներում գումարի պահանջը լրացնելը հայցվորի տնօրինչական իրավունքների տիրույթում է: Բացի այդ, հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու միջնորդությունը նոր հայց չէ՝ անկախ դրա ծավալներից, քանի որ կողմերն անփոփոխ են, պահանջը նույնն է՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին, իսկ հայցվորն իր տնօրինչական իրավունքի իրականացման շրջանակներում փոփոխության է ենթարկել հայցի հիմքերը և պահանջը այն սահմաններում, որ միջնորդության մերժելու հիմքեր չեն առաջացնում¹⁹⁶:

¹⁹⁴ ՀԿԴ/0224/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814477

¹⁹⁵ ՀԿԴ/0225/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814476

¹⁹⁶ ՀԿԴ/0224/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814477

Նոր պահանջ, հատկապես ավելացման ձևով, բերելու դեպքում բարձրացվել է նաև հայցային վաղեմության հարցը, որը քննարկվում է հայցային վաղեմության վերաբերյալ ենթազվիտում:

- *Նոր պատասխանող ներգրավելու դեպքում հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը.*

Դիտարկված գործերով արձանագրվել է, որ նոր պատասխանող ներգրավելու դեպքում հայցվորը ներկայացրել է նաև հայցի հիմքի և առարկայի փոփոխություն: Հիմնականում պնդվել է, որ նոր պատասխանողին պատկանող գույքի իրական շահառուն հիմնական պատասխանողն է, նոր պատասխանողը հանդիսանում է գույքի տիտղոսային համասեփականատեր, և նոր հանգամանքների լույսի ներքո կարիք է առաջացել վերանայել և փոփոխել հայցի հիմքն ու առարկան¹⁹⁷:

Գործերից մեկով ներկայացվել է նոր պատասխանողներ ներգրավելու և դրանով պայմանավորված հայցի հիմքի և առարկայի փոփոխելը թույլատրելու միջնորդություն: Պատասխանողի ներկայացուցիչը պնդել է, որ նոր պատասխանողի մասով պահանջը պետք է դիտարկվի առանձին և եթե դրա արժեքը չի կազմում 50 մլն դրամ, ապա այդ գույքը չի կարող բռնագանձվել, հետևաբար չի կարող նաև այդ չափով հայց հարուցվել: Դատարանը, արձագանքելով նոր պատասխանողների դեմ ներկայացված պահանջի՝ 50 մլն դրամի շեմը չգերազանցելու վերաբերյալ պատասխանողների ներկայացուցիչների փաստարկներին, գտել է, որ այն հայցի հիմքերի և առարկայի փոփոխության շրջանակներում քննարկման և լուծման հարց չէ, քանի որ նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասով¹⁹⁸:

Մեկ այլ գործով, որով նոր պատասխանող էր ներգրավվել հայցադիմումը Դատարանի կողմից վարույթ ընդունելուց հետո, և դրանով պայմանավորված ներկայացվել է հայցի հիմքի ու առարկայի փոփոխելը թույլատրելու մասին միջնորդություն, պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ նոր պատասխանողի վերաբերյալ ուսումնասիրության եզրակացությունը բացակայում է, ուստի չկա նաև հայցի հարուցման հիմք: Միջնորդության ներկայացման կարգը պահպանված չէ, քանի որ վերջինիս վերաբերյալ ուսումնասիրություն չի իրականացվել, և վերջինիս գույքային դրությունը չի բացահայտվել: Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի առարկայի փոփոխություն կատարելու հնարավորությունը սահմանափակված է տվյալ գույքի վերաբերյալ ուսումնասիրության վերջնական արդյունքներով, մասնավորապես ուսումնասիրության սուբյեկտային կազմով, Դատարանն արձանագրել է, որ Օրենքով սահմանված չեն հայցի առարկայի (հիմքի) փոփոխություն թույլատրելու վերաբերյալ հատուկ դրույթներ, հետևաբար կիրառելի են ՀՀ ՔԴՕ-ի

¹⁹⁷ Տե՛ս, օրինակ, ՀԿԴ/0110/02/22,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890

¹⁹⁸ ՀԿԴ/0110/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890

համապատասխան կարգավորումները: Նման վարույթների շրջանակներում հայցի առարկայի (հիմքի) փոփոխության որևէ արգելք կամ սահմանափակում՝ դրանց տեսակով պայմանավորված, ինչպես Օրենքով, այնպես էլ ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված չէ, ուստի միջնորդությունը ենթակա է քննության, իսկ դրա հիմնավորվածությունը ենթակա է գնահատման բացառապես օրենքով սահմանված ընդհանուր պահանջների պահպանման տեսանկյունից: Օրենսդիրը սահմանել է հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու հստակ և սպառնիչ հիմքեր, ուստի այդպիսի միջնորդությունը չի կարող մերժվել դրանցից տարբերվող որևիցե այլ հիմքով: Հետևաբար, հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ հայցվորի կամահայտնության դեպքում դատարանը ստուգում է բացառապես վերոնշյալ պահանջների պահպանվածությունը: Ըստ այդմ, Դատարանը գտել է, որ եզրակացությամբ ամփոփված ուսումնասիրության արդյունքները կարող են քննության առարկա դառնալ բացառապես գործի ըստ Էության քննության շրջանակներում գույքի բռնագանձման պահանջի հիմնավորվածությունը գնահատելիս, և դրանք ինքնին չեն կարող հիմք դառնալ հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու համար:

Դատարանը նաև գտել է, որ այս գործով հայցի առարկայի փոփոխությունը, որով պահանջ է ներկայացվում Օրենքի իմաստով ուսումնասիրվող անձ չհանդիսացող անձի դեմ, չի հանգեցրել այն իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի փոփոխության, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցված է: Միջնորդությունը բավարարվել է¹⁹⁹:

➤ *Գույքի կամ դրա բռնագանձման անհնարինության դեպքում արժեքի բռնագանձման պահանջը.*

Գործերից մեկով հայցի հիմքի ու առարկայի փոփոխության համատեքստում քննարկվել է հայցվորի կողմից բերված՝ գույքի բռնագանձման անհնարինության դեպքում դրա շուկայական արժեքը բռնագանձելու պահանջը: Որպես նման ձևակերպման հիմնավորում հայցվորը նշել է, որ որոշ հանգամանքներում հնարավոր է, որ դատավարության ընթացքում, օրինակ, գույքը խոտանվի, ուստի հայցվորը, անկարող լինելով մինչև վերջնական դատական ակտ կայացնելը գույքի ճակատագրի առումով ապագան կանխատեսել, ներկայացնում է նաև «անհնարինության դեպքում արժեքը գանձելու պահանջ»: Պատասխանող կողմը պնդել է, որ պահանջը պետք է հստակ լինի, պայմանով վճիռ չի կարող կայացվել: Հղում անելով Վճռաբեկ դատարանի դիրքորոշմանը՝ պատասխանողի ներկայացուցիչը պնդել է, որ հայցվորը կամ գույքը պետք է պահանջի, կամ ապրանքի գինը: Դատարանը հայցվորի ներկայացրած միջնորդությունը բավարարվել է, իսկ նշված որոշման տեքստը հրապարակված չէ²⁰⁰:

Այս առումով հատկանշական է, որ մեկ այլ գործով կայացված վճռով Դատարանը, քննարկելով հայցվորի կողմից ներկայացված՝ գույքերի՝ բնեղենով բռնագանձման

¹⁹⁹ ՀԿԴ/0105/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811888

²⁰⁰ ՀԿԴ/0010/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811927

անհնարինության դեպքում համապատասխան շուկայական արժեքների բռնագանձման պահանջները, արձանագրել է, որ հայցվոր կողմի վրա համապատասխան որոշմամբ դրված է եղել գույքերի՝ բնեղենով բռնագանձման անհնարինության փաստերի ապացուցման պարտականությունը, սակայն հաշվի առնելով, որ հայցվորի կողմից Դատարան չեն ներկայացվել գույքերի բռնագանձման անհնարինության փաստի հաստատմանն ուղղված ապացույցներ՝ այդ փաստերը գործի քննության ընթացքում չեն քննարկվում²⁰¹:

Հիմնականում բնեղենով բռնագանձման անհնարինության դեպքում դրամական պահանջն ուղղվել է հիմնական պատասխանողին, որը համարվել է գույքի իրական շահառուն: Այնուամենայնիվ, մի գործով հայցվորը հայցի առարկայի փոփոխությունն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել, որում, ի թիվս այլնի, կատարվել է վերահաշվարկ, և սկզբունքային փոփոխություն է կատարել խնդրամասում, մասնավորապես, դրամական պահանջը, որը նախորդիվ ուղղված էր բացառապես հիմնական պատասխանողին, նոր խմբագրությամբ հայցում որոշակի վերաբերելի մասերով ուղղված է նաև մյուս պատասխանողներին: Պատասխանողի ներկայացուցիչն առարկել է միջնորդության դեմ՝ նշելով, որ բռնագանձման մասով երկու իրարից տարբեր կարգավորում կա. մի մասը վերաբերում է այն գույքին, որը նույնականացված է, և դրա հիմնական պահպանվող շահը, առնվազն ըստ հեղինակների, օրենքի հիմնավորումների, ապօրինի գույքը ապօրինի շրջանառությունից հանելն է և օրինական շրջանառություն մտցնելը: Երկրորդ կտորը վերաբերում է այսպես կոչված կոմպենսացիոն կամ տուգանային կտորին, այսինքն եթե անձը ավել է ծախսել, քան ինքը ունեցել է նախկինում, դատախազությունն այդ գումարը նույնպես ուզում է բռնագանձել: Սա ունի քաղաքացիաիրավական իմաստով «պատժիչ» նշանակություն, որի հիմքում դրված է հանցավորության դեմ պայքարը՝ այն նկատառումով, որ եթե անձինք չունենան ապօրինի եկամուտներ, չեն ունենա ցանկություն իրականացնելու հանցավոր գործունեություն: Դատարանը սույն գործով ևս բավարարել է միջնորդությունը՝ նշելով, որ չի անդրադառնում հայցապահանջների հիմնավորվածության հարցին՝ հաշվի առնելով, որ դա դատական քննության հետագա փուլերի հարց է²⁰²:

➤ *Հայցի առարկայի փոփոխությունը որպես իրավունքի չարաշահում.*

Որոշ դեպքերում պատասխանող կողմը պնդել է, որ հայցի առարկայի փոփոխությունը իրավունքի չարաշահում է:

Գործերից մեկով պատասխանող կողմը նշել է, որ դատախազությունը ի սկզբանե հայց էր ներկայացրել այն տրամաբանությամբ, որ գտել էր ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքեր, դա վերագրել էր հիմնական պատասխանողին, որոշակի գույքերի ձևափոխումից առաջացած գույքերի, օրինական եկամուտներով չհիմնավորվող ծախսերի բռնագանձման պահանջ էին ներկայացրել կրկին

²⁰¹ ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

²⁰² ՀԿԴ/0225/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814476

հիմնական պատասխանողի դեմ, քանի որ գտել են, որ այն ծախսերը, որոնք կատարվել են փոխկապակցված անձանց կողմից, իրականում կատարվել են հիմնական պատասխանողի գույքերի հաշվին: Ըստ պատասխանող կողմի՝ ուսումնասիրությունը իրականացնելուց հետո, ենթադրաբար գտնելով, որ հիմնական պատասխանողի օրինական գույքերը բավարար չեն այդ գումարը բռնագանձելու համար, հայցվորը որոշել է գումարային պահանջ ներկայացնել փոխկապակցված անձանց: Պատասխանողների ներկայացուցիչը նշել է, որ սա միանշանակ պահպանվող շահի, իրավունքի փոփոխություն է, ուստի Դատարանը մասնակի պետք է մերժի հայցի առարկայի փոփոխությունը՝ իր վստահորդներին պատկանող օրինական եկամուտներով հիմնավորվող գույքերի հաշվին դրամական բռնագանձման պահանջի մասով: Դատարանը չի համաձայնել պատասխանողի այն պնդման հետ, որ հայցի առարկայի փոփոխությունը հանդիսանում է չարաշահում՝ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հայցվորին տրված հայցի հիմքն ու առարկան փոփոխելու իրավունքը: Դատարանն ընդգծել է, որ պետական շահի պաշտպանության, այդ թվում՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քննության շրջանակներում դատախազն ունի դատավարական օրենսդրությամբ հայցվորին վերապահված բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Ուստի հայցի հիմքի և առարկայի փոփոխությունն ներկայացնելն ինքնին չի կարող դիտվել որպես դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքի խախտում²⁰³:

➤ *Ապացուցման բեռը կողմերի միջև բաշխելուց հետո հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը.*

Այն միակ դիտարկված գործով, որով հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է, հայցվորը նշել էր, որ երրորդ անձի կողմից փոխառության գումարը պատասխանողին վերադարձված լինելու փաստ վկայակոչված չի եղել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացումը, փաստը վկայակոչվել և համապատասխան ապացույցները ներկայացվել են նշված որոշման կայացումից հետո: Հետևաբար հայցվորը գրկված է եղել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացումը Դատարան հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից, քանի որ չունեի որևէ օբյեկտիվ հնարավորություն տիրապետելու համապատասխան ապացույցներին, չէր կարող վկայակոչել փաստեր, որոնք մինչ այդ հայտնի չեն եղել հայցվորին իրենից անկախ պատճառներով և դրանք հայցվորին հասու են դարձել միայն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացումից հետո:

Դատարանը նախ արձանագրել է, որ ո՛չ պատասխանող կողմը, ո՛չ գործով երրորդ անձ հանդիսացող ընկերությունը չեն ունեցել ընկերության կողմից փոխառության գումարը պատասխանողին վերադարձված լինելու փաստը վկայակոչելու

²⁰³ ՀԿԴ/0225/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814476

պարտականություն: Դատարանը ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու վերաբերյալ որոշմամբ հայցվորի վրա դրել է պարտականություն՝ ապացուցելու հայցվորին փոխառության չվերադարձված մասի պահանջի իրավունքի առկայության փաստը, իսկ պատասխանող կողմը կարող է ներկայացնել հայցվորի վկայակոչած փաստը հերքող ցանկացած ապացույց, որը գնահատվելու է Դատարանի կողմից ապացույցների գնահատման փուլում: Քանի որ ստացված ապացույցների հիման վրա է միայն հայցվորի համար պարզ դարձել, որ պահանջի իրավունքն առկա չէ՝ փոխառության գումարը վերադարձված լինելու հիմքով, ստացվում է, որ հերքվել է հայցվորի կողմից վկայակոչված փաստը, ինչը չի կարող մեկնաբանվել որպես նոր փաստի վկայակոչում:

Դատարանը գտել է, որ հայցվորը նշված ապացույցը ուսումնասիրության փուլում ձեռք բերելու օբյեկտիվ հնարավորություն ուներ, ուստի դատավարական ժամկետը բաց չի թողնվել հայցվորի կամքից անկախ հանգամանքներով և ըստ այդմ այդպիսի բացթողումը Դատարանի կողմից հարգելի ճանաչվել չի կարող, ուստի դատավարական ժամկետը չի վերականգնվել²⁰⁴:

Հարկ է նշել, որ հարցված դատավորներից մեկը նշել է, որ եղել են նաև գործեր, որոնցով նույնիսկ ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու մասին որոշում կայացնելուց հետո ներկայացված հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդությունները բավարարվել են:

➤ *Բռնագանձման ենթակա գույքի ծավալի հաշվարկները.*

Պատասխանող կողմը գործի քննության ժամանակ վիճարկել է իրավասու մարմնի կատարած հաշվարկի իսկությունը թե՛ վրիպակների, թե՛ բովանդակային թերությունների առկայության տեսանկյունից: Օրինակ՝ սխալ տվյալների օգտագործում, նույն ակտիվների կրկնակի հաշվարկելու դրվագներ, պատասխանողների օրինական եկամուտների անհիմն առաջնային վերագրում սպառողական և այլ նմանատիպ ծախսերի վրա և այլն: Դիտարկած նիստերից մեկով պատասխանողը պնդել է, որ անգամ հայցվորն է ընդունել, որ լիովին վստահ չէ իր իսկ կատարած ֆինանսատնտեսագիտական վերլուծության համակողմանիության և ճշգրտության վրա, և եզրակացրել, որ իրավասու մարմինը գործի քննության ընթացքում ավելացրել է հայցապահանջի չափը և պահանջել նաև բռնագանձել ոչ միայն իր կողմից ապօրինի որակված, այլև իր կողմից օրինական որակված գույքերի մասերը²⁰⁵:

➤ *Փորձագիտական կարծիք.*

Հարցված փաստաբանները պնդել են, որ դատարան հայցադիմումը ներկայացնելուց հետո հայցի հիմքի ու առարկայի փոփոխություն չպետք է թույլատրվի՝ հայցապահանջի ավելացման մասով, միջնորդությունը թույլատրելի կարող է լինել միայն պահանջից հրաժարվելու մասով: Հայցը ներկայացնելուց

²⁰⁴ ՀԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

²⁰⁵ ՀԿԴ/0024/02/22 գործով 01.12.2023թ. նիստ:

հետո տվյալների հավաքագրման և այդ հիմքով հայցի հիմքի և առարկայի փոփոխության առումով մտահոգություն է հայտնել հարցված փաստաբաններից մեկը:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքը սահմանում է նաև դատավարական որոշ գործողություններ: Հայց ներկայացնելու հիմքը կարող է լինել բացառապես ուսումնասիրությունը, հայցը չի կարող չբխել ամփոփագրից: Հակառակ դեպքում ցանկացած այլ հիմքով ուսումնասիրություն կարող են անել, հետո հայց ներկայացնել ու հիմքը փոխել, ինչպես ուզենան: Չի կարող լինել որևէ հայցի փոփոխություն, որը չի բխում ամփոփագրից: Հայցվորը իրավունք չունի հավաքագրել անհատական տվյալներ սովորական պայմաններում: Ուսումնասիրությունը ավարտվել է, եզրահանգում են կայացրել, դիմել են դատարան: Փոփոխություն կատարելու վերաբերյալ միջնորդությունը պետք է մերժվի: Հայցվորը չունի իրավունք պահանջ ավելացնելու, բայց ունի իրավունք հայցի մի մասից հրաժարվելու: Կամ նոր ուսումնասիրություն իրականացնի, նոր տվյալ հավաքագրի, ցանկացած փոփոխությանը պետք է նախորդի նոր ուսումնասիրություն»:

Փաստաբան

Հարցված դատավորները նշել են, որ հայցվորի կողմից հայցի հիմքի և առարկայի փոփոխության վերաբերյալ միջնորդությունները հիմնականում օբյեկտիվ հանգամանքներով են պայմանավորված, երբ որոշակի տվյալներ հստակեցվել են կամ հայտնի են դարձել արդեն իսկ նախնական նիստի շրջանակներում:

«Հայցվորը հարցումներ է արել, արդյունքները չեն ստացել հայցադիմումը ներկայացնելու պահին, արդյունքները գալիս են, վերահաշվարկ են անում: Երկրորդ դեպքում կողմերը ապացույց են սկսում բերել, վերագնահատվում է գույքի օրինական կամ ապօրինի լինելը: Բայց իրենց կամքից անկախ պատճառներով, որպես կանոն: Դատախազը, լինում է, 4-5 անգամ փոխում է հայցի հիմքն ու առարկան: Ամեն անգամ կողմը ապացույց է բերում, տանում նայում են, ասում են՝ սա ընդունեցինք, սա չընդունեցինք, կամայական չէ: Մի դեպք ունեցանք, երբ ապացուցման պարտավորությունը բաշխելուց հետո միջնորդություն ներկայացվեց հայցի հիմքի ու առարկայի փոփոխության, թույլատրեցինք: Քանի որ ամբողջ գործի քննության ընթացքում չէր բերում պատասխանող կողմը, ապացուցման բեռի բաշխումից հետո նոր բերեց ապացույց, պարզվեց, որ լրիվ այլ պատկեր է: Հայցվորն էլ միջնորդեց, նշեց, որ իր կամքից անկախ է, չէր կարող ավելի շուտ ներկայացնել միջնորդությունը»:

Դատավոր

«Պատասխանողները պնդում են, որ հայցի հիմքն ու առարկան պետք է քննարկվի միայն ուսումնասիրության արդյունքում ներկայացված հայցադիմումի շրջանակներում, ներկայացնելուց հետո այլևս փոփոխման

ենթակա չպիտի լինի: Դա մի մեկնաբանություն է, որն ընդունելի չէ: Օրենքն էլ չի ասում, որ ուսումնասիրության արդյունքներով միայն պետք է բերվի, այլ հղում է անում գույքի արժեքի նվազագույն շեմին: Իրենք ասում են, որ պիտի պակասի միայն: Լինում են դեպքեր, երբ ընթացքում է պարզվում, որ փոխկապակցված անձի գույքի իրական շահառուն պատասխանողն է, քանի որ այդ անձը չէր կարող իրեն թույլ տալ ձեռքբերել այդ թանկ գույքը: Բայց դա պարզվում է հայցը ներկայացնելուց մի տարի հետո: Հիմա հայցվորը կարող է այդ հայցապահանջը փոխել: Օրենքի նպատակը ո՞րն է՝ որ ապօրինի գույքը բացահայտվի, բռնագանձվի, որ կանխարգելիչ էֆեկտ ունենա, որ մյուսները տեսնեն, որ եթե գողանան, տանեն, գույք դարձնեն, թեկուզ երեք աստիճան էն կողմ պահեն, դա պետք է հայտնաբերվի, այսինքն՝ ապօրինի գույք չպիտի լինի»:

Դատավոր

Ինչպես տեսնում ենք, անկախ հայցվորի կողմից վկայակոչված հայցի հիմքի և առարկայի փոփոխելու անհրաժեշտության հիմնավորումների և պատասխանողների առարկությունների, Դատարանը մշտապես արձանագրել է, որ այս տեսակի գործերով Օրենքով սահմանված չեն հայցի առարկայի (հիմքի) փոփոխությունն թույլատրելու վերաբերյալ հատուկ դրույթներ, հետևաբար կիրառելի են ՀՀ ՔԴՕ-ի համապատասխան կարգավորումները: Նման վարույթների շրջանակներում հայցի առարկայի (հիմքի) փոփոխության որևէ արգելք կամ սահմանափակում՝ դրանց տեսակով պայմանավորված, ինչպես Օրենքով, այնպես էլ ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված չէ, ուստի միջնորդությունը ենթակա է քննության, իսկ դրա հիմնավորվածությունը ենթակա է գնահատման բացառապես օրենքով սահմանված ընդհանուր պահանջների պահպանման տեսանկյունից: Արդյունքում հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ հայցվորի կամահայտնության դեպքում Դատարանը ստուգում է բացառապես վերոնշյալ պահանջներին համապատասխանելու հարցը, և եթե դրանք պահպանված են՝ բավարարում է միջնորդությունը:

4.7 Ուսումնասիրության շրջանակներում չընդգրկված պատասխանողներ (նոր պատասխանող ներգրավելը)

Օրենսգրքի 173 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը, գտնելով, որ հայցը ներկայացվել է ոչ բոլոր անձանց դեմ, որոնք պետք է պատասխանեն այդ հայցով, մինչև նախնական դատական նիստի ավարտը կարող է առաջին ատյանի դատարանին ներկայացնել այդ անձանց որպես պատասխանող ներգրավելու վերաբերյալ գրավոր միջնորդություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն նոր պատասխանող ներգրավելու մասին դատարանը կայացնում է որոշում՝ այն երեք օրվա ընթացքում ուղարկելով գործին մասնակցող անձանց, այդ թվում նաև՝ նոր պատասխանողին:

Դիտարկման շրջանակներում չորս գործով (15%)²⁰⁶ հայցվոր կողմը միջնորդել է ներգրավել նոր պատասխանող, ընդ որում՝ երկու գործով՝ երկու անգամ: Ըստ հայցվոր կողմի՝ նման իրավիճակ ստեղծվել է այն դեպքում, երբ նոր պատասխանողին պատկանող գույքի իրական շահառու հիմնական պատասխանողը լինելու հանգամանքը բացահայտվել է ուսումնասիրության նախնական արդյունքների ամփոփումից հետո (1 գործով) կամ պահանջը ուղղվել է տիտղոսային սեփականատիրոջը (1 գործով) կամ նոր պատասխանողի՝ գործով ներգրավված այլ պատասխանողի ամուսինն է և հայցվող գույքի համատեղ սեփականատեր (3 գործով) կամ մերձավոր ազգականներ (1 գործով):

Նշված գործերից ամենուշ միջնորդությունը ներկայացվել է հայցը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուց ինը ամիս անց²⁰⁷:

Դատարանը բոլոր միջնորդությունները բավարարել է՝ անկախ այն հանգամանքից, թե նոր պատասխանողի մասին տեղեկությունները հայցվորը ձեռք է բերել արդեն դատարանում քննության ժամանակ, թե ուներ կամ պետք է ունենար դեռևս ուսումնասիրության ընթացքում:

Որոշ գործերով պատասխանողները պահանջել են կարճել գործի քննությունը մասամբ, մասնավորապես այն պատասխանողների դեպքում, որոնք ներառված չեն եղել ուսումնասիրության շրջանակներում և որոնց նկատմամբ արտադատական կարգը չի պահպանվել:

Գործերից մեկով հայցվորի ներկայացուցիչը պնդել է, որ մինչդատական վարույթում նոր պատասխանողի կողմից իր իրավունքների պաշտպանություն իրականացնելու հնարավորության բացակայությունը չի հանգեցնում պահպանվող շահի փոփոխության: Ըստ հայցվորի՝ նշված գույքի վրա արգելանքը դրվել է հայցադիմումի հետ ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության հիման վրա, ուստի տվյալ գույքի նկատմամբ ուսումնասիրությունը չի իրականացվել սովորական ընթացակարգով: Նոր պատասխանողի վերաբերյալ ուսումնասիրություն չի իրականացվել, քանի որ գույքի բռնագանձման պահանջի հիմքում դրված է ոչ թե ամուսինների կողմից օրինական եկամուտներով այն ձեռքբերելու անհնարինությունը, այլ նախաքննության արդյունքում ստացված ցուցմունքները, որոնց հիման վրա իրավասու մարմինը գտել է, որ գույքի իրական շահառուն գործով հիմնական պատասխանողն է: Պատասխանող կողմը առարկել է՝ պնդելով, որ իրավասու մարմինը հայց կարող է հարուցել միայն ուսումնասիրության արդյունքներով կազմված եզրակացության հիման վրա, իսկ սույն դեպքում նոր պատասխանողի վերաբերյալ ուսումնասիրություն չի իրականացվել, չի ապահովվել վերջինիս լսված լինելու իրավունքը, հետևաբար բացակայում է վերջինիս նկատմամբ հայց

²⁰⁶ ԶԿԴ/0110/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890,
ԶԿԴ/0014/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811534;
ԶԿԴ/0010/02/22, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530;
ԶԿԴ/0105/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811888

²⁰⁷ ԶԿԴ/0010/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530

հարուցելու հիմքը: Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ նշելով, որ միջնորդությամբ պահանջվում է բռնագանձել պատասխանողներից մեկի և վերջինիս կնոջից՝ Նոր պատասխանողից, ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, միջնորդությամբ նպատակ է հետապնդվել գույքի բռնագանձման պահանջն ուղղել գույքի ենթադրյալ սեփականատերեր հանդիսացող անձանց դեմ, իսկ գույքի բռնագանձման անհնարինության դեպքում՝ տվյալ գույքի ենթադրյալ միջին շուկայական արժեքի չափով գումարի բռնագանձման պահանջն ուղղել այն անձի դեմ, ով, ըստ հայցվորի, հանդիսանում է գույքի իրական շահառու²⁰⁸:

Համասեփականատեր լինելու հիմքով Նոր պատասխանող ներգրավելու միջնորդությամբ մեկ այլ գործով հայցվորը նշել է, օրինակ, որ ներկայացված հայցադիմումով Նյութաիրավական պահանջ է ներկայացվել պատասխանողին՝ որպես հիմնական պատասխանող «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի իմաստով պատկանող, հայցադիմումի խնդրամասում նշված գույքերի տիտղոսային սեփականատիրոջ: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս 16.05.2003 թվականից պատասխանողը ամուսնացած է Նոր ներգրավվող պատասխանողի հետ, իսկ խնդրո առարկա գույքերը (գույքային իրավունքները) ձեռք են բերվել ավելի ուշ՝ դրանք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի ուժով հանդիսանում են ամուսինների համատեղ սեփականություն, ուստի նշված գույքի տիտղոսային սեփականատերեր են հանդիսանում ամուսինները: Դատարանը բավարարել է միջնորդությունը՝ նշելով, որ ինչպես հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը, այնպես էլ Նոր պատասխանողի ներգրավումը ՀՀ ԶԴՕ 12-րդ հոդվածով ամրագրված տնօրինչականության սկզբունքի տարրն են կազմում: Ուստի բոլոր այն դեպքերում, երբ միջնորդությունը ներկայացվում է օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, ինչպես նաև առկա չեն միջնորդությունը մերժելու հիմքեր, միջնորդությունը ենթակա է բավարարման²⁰⁹:

Գործերից մեկով անձը իր նախաձեռնությամբ նախ ներգրավվել է որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ, իսկ որոշ ժամանակ անց հայցվոր կողմը միջնորդել է այդ անձին ներգրավվել որպես Նոր պատասխանող: Վերջինիս ներկայացուցիչը նշել է, որ դատախազության կողմից հայցադիմումին կից ներկայացված Նյութերում եղել է քաղվածք, ըստ որի արձանագրված է եղել, որ Նոր պատասխանողն է գույքի սեփականատերը, ինչը նշանակում է, որ դատախազությունը ուսումնասիրությունը թերի է իրականացրել: Մինչև ժամանակ ներկայացուցիչը նշել է, որ ավելի տրամաբանական է, որ սույն գործով այդ անձը պատասխանողի կարգավիճակ ստանա, եթե հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրվի: Նույն հիմնավորմամբ, որը նշվել է նախորդ գործով, Դատարանը բավարարել է միջնորդությունը²¹⁰:

²⁰⁸ ՀԿԴ/0105/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811888

²⁰⁹ ՀԿԴ/0010/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530

²¹⁰ Նույն տեղում:

Մեկ այլ գործով նոր պատասխանող ներգրավելու միջնորդության դեմ առարկելիս պատասխանող կողմը պնդել է, որ Իրավասու մարմինը իրավունք ունի համապատասխան ապացույցներ, այդ թվում՝ փաստարկներ հավաքագրել մինչև վերջնական ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացությունը, ինչը նշանակում է, որ դրանից հետո Իրավասու մարմինը իրավունք չունի ուսումնասիրության արդյունքները լրացնել կամ փոփոխել, այդ թվում՝ կատարել հայցի հիմքի և առարկային փոփոխություն և նոր պատասխանող ներգրավել: Պատասխանող կողմը նշել է, որ հայցի հիմքի փոփոխությունն իրենից ենթադրում է հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելը, ինչը սույն դեպքում առկա չէ, քանի որ ներկայացված փաստարկները նախկինում չեն վկայակոչվել, բացի այդ, կից ներկայացված ապացույցներով չի բացահայտվում, թե նոր պատասխանողների գույքերն ինչ առնչություն ունեն սույն գործի հետ, կամ ինչ փաստարկներով է դա համարվել հիմնական պատասխանողի գույքը:

Այս գործով պատասխանող կողմը նաև առաջ է քաշել բռնազանձման ենթակա գույքի արժեքի Օրենքով սահմանված նվազագույն շեմի հետ կապված հարց: Այդպես, նշվել է, որ նոր պատասխանողներից բռնազանձման նպատակով հայցվող հայցադիմումի առարկա հանդիսացող ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքը չի գերազանցում 50 մլն ՀՀ դրամի շեմը, ուստի այդ գույքը չի կարող բռնազանձվել, հետևաբար նաև՝ չի կարող այդ չափով հայց հարուցվել: Պատասխանող կողմը պնդել է, որ օրենսդրական կարգավորումները միտված են ապօրինի ծագում ունեցող՝ առավել արժեքավոր և էական նշանակություն ունեցող գույքերի բռնազանձման հնարավորությունների ապահովմանը, միաժամանակ նշված գործառույթի բարեհաջող իրականացման համար սահմանելով 50 մլն ՀՀ դրամը չգերազանցող գույքերի բռնազանձման արգելքը, այդպիսով թույլ չտալով ՀՀ դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման գործերով վարչությանը վատնել պետական ռեսուրսները և լծակները՝ ոչ էական և նվազ նշանակություն ունեցող գույքերի հայտնաբերման, գնահատման և բռնազանձման գործընթացների համար:

Դատարանը նշել է, որ նոր պատասխանողների դեմ ներկայացված պահանջի՝ 50 մլն դրամի շեմը չգերազանցելու վերաբերյալ հարցը հայցի հիմքերի և առարկայի փոփոխության շրջանակներում քննարկման և լուծման հարց չէ, քանի որ նախատեսված չէ ՀՀ ՔԴՕ-ի 170-րդ հոդվածի 5-րդ մասով: Իսկ նոր պատասխանող ներգրավելու առումով Դատարանը նշել է, որ տվյալ դեպքում հայցվորը գործել է իր տնօրինչական հայեցողությամբ, հանդես է եկել հայցի հիմքի և առարկայի փոփոխության միջնորդությամբ, որի շրջանակներում էլ ներկայացվել են նյութաիրավական պահանջներ ընդդեմ երկու անձանց, հետևաբար նոր պատասխանողներ ներգրավելու համար հիմքն առկա է՝ բավարարելով նոր պատասխանողներ ներգրավելու մասին միջնորդությունը²¹¹: Հատկանշական է,

²¹¹ ՀԿԴ/0110/02/22 գործ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890

որ այս հիմքով նոր պատասխանող ներգրավելու միջնորդությունը հայցվորը ներկայացրել է հայցադիմումը ներկայացնելուց ավելի քան վեց ամիս հետո²¹²:

Մեկ այլ գործով հայցվորը ինչպես սկզբնական, այնպես էլ փոփոխված հայցի առարկայով, ի թիվս այլի, նյութաիրավական պահանջ է ներկայացրել նաև ընդդեմ մի անձի, որը որպես պատասխանող ներառված չի եղել պատասխանողների թվում: Հայցադիմումը Դատարան ներկայացնելուց միայն ամիսներ անց հայցվորը միջնորդել է այդ անձին որպես նոր պատասխանող ներգրավել: Դատարանը նշել է, որ նման միջնորդությունը թույլատրելի է՝ հղում անելով ՔԴՕ 33, 35 և 173-րդ հոդվածներին²¹³:

Այսինքն՝ նոր պատասխանող ներգրավելու միջնորդությունը Դատարանը համարել է հայցվորի տնօրինչական իրավունքի իրացում: Նման միջնորդությունները, որոնք հիմնականում զուգորդվել են նաև հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդություններով, գնահատել է օրենսդրությամբ սահմանված միայն ձևական պահանջների պահպանման առումով: Նույն մոտեցումը ցուցաբերվել է այն դեպքերում, երբ նոր պատասխանողի մասով ուսումնասիրություն չի իրականացվել:

Բոլոր նման դեպքերում Դատարանը չի անդրադարձել այն հարցին, թե ինչու դատախազությունը նախապես չի ներգրավել հիմնական պատասխանողի մերձավոր ազգականներին (ամուսնուն, քույրերին և այլն) որպես համապատասխանող, չի ներառել նրանց ուսումնասիրության շրջանակներում, հատկապես այն պարագայում, երբ վերջիններիս կարգավիճակի մասին տեղեկություններն առկա են եղել:

4.8 Դատավորներին ինքնաբացարկ և բացարկ հայտները

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարող է բացարկ հայտնվել կամ դատավորը սեփական նախաձեռնությամբ պարտավոր է ինքնաբացարկ հայտնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (Դատական օրենսգիրք) սահմանված հիմքերով:

Դատական օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ:

Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլնի, այն դեպքերը, երբ՝

²¹² ՀԿԴ/0110/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890

²¹³ ՀԿԴ/0014/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811534

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, փաստաբանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ.

2) դատավորը՝ որպես մասնավոր անձ, ականատես է եղել այն հանգամանքներին, որոնք վիճարկվում են գործի քննության ընթացքում.

3) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանն այլ դատարանում.

4) դատավորի մերձավոր ազգականը հանդիսացել է, հանդիսանում է կամ ողջամտորեն կհանդիսանա գործին մասնակցող անձ.

5) դատավորը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ նրա մերձավոր ազգականը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ.

6) դատավորը պաշտոն է զբաղեցնում ոչ առևտրային կազմակերպությունում, և գործով կարող են շոշափվել այդ կազմակերպության շահերը²¹⁴:

Դիտարկված վարույթներից և ոչ մեկում դատավորը ինքնաբացարկ չի հայտնել: Միևնույն ժամանակ հարցված դատավորներից մեկը նշել է, որ հայցադիմումներից մեկը վարույթ ընդունելու փուլում ինքնաբացարկ է հայտնել:

Կողմերը դատավորին ինքնաբացարկի միջնորդություն են ներկայացրել 6 գործով (23%), երկու գործով՝ երկուական անգամ²¹⁵: Միայն մեկ վարույթով միջնորդությունն ներկայացվել է հայցվորի ներկայացուցչի՝ դատախազի կողմից, իսկ մնացած դեպքերում՝ պատասխանող կողմի ներկայացուցիչների կողմից:

6 գործերից 5-ը եղել են դատավոր Կարապետ Բադալյանի, իսկ մեկը՝ դատավոր Նարինե Ավագյանի նախագահությամբ: Դատավոր Կարապետ Բադալյանին բացարկի միջնորդություն է ներկայացվել իր վարույթում գտնվող դիտարկված 11 գործերից 5-ով (45%):

Ինչպես նաև այլ դեպքերում, ոչ բոլոր դատական որոշումներն են հրապարակված «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում, ինչը որոշ գործերով սահմանափակում է կողմերի դիրքորոշումների և Դատարանի հիմնավորումների ուսումնասիրման հնարավորությունը:


Գծապատկեր 4. Դատավորներին հայտնված բացարկները.

²¹⁴ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենք, հոդված 71, 2-րդ մաս:

²¹⁵ ՏԵՍ, օրինակ՝ ՅԿԴ/0224/02/23,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814477, ՅԿԴ/0014/02/22,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811534



Դիտարկված գործերից մեկում Դատարանը արձանագրային որոշմամբ մերժել է պատասխանողի ներկայացուցչի կողմից դատավորին բացարկ հայտնելու միջնորդությունը՝ այն գնահատելով որպես իրավունքի չարաշահում²¹⁶:

Բոլոր դեպքերում նախագահող դատավորին բացարկ հայտնելու հիմքը եղել է դատավորի ենթադրյալ կանխակալ վերաբերմունքը: Մասնավորապես, մի դեպքում բացարկի հիմքում դրվել է նախագահող դատավորի՝ միջնորդությունների քննարկման հերթականության, իսկ երկու այլ դեպքերում՝ դատական նիստերի հետաձգման կամ այլ օր տեղափոխելու հարցը:

Այսպես, այն գործով, որով հայցվորի ներկայացուցչի կողմից դատավորին բացարկի միջնորդություն է ներկայացվել, որպես միջնորդության հիմնավորում նշվել է, որ կայացած նախնական դատական նիստերի ընթացքում նախագահող դատավորի վարքագիծը առերևույթ վկայում է գործով նրա կաշկանդվածության և/կամ կանխակալ վերաբերմունք ունենալու մասին: Մասնավորապես, նշվել է, որ.

«Նախագահող դատավորի կողմից տարբեր պատճառաբանություններով 33 գլխավոր դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության գործառույթների իրականացման շրջանակներում ներկայացված միջնորդությունը երրորդ դատական նիստի շրջանակներում լուծում չի ստանում, մինչդեռ պատասխանողների անունից ավելի ուշ ներկայացված միջնորդությունները արագ լուծվում և բավարարվում են, արդյունքում արգելանքից ազատելով միլիարդավոր դրամների ակտիվներ, ինչը անկողմնակալ դիտորդի մոտ կարող է նվազագույնը ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ»:

Պատասխանողների ներկայացուցիչները առարկել են միջնորդության դեմ՝ գտնելով, որ այն ենթակա է մերժման:

Դատարանը մերժել է ներկայացված միջնորդությունը: Նախ, արձանագրվել է, որ միջնորդությամբ չի բարձրացվել Դատարանի՝ կողմերից մեկի հանդեպ ունեցած

²¹⁶ ՏԵՍ, օրինակ՝ ՀԿԴ/0224/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814477

կանխակալության հարց: Միջնորդության հիմքում դրվել է բացառապես անկողմնակալ դիտորդի մոտ նախագահող դատավորի անաչառության վերաբերյալ ողջամիտ կասկածների հարուցումը: Դատարանի համոզմամբ՝ քաղաքացիական գործով դատարանի կողմից կայացված առանձին որոշումները՝ թե՛ բովանդակային, թե՛ ընթացակարգային, չեն կարող դիտվել որպես դատավորի անաչառության բացակայության ապացույց: Դատական ակտերը բխում են դատարանի՝ արդարադատության իրականացման բացառիկ լիազորությունից և կարող են չհամընկնել կողմերի տեսակետների հետ՝ առանց խաթարելու դատարանի անաչառությունը: Դատարանն արձանագրել է, որ ներկայացված միջնորդության մեջ չեն վկայակոչվել այնպիսի հաստատված փաստեր, որոնք թույլ կտան կասկածի տակ դնել դատարանի անաչառությունը կամ հանդիսանալ հիմք անգամ նման վարկածի համար: Բացի այդ, Դատարանը իրավասու է ինքնուրույն որոշելու դատավարական գործողությունների կատարման հաջորդականությունը՝ ելնելով գործի արդյունավետ և ողջամիտ ժամկետներում քննության ու մրցակցային գործընթացի ապահովման պահանջից: Մինևույն ժամանակ յուրաքանչյուր միջնորդության քննարկման շրջանակներում Դատարանը կաշկանդված է միջնորդության տվյալ տեսակի քննարկման և լուծման համար քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, այդ թվում՝ ժամկետներով²¹⁷:

Մեկ այլ գործով պատասխանողի ներկայացուցչի կողմից դատավորին հայտնվել է բացարկի միջնորդություն այն հիմնավորմամբ, որ դատավորը անաչառ չէ և չի կարող շարունակել գործի քննությունը, ողջամիտ կասկած կարող է հարուցել Դատարանի՝ նախկինում այլ կարգավիճակում հեռուստատեսության եթերում տրված հարցազրույցը, որով կասկածի տակ է դրել պատասխանողի՝ նախագահի պաշտոնի թեկնածության համար ներկայացված փաստաթղթերի իսկությունը, ուստի չի կարող կանխակալ վերաբերմունքով դատավորը վարել գործը: Պատասխանող կողմը որպես հիմնավորում ներկայացրել է նաև այն, որ դատավորը չի համաձայնվել հետաձգել նիստը:

«Ի տարբերություն այլ գործերի, որտեղ դատավորը ավելի համագործակցային է նիստերը համաձայնեցնելու, այլ օր ու ժամ նշանակելու հարցում, այս գործով այլ վարքագիծ է դրսևորել, չի համաձայնվել հետաձգել նիստը՝ իմանալով, որ առկա է այլ նիստ, որը նախապես է նշանակված եղել: Փորձում է հապճեպություն տալ վարույթին, քանի որ Կառավարության նիստում դժգոհություն է հայտնվել: Հետևաբար, պատասխանողները այդ հայցերը համարում են քաղաքական հետապնդում»:

Հայցվորի ներկայացուցիչը գտել է, որ միջնորդությունը ենթակա է մերժման: Դատավորն ընդմիջել է դատական նիստը՝ հեռանալով խորհրդակցական սենյակ. միջնորդությունը մերժվել է²¹⁸: Հարկ է նշել, որ նշված միջնորդությունը տեղադրված չէ դատալեքսում, ի տարբերություն նույն գործով հաջորդող

²¹⁷ ՀԿԴ/0225/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814476:

²¹⁸ ՀԿԴ/0224/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814477

նիստերից մեկում արված այլ բացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման:

Մեկ այլ գործով որպես միջնորդության հիմք պատասխանողների ներկայացուցչի կողմից վկայակոչվել են այն հանգամանքները, որ տվյալ քաղաքացիական գործով նախորդիվ կայացած դատական նիստերի ընթացքում նախագահող դատավորն անհիմն կերպով սահմանափակել է պատասխանողի ներկայացուցչի դատավարական իրավունքները, հիմնովին խաթարել է քաղաքացիական դատավարության մրցակցության սկզբունքի էությունը: Մասնավորապես, ներկայացուցչի կողմից նշվել է, որ նախագահող դատավորը մերժել է պատասխանողների ներկայացուցչի մի քանի միջնորդություններ՝ դատական նիստը հետաձգելու կամ այն այլ օր նշանակելու կամ դատական նիստը ավելի շուտ ավարտելու վերաբերյալ՝ ներկայացուցչի՝ այլ դատական վարույթներով նախապես նշանակված այլ դատական նիստերին մասնակցության ապահովման նպատակով: Մերժումները Դատարանի կողմից պատճառաբանվել են՝ մի դեպքում նշելով, որ պատասխանողների ներկայացուցչին չի գործադրել ողջամիտ ջանասիրություն, մեկ այլ դեպքում՝ սույն գործով նշանակվող դատական նիստերի առավել կարևորությամբ պայմանավորված, մեկ այլ դեպքում՝ այն հիմնավորմամբ, որ միջնորդությունը ներկայացվել է իրավունքի չարաչափմամբ՝ նպատակ ունենալով խափանելու դատական նիստը, ձգձգելու գործի դատական քննությունը: Պատասխանողների ներկայացուցչին եզրահանգել է, որ այդպիսով նախագահող դատավորի կողմից պատասխանողների հանդեպ դրսևորվել է կողմնակալ ու կանխակալ վերաբերմունք, որպիսի վարքագիծը անկողմնակալ դիտորդի մոտ ողջամիտ կասկած է հարուցում նախագահող դատավորի անաչառության վերաբերյալ: Հայցվոր կողմը հայտնել է, որ միջնորդությունը ենթակա է մերժման:

Դատարանի կողմից բացարկի միջնորդությունը մերժվել է այն հիմնավորմամբ, որ միջնորդության մեջ չեն վկայակոչվել այնպիսի հաստատված փաստեր, որոնք թույլ կտան կասկածի տակ դնել Դատարանի անաչառությունը և անկողմնակալությունը կամ հաստատել դատավորի կանխակալ վերաբերմունքը պատասխանողների կամ նրանց ներկայացուցիչների նկատմամբ: Ներկայացված փաստարկները վերաբերում են այն հանգամանքներին, երբ Դատարանն իրականացրել է արդարադատության մարմնի իր լիազորություններից բխող գործողություն՝ որոշմամբ մերժելով կողմի միջնորդությունները, որոնց հետ կողմի անհամաձայնությունը կարող է իրականացվել դատավարական նորմերով սահմանված կարգով դատական ակտը բողոքարկելու միջոցով, և Դատարանի կողմից միջնորդությունը մերժելը կամ բավարարելը չի կարող դիտվել որպես դատավարության կողմի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի փաստի առկայությունը հավաստող հանգամանք: Իսկ փաստաբանի՝ այլ վստահողների գործերով ծանրաբեռնված լինելու և այլ դատական գործերով դատական նիստերին մասնակցելու անհնարինության և բացասական հետևանքների հարցը փաստաբանի կողմից իր ծանրաբեռնվածության և աշխատանքի կազմակերպման

խնդիրների տիրույթում է և որևէ առնչություն չունի սույն գործով Դատարանի կողմից արդարադատություն իրականացնելու գործընթացի հետ²¹⁹:

Մեկ այլ գործով պատասխանող կողմը որպես միջնորդության հիմնավորում նշել է դատավորի կողմից իրենց դիրքորոշումը պատրաստելու համար բավարար ժամանակ չտրամադրելը, նախնական նիստը կարճ ժամկետում նշանակելը և նիստը չհետաձգելը, որի արդյունքում խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11 և 13 հոդվածներով նախատեսված կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները՝ ի վնաս պատասխանողների: Արդյունքում պատասխանող կողմի մոտ առկա է հիմնավոր կասկած՝ գործով դատավորի անաչառության վերաբերյալ, մասնավորապես, դատավորի՝ հայցվորի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունենալու վերաբերյալ: Դատարանը, մերժելով, միջնորդությունը, նշել է հետևյալը.

«Ներկայացված միջնորդության մեջ չեն վկայակոչվել այնպիսի հաստատված փաստեր, որոնք թույլ կտան կասկածի տակ դնել դատարանի անաչառությունը և անկողմնակալությունը, կամ հանդիսանալ անգամ նման վարկածի պատճառ, ինչով էլ կարող է հաստատվել դատավորի կանխակալ վերաբերմունքը պատասխանողների կամ նրանց ներկայացուցիչների նկատմամբ: Այնինչ, դատարանի կամ դատավորի անաչառության կանխավարկածը նշանակում է, որ դատավորի կանխակալության մասին պնդում ներկայացնող անձն է կրում իր վկայակոչած փաստերի ապացուցման պարտականությունը:

Ավելին՝ ներկայացված փաստարկները վերաբերվում են գործին և ենթակա են դատական գնահատականի, իսկ դատարանն իրականացրել է արդարադատության մարմնի իր լիազորություններից բխող գործողություններ՝ անկախ դրա բնույթից ու դատավարության այս կամ այն կողմի համար էական նշանակությունից, որոնց հետ կողմի անհամաձայնությունը կարող է իրականացվել դատավարական նորմերով սահմանված կարգով դատարանի գործողությունները բողոքարկելու արդյունքում, ուստի դատարանի կողմից այս կամ այն բնույթի դատավարական նորմերով պայմանավորված գործողությունը չի կարող դիտվել որպես դատավարության կողմի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի փաստի առկայությունը հավաստող հանգամանք»²²⁰:

Մեկ այլ գործով պատասխանող կողմը նշել է, որ Դատարանի կողմից տրամադրվել է կարճ ժամկետ ապացուցման պարտավորության բաշխման համատեքստում ապացույցների և ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդությունների ներկայացման համար, դատական նիստի ընթացքում մերժվել է գործի քննությունը հետաձգելու իր միջնորդությունը, քննարկվել և մերժվել է նաև ապացույց ներկայացնելու ժամկետը երկարաձգելու իր միջնորդությունը, ինպես նաև դատավորն իր բացակայությամբ քննարկել և լուծել

²¹⁹ ՀԿԴ/0110/02/22, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890

²²⁰ ՀԿԴ/0062/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812577

Է հայցվորի ներկայացուցչի միջնորդությունները: Միջնորդությամբ նաև նշվել է, որ.

«Դիրքորոշումը հիմնավորելու համար բավարար էր ընդամենը մեկ դատական նիստում նախագահող դատավորի կողմից թույլ տրված և վերը նշված գործողություններն ու որոշումներն ի ցույց դնելը, որից պարզ է դառնում, որ նախագահող դատավոր Կարապետ Բադալյանն ու դատախազությունը, ի դեմս դատախազ Գևորգ Քոչարյանի, տանդեմ են կազմել՝ պարոն Օհանյանի նկատմամբ դատաստան տեսնելու համար: Ակնհայտ է, որ պարոն Օհանյանի նկատմամբ նման կանխակալ վերաբերմունքը դատավոր Կարապետ Բադալյանին խանգարում է արդարադատություն իրականացնել և, պարոն Բադալյան, գտնում եմ, որ այս գործով Դուք ի վիճակի չեք արդարադատություն իրականացնել ապահովելով պարոն Օհանյանի՝ արդար դատաքննության իրավունքի իրացումը»²²¹:

Բացի այդ, պատասխանող կողմը հայտնել է, որ որպես փաստաբան գործելու ընթացքում Կարապետ Բադալյանը 2019 թվականի փետրվար ամսվա ընթացքում համացանցով հայտարարություն է տարածել Սահմանադրական դատարանի և նրա անդամների վերաբերյալ, ովքեր այդ ժամանակ քննում էին սահմանադրականության հարց այն քրեական գործով, որով պատասխանող Սեյրան Օհանյանը անցնում էր որպես մեղադրյալ, ինչպես նաև այդ քրեական գործով տուժողների երկու փաստաբան ներկայացուցիչներ Կարապետ Բադալյանի ընկերներն են:

Դատարանը, մերժելով միջնորդությունը, նշել է, որ Պատասխանողի ներկայացուցիչը չի ներկայացրել պատասխանող Սեյրան Օհանյանի նկատմամբ դատավորի կանխակալ վերաբերմունքի որևէ փաստ: Ինչ վերաբերում է գործով Դատարանի դատական ակտերի՝ միջնորդությունները մերժելու վերաբերյալ գնահատականին, ապա դատարանն իրականացնում է արդարադատության մարմնի իր լիազորություններից բխող գործողություններ՝ անկախ դրա բնույթից ու դատավարության այս կամ այն կողմի համար էական նշանակությունից, որոնց հետ կողմի անհամաձայնությունը կարող է իրականացվել դատավարական նորմերով սահմանված կարգով Դատարանի գործողությունները բողոքարկելու արդյունքում, ուստի դատարանի կողմից այս կամ այն բնույթի դատավարական նորմերով պայմանավորված գործողությունը չի կարող դիտվել որպես դատավարության կողմի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի փաստի առկայությունը հավաստող հանգամանք: Կողմը կամ ներկայացուցիչը անհարգելի կերպով դատական նիստից բացակայելով ինքն է հրաժարվում իր իրավունքների իրականացումից:

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված որևէ հիմքով դատավորներին բացարկ հայտնելու միջնորդություններ չեն բավարարվել Դատարանի կողմից՝ համարելով, որ ներկայացված փաստարկները բավարար չեն դատավորի անաչառությունը

²²¹ ՀԿԴ/0014/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811534

կասկածի տակ դնելու համար: Այն դեպքերում, երբ կողմերը մատնանշել են դատավորի վարքագծի կամ նախկին գործողությունների նկատմամբ ողջամիտ կասկած առաջացնող հանգամանքներ, դատարանները հիմնականում նախապատվությունը տվել են դատավորի անաչառության կանխավարկածին: Հատկանշական է, որ շատ դեպքերում դատարանը մերժել է դիտարկված գործերով պատասխանողների ներկայացուցիչների ներկայացրած միջնորդությունները այն հիմնավորմամբ, որ այս կամ այն գործողությունը դիտել է վերջիններիս դատավարական իրավունքների չարաշահումներ:

4.9 Իրական շահառու և փոխկապակցված անձ հանդիսանալը

Օրենքը սահմանում է իրական շահառու հասկացությունը: Այդպես, իրական շահառու է համարվում ֆիզիկական անձը, որի անունից, օգտին կամ որի հաշվին իրականացվել է գործարքը (գործողությունը), կամ ֆիզիկական անձ, որը վերահսկում է կամ վերահսկել է գործարքը (գործողությունը) կամ այն անձին, որի անունից կամ օգտին իրականացվել է գործարքը (գործողությունը): Իսկ փոխկապակցված անձ է համարվում անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ, մերձավոր ազգական կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք (հոդված 3, մաս 1, կետ 6):

Դիտարկված գործերով փաստացի իրական շահառու է համարվել հիմնական պատասխանողը, իսկ համապատասխանողները դիտարկվել են որպես փոխկապակցված անձ, որին դե յուրե պատկանող գույքը դիտարկվել է որպես իրական շահառուին՝ հիմնական պատասխանողին պատկանող գույք: Ընդ որում՝ որոշ դեպքերում այդ փոխկապակցվածության հարցը միանշանակ չի եղել:

Ավելին, դիտարկված գործերով ապացուցման բեռի բաշխման համատեքստում ոչ բոլոր դեպքերում է այս խնդիրը ներառվել ապացուցման բեռի մեջ (ավելի մանրամասն տե՛ս ապացուցման բեռի բաշխման մասին ենթագլուխը): Հարցված դատավորներից մեկը նշել է, որ իրական շահառու և փոխկապակցված անձ լինելու հանգամանքը պետք է դրվի ապացուցման բեռի մեջ:

Գործերով դիտարկումից միանշանակ պարզ չի երևացել, թե ինչ խորությամբ է իրականացվել ուսումնասիրությունը, արդյո՞ք քրեական վարույթով անցնող անձին օրենքի իմաստով պատկանող գույքի բացահայտմանն ուղղված միջոցառումների համատեքստում ուսումնասիրվել է ենթադրյալ փոխկապակցված անձանց լայն շրջանակ, բոլոր գործերով նույն մոտեցումն է ցուցաբերվել, թե դատախազությունը հայեցողաբար է ընտրել այն, և հակառակը՝ արդյո՞ք ուսումնասիրվել են ենթադրյալ փոխկապակցվածությունն ունեցող անձանց ավելի լայն շրջանակ, իսկ որպես պատասխանող ներգրավվել են միայն մի մասը:

Հիմնական պատասխանողի՝ մնացած պատասխանողներին պատկանող գույքի իրական շահառու լինելու հանգամանքը հիմնավորելիս հայցվոր կողմը նշել է, օրինակ, որ թվարկված գույքերի մասով հիմնական պատասխանողը հանդիսանում է համապատասխանողի՝ վերջինիս որդու, կողմից ձեռք բերված գույքերի իրական շահառու, քանի որ տվյալ ժամանակահատվածում որդին որևէ հաստատությունում չէր աշխատում, չուներ եկամուտներ, ուստի այդ գործարքները վերահսկվել են հիմնական պատասխանողի կողմից: Ըստ հայցվոր կողմի՝ հայցադիմումի հիմքում ներառված է, թե որ դեպքերում է իրավասու մարմինը համարել, որ տվյալ գույքի իրական շահառու հանդիսանում է հիմնական պատասխանողը: Նշված հարցը քննարկվել է պատասխանողի ներկայացուցչի կողմից բերված հայցային վաղեմությունը կիրառելու վերաբերյալ միջնորդության շրջանակներում: Ի թիվս այլնի, պատասխանողի ներկայացուցիչը պնդել է, որ հայցվորը պետք է հստակեցնի հայցի առարկան և հստակ պահանջ ներկայացնի իրական շահառու ճանաչել իր վստահորդին կամ գործարքը վիճարկի: Մեկ այլ պատասխանողի ներկայացուցիչ նշել է, որ եթե երրորդ անձանց գույքի բռնագանձման պահանջ է ներկայացվել իրական շահառուի փոխկապակցվածության հիմքով, ապա պետք է նաև շինծու առաջին գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացվեր, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի տեսանկյունից երրորդ անձի գույքի բռնագանձում այլ հիմքով, քան գործարքն անվավեր ճանաչել, որպես այդպիսին չի կարող լինել:

Դատարանը մերժել է միջնորդությունը, իսկ իրական շահառուի մասով արձանագրել է հետևյալը.

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցն ուղղված է գույքի դեմ, այն «in rem» պահանջ է: Ոչ միայն հայցապահանջն, այլ նաև դրա քննության արդյունքով կայացվելիք վճռի նկատմամբ օրենսդրի ակնկալիքն այն է, որ ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձվում է հոգուտ Հայաստանի Հանրապետության (հոդ. 24(3)), որը նույնպես բացառապես «in rem» բնույթի է: Վերոգրյալի ներքո՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված «իրական շահառու» հասկացությունը Օրենսդիրը չի նախատեսել որպես Օրենքի շրջանակներում ինքնուրույն հայցապահանջի տարբերակ, այլ անգամ բացառել է այն՝ նախատեսելով որպես գույքի ապօրինի ծագում ունենալու հարցի քննության ընթացքում պարզման և ապացուցման ենթակա փաստի հարց»²²²:

Դիտարկված գործերից մեկի շրջանակներում քննարկվել է կոնկրետ անձի՝ հիմնական պատասխանողի հետ փոխկապակցված լինելու հանգամանքը, քանի որ նշված անձը գործով չի ներգրավվել, իսկ ուսումնասիրության շրջանակներում վերջինիս բանկային տվյալները ուսումնասիրվել են: Հայցվորի ներկայացուցիչը հաստատել է, որ Օրենքի իմաստով անձը չի հանդիսանում հիմնական պատասխանողի հետ փոխկապակցված անձ, այնուամենայնիվ, ուսումնասիրության շրջանակներում կասկած է առաջացել, որ խնդրո առարկա

²²² ՀԿԴ/0062/02/23 գործով 15.12.2023թ. նիստ:

գույքերի իրական շահառուն հիմնական պատասխանողն է (ուսումնասիրվող անձը): Ըստ հայցվորի՝ Օրենքը չի սահմանում, որ բանկային գաղտնիքը պարտադիր պետք է կապված լինի փոխկապակցված անձանց առկայության հետ: Միայն փոխկապակցվածությունը հիմք չէ, սակայն փոխկապակցվածությունն էլ պարտադիր չէ: Օրենքը սահմանում է, որ միայն պետք է հիմնավորվի այդ գաղտնիքների ստացման անհրաժեշտությունը: Այսինքն՝ փոխկապակցվածությունը ուղիղ կապ չունի բանկային գաղտնիքին հասանելիություն ստանալու հետ: Բանկային գաղտնիք կազմող տվյալները ստացվել են այնքանով, որքանով իրավասու մարմինը կարողացել է հիմնավորել դրանց անհրաժեշտությունը: Նույն գործով քննարկվել է որոշ անձանց ֆինանսական հնարավորությունները ձեռք բերել ընկերության բաժնեմաս, հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ քրեական գործով տրված ցուցմունքներից է պարզ դարձել, որ այդ բաժնեմասերի իրական շահառուն հիմնական պատասխանողն է: Նաև որպես նման եզրահանգման հիմք նշվել է դե յուրե հիմնադիրների աշխատավարձի չափը և բիզնես ծավալելու կարողությունը, որի հիման վրա հայցվորի ներկայացուցիչը եզրահանգել է, որ հենց հիմնական պատասխանողն է այդ գույքերի իրական շահառուն²²³:

4.10 Ապացուցման պարտականությունը բաշխելը

Գործերի մշտադիտարկման և ուսումնասիրության շրջանակներում դիտարկման առանձին հարց է հանդիսացել կողմերի միջև ապացուցման բեռի բաշխումը: Ինչպես նշվել է, Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը: Նույն հոդվածով սահմանվում է, որ նման կանխավարկածից ելնելով՝ վճիռ կարող է կայացվել, եթե գործի քննության արդյունքում հայցվորն ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով, իսկ այդ կանխավարկածը հերքելու համար պատասխանողը կարող է ներկայացնել օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:

Օրենքը նաև սահմանում է, որ այն դեպքերում, երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով (հոդված 22, մաս 4):

Ապացուցման բեռի և ապօրինի լինելու կանխավարկածին անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովը՝ ՄԴ դիմումի մեջ բարձրաձված հարցերին ի պատասխան: Հանձնաժողովի դիրքորոշումներին կանդրադառնանք ստորև:

²²³ ՀԿԴ/0010/02/22 գործով 22.02.2024թ. նիստ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրվող ժամանակահատվածը դիտարկված գործերի մեծամասնության դեպքում ներառել է 1990-ական թվականները, մշտադիտարկման շրջանակներում պարզման ենթակա հարցերից մեկն էր, թե արդյոք ապացուցման բեռը բաշխելիս ապահովվում են կողմերի մրցակցության ու համաչափության սկզբունքները, մասնավորապես, արդյո՞ք պատասխանող կողմի վրա չի դրվում անհամաչափ բեռ:

Դիտարկված 26 դատական գործերից մշտադիտարկման ժամանակահատվածում միայն 6-ով (23%) է Դատարանն անդրադարձել ապացուցման բեռի բաշխման հարցին:

Նախ, պետք է արձանագրել, որ ապացուցման բեռի մասին որոշման տեքստի բովանդակության առումով դատական կազմերի մոտեցումը տարբերվում է: Որոշ կազմեր հրապարակված որոշման մեջ ներառում են կողմերի դիրքորոշումը²²⁴, իսկ որոշները արտացոլում են միայն Դատարանի դիրքորոշումը²²⁵:

Հատկանշական է, որ դիտարկված գործերից մեկով պատասխանողի ներկայացուցիչը նշել էր, որ հայցվորի ներկայացուցիչը, ի շարս այլ հանգամանքների, պետք է ապացուցի, որ կոնկրետ գույքը կարող է անուղղակի կապ ունենալ ուսումնասիրվող անձի կողմից կատարված որևէ ենթադրյալ հանցավոր արարքի հետ²²⁶:

Դիտարկված գործերով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումներում Դատարանը չի պահանջել ապացուցել վերագրվող հանցանքի հետ կապը, այլ գույքի ապօրինի լինելը պայմանավորել է միմիայն գույքի ձեռքբերման պահին գույքի արժեքի չափով օրինական եկամուտներով հիմնավորվող միջոցներ չունենալու հետ:

Դիտարկված գործերով դատական կազմերը հիմնականում համանման մոտեցում են ցուցաբերել ապացուցման բեռը բաշխելիս: Այդպես, հայցվոր կողմի վրա դրվել է պարտավորություն ապացուցելու հետևյալ հանգամանքները.

- խնդրո առարկա գույքի՝ սեփականության իրավունքով պատասխանողին (համապատասխանողներին) պատկանելը (6 գործով).
- գույքի՝ օրինական եկամուտներով չհիմնավորվելը և ապօրինի ծագում ունենալը (6 գործով).
- Համապատասխանողներից բոլորի կամ ոմանց՝ հիմնական պատասխանողի հետ փոխկապակցված անձ հանդիսանալը (6 գործով).

²²⁴ Օրինակ՝ ՀԿԴ/0024/02/22,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811544

²²⁵ Օրինակ՝ ՀԿԴ/0025/02/22,

https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

²²⁶ ՀԿԴ/0024/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811544

- գույքի՝ բարեխիղճ ձեռք բերողի փոխանցված լինելու կամ նույնականացնելու փաստը, առանձնացնելու կամ բռնագանձելու անհնարինության փաստը (6 գործով)։
- հայցի ներկայացման պահին գույքի շուկայական գինը (6 գործով)։
- հիմնական պատասխանողի՝ այլ անձանց անունով ձևակերպված հայցվող գույքի իրական շահառու լինելու հանգամանքը (4 գործ)։
- գույքերի՝ համատեղ սեփականության իրավունքով պատկանելու փաստը (3 գործ)։
- ապօրինի ծագում ունեցող գույքի օգտագործումից ստացված եկամտի, ինչպես նաև գույքերի վաճառքից գոյացած միջոցների մնացորդ հանդիսանալու փաստը/վերափոխման արդյունք լինելը (3 գործ)։
- այլ պատասխանողի՝ բարեխիղճ ձեռքբերող չհանդիսանալը (3 գործ)։
- ընդհանուր շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին 50 միլիոն ՀՀ դրամի չափը գերազանցելը (3 գործ)։

Հատկանշական է, որ թեև դիտարկված բոլոր գործերով պատասխանողների թիվը մեկից ավելին է, իսկ ուսումնասիրությունները նախաձեռնվել են կոնկրետ անձի՝ հիմնական պատասխանողի քրեական հանցագործության հետ առնչություն ունենալու հիմքով, ոչ բոլոր գործերով է Ղատարանը պահանջել ապացուցել հիմնական պատասխանողի իրական շահառու լինելու հանգամանքը։

Նշված 6 գործերից միայն 4-ով է Ղատարանը հայցվորի վրա դրել բեռ՝ ապացուցելու հիմնական պատասխանողի՝ իրական շահառու լինելու փաստը²²⁷։ Պատասխանողների ներկայացուցիչները պնդել են, որ իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ պնդումները նույնպես պետք է հիմնավորվեն հայցվորի կողմից՝ յուրաքանչյուր գույքի և կատարված յուրաքանչյուր գործողության մասով։ Նույնը վերաբերում է նաև ոչ բարեխիղճ ձեռքբերողին։

Ոչ բոլոր գործերով է Ղատարանը նաև ապացուցման պարտականություն մեջ ներառել բոլոր համապատասխանողների՝ հիմնական պատասխանողի հետ փոխկապակցված անձ լինելու հանգամանքը։ Օրինակ՝ գործերից մեկով անցնում է չորս պատասխանող, այնուամենայնիվ, փոխկապակցված լինելու փաստը ապացուցելու նշում արվել է միայն հիմնական պատասխանողի կնոջ առնչությամբ²²⁸։

Օրենքի 3-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ փոխկապակցված անձ է համարվում անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ, մերձավոր ազգական²²⁹ կամ

²²⁷ Նման պարտավորություն չի դրվել ՀԿԴ/0155/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814124 և ՀԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

²²⁸ ՀԿԴ/0014/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811534

²²⁹ Օրենքի իմաստով՝ մերձավոր ազգական է համարվում ընտանիքի անդամը, չափահաս զավակը, ծնողը, քույրը, եղբայրը (այդ թվում՝ համահայրը կամ համամայրը), տատը, պապը, թոռները, հորեղբայրը, մորաքույրը, հորաքույրը, մորեղբայրը կամ նրանց ընտանիքի անդամները, անձի ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը։ Իսկ ընտանիքի անդամ է ամուսինը, անչափահաս զավակը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը կամ

ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք:

Հետևաբար, գործի մշտադիտարկման համատեքստում ոչ միշտ է պարզ եղել պատասխանողների միջև կապը, ինչպես նաև հենց հիմնական պատասխանողի՝ այլ անձանց պատկանող՝ հայցվող գույքի իրական շահառու լինելու հանգամանքի հիմնավորումը:

Տարբերվել է նաև տարբեր կազմերի մոտեցում ապացուցման բեռի մեջ գույքի ընդհանուր արժեքը 50 մլն դրամ գերազանցելու հանգամանքը ապացուցելու առումով: Նշված հանգամանքը ներառվել է հայցվորի ապացուցման պարտավորության մեջ երեք գործով, որոնք գտնվել են նույն դատավորի վարույթում²³⁰:

Դատարանի կողմից պատասխանող կողմի վրա պարտականություն է դրվել ապացուցել գործով քննարկվող և մատնանշված գույքերի օրինական եկամուտներով ձեռքբերված լինելը, նման պարտականություն դրվել է գործով բոլոր պատասխանողների վրա՝ ըստ առանձին գույքերի:

➤ *Ապացուցման բեռի չափանիշը.*

Ինչպես արդեն նշվել է, ապօրինի ծագում ունեցող գույքի քաղաքացիական գործերի միջոցով բռնազանձման ընթացակարգերում կիրառվում է քրեական դատավարությանը բնորոշ կասկածից վեր չափանիշից ավելի ցածր ապացուցման բեռ, հիմնականում՝ հավանականությունների հավասարակշռում (Preponderance of the Evidence կամ Balance of probabilities) կամ ողջամիտ ենթադրությունը: Նշված չափանիշը ենթադրում է, որ ապացուցման ենթակա փաստը պետք է հիմնավորվի «ավելի հավանական է, քան ոչ, որ գույքը առնչություն ունի հանցավոր գործունեությանը»:

Ավելին, նման դեպքերում անձի դատապարտումը պարտադիր չէ, իսկ պատասխանողը պետք է հիմնավորի գույքի օրինականությունը:

Օրենքը չի պարունակում կողմերի միջև ապացուցման պարտականության բաշխումը կարգավորող հատուկ նորմեր: Օրենքի համաձայն՝ նման պարագայում նշված հարցը պետք է կարգավորվի ՔԴՕ կանոններով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ապացուցման բեռի չափանիշ սահմանված չէ:

ուսումնասիրվող ժամանակահատվածում ոչ պակաս, քան մեկ տարվա ընթացքում 180 օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

²³⁰ ՀԿԴ/0155/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814124,

ՀԿԴ/0024/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811544,

ՀԿԴ/0014/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811534

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանում է՝

- 1) գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը,
- 2) ապացուցման կարիք չունեցող փաստերը,
- 3) ապացուցման ենթակա փաստերը,
- 4) գործին մասնակցող յուրաքանչյուր անձի վրա դրված ապացուցման պարտականությունը,
- 5) գործին մասնակցող անձանց կողմից ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետը:

Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում նշել է, որ գույքի ապօրինի ձեռք բերումը պետք է ապացուցվի ոչ թե քրեական վարույթին բնորոշ «ողջամիտ կասկածից վեր սկզբունքով», այլ քաղաքացիական ընթացակարգերին բնորոշ «հավանականության հավասարակշռման» սկզբունքով: Հանձնաժողովի գնահատմամբ՝ Հայաստանի ներպետական օրենսդրությունը բավարար հստակությամբ չի նախատեսում դատավարության ընթացքում ապացուցման բեռի չափանիշները²³¹:

Ապացուցման բեռի ստանդարտի հարցը քննարկելիս Եվրոպական դատարանը հստակ ընդունելի է համարել քաղաքացիական ընթացակարգին բնորոշ հավանականությունների հավասարակշռում, այլ ոչ թե քրեական դատավարության շրջանակներում կիրառվող ողջամիտ կասկածից վեր ստանդարտը²³²: Իսկ ապացուցման բեռի տեղափոխումը ինքնին որպես անհամաչափ բեռ ՄԻԵԴ-ը չի դիտարկել, այլ գնահատել է այն ուսումնասիրվող ժամանակահատվածի չափազանց երկար լինելու արդյունքում ապացույցների ձեռքբերման կամ պահպանման համատեքստում առաջացած դժվարությունների ներքո²³³:

Ուսումնասիրված այլ պետությունների համակարգերում կիրառվող ստանդարտը տարբեր է՝ պայմանավորված գործող իրավական համակարգով: Այն պետություններում, որտեղ գործում է առանց դատապարտման քաղաքացիական ընթացակարգ, հիմնականում պետական մարմնի պարտավորությունն է ցույց տալ, որ գույքը ենթակա է բռնագանձման, օրինակ, հանցավոր ճանապարհով ձեռքբերված լինելու կամ օրինական եկամուտներով հիմնավորված չլինելու դեպքում, իսկ գույքի սեփականատերը և/կամ իրական շահառուն պետք է ցույց տա, որ գույքի ծագումը օրինական է: Երկու դեպքում էլ կիրառվում է քրեական դատավարությունից ցածր ապացուցման շեմ, այդ երկրում գործող քաղաքացիական գործերին բնորոշ ստանդարտ, որը հիմնականում՝ «ավելի

²³¹ Venice Commission, CDL-AD(2022)048, կետ 35.

²³² Gogitidze and others v Georgia, §107.

²³³ Todorov and Others v Bulgaria, §205.

հավանական է, քան ոչ» կամ հավանականությունների հավասարակշռում ստանդարտն է:

Այսպես, *in rem* վարույթներում հռչանդիայում կիրառվում է քաղաքացիական ընթացակարգը, իսկ պատասխանողը պետք է հիմնավորի, որ բռնագանձման ենթակա գույքը չունի հանցավոր ծագում՝ հավանականությունների հավասարակշռում ստանդարտի հիման վրա²³⁴:

Ինչպես նշվել է, դիտարկված գործերով մշտադիտարկման ժամանակահատվածում եզրափակիչ դատական ակտ որևէ գործով չի կայացվել: Իսկ նշված ժամանակահատվածից հետո կայացված եզրափակիչ դատական ակտերը գրեթե բոլոր գործերով դատալեքսում ամբողջ ծավալով հասանելի չեն, այլ միայն եզրափակիչ մասն է առկա, քանի որ նշված գործերով մեկ կամ ավելի նիստ անց է կացվել դռնփակ: Ուստի դատական պրակտիկայի վերլուծությունը իրականացվել է սահմանափակ թվով հասանելի եզրափակիչ դատական ակտերի հիման վրա:

Գործերից մեկով պատասխանող կողմը հստակ դիրքորոշում է հայտնել առ այն, որ ապացուցման պարտականության բաշխումը չպետք է իրականացվի հավանականությունների հավասարակշռման սկզբունքով: Պատասխանողը պնդել է, որ հավանականությունների հավասարակշռման սկզբունքը պատասխանողին, այլ ոչ թե հայցվորին տրված գործիք է՝ Դատարանին ողջամիտ փաստարկների միջոցով իր տեսակետը հիմնավորելու համար (...)²³⁵:

Դատարանը հրապարակված վճիռներից մեկում նշել է.

«Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մոդելը ենթադրում է ապացուցման շեմի իջեցում: Ապացուցման շեմն այն չափանիշն է, որի հիման վրա գնահատվում են ապացույցները և հաստատվում (կամ հերքվում) են փաստերը: Ըստ այդմ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում գործում է ոչ թե հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշը, այլ՝ հավանականությունների հավասարակշռման (ապացույցների գերակշռման) չափանիշը: Ապացուցման այս ստանդարտը նշանակում է, որ մի կողմը ներկայացրել է իր պնդումների իրավացիությունը հաստատող թեկուզև մի փոքր ավելի ծանրակշիռ (սակայն ոչ բացարձակ համոզիչ) ապացույցներ, քան մյուս կողմը: Այլ կերպ ասած՝ ապացուցման այս չափանիշով որոշում կայացնելիս որևէ փաստի ապացուցվածության վերաբերյալ դատողությունների հիմքում Դատարանը դնում է «ավելի հավանական է, քան ոչ» սկզբունքը»²³⁶:

²³⁴ Study on Freezing, Confiscation and Asset Recovery : What Works, What Does Not Work : Final Report, Country chapters, էջ 191.

²³⁵ ՀԿԴ/0024/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811544

²³⁶ ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ապացուցման բեռի ստանդարտին, համաձայնել է Դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման հետ, նշելով.

«Դատարանը վճռում իրավացիորեն արձանագրել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներում տեղի է ունենում ապացուցողական շեմի նվազեցում, ավելին՝ Դատարանը ճիշտ է մեկնաբանել «հավանականությունների հավասարակշռման» ապացուցողական սկզբունքի էությունը, հատկապես կարևոր է ընդգծել, որ նաև Դատարանն է արձանագրել, որ ապացուցման այս ստանդարտը նշանակում է, որ մի կողմը ներկայացրել է իր պնդումների իրավացիությունը հաստատող թեկուզև մի փոքր ավելի ծանրակշիռ ապացույցներ, քան մյուս կողմը»²³⁷ :

Ավելին, Վերաքննիչ դատարանը քննարկել է Դատարանի կողմից ապացույցների գնահատումը հենց հավանականությունների հավասարակշռման ապացուցողական սկզբունքի լույսի ներքո՝ գտնելով, որ Դատարանը դրանցից որոշները չի դիտարկել նաև հավանականությունների հավասարակշռման ապացուցողական շեմով, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծմանը: Դրանով իսկ ցույց է տրվում, որ Վերաքննիչ դատարանը այդ ստանդարտը համարում է ճիշտ:

ՀՀ սահմանադրական դատարանը իր 2025 ապրիլի 16-ի որոշման մեջ նույնպես անդրադարձել է այս հարցին: Հարկ է նշել, որ ՍԴ-ն քննարկել է ապացուցման բեռի ստանդարտը ոչ թե վերացական մոտեցմամբ, այլ պատասխանողին վերագրվող հանցանքի հետ կապ ունենալու համատեքստում: ՍԴ-ն մասնավորապես նշել է, որ քրեական դատավարությունում գույքի բռնագանձման նպատակով կիրառվող ապացուցողական շեմը կիրառելի չէ Օրենքով նախատեսված ընթացակարգերով գույքի բռնագանձման համար:

«Այսինքն՝ պատասխանողի գույքի՝ Օրենքի համաձայն բռնագանձման մասին եզրահանգման համար անհրաժեշտ չէ, որ այն հիմնված լինի հանցանքի հետ այնպիսի պատճառահետևանքային կապի վրա, որի առկայությունը պետք է հաստատված լինի «հիմնավոր կասկածից անդին» ապացուցողական շեմի բավարարմամբ, որովհետև Օրենքով նախատեսված ընթացակարգի նպատակը չէ հանցավոր վարքագծի հաստատումը քրեական իրավունքի նպատակների համար, այլ՝ որոշ հավաստիությամբ ցույց տալը, որ բռնագանձման ենթակա գույքը կարող էր գեներացված լինել հանցավոր վարքագծի արդյունքում: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ Օրենքով նախատեսված կառուցակարգի գործադրմամբ բռնագանձվելիք գույքի՝ հանցանքի հետ կապն անձի դրսևորած վարքագծի պայմաններում որոշակի ողջամիտ հավաստիությամբ խնդրո առարկա գույքի՝ հանցանքի արդյունքում ստացված լինելու հավանականությունն է: Այսինքն՝ (1) քաղաքացիական դատավարության ընթացքում իր գույքի ձեռքբերումն օրինական եկամուտներով հիմնավորելու՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր ընթացակարգային երաշխիքներն ապահովված լինելու և (2) գույքի

²³⁷ ՀԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

նկատմամբ Օրենքով առաջադրվող նվազագույն արժեքային շեմի բավարարվածության պայմաններում, համապատասխան հանցանքից տնտեսական օգուտ ստանալու հնարավորությունն այն հանգամանքն է, որն ամրապնդում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ անաչառ և տեղեկացված դիտորդի աչքում ավելի հավանական դարձնելով այն, որ գույքը, որի ձեռքբերման օրինականությունը չի հիմնավորվել օրինական եկամուտներով, ունի ապօրինի, քան՝ օրինական ծագում» (տե՛ս ՄԴԴ-1776, կետ 161):

Վենետիկի հանձնաժողովը նախ ընդունել է, որ հաճախ շատ բարդ կամ անհնար է ապացուցել գույքի ծագման անօրինականությունը: Այդ իսկ պատճառով օրենքով նախատեսված է ապացուցման ավելի ցածր շեմ, քան սոսկ ողջամիտ կասկածից վեր: Սակայն, ըստ Հանձնաժողովի, ներպետական օրենքը բավարար հստակությամբ չի նախատեսում դատավարության ընթացքում ապացուցման բեռի չափանիշները, ինչով պայմանավորված կարիք կա առավել հստակեցնել ապացուցման բեռը, ինչը հնարավոր է կամ օրենսդրական փոփոխությունների, կամ օրենքի տվյալ դրույթներին սահմանադրական մեկնաբանությունն տալու միջոցով: Ըստ այդմ, ապացուցման բեռը պետք է օրենքով հստակ ձևակերպված լինի:

➤ *Գույքի ապօրինի լինելու կանխավարկածը.*

Ինչպես արդեն նշվել է, Օրենքի 22-րդ հոդվածով սահմանվում է գույքի ապօրինի լինելու կանխավարկածը: Նման կարգավորման առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը գտել է, որ ՀՀ ներպետական օրենքը իր նպատակով, որպես այդպիսին, չի հակասում միջազգային լավագույն փորձին և ձևավորված չափանիշներին: Սակայն անհրաժեշտ է դիտարկել նաև, թե արդյոք այդ օրենքը բավարար ընթացակարգային և բովանդակային երաշխիքներ է տալիս հանրային շահի և անձի իրավունքների միջև արդարացի հավասարակշռում ապահովելու հարցում:

Այս մոտեցմամբ, անդրադառնալով ՄԴ-ի կողմից բարձրացված հարցերին, Հանձնաժողովը նախ նշել է, որ ապացուցման բեռն ու ձեռք բերման անօրինականության կանխավարկածը պետք է գնահատվի գործի ընթացքը կանխորոշող հանգամանքների հիման վրա: Հանձնաժողովը նշել է, որ ընդունված քաղաքացիական բռնազանձման մեխանիզմը հենվում է գույքի ապօրինի ծագման կանխավարկածի վրա: Նման կանխավարկածի ուժով ապացուցման բեռը բաժանվում է երկու կողմի վրա:

Հանձնաժողովը եզրահանգել է, որ նման դեպքում իրավասու մարմինը պետք է ցույց տա, որ գույքը կարող է ապօրինի ծագում ունենալ, իսկ պատասխանողը դա պետք է հերքի՝ ներկայացնելով իր պնդումը հավաստող ապացույցներ, իսկ դատարանը կարող է ի օգուտ պատասխանողի վճիռ կայացնել անգամ գույքի օրինական ծագումը հաստատող անմիջական ապացույցների բացակայության պայմաններում, եթե ներկայացվի ապացույցի բացակայության համոզիչ բացատրություն:

Ապացուցման բեռի առնչությամբ ՄԻԵԴ-ն ընդունել է, որ հնարավոր է ազգային մարմինները բռնազանձման որոշում կայացնեն՝ հիմք ընդունելով ապացույցները, որոնք ցույց են տալիս, որ պատասխանողի օրինական եկամուտները չէին կարող բավարար լինել քննարկվող գույքը ձեռք բերելու հմար:

Գոգիտիձեն ընդդեմ Վրաստանի գործով ՄԻԵԴ-ը վերահաստատել է, որ *in rem* քաղաքացիական գործերով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասի հետ համատեղելի է գույքի օրինական ծագումը ապացուցելու համատեքստում ապացուցման բեռի տեղափոխումը դատախազի կողմից հիմնավորված հայցադիմումը ներկայացնելուց հետո:

Գործերից մեկով Դատարանն արձանագրել է հետևյալը.

«Օրենսդիրն ուղղակիորեն մատնանշում է, որ դատարանի վճիռը պետք է հիմնվի գույքի՝ օրինական եկամտի աղբյուրներով չհիմնավորվելու վերաբերյալ հայցվորի ներկայացրած ապացույցների վրա: Այլ կերպ՝ գույքի ապօրինի ծագում ունենալու փաստը վկայակոչելուց զատ հայցվորը պարտավորվում է նաև պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ապացուցել նշված փաստը: Ասվածը նշանակում է, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման մասին» օրենքով սահմանված կանխավարկածն իր իրավական բովանդակությամբ էականորեն տարբերվում է կանխավարկածի «դատական» ընկալումից, քանի որ չի հանդիսանում ապացուցման պարտականությունից ազատելու եղանակ»:

Սահմանադրական դատարանը հստակ նշել է, որ Օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված ապացուցման կանոններից ելնելով.

1. «Իրավասու մարմինն առաջնահերթորեն պետք է ապացուցի, որ անձին պատկանող գույքը չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների մասին տվյալներով:
2. Գույքի ձեռքբերումն օրինական եկամուտների աղբյուրների մասին տվյալներով չհիմնավորվելը ձևավորում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, որի չհերքվելու պայմաններում դատարանն իրավասու է վճիռ կայացնել գույքի բռնազանձման մասին:
3. Անձը հնարավորություն ունի հերքել գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը՝ ներկայացնելով օրինական եկամուտներով գույքի ձեռքբերումը հիմնավորող ապացույցներ:
4. Երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով» (տե՛ս ՍԴԴ-1776, կետ 234):

➤ *Փորձագիտական կարծիք.*

Հարցված փաստաբաններից մեկի կարծիքով՝ ապացուցման բեռի հստակ ստանդարտի բացակայությունը նշանակում է, որ քննվող գործերով պետք է կիրառվի այն նույն մոտեցումը, որը կիրառվում է ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիական գործերի շրջանակներում՝ անկախ կիրառելի կանխավարկածից: Հարցված փաստաբաններից մեկը հենց տարբեր ապացուցման չափանիշի կիրառման անհրաժեշտությամբ է նաև բացատրում առանձին Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը, քանի որ հակառակ դեպքում կարձանագրվեր երկակի մոտեցում նույն դատարանի կողմից քաղաքացիական այլ գործերով և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով՝ հաշվի առնելով, որ բոլոր դեպքերում կիրառելի են քաղաքացիական դատավարության կարգավորումները:

Հարցված դատավորները նույնպես համամիտ էին, որ գործող քաղաքացիական դատավարության կանոնները հարմարեցված չեն գույքի ապօրինի ծագման կանխավարկածից բխող այլ պետություններում ընդունված ապացուցման բեռի չափանիշին:

«Դատավարական ոլորտի խնդիրներից մեկն է ապացուցման բեռի բաշխման կանոնները, քանի որ գործում է գույքի ապօրինի ծագման կանխավարկածը, և որոշակի փուլից այդ բեռը տեղափոխվում է պատասխանողի վրա: Ծատ հաճախ հենց հարց է ծագում, թե ո՞ր փուլից է տեղափոխվում, քանի որ մեր Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հարմարեցված չէ այդ կանոնին, և Վենետիկի հանձնաժողովն էլ իր մեկնաբանությամբ նշել է, որ հավանականությունների հավասարակշռման ստանդարտով քննվող գործեր պետք է լինեն, որը որ մեր ՔԴՕ-ով նախատեսված չէ: Կարծիքներ կան, որ բեռի բաշխումը պետք է լինի երկփուլանի, որ մի փուլում Դատարանը նախնական գնահատի հայցվորի կողմից ներկայացված բոլոր ապացույցները, ասի, որ այո, դու այդ միևնույն շեմը հաղթահարել ես, ուստի բեռը տեղափոխում ենք պատասխանողի վրա, որպեսզի պատասխանողն էլ իմանա, որ նա պետք է ամբողջ գործիքակազմով այդ բեռը կրի: Դա կարծիքներներից մեկն է: Իսկ հիմա այս դատավարության շրջանակներում մենք այդ հնարավորությունը չունենք, քանի որ երկփուլանի բեռի բաշխման հնարավորությունն առկա չէ»:

Դատավոր

➤ *Ապացուցման բեռի համաչափությունը և ապացույցի հասանելիությունը.*

Ինչպես նշել է Վենետիկի հանձնաժողովը, ապացուցման ցածր շեմը պետությանը թույլ է տալիս ավելի հեշտությամբ իրականացնել գույքի բռնագանձումը և կանխել անօրինական գործողություններ շարունակելը: Մյուս կողմից, եթե պատասխանող անձի վրա ապացուցման մեծ բեռ է դրվում, ապա գույքի բռնագանձումը կարող է ոչ համաչափ դիտարկվել անձի սեփականության իրավունքի հարցում:

Ըստ Հանձնաժողովի՝ համաչափության պահպանման համար կարևոր է ուշադրություն դարձնել նաև, թե երբ է ապացուցման բեռը անցնում պատասխանողին: Այդ առումով պետք է տարբերակել նաև քրեական գործի հետ

առնչվող բռնագանձման և առանց դրա իրականացվող բռնագանձումներին: Առաջինի դեպքում, չնայած բռնագանձումը պետք է կապված լինի քրեական գործի հետ, սակայն պարտադիր չէ, որ հիմնվի անձի մեղավորությունը հաստատող դատապարտման վրա: Նման պարագայում, բավարար է, որ քննությունը ապացուցի գույքի ապօրինի ծագումը:

Երկրորդ դեպքում, երբ բռնագանձումը չի կապվում քրեական գործի հետ, այնուամենայնիվ անհրաժեշտ է որոշակի տարրերի առկայություն, որոնք կնպաստեն առկա կասկածներին, օրինակ, տեսահսկողության արդյունքներ:

Բոլոր դեպքերում, սակայն, պարտադիր պետք է ապահովել մրցակցային պայմաններում կասկածվող անձի պաշտպանությունն ու հակադարձելու հնարավորությունը: Նույնիսկ եթե կասկածվող անձը չի ներկայացնում գույքի օրինական ծագումն ապացուցող ուղղակի ապացույց, այնուհանդերձ, Դատարանը կարող է հոգուտ վերջինիս որոշում կայացնել, եթե համոզիչ բացատրություն ներկայացվի նման ապացույցի բացակայության վերաբերյալ²³⁸:

Ըստ գործերով ներկայացված պատասխանողի դիրքորոշման՝ քանի որ ներկայացվել է նաև ապօրինի ծագում ունեցող դրամական միջոցների մնացորդի բռնագանձման պահանջ, ապա հայցվորը պետք է ապացուցի նման դրամական միջոցների փաստացի ստացված լինելը ուսումնասիրվող անձի կողմից, նման դրամական միջոցների ֆիզիկապես գոյություն ունենալը, նման դրամական միջոցների ներկայումս ուսումնասիրվող անձի մոտ գտնվելը, նման գումարների ապօրինի ծագում ունենալը և այն հանգամանքը, որ օրենքը պարունակում է այդ գումարների բռնագանձման պահանջ ներկայացնելու համար անհրաժեշտ իրավական հիմքեր:

Որոշ գործերով պատասխանողի ներկայացուցիչը պնդել է, որ գույքի բռնագանձման հնարավորությունը կամ անհնարինությունը չպետք է մտնեն ապացուցման բեռի մեջ, քանի որ այդ մասով հայցի փաստական հիմքում որևէ նշում առկա չէ, ինչպես նաև ապացուցման պարտականությունը բաշխելու որոշումը չպետք է առնչվի լրացված հայցի առարկային: Դատարանը որոշման մեջ այս հարցը չի մեկնաբանել, այլ ապացուցման ենթակա փաստերի մեջ ներառել է հայցվող ողջ գույքը²³⁹:

Որոշ գործերով կողմերը միջնորդել են փոփոխել կամ լրացնել ապացուցման բեռ բաշխելու մասին որոշումը: Օրինակ՝ գործերից մեկով պատասխանողների ներկայացուցիչը միջնորդել էր ներառել մի շարք լրացուցիչ ձևակերպումներ՝ մասնավորապես անդրադառնալով այն հանգամանքին, որ վեճի առարկա հանդիսացող յուրաքանչյուր մասով հայցվորը պետք է ապացուցի տվյալ գույքը ուսումնասիրվող անձի կողմից ձեռք բերված լինելը, հատուցելի գործարքով ձեռք բերված լինելը և որոշակի արժեքով ձեռք բերված լինելը և այլն: Քննարկվող գործով հաջորդ նիստին հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է ապացուցման

²³⁸ Venice Commission, CDL-AD(2024)024, կետ 25.

²³⁹ ՀԿԴ/0024/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811544

պարտականությունը բաշխելու մասին որոշումը փոփոխելու վերաբերյալ միջնորդություն՝ անդելով, որ իր վրա դրվել է պարտականություն ապացուցել պատասխանողին սեփականության իրավունքով գույքը պատկանելու փաստը, մինչդեռ վերջինս նույն պատասխանողին պատկանել է կառուցապատման իրավունքով և հետևաբար սեփականության իրավունքով պատկանելը ապացուցել հնարավոր չէ: Պատասխանողը ներկայացված միջնորդության հետ համաձայնվել է, միջնորդությունը մասնակի բավարարվել է²⁴⁰:

Դիտարկված գործերով բարձրաձայնվել է նաև ուսումնասիրվող անձի կողմից այլ անձանց կողմից իրեն փաստացի փոխանցված գումարների օրինականությունն ապացուցելու լրացուցիչ բեռի հարցը: Պատասխանող կողմը անդել է, որ այն չպետք է կրի պատասխանողը, եթե նման գումարներ կան, և եթե հայցվորը անդում է, որ դրանք ապօրինի են, ապա հայցվորը պետք է ապացուցի այդ անդումը²⁴¹:

➤ *Ապացույցների հասանելիությունը.*

Ինչպես արդեն նշվել է, հատկապես երկարաժամկետ հետադարձության թույլատրելիության դեպքում ՄԻԵԴ-ն առանձին անդարդարձել է այդ համատեքստում ապացույցների հասանելիության և պատասխանող կողմի դեպքում ապացուցման բեռի համաչափության հարցին՝ հաշվի առնելով գործով՝ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը:

Այն դեպքերում երբ օրենքում առկա էին «անհասանելի ապացույցի» հիմքով պաշտպանության երաշխիքները, Եվրոպական դատարանը դա ընդունելի է համարել: Նշված երաշխիքներից մեկը այն է, որ անգամ գույքի օրինական ծագումը հավաստող անմիջական ապացույցների բացակայության պայմաններում Դատարանը կարող է ի օգուտ պատասխանողի որոշում կայացնել, եթե ներկայացվել են այդ ապացույցների բացակայությունը հիմնավորող համոզիչ փաստեր: Նման երաշխիք սահմանված է Օրենքում. այն դեպքերում, երբ փաստերը, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, անձը չի կրում իր կողմից ապացուցման ենթակա փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները, եթե ապացուցում է, որ տվյալ ապացույցը ոչնչացվել է կամ կորել է ոչ իր մեղքով (նման երաշխիքը սահմանված է Օրենքի հոդված 22-րդ հոդվածի 4-րդ մասով(4)):

ՄԻԵԴ-ը նշել է, որ հետադարձության չափազանց երկար ժամկետների առկայությունը, օրինակ՝ 25 տարի²⁴², պատասխանողի համար դժվարեցրել է օրինական եկամտի կամ գույքի ծագման օրինականության վերաբերյալ ապացույց ներկայացնելու հարցը:

²⁴⁰ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

²⁴¹ ՀԿԴ/0024/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811544

²⁴² Todorov and others v Bulgaria, para. 202-204

Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ը առավել մեծ բեռ է համարել նման պահանջ դնելը հատկապես այն դեպքում, երբ այդ ժամանակահատվածում պետությունում տեղի էին ունենում զգալի տնտեսական փոփոխություններ, աճող գնաճ, հարկային և սոցիալական վճարների մասին տվյալների պահանման խնդիր և այլն, որի արդյունքում ստեղծվել էր անորոշություն²⁴³: Նման պայմաններում պատասխանողի վրա գույքի օրինական ծագումը ապացուցելու բեռ դնելը, այլ գործոնների առկայության համատեքստում, անհամաչափ բեռ է դիտարկվել²⁴⁴:

Ապացույցների հասանելիության և արժանահավատության խնդիրը բազմիցս բարձրացվել է դիտարկված գործերով՝ հատկապես 1990-ներ թվականներին վերաբերող փաստերի ապացուցման համատեքստում: Պատասխանող կողմը նշել է գրավոր ապացույցների պահպանման խնդիրը, երբ նման ապացույցներ կա՛մ չեն պահպանվել, կա՛մ ոչնչացվել են (այդ թվում՝ պետական մարմիններում պահպանվող ապացույցները), կա՛մ չեն կազմվել, քանի որ նման պարտադիր պահանջ այդ ժամանակահատվածում չի եղել:

Փաստերը հիմնավորելու համար միջնորդել են հարցաքննել վկաներին, ներկայացվել են նոտարական կարգով վավերացված հայտարարությունները, երդման հավաստագրումները, որոնք Դատարանի կողմից գնահատվել են այլ ապացույցների հետ համադրմամբ:

Հրապարակված դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նման դեպքում խնդրահարույց է եղել վկաների ցուցմունքի կամ հայտարարության արժանահավատությունը, քանի որ տվել են հակասական կամ տարբերվող տվյալներ:

Այդպես, գործերից մեկով պատասխանող կողմը որոշակի փաստեր փորձել է հիմնավորել նոտարական կարգով վավերացված հայտարարությունների, երդման հավաստագրումների, ինչպես նաև վկաների հարցաքննության միջոցով: Դատարանը, հետազոտելով որպես վկաներ ներգրավված անձանց ցուցմունքները, գործին մասնակցող անձի՝ վկայի ռեժիմով հարցաքննությամբ հայտնված տեղեկությունները՝ շուրջ 15 տարի առաջ տեղի ունեցած հանգամանքների վերաբերյալ, արձանագրել է հակասություններ, արդյունքում դրանք, այլ ապացույցների հետ համադրելով, դիտարկել է անարժանահավատ²⁴⁵:

Մեկ այլ գործով թեև գործում առկա՝ նոտարով հաստատված հայտարարությունը և վկայությունը նույն փաստի վերաբերյալ պարունակել են ոչ նույնական տվյալներ, որպիսի փաստն ընդգծել է հայցվոր կողմը, Դատարանը վկայակոչված հակասությունները վճռորոշ չի համարել²⁴⁶:

²⁴³ Օրինակ՝ *Angelov v. Bulgaria*, no. 44076/98, § 25, 22 April 2004, and *Capital Bank AD v. Bulgaria*, no. 49429/99, § 45; *Dimitrovi*, § 48.

²⁴⁴ *Todorov and others v Bulgaria*, § 211.

²⁴⁵ ՀԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545

²⁴⁶ ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

Մասնավորապես, Դատարանն արձանագրել է, որ պատասխանող կողմի կողմից ներկայացված փաստաբանական հարցման ենթարկված անձի կողմից հայտած տվյալների համաձայն՝ «...անցել է շուրջ 32 տարի ժամանակ այդ ամենից և ողջամտորեն նման փաստաթղթեր չեն պահպանվել, քանի որ դրա ոչ կարիքն է եղել պահպանելու, և ոչ էլ որևէ օրենսդրական պահանջ է եղել, ուստի նման փաստաթղթեր չեն պահպանվել»:

Նույն գործով Դատարանը նշել է՝

«...սույն գործի լուծման տեսանկյունից էական նշանակություն ունի ոչ թե պատասխանողի եկամուտների և ծախսերի հստակ չափը, այլ դրանց էական անհամապատասխանության, մասնավորապես հրավասու մարմնի կողմից պատասխանողին վերագրված ծախսերի (այդ թվում՝ գույքային ձեռքբերումների) կատարման պահին վերջինիս մոտ համապատասխան չափով օրինական եկամուտների առկայության կամ բացակայության փաստը: Տվյալ դեպքում պետք է հատկապես հաշվի առնել այն հանգամանքը, որ քննարկման են ենթակա պատասխանողի՝ շուրջ 30-35 տարի առաջ ստացված եկամուտները, և որոշ դեպքերում աշխատանքային գործունեության արդյունքում ստացված եկամուտները պարզելու անհնարինությունը պայմանավորված է հրավասու պետական մարմինների կողմից համապատասխան փաստաթղթերը ոչնչացված լինելու հանգամանքով, որպիսի պայմաններում համապատասխան փաստը չապացուցվելու բացասական հետևանքը չի կարող կրել պատասխանող կողմը»:

Դատարանը 30-35 տարվա վաղեմություն ունեցող իրադարձությունների հաստատման համար բավարար է համարել պատասխանող կողմի ներկայացրած բանավոր և/կամ գրավոր հայտարարությունները, անուղղակի ապացույցները, ինչպես նաև դրանք հերքող ապացույցների բացակայությունը²⁴⁷:

➤ *ՄԴ դիրքորոշումը.*

Ապացուցման բեռի համաչափությանն անդրադարձել է նաև ՄԴ-ն՝ նշելով, որ Օրենքով նախատեսված՝ գույքի ապօրինի լինելու կանխավարկածի սահմանումն ինքնին խնդրահարույց չէ արդար դատաքննության իրավունքի ներքո՝ պատասխանողին այդ կանխավարկածը հերքելու համար քաղաքացիական դատավարության նկատմամբ կիրառելի՝ Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքից բխող երաշխիքներն ապահովված լինելու պայմանով (*տե՛ս ՄԴՈ-1776, կետ 239*):

Անդրադառնալով Դիմողի արտահայտած այն մտահոգությանը, որ Օրենքը չի հաշվառում այնպիսի իրավիճակները, երբ գույքը ձեռք բերելիս որոշակի փաստն

²⁴⁷ ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

օրենքով կամ նորմատիվ իրավական ակտով, միգուցե չէր պահանջվում հաստատել միայն որոշակի ապացույցով, սակայն ներկայումս այդպիսի պահանջ առկա է, ՍԴ-ն արձանագրել է.

«Ապացուցման բեռի բաշխման, ստանդարտների և գնահատման հետ կապված հարցերը չեն կարգավորվում միայն Օրենքով, այլ նաև Քաղաքացիական դատավարության օրենսգրքով և դրա դրույթների՝ եռաստիճան դատական համակարգում ստացված մեկնաբանություններով: Օրենքով որևէ հարաբերության կարգավորվածության բացակայությունը, առավել ևս այնպիսի հարցերում, որոնք վերաբերում են ապացուցման խնդիրներին, անհրաժեշտաբար և անխուսափելիորեն չի ստեղծում նման կարգավորման բացակայության հետևանքները հաղթահարելու անհնարինություն: Առավել ևս, իրավական դրույթների վերացական ստուգման շրջանակում՝ եռաստիճան դատական համակարգի կողմից խնդրի վերաբերյալ վերջնական դատական մեկնաբանության բացակայության պայմաններում, Սահմանադրական դատարանը նման մտահոգությունները չի կարող գնահատել որպես իրավական դրույթի՝ Սահմանադրությանը հակասության վերաբերյալ եզրահանգման համար բավարար» (տե՛ս ՍԴՈ-1776, կետ 241):

➤ **Փորձագիտական կարծիք.**

Խոսելով կողմերի կողմից՝ 1990-ական թվականներին ձեռք բերված գույքի և եկամտի աղբյուրների առկայությունը հիմնավորող ապացույցների օգտագործման մասին՝ հարցված դատավորներից մեկը նշել է.

«Դժվար հասանելիության առումով մտահոգություն հայտնում են կողմերը: Բայց ամբողջ գործիքակազմը օգտագործում են, եթե անհրաժեշտություն կա, դատարանից են պահանջում, որպեսզի համապատասխան մարմիններից ապացույց պահանջի, լինի դա բանկ կամ այլ ընկերություն, որից չեն կարողանում ստանալ այդ ապացույցը: Մնացածը արդեն Դատարանը գնահատում է համակցության մեջ, արդյոք ողջամիտ է կողմի բերած փաստարկը, թե ոչ, և ինչով է դա հիմնավորվում»:

«Այդ բոլորն էլ արդարացի փաստարկներ են: Կգա ժամանակը, կգնահատենք: Արխիվները այրվել են, չեն պահպանվել: Հրշեջ ծառայությունից տեղեկանք են բերում, որ այրվել է: Օրենքով նախատեսված է, որ պիտի արխիվացնեօին, չեն արել: Փաստաթղթերի մեծ մասը չկա: Օրենքն էլ ասում է, որ եթե իր կամքից անկախ է, դա պիտի հաշվի առնենք: Եթե անհամաչափ բեռ է դրվում, համապատասխան գնահատականով պետք է փոխվի: Այդ խնդիրը կա, բայց օրենսդիրը կարգավորել է, ու արդեն պրակտիկայի հարց է, թե ինչպես կկիրառվի»:

Դատավոր

«1990 թվականների վերաբերյալ փաստերի հաստատման հարցին անդրադառնում ենք վերջնական ակտով: Պատասխանող կողմը ոչ թե

հնարավորություն չի ունենում ապացույց ներկայացնելու, այլ դա գնահատման հարց է: Դա էլ թողնենք Վերաքննիչը գնահատի, կտեսնենք, թե ինչ կասի արդեն հրապարակված ակտի վերաբերյալ: Այո, մտահոգություն հայտնում են, որ ապացույցները դժվար հասանելի են: Բայց ամեն դեպքում իրենք էլ փորձում են ամբողջ գործիքակազմը օգտագործել: Եթե անհրաժեշտություն կա՝ Դատարանից են պահանջում, որպեսզի համապատասխան մարմիններից ապացույց պահանջի, լինի դա բանկ կամ այլ ընկերություն, որից չեն կարողանում այդ ապացույցը ստանալ: Մնացածը արդեն Դատարանը գնահատում է համակցության մեջ՝ արդյո՞ք կողմի փաստարկները հավաստի են ու ինչով է դա հիմնավորվում»:

Դատավոր

Ինչպես տեսնում ենք, անկախ պատասխանող կողմերի փաստարկներից, հասանելի եզրափակիչ դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ա՝ Հակակոռուպցիոն դատարանը, Ա՝ Սահմանադրական դատարանը գտնում են, որ թեև ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ ապացուցման պարտավորությունը բաշխելու հատուկ ստանդարտ, այնուամենայնիվ, կիրառելի ստանդարտը դա հավանականությունների հավասարակշռում ստանդարտն է, որը գործում է այլ պետություններում, հիշատակվում է միջազգային փաստաթղթերում, ՄԻԵԴ դիրքորոշումներում և Վենետիկի հանձնաժողովի կարծիքներում:

Ապացուցման բեռի տեղափոխման առումով կրկին ո՛չ Դատարանը, ո՛չ ՍԴ-ն, ո՛չ էլ ՄԻԵԴ-ը այլ պետությունների դեմ գործերով խնդիր չեն տեսել, եթե առկա են պատշաճ երաշխիքներ, այդ թվում՝ ապացույցների հասանելիությունը:

Իսկ բեռի համաչափության առումով կարևոր է դիտարկել, թե ինչպես է Դատարանը գնահատում առկա ապացույցները, ապացույցների անհասանելիության մասին տեղեկությունը և վկաների ցուցմունքները և հայտարարությունները, առկա հակասությունները՝ հատկապես եթե դրանք վերաբերում են երկար ժամանակ առաջ տեղի ունեցած իրադարձությունների:

4.11 Հայցային վաղեմությունը.

Հայցային վաղեմության ինստիտուտի նպատակն է ապահովել քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավունքների և շահերի ժամանակին պաշտպանությունը: Հայցային վաղեմության ժամկետի ավարտը թույլ է տալիս ենթադրյալ իրավախախտում կատարած անձին ազատվել իր կատարած արարքի համար պատասխանատվությունից՝ հաշվի առնելով, որ անձը, որի իրավունքները խախտվել են, հրաժարվել է իր իրավունքների պաշտպանությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հայցային վաղեմության վերաբերյալ իրավակարգավորումներն հստակ են, և հնարավորություն են տալիս որոշելու անձի իրավունքների խախտման պահը և ըստ դրա՝ վերջինիս իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելու համար տրվող ժամանակահատվածը²⁴⁸։ Մինևույն ժամանակ հստակ հայցային վաղեմության ժամկետների առկայությունը հնարավորություն է տալիս գերծ մնալ իրավահարաբերության մասնակիցների իրավունքի չարաշահման հնարավորություններից։ Հայցային վաղեմության ժամկետներին է անդրադարձել ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1611 որոշմամբ²⁴⁹։

Թեև Օրենքով սահմանվում են ուսումնասիրվող և ուսումնասիրության ժամկետները, հայցային վաղեմության առումով հստակ կարգավորում Օրենքում առկա չէ։

Մինչև 2024 թվականի մայիսի 31-ը դիտարկված գործերից 9-ով (35%) Դատարանը քննարկել է հայցային վաղեմության հարցը։ Արձանագրվել են դեպքեր, երբ նույն գործի շրջանակներում հայցային վաղեմությունը կիրառելու միջնորդություն բերվել է մի քանի անգամ, ընդհուպ մինչև հիևգ²⁵⁰։ Որոշ դեպքերում միջնորդությունները բերվել են նույն պատասխանողի ներկայացուցչի, իսկ որոշ դեպքերում՝ ամեն անգամ տարբեր պատասխանողների ներկայացուցիչների կողմից։

Բոլոր գործերով էլ արձանագրվել է, որ գործին մասնակցող անձը հնարավորություն է ունեցել ներկայացնելու դիրքորոշում/առարկություն պատասխանողի կողմից ներկայացված հայցային վաղեմություն կիրառելու հարցի վերաբերյալ։

Հայցվորի ներկայացուցիչների դիրքորոշումը նույնն է եղել բոլոր գործերով առ այն, որ քաղաքացիական օրենսդրության շրջանակներում գոյություն ունեցող հայցային վաղեմության ժամկետները կիրառելի չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով, որոնցով գործում է «Ապօրինի ծագում ունեցող

²⁴⁸ Ընդհանուր առմամբ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 331)։ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում ինչպես հայցային վաղեմության ընդհանուր ժամկետ՝ երեք տարի (հոդված 332), այնպես էլ հատուկ ժամկետներ, որոնք կիրառելի են կոնկրետ պահանջների դեպքում, օրինակ՝ առօրինակ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել դրա կատարման օրվանից տասը տարվա ընթացքում, կամ վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել, եթե գործարքը կնքվել է բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, դրա դադարման օրվանից (313 հոդվածի 1-ին կետ) կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 317)։ Իսկ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 337, մաս 1)։

²⁴⁹ ՀՀ Սահմանադրական դատարանի 28 սեպտեմբերի 2021թ. ՍԴՈ-1611 որոշումը,

<https://www.concourt.am/decision/decisions/sdv-1611.pdf>

²⁵⁰ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

գույքի բռնագանձման մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության հատուկ ժամկետ՝ հատուկ հաշվարկի եղանակով:

Գործերից մեկով հայցվոր կողմը նշել է, որ.

«Մինչև Ապօրինի ծագում գույքի բռնագանձման մասին օրենքի ընդունումը պետությունը գույքի ապօրինությունը գնահատելու հնարավորություն չի ունեցել: Բացի այդ, Օրենքով հայցային վաղեմության ժամկետը երեք տարի է, բայց հոսում է ուսումնասիրությունը սկսելու պահից և ավարտվում՝ ապօրինի գույքի բռնագանձման հարցով դատարան հայց հարուցելու օրը: Դատախազը նաև նշեց, որ այս պահին Օրենքի սահմանադրականության հարցը քննարկման առարկա է Սահմանադրական դատարանում: «Չի բացառվում, որ ՄԴ-ն համաձայնի Ձեզ հետ, հատկապես որ այս գործով պատասխանողն այնտեղ ձայնի իրավունք ունի»²⁵¹:

Բոլոր այն դիտարկված գործերով, որոնցով քննարկվել է հայցային վաղեմություն կիրառելու հարցը, Դատարանը մերժել է միջնորդությունը: Հարցված դատավորները հայտնել են, որ հայցային վաղեմության ընդհանուր կանոնների, մեկնաբանությունների և նախադեպերի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին գործերով համապատասխանեցվել են Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից արտահայտված դիրքորոշմանն առ այն, որ հայցային վաղեմության ընդհանուր կանոնները կիրառելի չեն, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի դեպքում գործում է հատուկ կարգ:

Դատարանը հիմնականում նշել է, որ այս տեսակի գործերով քննության նկատմամբ կիրառելի է Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը, որով սահմանված ժամկետը տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածով նախատեսվածից, հանդիսանում է բացառություն, և գնահատել է ժամկետը ուսումնասիրությունը սկսելու օրվա համատեքստում: Դատարանը նաև ընդգծել է, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է ոչ միայն հայցային վաղեմության ժամկետ, այլև ժամկետի հաշվարկի հատուկ կարգ: Թեև նշված օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը համընկնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ընդհանուր ժամկետին, սակայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հիման վրա հարուցված հայցերով կիրառելի է հենց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի կարգավորումը: Ըստ Դատարանի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով հայցային վաղեմության ժամկետը ուղղակիորեն կապվում է ուսումնասիրության տևողության հետ, այսինքն՝ այս գործերով հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել ուսումնասիրություն սկսելու հաջորդ օրվանից, և հայցադիմումը համարվում է հայցային վաղեմության ժամկետի պահպանմամբ ներկայացված, եթե այն օրենքով սահմանված կարգի պահպանմամբ ներկայացվել է ուսումնասիրության տևողության ընթացքում, որը

²⁵¹ ՀԿԴ/0010/02/23 գործով 19.03.2024թ. նիստ

տվյալ ուսումնասիրության դեպքում երեք տարի է (կամ երկու, եթե կիրառելի է Օրենքի 8-րդ հոդվածի նախկին խմբագրությունը):

Ներկայացված միջնորդություններում որպես հիմնավորումներ նշվել են հիմնականում հետևյալ խնդիրները.

- Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ժամկետների կիրառելիությունը,
- Օրենքի կիրառելի խմբագրությունը՝ հետադարձ ուժի սահմանադրական երաշխիքների լույսի ներքո,
- Ուսումնասիրության տևողության հաշվարկը՝ նույն օրվանից, թե հաջորդ օրվանից, ուսումնասիրություն իրականացնելու և հայցային վաղեմության ժամկետի հարաբերակցությունը,
- Հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբը,
- Հայցի հիմքի և առարկայի փոփոխության դեպքում հայցային վաղեմության ժամկետները (արդյո՞ք հայցի առարկայի փոփոխությունը համարվում է ուսումնասիրության շարունակում),
- Հայցադիմումը ներկայացնելուց հետո նոր պատասխանող ներգրավվելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի կիրառելիությունը:

Որոշ գործերով բարձրացված փաստարկները և դիրքորոշումները եղել են համանման, այդ թվում՝ նույն գործի շրջանակներում տարբեր պատասխանողների կողմից բերված: Որոշ դեպքերում պատասխանող կողմի հաջորդիվ ներկայացվող դիրքորոշումները ներկայացվել են՝ ի նկատի ունենալով նույն գործով Դատարանի նախորդիվ արտահայտած դիրքորոշումները:

- *Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ժամկետների կիրառելիությունը.*

Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով, ապա գործում են սույն օրենքով սահմանված կանոնները: Այս մոտեցման լույսի ներքո պատասխանող կողմը հայցային վաղեմությունը կիրառելու մասին բազմաթիվ միջնորդություններ է բերել՝ տարբեր հիմքերով:

Գործերից մեկով պատասխանողներից մեկի ներկայացուցիչը նշել է, որ Օրենքով նախատեսված կարգավորումները չեն բացառում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ընդհանուր եռամյա վաղեմության ժամկետի գործողությունը: Հայցի առարկա կազմող՝ որոշ հասցեների գույքերի վերաբերյալ ՀՀ-ն առնվազն 2019 թվականի դեկտեմբերից տիրապետել է դրանց ապօրինի ծագման վերաբերյալ տվյալների: ՀՀ պետական մարմինները, անհրաժեշտ մեխանիզմներ ունենալով, կարող էին նախկինում հայտնաբերել և համապատասխան միջոցներ ձեռնարկել: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից պատասխանողի և նրա ընտանիքի անդամների

հայտարարագրերի ուսումնասիրությամբ խախտումներ չեն արձանագրվել: Սուբյեկտը, որի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը ենթադրաբար ուղղված է սույն գործով հայցը, Հայաստանի Հանրապետությունն է, և բոլոր այն պահանջների մասով, որոնցով հայցային վաղեմության անցած է, անթույլատրելի է հայցային վաղեմության ժամկետի նորացումը՝ նոր օրենքի ընդունման միջոցով:

Դատարանը մերժել է հայցային վաղեմության կիրառման միջնորդությունը: ՀՀ գլխավոր դատախազությունը՝ որպես պետական մարմին, օրինականության սկզբունքից ելնելով, իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ և օրենքներով, այդ թվում՝ կիրառելի Օրենքով: Իրավասու մարմինը Օրենքով ամրագրված լիազորությունների շրջանակներում իրականացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման հիմքերի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն, ինչով էլ պայմանավորված է հայցային վաղեմության ժամկետի համընկնումը ուսումնասիրության իրականացման ժամանակահատվածի հետ: Նույն գործով Դատարանը նաև գտել է, որ Օրենքի 8-րդ հոդվածով հայցային վաղեմության հատուկ ժամկետի նախատեսումը ևս համահունչ է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/1149/02/12 գործով 22.04.2016 թ.-ի որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշմանը²⁵²:

➤ *Քաղաքացիական օրենսդրությամբ գործարքների դեպքում սահմանված հայցային վաղեմության կիրառելիությունը.*

Օրենքի 20-րդ հոդվածի 3-մասով սահմանվում է, որ հայցվորի կողմից հայցադիմումով կամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու միջոցով կարող է ներկայացվել նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված ցանկացած այլ պահանջ, այդ թվում՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման, վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման, դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջ, կամ վիճարկվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի համար նշանակություն ունեցող ցանկացած պայմանագրի կնքված լինելու հանգամանք: Այդ նախատեսված պահանջների համար չեն գործում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված հայցային վաղեմության ժամկետները:

Այս համատեքստում առաջ է բերվել պատասխանողներից մեկին իրական շահառու համարելու համատեքստում շինծու գործարք կամ այլ հիմքով անվավեր ճանաչելու պահանջ բերելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ դրա նկատմամբ գործող հայցային վաղեմության կիրառումը:

²⁵² ՀԿԴ/0010/02/23, 19.03.2024թ. նիստ

Դիտարկված նիստերից մեկի ժամանակ պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ Օրենքի 8-րդ հոդվածի կարգավորումները չեն բացառում այլ վաղեմության հիմքերի առկայությունը և կիրառման անհրաժեշտությունը: Պնդել է, որ հայցվորը պետք է հստակեցնի հայցի առարկան և հստակ պահանջ ներկայացնի իրական շահառու ճանաչել իր վստահորդին կամ գործարքը վիճարկի: Իսկ քանի որ շինծու գործարքի անվավերության հետևանքներ ներկայացնելու վերաբերյալ պահանջ հայցվորի կողմից չի ներկայացվել, հարցը պետք է քննարկվի ոչ թե հայցային վաղեմության կիրառման, այլ որոշակի պահանջի չներկայացման տեսանկյունից: Հետևաբար, հայցը ենթակա է մերժման ոչ թե հայցային վաղեմության կիրառման հիմքով, այլ արագացված դատաքննություն կիրառելու եղանակով կամ վճռով: Գործով մեկ այլ պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ Օրենքի տրամաբանությունից ելնելով, օրենսդիրը ի նկատի է ունեցել, որ երրորդ անձանց գույքի բռնագանձման պահանջ ներկայացվելու դեպքում՝ իրական շահառուի փոխկապակցվածության հիմքով, պետք է ներկայացվեր նաև շինծու առաջին գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներից ելնելով՝ երրորդ անձի գույքի բռնագանձում այլ հիմքով, քան գործարքն անվավեր ճանաչել որպես այդպիսին չի կարող լինել:

Այս միջնորդությունը ևս մերժվել է: Դատարանը նշել է, որ եթե անգամ հայցվորը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ ներկայացրած լիներ նաև առաջին գործարքի անվավերության հետևանքների կիրառման, վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման ու դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջ, կամ վիճարկել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի համար նշանակություն ունեցող ցանկացած պայմանագրի կնքված լինելու հանգամանքը, ապա Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված հայցային վաղեմության ժամկետները այդ պահանջների նկատմամբ կիրառելի չէին լինելու, հետևաբար հայցային վաղեմության ժամկետը լրացած չէր լինի²⁵³:

Մեկ այլ գործով պատասխանողի ներկայացուցիչները նախ առաջ են տարել իրական շահառու դիտելու պայմաններում գույքի ձեռքբերման համատեքստում շինծու գործարքի վերաբերյալ կարգավորումների կիրառելիության հարցը՝ տասը տարի հայցային վաղեմության ժամկետի կիրառմամբ, այնուհետև՝ գործարքի անվավերության և դրա նկատմամբ կիրառվող մեկ տարվա հայցային վաղեմության ժամկետը, որոնք հայցվորը բաց էր թողել, իսկ մեկ այլ միջնորդությամբ՝ գույքի բարեխիղճ ձեռքբերող լինելու հանգամանքի վիճարկման և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության ժամկետի կիրառելիությունը: Հայցվորը նշել է, որ չի վիճարկում գույքը սեփականության իրավունքով տիրոջ սեփականատիրոջը պատկանելու փաստը, գործարքի վավերությունը կասկածի տակ չի դրվում: Օրենքի «իրական շահառու» ինստիտուտը, ըստ հայցվորի, ուղղված չէ գործարքների նման համատեքստում վիճարկման: Հայցվորի ներկայացուցիչի

²⁵³ ՀԿԴ/0062/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812577

պնդմամբ՝ հայցվորը չի ներկայացրել խախտված իրավունքը պաշտպանելու համապատասխան պահանջ, իսկ Օրենքով սահմանվել է իրական շահառուի նոր ինստիտուտ, որը գույքի բռնագանձման այլ ռեժիմ է ենթադրում:

Դատարանը մերժել է միջնորդությունները՝ նշելով, որ կիրառելի կարգավորումը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքով սահմանված ընթացակարգն է: Դատարանը թեև ուղիղ չի մեկնաբանել իրական շահառու համարելու համատեքստում շինծու գործարք ճանաչելու պահանջ բերելու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, ընդհանրական նշել է, որ հայցային վաղեմության ինստիտուտի նկատմամբ կիրառելի ժամկետի և ժամկետի հաշվարկի առանձնահատկությունները կախված են վիճելի իրավահարաբերության բնույթից: Այս դեպքում կիրառելի են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավական նորմերը, այդ թվում՝ հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի հետ կապված: Իսկ քանի որ հայցվորը Օրենքով սահմանված երեք տարվա ընթացքում է բերել հայցադիմումը, ուստի պահպանված է հայցային վաղեմության ժամկետը²⁵⁴:

Մեկ այլ գործով պատասխանողներից մեկի ներկայացուցիչը նույնպես առաջ է տարել իրական շահառուի և շինծու գործարքի փոխկապվածության հարցը, նշելով, որ պետք է ներկայացվեր առաջին գործարքների անվավերության հետևանքների կիրառման առանձին պահանջ, որի համար Քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածով սահմանում է 10 տարվա հայցային վաղեմության ժամկետ, որը հայցվորը չի պահպանել: Հայցային վաղեմության մասով Օրենքի և Քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների համադրության լույսի ներքո պնդել է, որ առկա է իրավական որոշակիության սկզբունքի ապահովման խնդիր (ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդված), ուստի անհրաժեշտ է կիրառել Քաղաքացիական օրենսգրքով սահմանած հայցային վաղեմության 10 տարվա ժամկետ:

Դատարանը համաձայնել է հայցվորի ներկայացուցչի դիրքորոշման հետ, որ նշված կառուցակարգը կիրառելի չէ, և արձանագրել, որ Օրենքը սահմանում է երեք տարվա հատուկ ժամկետ, որը հավասարեցված է ուսումնասիրության ժամանակահատվածին: Դատարանը նշել է, որ Օրենքի 20-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի հետ կապված որոշ պահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետները չեն տարածվում, այլ պահանջների նկատմամբ հայցային վաղեմության ժամկետներ նախատեսված չեն: Դատարանը արդյունքում եզրահանգել է, որ Օրենքի համապատասխան հոդվածները հստակ են և չեն հակասում Սահմանադրության իրավական որոշակիության սկզբունքին: Նշել է նաև, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցն ունի «*in rem*» բնույթ՝ ուղղված միայն գույքի դեմ, ինչը բացառապես օբյեկտիվ հիմքերով պահանջ է: Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված «իրական շահառու»

²⁵⁴ ՀՎԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

հասկացությունը Օրենսդիրը չի նախատեսել որպես Օրենքի շրջանակներում ինքնուրույն հայցապահանջի տարբերակ, այլ անգամ բացառել է այն՝ նախատեսելով որպես գույքի ապօրինի ծագում ունենալու հարցի քննության ընթացքում պարզման և ապացուցման ենթակա փաստի հարց²⁵⁵:

Մեկ այլ գործով Դատարանը նշել է, որ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների մի շարք որոշումներ, որոնցում մեկնաբանություններ են տրվել հայցային վաղեմության վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումների վերաբերյալ, սույն գործով կիրառելի չեն, քանի որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցապահանջի մասին տվյալ գործով հայցային վաղեմության ժամկետին և դրա հաշվարկման կարգը սահմանված են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով, որի վերաբերյալ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումները լուռ են²⁵⁶:

➤ *Օրենքի կիրառելի խմբագրությունը.*

2022 թվականի հունիսի 9-ին Օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասը փոփոխվել է²⁵⁷, որի արդյունքում ուսումնասիրության ժամկետ սահմանվել է երեք տարի՝ սկզբնական խմբագրությամբ գործող երկու տարվա ժամկետի փոխարեն: Օրենքի փոփոխությունը նախատեսող օրենքը պարունակում է անցումային դրույթ, համաձայն որի՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները տարածվում են նաև օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների վրա:

Նշված դրույթի կիրառելիության հարցը բարձրացվել է դիտարկված գործերից մի քանիսի շրջանակներում: Նախ, պատասխանող կողմը հիմնականում վիճարկում էր Օրենքի փոփոխության պահին սկսված և չավարտված ուսումնասիրության նկատմամբ՝ նոր՝ ավելի երկար ժամկետի կիրառելիությունը՝ ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածով սահմանված անձի վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական նորմերի հետադարձ ուժի կիրառման արգելքի լույսի ներքո, քանի որ ուսումնասիրության ավելի երկար ժամկետը գնահատվում էր որպես անձի վիճակը վատթարացնող:

Հայցվոր կողմը նման դեպքերում պնդել է, որ ուսումնասիրության շրջանակներում անձը որևէ կարգավիճակ չունի, ուստի խոսք չի կարող լինել անձի վիճակի վատթարացման մասին: Որոշ դեպքերում, անդրադառնալով հայցային վաղեմության ժամկետի փոփոխության հետադարձությանը՝ հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ սույն դեպքում գործ ունենք «ոչ իրական» հետադարձության, այն է՝ շարունակվող իրավահարաբերության շրջանակներում կատարված փոփոխության հետ, ինչը արգելված չէ և՛ ներպետական

²⁵⁵ ՀԿԴ/0062/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812577

²⁵⁶ Նույն տեղում:

²⁵⁷ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենք, 09.06.22թ.ՀՕ-270-Ն:

օրենսդրության ու դատական պրակտիկայի, և՛ ՄԻԵԴ նախադեպային դիրքորոշումների համատեքստում²⁵⁸:

Դատարանի դիրքորոշումը բոլոր դիտարկված գործերով միանշանակ էր՝ քանի որ Օրենքի անցումային դրույթը հստակ սահմանում է կիրառելիություն ընթացիկ ուսումնասիրությունների նկատմամբ, ապա Դատարանն առաջնորդվում է այդ նորմով:

Այսպես, գործերից մեկով ուսումնասիրությունը սկսվել է 2020 թվականի հոկտեմբերի 7-ին, իսկ հայցադիմումը Դատարան է մուտքագրվել 2023 թվականի հունվարի 11-ին: Հայցվոր կողմը վկայակոչել է օրենքով սահմանված եռամյա ժամկետը և պնդել է, որ այն պահպանվել է: Դատարանը նշել է, որ տվյալ դեպքում ուսումնասիրությունը Օրենքի փոփոխող՝ թիվ ՅՕ-270-Ն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա՝ 10.07.2022 թվականի դրությամբ, դեռևս ավարտված չի եղել: Հետևաբար, ուսումնասիրության նկատմամբ գործել է 10.07.2022 թվականից հետո գործող խմբագրությամբ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումը: Հայցադիմումը համարվում է հայցային վաղեմության ժամկետի պահպանմամբ ներկայացված, եթե այն օրենքով սահմանված կարգի պահպանմամբ ներկայացվել է ուսումնասիրության տևողության ընթացքում, որը տվյալ ուսումնասիրության դեպքում երեք տարի է:

Օրենքի հետադարձ ուժի մասով նույն գործով Դատարանը նշել է, որ թիվ ՅՕ-270-Ն օրենքը կարգավորում է ժամանակի մեջ շարունակվող իրավահարաբերությունը առանց հետադարձ ուժի, դրա կիրառումը չի խախտում ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, և դրա ազդեցությունը վատթարացնող չէ պատասխանողի համար, քանի որ ուսումնասիրության էությունը հայց հարուցելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը պարզելն է, ուսումնասիրությունն ինքնին չի կարող հանգեցնել անձի իրավունքների սահմանափակման կամ խախտման:

Դատարանը նաև նշել է, որ ուսումնասիրության ընթացքում անձի իրավունքներին կամ օրենքով պաշտպանվող շահերին միջամտություն կարող է իրականացվել միայն Դատարանի՝ հայցի հարուցումից առաջ ապացույց պահանջելու կամ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին որոշումների հիման վրա: Օրենսդրությամբ սահմանված երաշխիքները, այդ թվում՝ նշված դատական ակտերի անմիջական բողոքարկելու իրավունքը, բավարար են ուսումնասիրվող անձի իրավունքների և օրինական շահերի ոչ իրավաչափ սահմանափակումները բացառելու համար:

Դատարանը եզրագանգել է, որ թիվ ՅՕ-270-Ն օրենքով Օրենքի 8-րդ հոդվածի փոփոխությունն ունի ընթացակարգային բնույթ, չի ենթադրում պատասխանողի իրավական վիճակի վատթարացում, քանի որ դրանով պատասխանողի համար չի նախատեսվել որևէ պարտականություն, իրավունքի սահմանափակում կամ

²⁵⁸ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

պատասխանատվություն: Նշվել է նաև, որ Օրենքի 8-րդ հոդվածի փոփոխությունը որևէ ազդեցություն չունի հայցային վաղեմության կիրառում պահանջելու իրավունքը լիարժեք իրացնելու հնարավորության վրա²⁵⁹:

Դատարանը նույն դիրքորոշումը առ այն, որ ՀՕ-270-Ն օրենքով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով ուսումնասիրության առավելագույն տևողության և դրանով պայմանավորված՝ հայցային վաղեմության ժամկետի փոփոխությունը անձի իրավական վիճակը վատթարացնող օրենք չէ, արտահայտել է այլ գործով էլ²⁶⁰:

➤ *Ուսումնասիրության տևողության հաշվարկի սկիզբը.*

Դիտարկված գործերից մի մասով պատասխանող կողմը պնդել է, որ հայցադիմումը ներկայացվել է ուսումնասիրության մեկնարկից Օրենքով նախատեսված երեք տարվա ժամկետից ավելի ուշ: Նշված դեպքերում ուսումնասիրությունը սկսվել է 2020 թվականի հոկտեմբերի 7-ին, իսկ հայցադիմումը ներկայացվել է 2023 թվականի հոկտեմբերի 9-ին՝ երկուշաբթի օրը: Հայցվոր կողմը նշել է, որ ժամկետների աշխատանքային և ոչ աշխատանքային օրերի հետ կապված կանոնները կիրառելի են նաև սույն իրավահարաբերությունների նկատմամբ:

Դատարանը հիմնականում վկայակոչել է Քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածը, որի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը: Այնուամենայնիվ, գործերից մեկով Դատարանը իր դիրքորոշումը ձևակերպել է հետևյալ կերպ՝ «ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերություններում հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբ պետք է համարել այն պահը, երբ *իրավասու մարմինը կայացնում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում*»²⁶¹:

Գործերից մեկով Դատարանը արձանագրել է, որ հայցային վաղեմության եռամյա ժամկետի հաշվարկը սկսվում է ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելու օրից: Հաշվի առնելով, որ Օրենքը չի նախատեսում ժամկետների հաշվարկման կարգ, հետևաբար, ժամկետների հաշվարկման նկատմամբ կիրառելի են Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոնները: Մասնավորապես, նկատի ունենալով, որ հայցային վաղեմության ժամկետը 3 տարի է՝ Դատարանն արձանագրել է, որ կիրառելի է տարիներով հաշվարկվող ժամկետի վերաբերյալ իրավակարգավորումը, որի համաձայն՝ տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան

²⁵⁹ ՀԿԴ/0010/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811927

²⁶⁰ ՀԿԴ/0062/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040812577

²⁶¹ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

ամսին և ամսաթվին, իսկ ոչ աշխատանքային օր լրանալու դպեքում ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը²⁶²:

Մեկ այլ գործով քննարկվել է դատախազության կողմից տեղեկություն ստանալու և օրենքով սահմանված ժամկետում ուսումնասիրությունն սկսելու հարցը: Պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ՀՀ գլխավոր դատախազին 04.09.2020թ. ներկայացրել է զեկուցագիրը, որտեղ նշվել է գործով հիմնական պատասխանողի և նրա հետ փոխկապակցված անձանց անվամբ սեփականության իրավունքով ՀՀ-ում գրանցված անշարժ գույքերի մասին, որոնց կապակցությամբ առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու դրանց ենթադրաբար ապօրինի ծագման մասին: Պատասխանողը եզրահանգել է, որ հրավասու մարմինը Օրենքի իմաստով տեղեկացվել է 04.09.2020թ., ուստի մեկամսյա կամ գործող օրենքով 10-օրյա ժամկետը լրանում էր 04.10.2020թ. կամ 15.09.2020թ., այնինչ վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել ուսումնասիրությունն սկսելու մասին 07.10.2020թ.: Հայցվորի ներկայացուցիչը պարզաբանել է, որ գրությունը թեև ելքագրվել 04.09.2020թ., Դատախազության ընդհանուր բաժնում մուտքագրվել է 07.09.2020թ., իսկ հրավասու մարմնի համապատասխան դատախազին ներկայացվել է սեպտեմբերի 09-ին: Ուստի մատնանշված մեկամսյա ժամկետը բաց թողնված չէ:

Դատարանն ընդգծել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցապահանջների դեպքում օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետը կապում է բացառապես ուսումնասիրության տևողության, այսինքն՝ դրա սկզբի և ավարտի հետ: Ասվածով հերքվում է պատասխանողի այն փաստարկը, որ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետների խախտումը հանգեցնում է հայցային վաղեմության ժամկետի բացթողման: Հատկանշական է, որ Դատարանն արձանագրել է, որ նշված ժամկետները հանդիսանում են ուսումնասիրությունն սկսելու և դրա իրականացումը կանոնակարգող ընթացակարգային պահանջներ, որոնց ենթադրյալ խախտումները Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով կարող են առաջացնել միայն այնպիսի հետևանքներ, որոնք ուղղակիորեն նախատեսված են տվյալ օրենքով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով: Մինչդեռ որևէ օրենքով նախատեսված չէ, որ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետների ենթադրյալ խախտումները հանգեցնում են հայցային վաղեմության ժամկետի բացթողման և ըստ այդմ՝ հայցի մերժման²⁶³:

➤ *Հայցի հիմքի և առարկայի փոփոխության դեպքում հայցային վաղեմության ժամկետները.*

Նշված խումբ գործերով, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասը, հայցվորի ներկայացուցիչը մշտապես ընդգծել է, որ ի սկզբանե սահմանված կարգով հայցի հարուցման փաստի ուժով հայցային

²⁶² ՀԿԴ/0221/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814436

²⁶³ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533, այլ միջնորդություն:

վաղեմության ժամկետն ընդհատվում է, ուստի հետագայում հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը չի կարող դիտարկվել հայցային վաղեմության տեսանկյունից, քանի որ այդ գործողությունները չեն հանգեցնում նոր իրավահարաբերությունների ստեղծման:

Գործերից մեկով պատասխանողը պնդել է, որ հայցի առարկայի փոփոխություն կատարելով՝ հայցվորը խախտել է հայցային վաղեմության ժամկետը, քանի որ միջնորդությունը ներկայացրել է ուսումնասիրությունը սկսելուց երկու տարի հինգ ամիս հետո այն դեպքում, երբ ուսումնասիրության կիրառելի ժամկետը երկու տարի էր: Պատասխանողի ներկայացուցիչը նաև ընդգծել է, որ հայցվոր կողմը, փոփոխելով հայցի հիմքը և առարկան, թեպետ չունեն նման լիազորություն, ըստ էության պատասխանողների դեմ ներկայացրել է նոր նյութաիրավական պահանջներ և փոփոխել հիմքերն ամբողջությամբ, ինչն առնվազն փոփոխությունների ծավալով նույնական է նոր հայց հարուցելուն: Հայցվորը պնդել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցային վաղեմությունը կապվում է բացառապես ուսումնասիրության տևողության հետ: Իսկ եթե հայցի հիմքի ու առարկայի փոփոխություն ներկայացնելը դիտվի հայցային վաղեմության ժամկետի՝ սկզբնական հայցադիմումի համար կիրառելի իրավակարգավորման ներքո, ապա դա կամայականորեն կարող է զրկել հայցվորին իր տնօրինչական իրավունքի իրականացման հնարավորությունից:

Անդրադառնալով հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմքերին՝ Դատարանը նշել է, որ կիրառելի են Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր կարգավորումները, ըստ որի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման պահ է դիտարկվում «սահմանված կարգով հայց հարուցելու» պահը: Այս գործով Դատարանն արձանագրել է, որ ներկայացված հայցի հիմքի և առարկայի փոփոխության միջնորդության արդյունքում ավելացվել են հայցապահանջների չափերը, և, ըստ էության, ներկայացվել են նոր հայցապահանջներ: Թեև նոր հայցապահանջների արդյունքում չի փոփոխվել օրենքով պահպանվող շահը, և գործը դուրս չի եկել այն քննող դատարանի ենթակայությունից, սակայն նոր հայցապահանջների ներկայացումը (այդ թվում՝ նաև՝ հայցապահանջի չափի ավելացման տեսքով), լինելով նույն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավահարաբերությունների շրջանակում, այնուամենայնիվ ենթադրում է կոնկրետ պահանջներից բխող նոր իրավահարաբերությունների ծագում, և այդ առումով նույնանում է հայցադիմումի ներկայացման ինստիտուտին:

Վերոգրյալի համատեքստում Դատարանն արձանագրել է նաև, որ սկզբնապես ներկայացված հայցադիմումի ուժով հայցային վաղեմության ժամկետի ընդհատումը նոր հայցապահանջների մասով իրավական նշանակություն չունի, քանի որ նոր հայցապահանջների նկատմամբ կիրառելի հայցային վաղեմության ժամկետն ընդհատվել է հայցվորի կողմից հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու պահից: Քանի որ հայցվորի կողմից հայցի հիմքի և առարկայի փոփոխություն

թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը Դատարան է ներկայացվել Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված՝ հայցային վաղեմության եռամյա ժամկետի ընթացքում, հայցային վաղեմության ժամկետը պահպանված է²⁶⁴:

Մեկ այլ դեպքում նույն գործով պատասխանող կողմը միջնորդությամբ պնդել է, որ հայցի հիմքը և առարկան էապես փոխվել են: Փոփոխության հիմք հանդիսացած տեղեկությունը Իրավասու մարմինն հասու է դարձել 16.12.2022թ., այսինքն՝ ուսումնասիրությունն սկսելուց 2 տարի 2 ամիս անց: Այդ ժամանակահատվածում սույն իրավահարաբերության նկատմամբ կիրառելի Օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածների իմաստով եզրակացությունը չի ենթարկվել փոփոխության, ավելին՝ հայցվորը Օրենքի իմաստով հայտարարել է ուսումնասիրության ավարտ և հարուցել համապատասխան հայց, այսինքն՝ հայցի այդ մասով ավելացումը չի ներառվել ուսումնասիրվող ժամանակահատվածի մեջ: Ըստ հայցվորի ներկայացուցչի՝ աշխատավարձերի ապօրինի լինելու վերաբերյալ տվյալները ստացվել են քրեական գործով և դիտարկվել են որպես լրացուցիչ ապացույցներ, այլ ոչ թե որպես ուսումնասիրության շարունակություն:

Դատարանն արձանագրել է, որ հայցի ներկայացման պահ է համարվում հայցվորի կողմից սկզբնական հայցադիմումի ներկայացման պահը: Հայցի առարկայի փոփոխության միջնորդությունն ներկայացնելուց հետո առանձին դեպքերում կարող է առաջ գալ հայցային վաղեմության կիրառման հարց, մասնավորապես, երբ հայցվորի կողմից համապատասխան միջնորդությամբ ներկայացվել են նոր պահանջներ, կամ ավելացվել են արդեն իսկ ներկայացված պահանջների չափերը: Ըստ Դատարանի՝ հայցային վաղեմությունը կիրառելի է բացառապես ավելացված պահանջների և պահանջների ավելացված չափերի մասով: Այս պարագայում Էական նշանակություն ունեն հայցային վաղեմության ժամկետի սկիզբը՝ ուսումնասիրության սկսելու օրը և հայցի առարկայի փոփոխության միջնորդության ներկայացման պահը²⁶⁵:

➤ Գույքի արժեքով բռնագանձում պահանջելու կամ ֆակուլտատիվ պահանջների դեպքում հայցային վաղեմություն.

Մեկ այլ գործով պատասխանողի ներկայացուցիչը պնդել է, որ հայցվորը փոխել է հայցի փաստական հիմքը՝ հայցվող գույքերի «ապօրինի ծագում ունեցող» մասն ավելացնելու և նոր հայցապահանջ ներկայացնելու միջոցով: Հայցվորն ուսումնասիրությունն սկսելու մասին որոշում է կայացրել 08.10.2020 թվականին, հետևաբար, գույքի բռնագանձման մասով պահանջ կարող էր ներկայացվել մինչև 08.10.2023 թվականը, իսկ սույն գործով հայցի հիմքը և առարկան փոփոխելու միջնորդությունը ներկայացվել է 03.04.2024 թվականին: Ըստ հայցվորի ներկայացուցչի՝ հայցը հարուցվել է սահմանված ժամկետում, իսկ կատարված փոփոխություններով փոփոխվել են միայն հայցի փաստական հանգամանքները

²⁶⁴ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

²⁶⁵ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

և միայն մեկ պահանջի մասով է հայցի առարկայում փոփոխություն կատարվել, և նոր պահանջ չի ներկայացվել: Դրանից բացի, պատշաճ հայցի ներկայացմամբ արդեն իսկ հայցային վաղեմության ժամկետները կասեցվել են:

Դատարանը գտել է, որ նման ձևով հայցի փաստական հիմքերի փոփոխությունն ինքնին չի հանգեցրել նյութաիրավական պահանջի փոփոխության, իսկ հայցի առարկայի փոփոխությունը արտահայտվել է ֆակուլտատիվ պահանջի ավելացմամբ՝ ավանդի գումարի բռնագանձման անհնարինության դեպքում բռնագանձելու համարժեք դրամական միջոցներ, ուստի հայցի փոփոխությունը չի կարող գնահատվել որպես նոր հայցի ներկայացում, և ըստ այդմ՝ դրա նկատմամբ չի կարող հաշվարկվել հայցային վաղեմության ժամկետ²⁶⁶:

Պատասխանողների ներկայացուցիչը հայտնել է, որ 2020թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում կայացվել է «Ուսումնասիրություն սկսելու մասին» որոշում, որով որոշվել է ուսումնասիրություն սկսել պատասխանողին պատկանող գույքի առնչությամբ, իսկ 2023թ. հոկտեմբերի 24-ին Իրավասու մարմինը ներկայացրել է հայցի առարկայի փոփոխություն թույլատրելու մասին միջնորդություն, որով սույն գործի շրջանակներում առաջին անգամ ներկայացրել է նոր պահանջները, ինչպես նաև հայցի առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդությամբ Իրավասու մարմինն ավելացրել է պահանջների չափը: Պատասխանողների ներկայացուցիչը նշել է, որ համապատասխան հայցապահանջը դատարան ներկայացվել է ուսումնասիրությունը սկսելու օրվանից երեք տարուց ավելի ուշ:

Հայցվորը նշել է, որ այս վարույթներով, անկախ հայցապահանջում ներառված գույքերի շրջանակից և կառուցվածքից, բոլոր դեպքերում հայցապահանջը միշտ և բացառապես մեկն է՝ ապօրինի գնահատված գույքի բռնագանձումը: Ուստի հայցը ժամկետում դատարան հարուցելուց հետո ցանկացած ծավալով՝ թե՛ ավելացման, թե՛ նվազեցման եղանակով հայցի հիմքի և առարկայի փոփոխության դեպքում առհասարակ չի կարող քննարկվել հայցային վաղեմությունը, քանի որ Դատարանը, եթե թույլ է տալիս հիմքի և առարկայի փոփոխություն, դրանով իսկ ուղղակիորեն կամ անուղղակիորեն արձանագրում է, որ չեն փոփոխվել պաշտպանվող շահը և իրավունքը, իսկ այս դեպքում պաշտպանվող շահը մեկն է:

Դատարանն ընդգծել է, որ սույն միջնորդության քննարկման տեսանկյունից էական նշանակություն ունի մասնավորապես այն հարցը, թե արդյո՞ք դրամական պահանջի չափի ավելացումը, ինչպես նաև գույքի բռնագանձման անհնարինության դեպքում համարժեք դրամական միջոցների բռնագանձման պահանջը համարվում են նոր պահանջներ: Օրենքի 20-րդ հոդվածը Իրավասու մարմինն վերապահել է իրավական հնարավորություն՝ որոշակի պայմանների առկայության պարագայում ներկայացնել գույքին համարժեք դրամական միջոցների բռնագանձման պահանջ: Դատարանն արձանագրել է, որ այդպիսի

²⁶⁶ ՀՎԴ/0197/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814404

պահանջի ներկայացման նախապայման են մասնավորապես գույքի՝ բարեխիղճ ձեռք բերողի փոխանցված լինելը, ինչպես նաև գույքը նույնականացնելու, առանձնացնելու կամ բռնագանձելու անհնարինությունը: Ընդ որում՝ հետագայում հայցվորն ինքն է կրելու նշված պայմանների առկայությունն ապացուցելու դատավարական պարտականությունը: Դատարանը գտել է, որ վերոնշյալ պայմանների առկայության հիմքով գույքի շուկայական կամ ձեռքբերման արժեքի չափով գումար պահանջելը չի կարող համարվել նոր պահանջ, քանի որ այն ներկայացվում է արդեն իսկ առկա պահանջի շրջանակներում, մինչդեռ նոր պահանջը ենթադրում է ապօրինի ծագում ունեցող և բռնագանձման ենթակա գույքերի կազմի ընդլայնում:

Դատարանը նաև արձանագրել է, որ դրամական միջոցների բռնագանձման պահանջը հանդես է գալիս որպես գույքի՝ բնեղենով բռնագանձման այլընտրանք: Այդ մասին է վկայում նաև այն, որ վերոնշյալ երկու պահանջները փոխադարձաբար բացառում են միմյանց և չեն կարող զուգակցվել, այլ կերպ՝ դրանցից մեկի բավարարումն ինքնին բացառում է մյուս պահանջի բավարարումը:

Ըստ որոշման՝ սույն գործով դրամական պահանջը ավելացված չափի մասով չի կարող դիտարկվել որպես նոր պահանջ՝ հաշվի առնելով, որ Իրավասու մարմնի կողմից նշված պահանջը սկզբնապես ևս ներկայացված է եղել, իսկ չափի փոփոխությունը սույն դեպքում պայմանավորված է Իրավասու մարմնի կողմից կատարված վերահաշվարկով, ուստի դրա նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվել է ոչ թե այդ պահանջների ներկայացման պահից, այլ սկզբնական հայցի ներկայացման պահից²⁶⁷:

➤ *Հայցը ներկայացնելուց հետո տվյալների հավաքագրում.*

Գործերից մեկով պատասխանող կողմը բարձրացրել է հայցադիմումը դատարան ներկայացնելուց հետո հայցվորի կողմից տվյալների ձեռք բերման հարցը: Ըստ պատասխանող կողմի՝ Իրավասու մարմնի կողմից ներկայացված «հայցի առարկան փոփոխելու մասին» միջնորդությունը ներկայացվել է 2023թ. ընթացքում, ինչը նշանակում է, որ 2023թ. դրությամբ Իրավասու մարմինը դեռևս տեղեկատվություն և տվյալներ է ձեռք բերել պատասխանողից բռնագանձման ենթակա գույքի առկայության և դրա ծավալների վերաբերյալ: Այսինքն՝ փաստացի պատասխանողի նկատմամբ հարուցված ուսումնասիրությունը դեռևս ավարտված չի եղել:

Պատասխանողը նշել է, որ եթե ի սկզբանե ներկայացված հայցադիմումը չի պարունակում որևէ պահանջ կամ որևէ փաստական հիմք, և այդ հայցադիմումը հետագայում լրացվում է որևէ նոր պահանջով կամ նոր փաստական հիմքով, ապա «նոր պահանջով կամ նոր փաստական հիմքով հայցը» համարվում է ներկայացված ոչ թե սկզբնական հայցադիմումի ներկայացման պահից, այլ՝ հայցի առարկայի և/կամ հիմքի համապատասխան լրացումը դատարան

²⁶⁷ ՀՎԴ/0010/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530

ներկայացվելու պահից: Սույն հակակոռուպցիոն քաղաքացիական գործով իրավասու մարմնի կողմից ներկայացված «հայցի առարկան և հիմքը փոփոխելու մասին» միջնորդությունը ներկայացվել է 2023թ., ինչը նշանակում է, որ իրավասու մարմնի հայցն իր վերջնական առարկայով և հիմքով ներկայացվել է 2023թ.: Այսպիսով, տվյալ դեպքում «Ուսումնասիրությունն սկսելու մասին» որոշման կայացման պահի և հայցադիմումը դատարան ներկայացնելու պահի միջև ընկած ժամանակահատվածը («ուսումնասիրության տևողությունը») գերազանցել է երկու տարին:

Հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ Օրենքով սահմանված չէ որևէ հատուկ կանոն, որով կսահմանափակվեր եզրակացության հիման վրա հայցադիմում ներկայացնելուց հետո իրավասու մարմնի կողմից նոր ապացույցներ հավաքելու, վերահաշվարկներ կատարելու և դրանց հիման վրա Օրենսգրքի 170-րդ հոդվածով նախատեսված կարգով հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդության ներկայացման իրավունքը: Եվ քանի որ այդպիսի հատուկ կանոն Օրենքում առկա չէ, ապա իրավասու մարմինը դատական քննության փուլում օժտված է նույն իրավունքներով, ինչ ցանկացած հայցվոր: Ուստի հայցադիմումի ներկայացումից հետո իրավասու մարմնի կողմից լրացուցիչ տվյալների ձեռք բերումը, դրանց կամ նույնիսկ մինչ այդ առկա տվյալների հիման վրա վերահաշվարկի կատարումը պետք է դիտարկել ոչ թե որպես Օրենքով նախատեսված հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության մաս, այլ որպես Օրենսգրքով նախատեսված՝ հայցվորի իրավունքի իրացում:

Հայցվորի ներկայացուցիչը նաև նշել է, որ եթե հայցի հիմքի և/կամ առարկայի այն փոփոխությունները, որոնք համապատասխանում են Օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին և թույլատրվել են Դատարանի կողմից, դուրս են հայցային վաղեմության կիրառման տիրույթից, եթե սկզբնական հայցադիմումը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետում: Հակառակ պնդումը կհակասի ինչպես Օրենսգրքի 12-րդ հոդվածով ամրագրված տնօրինչականության սկզբունքի, այնպես էլ 170-րդ հոդվածով նախատեսված իրավունքի տրամաբանությանը և նպատակներին՝ ըստ էության, իմաստազրկելով և ոչ կիրառելի դարձնելով դրանք: Ավելին, եթե Դատարանը, թույլատրելով հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխությունը, փոփոխված հայցադիմումը (թեկուզ փոփոխված մասով) գնահատի որպես «նոր հայց», դրանով իսկ կարճանագրի, որ միջնորդության բավարարման արդյունքում փոփոխվել է պաշտպանվող իրավունքը կամ շահը, որպիսի պայմաններում հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխությունն անթույլատրելի էր:

Դատարանը, պատասխանելով արդյո՞ք սկզբնական հայցի ներկայացման պահ է համարվում հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ վերջին միջնորդության ներկայացման օրը, և արդյո՞ք նշված փոփոխության նկատմամբ կիրառելի են հայցային վաղեմության ժամկետները հարցերին, նշել է, որ նոր խմբագրությամբ Օրենքի 8-րդ հոդվածով սահմանած եռամյա հայցային վաղեմության ժամկետի կիրառման պայմաններում սույն գործով սկզբնական

հայցադիմումը, ինչպես նաև հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ բոլոր միջնորդությունները ներկայացվել են ուսումնասիրություն սկսելու մասին որոշման կայացումից հետո երեք տարվա ընթացքում:

Անդրադառնալով պատասխանողների ներկայացուցչի այն դիրքորոշմանը, որ սույն գործով հայցադիմումի ներկայացումից հետո ևս իրավասու մարմինը իրականացրել է ուսումնասիրություն՝ պատասխանողին պատկանող գույքի առնչությամբ, Դատարանն արձանագրել է, որ սկզբնական հայցադիմումի ներկայացման պահի դրությամբ իրավասու մարմնի կողմից իրականացվող ուսումնասիրությունը՝ որպես օրենքով կարգավորվող ձևական ընթացակարգ, արդեն իսկ ավարտված է: Ուսումնասիրության ավարտված լինելու մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հայցադիմումը ներկայացնելուց հետո իրավասու մարմինը զրկված է այն բոլոր լիազորություններից, որոնք Օրենքով սահմանված են որպես ուսումնասիրություն իրականացնելիս իրավասու մարմնին վերապահված լիազորություններ (հոդված 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ): Մինևս այն ժամանակ դատավարության փուլում ՀՀ գլխավոր դատախազությունը օգտվում է օրենսդրությամբ հայցվորին վերապահված բոլոր իրավունքներից: Դատարանն արձանագրել է, որ հայցի ներկայացման պահ է համարվում հայցվորի կողմից սկզբնական հայցադիմումի ներկայացման պահը: Հետևաբար, հայցի հիմքի և առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդության բավարարումը չի ենթադրում, որ սկզբնական հայցը ներկայացված է համարվում միջնորդությունը ներկայացնելու օրը²⁶⁸:

➤ *Նոր պատասխանող ներգրավելու դեպքում հայցային վաղեմության ժամկետի սահմանումը.*

Գործերից մեկով երկու պատասխանողների անունից ներկայացուցիչները փաստել են, որ եթե որոշ պատասխանողների դեմ հայցը Դատարան է ներկայացվել 26.12.2022 թ.-ին և նրանց մասով հայցային վաղեմության ժամկետը հայցի հարուցմամբ ընդհատվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ապա մեկ այլ պատասխանողի մասով հայցային վաղեմության ժամկետի հոսքը շարունակվել է, նրա դեմ հայցը դատարան է ներկայացվել 17.04.2023 թ.-ին, այսինքն 16.02.2021 թ.-ից շուրջ երկու տարի և երկու ամիս հետո այն դեպքում, երբ հայցային վաղեմության ժամկետը սպառվել է դեռևս 16.02.2023 թ.-ին: Նման պայմաններում քաղաքացիական գործով 17.04.2023 թ.-ին հայցվորի կողմից «Նոր պատասխանող ներգրավելու, հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ» միջնորդություն ներկայացնելու, իսկ 24.05.2023 թ.-ի որոշմամբ Դատարանի կողմից այն բավարարելու պարագայում ակնհայտ է, որ այդ պատասխանողի մասով քաղաքացիական գործով ներկայացված պահանջը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ և պետք է մերժվի:

²⁶⁸ ՀՎԴ/0010/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811530

Ըստ հայցվորի՝ տվյալ գործով հայցային վաղեմությունը ընդհատվել է հայցը հարուցելով և սկսել է հոսել նորից, իսկ նոր պատասխանողների ներգրավումը Քաղաքացիական դատավարության օրենսգրքով ընձեռնված հնարավորություն է, որը ցանկացած հայցվոր իրավունք ունի իրացնելու: Ըստ Դատարանի՝ սույն գործով ուսումնասիրություն սկսելու մասին որոշումը կայացվել է 16.02.2021թ.-ին, իսկ հայցադիմումը Դատարանում մուտքագրվել է 26.12.2022թ.-ին, հետևաբար հայցադիմումը ներկայացվել է Օրենքի 8-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ՝ հայցային վաղեմության եռամյա ժամկետում, իսկ նոր պատասխանողներին ներգրավելու միջնորդությունը ներկայացվել է 17.04.2023թ.-ին՝ ուսումնասիրության սկզբից շուրջ 2 տարի և 2 ամիս անց այն դեպքում, երբ օրենքը նախատեսում է եռամյա ժամկետ: Հետևաբար, հայցային վաղեմության ժամկետի խախտման մասին պնդումներն անհիմն են²⁶⁹:

Գործերից մեկով հայցային վաղեմության մասին միջնորդությունը կիրառելու հարցը քննարկելիս հայցվոր կողմը նշել է, որ «պատասխանողի ներկայացուցչի այս միջնորդությունը օրենքի քողարկված սահմանադրականությունը ստուգելու միջնորդություն է»: Ավելին՝ հայցվորը նաև նշել է, որ այս պահին Ապոլինի գույքի բռնագանձման մասին օրենքի սահմանադրականության հարցը քննարկման առարկա է Սահմանադրական դատարանում: «Չի բացառվում, որ ՄԴ-ն համաձայնի Ձեզ հետ, հատկապես, որ այս գործով պատասխանողն այնտեղ ձայնի իրավունք ունի»՝ նշել է հայցվորի ներկայացուցիչը²⁷⁰:

➤ *Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդությունները քննարկելիս ապացուցման բեռի բաշխումը.*

Դիտարկված գործերով ապացուցման բեռի բաշխման և ժամկետի տրամադրման առումով մոտեցումները տարբերվել են: Հիմնականում ապացուցման բեռի բաշխումը կատարվել է արձանագրային որոշմամբ²⁷¹, տրամադրվել է ապացույցները ներկայացնելու ժամկետ:

«Նիստի հետաձգման ու ապացուցման բեռ բաշխելու առումով մոտեցումը կախված է նրանից, թե արդյոք արդեն գիտենք պրակտիկայից, որ ապացուցման ժամկետ են ուզում, բայց որևիցե ապացույց չեն ներկայացնում, ապացույց ներկայացնելու ժամկետ չես տրամադրում: Եղել են դեպքեր, որ նշել են, որ փաստի հարց չկա, իրավական հարցադրում է լինում, օրինակ՝ ուսումնասիրության օրվա հետ կապված՝ երկու, թե երեք տարվա ժամկետ է, ուսումնասիրության որոշումը կա, ապացույց ներկայացնելու ժամկետ չի տրամադրվում, ապացուցման բեռն էլ արձանագրային որոշմամբ ենք բաշխում: Որպեսզի ժամանակ չահենք, հետո էլ անցնում ենք ակտի հրապարակմանը: Այն գործերով, որոնցով հստակ են

²⁶⁹ ՀԿԴ/0110/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811890

²⁷⁰ ՀԿԴ/0010/02/23 գործով 19.03.2024թ. նիստ

²⁷¹ Օրինակ՝ ՀԿԴ/0221/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814436

դիրքորոշումները, կողմն էլ գիտի, ուղղակի ձգում է, հնարավորինս փորձում ենք կարծ ժամկետում նիստի օր նշանակենք, դրանով սահմանափակենք»:

Դատավոր

➤ *հայցային վաղեմության միջնորդությունը որպես չարաշահու՞մ.*

Ընդհանուր առմամբ նման միջնորդությունները քննարկելիս հայցվոր կողմը և Դատարանը կարծիք են արտահայտել, որ պատասխանող կողմը օգտագործում է այդ գործիքակազմը գործով քննությունը ձգձգելու համար:

Գործերից մեկով հայցվորի ներկայացուցիչը առարկել է հերթական հայցային վաղեմությունը կիրառելու մասին միջնորդությանը՝ նշելով, որ միջնորդությունը պետք է մերժվի, քանի որ արդեն նմանատիպ շուրջ 3 հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացվել է պատասխանող կողմի կողմից, որոնք և Դատարանը մերժել է: Հայցվոր կողմը նշել է նաև, որ պատասխանող կողմի կողմից անընդհատ նման միջնորդություններ ներկայացնելը նպատակ է հետապնդում ձգձգել ապացուցման պարտականությունը բաշխելու որոշման կայացումը և ձգձգել գործի քննությունը²⁷²:

Մեկ այլ դեպքում հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ պատասխանողների կողմից միտում է տեսնում ձգձգելու, և ի հիմնավորումն նշել է այն հանգամանքը, որ բոլոր պատասխանողների անունից հայցային վաղեմությունը կիրառելու վերաբերյալ միջնորդությունը կարող էր բերվել միանգամից բոլորի անունից մեկ միջնորդությամբ՝ անդրադառնալով բոլոր հիմքերին: Նշել է, որ պատասխանողի կողմից բերված մեկ հիմքով միջնորդության քննարկումը ավարտում են, մեկ այլ հիմքով հաջորդիվ առանձին միջնորդություն է բերվում ²⁷³:

Նմանատիպ մտահոգություն հայտնել են նաև դատավորները ինչպես նիստերի ժամանակ, այնպես էլ փորձագիտական հարցազրույցների շրջանակներում:

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա են չափազանց շատ պաշտպանական մեխանիզմներ, բողոքարկման հնարավորություն: Համ այդ կարգավորումները, համ կողմերի չարաշահումները պատճառ են դառնում, որ ավելի ինտենսիվ չի լինում քննել գործը: Օրինակ, հայցային վաղեմության հարցը մասնակիցներից առանձին բարձրացնում են, հաճախ՝ նույն հիմքով՝ ասելով, որ առանձին կողմ են, իրացնում են իրենց իրավունքը»:

Դատավոր

«Ամենատարածված հարցն է, որ կողմերը բարձրացնում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով: Կողմերը շատ են: 50-60 մասնակից

²⁷² ՀԿԴ/0013/02/22 գործով 11.01.2024թ. նիստ:

²⁷³ ՀԿԴ/0013/02/22, 17.11.2023թ.

Է լինում, իհարկե մասնակցում եմ նրանցից 10-15-ը: Կողմը ներկայացրեց նույն հիմքով հայցային վաղեմություն: Չարցր քննարկում ես, ենթադրենք՝ մերժում ես: Նույն հիմքերով հաջորդ կողմը գալիս է, ասում է, քանի որ ես առանձին կողմ եմ, դա ինձ չէր վերաբերում, իսկ նյութափրավական պահանջը ինձ է ուղղված, Դուք չեք կարող դա չքննել, իսկ դու ստիպված ես տաս հատ հայցային վաղեմության միջնորդություն քննես: Ապացուցման բեռ ես բաշխում, հետո պիտի առանձին դատական ակտ հրապարակես, ժամկետ ես սահմանում: Դա գործը ձգձգում է: Չետո պիտի նորից ծանուցես, որ գան նիստերի»:

Դատավոր

«Հայցային վաղեմության մասով ամեն մասնակից կարող է գալ իր մասով միջնորդել: Ինչքան էլ դու հասկանաս, որ դա չարաշահման է նման, բայց յուրաքանչյուր կողմ կարող է իր մասով միջնորդել: Հիմքը մի քիչ ձևափոխած կամ հանգամանքները շատ թեթև փոխված, դա արդեն փոխում է: Դու չես կարող ասել, որ այլ անձ արդեն այդ հիմքով ներկայացրել է, չենք կարող քննարկել: Պատկերացրեք՝ ունեք 15 պատասխանող, ամեն մեկը իր մասով եթե վաղեմության միջնորդություն ներկայացնի ... Գուցե արժի ժամկետներ նախատեսել ավելի հստակ: Քանի որ Օրենքն է կիրառվում, այլ ոչ թե օրենսգիրքը, Վերաքննիչն էլ կարծես թե արդեն ձևավորված պրակտիկա ունի այս մասով, կարող ենք Քաղաքացիական օրենսգրքով դա նախատեսել ու այդ հարցը փակել»:

Դատավոր

«Ինչ-որ պահ կա, որ հասկանում ես, որ սա ինքնանպատակ է, մենք չենք էլ քննարկում՝ որպես չարաշահում, նույն հայցային վաղեմությունը կամ բացարկը: Քանի որ ձևական պահանջների պահպանումը հանգեցնում է ժամկետների ձգձգմանը, ինչը որ միջնորդություն բերողներն էլ հետապնդում են»:

Դատավոր

«Եթե կարգավորումները ավելի հստակ լինեն, դատավորին ավելի լայն լիազորություն տրվի, ավելի լավ կլինի: Մենք իհարկե կիրառում ենք չարաշահման հիմքով արձանագրային որոշմամբ մերժելը, բայց դեռ պրակտիկան հստակ չէ, չգիտենք, թե արդյոք Վերաքննիչ դատարանը կամ Վճռաբեկը այդ հիմքով չի բեկանի, մեր այսքան տարվա աշխատանքը չեղարկվի դատավարական խախտման հիմքով»:

Դատավոր

Ինչպես տեսնում ենք, Դատարանի դիրքորոշումը միանշանակ է՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով հայցային վաղեմության ընդհանուր ժամկետները և կարգը կիրառելի չեն: Նշված գործերով գործում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 8-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության հատուկ ժամկետ՝ հատուկ հաշվարկի եղանակով, այն է՝ դատախազությունը հայց պետք է ներկայացնի ուսումնասիրությունը սկսելու օրվանից երեք տարվա (նախկին խմբագրության կիրառման դեպքում՝ երկու տարվա) ընթացքում: Իսկ նշված ժամկետի հաշվարկման համար կիրառելի են ընդհանուր կանոններ, այսինքն՝ ժամկետը հաշվարկվում է ուսումնասիրությունը նախաձեռնելու հաջորդ օրվանից:

➤ *Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ուսումնասիրվող ժամանակահատվածի շարունակաբար երկարումը.*

Դիտարկված գործերով պատասխանող կողմը մտահոգություն է հայտնել, որ Օրենքի ընդունումից հետո ուսումնասիրվող ժամանակահատվածի թույլատրելի ժամկետը շարունակաբար երկարում է, ինչը որոշակիության տեսանկյունից գույքի սեփականատիրոջ վրա անհամաչափ բեռ է դնում: Նման մտահոգություն արտահայտել է նաև հարցված փաստաբաններից մեկը: Ինչպես արդեն նշվել է, այս հարցին անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովը իր Կարծիքում՝ նշելով, որ անհրաժեշտ է հստակեցնել ժամկետի տևողությունը²⁷⁴:

Նշված խնդրին անդրադարձել է Սահմանադրական դատարանը: ՍԴ-ն նշել է, որ Օրենքով գույքի բռնագանձման թույլատրելիության ժամանակային սահմանափակում չի նախատեսվում, և նկատել է, որ նման վաղեմության ժամկետ նախատեսված չէ նաև Օրենքի ուժի մեջ մտնելու մեկնակետից կամ հետագա որևէ պահից, որի արդյունքում Օրենքի գործողության ընթացքում շարունակաբար երկարելու է բռնագանձման ենթակա գույքի ձեռքբերման պահի և դրա առնչությամբ Օրենքով նախատեսված իրավական վարույթների միջև ընկած ժամանակահատվածը: ՍԴ-ն ընդգծել է նշված հարցին օրենսդրական կարգավորում տալու անհրաժեշտությունը (*տե՛ս ՍԴՈ-1776, կետեր 168-169*)²⁷⁵:

Ուսումնասիրվող ժամկետի տևողության և հետադարձ ուժի կիրառման հարցերին անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը: Այսպես, Եվրոպական դատարանը նշել է, որ թեև ընդունելի է տարածել բռնագանձումը օրենքի ընդունումից առաջ ձեռքբերված գույքի վրա, քանի որ խոսքը գնում է շարունակվող հարաբերությունների վրա, այնուամենայնիվ, հետադարձության չափազանց երկար ժամկետի սահմանումը

²⁷⁴ Venice Commission, CDL-AD(2022)048.

²⁷⁵ ՍԴ-ն միևնույն ժամանակ նշել է. «...բռնագանձումը միայն պաշտոնավարման պահից հետո ձեռք բերված համապատասխան գույքի վրա տարածվել ինքնին սահմանափակում է հնարավոր կամայականությունների պատուհանը՝ կապված նրա հետ, որ պաշտոնատար անձի՝ բռնագանձման ենթակա գույքի շրջանակը կարող է սահմանափակվել դատախազի հայեցողությամբ՝ կախված ուսումնասիրվող ժամանակահատվածի վերաբերյալ վերջինիս որոշումից»:

չափազանց դժվարեցնում է պատասխանողի համար գույքի օրինական ծագումը և օրինական եկամուտների առկայությունն ապացուցելը²⁷⁶:

Իր կարծիքներից մեկում Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ որոշ ԵՄ անդամ պետություններում սահմանվել է այն առավելագույն ժամանակահատվածը, որի ընթացքում կարող է քննարկվել գույքի հանցավոր ծագում ունենալու հանգամանքը: Օրինակ՝ Բելգիայում, Հունգարիայում, Պորտուգալիայում և Ռումանիայում այդ ժամկետը մեղադրանք ներկայացնելուն նախորդող հինգ տարին է, Կիպրոսում և Իռլանդիայում՝ վեց տարի, Բուլղարիայում՝ 10 տարի, Չեխիայում, Լիտվայում և Լեհաստանում դա հանցագործության կատարմանը նախորդող հինգ տարին է և այլն²⁷⁷: Ուստի Վենետիկի հանձնաժողովը բազմիցս խորհուրդ է տվել պետություններին սահմանել հանցագործության կատարմանը նախորդող ժամանակահատվածի ֆիքսված հետադարձության ժամկետ, որի ընթացքում թույլատրելի կլինի ուսումնասիրել և բռնագանձել գույքը²⁷⁸:

Այսինքն՝ որպեսզի շարունակվող հարաբերությունների պայմաններում հետադարձությամբ ժամկետ նախատեսող ուսումնասիրվող ժամանակահատվածը համարվի համաչափ, այն պետք է ֆիքսված լինի, սեփականատիրոջ համար՝ կանխատեսելի և որոշակի, փոխկապված լինի ենթադրյալ հանցագործության կամ պաշտոնավարման մեկնարկի հետ, ուստի հարկավոր է սահմանել քննարկվող տեսակի գործերի համար հայցային վաղեմության հստակ կանոններ:

Դիտարկված գործերով պատասխանողները ստիպված են եղել հիմնավորել ընդհուպ մինչև 30 տարի առաջ ձեռք բերված գույքի օրինականությունը, որը, այլ հանգամանքների հետ համադրությամբ, այդ թվում՝ գույքի օրինական ծագումը հիմնավորելու պարտավորության համատեքստում հստակ վաղեմության ժամկետի, ինչպես նաև գույքի ձեռքբերման և վերագրվող արարքի կամ պաշտոնավարման հետ կապի բացակայության պայմաններում կարող է համարվել հետապնդող նպատակին անհամաչափ: Հատկապես երբ իրավասու մարմինը, ինչպես արձանագրել է Դատարանը, ոչ միշտ է պատշաճ ջանասիրությամբ ձեռք բերել մինչև ուսումնասիրվող ժամկետի մեկնարկը անձի գույքային դրության մասին տեղեկություններ:

Անհրաժեշտ է հստակեցնել ուսումնասիրվող ժամանակահատվածի սահմանման հիմքերը՝ այն կապելով վերագրվող արարքի կամ պաշտոնավարման մեկնարկի ժամկետների հետ, սահմանել այդ արարքին նախորդող ողջամիտ ժամանակահատված, որի ընթացքում ձեռքբերված գույքի վրա կարող է տարածվել ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը և դրանից բխող

²⁷⁶ ECtHR, Todorov and Others v. Bulgaria, § 202.

²⁷⁷ Venice Commission, CDL-AD(2024)024.

²⁷⁸ Venice Commission, CDL-REF(2024)017-e, On the Draft Amendments to the Law on Seizure and Confiscation of Material Benefit Derived from Criminal Activity, [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF\(2024\)017-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-REF(2024)017-e).

օրինականությունն ապացուցելու պարտավորությունը՝ ՄԻԵԴ դիրքորոշումներին համահունչ:

4.12 Երրորդ անձ ներգրավելու մասին միջնորդությունները

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել հայցվորի կամ պատասխանողի կողմում մինչև դատաքննության ավարտը:

Դիտարկված գործերից հրապարակայնորեն հասանելի տեղեկությունների համաձայն՝ 26 դիտարկված գործերից 17-ով (65%) ներգրավված է ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ նույն գործով ընդհուպ մինչև 29 երրորդ անձ: Երրորդ անձինք ներգրավվել են ինչպես կողմերի միջնորդությամբ (13 գործով), այնպես էլ անձի սեփական նախաձեռնությամբ (7 գործով), ընդ որում՝ որոշ դեպքերում նույն գործով երրորդ անձ ներգրավվել է և՛ կողմերի միջնորդությամբ, և սեփական նախաձեռնությամբ:

Հրապարակային հասանելի տեղեկությունների համաձայն՝ դիտարկված մեկ գործով մշտադիտարկման ժամանակահատվածում Դատարանը որոշել է ծանուցել մի շարք իրավաբանական անձանց՝ որպես երրորդ անձ ներգրավելու իրավունքի և իրականացման կարգի մասին²⁷⁹:

Մեկ գործով Դատարանը իր նախաձեռնությամբ մի իրավաբանական անձի հանել է գործին մասնակցող անձանց կազմից: Նախ կողմերի միջնորդությամբ Դատարանը ներգրավել էր այդ իրավաբանական անձին որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող, իսկ շուրջ երկու ասիս անց որոշել է հանել, քանի որ նշված ընկերության գործունեությունը դադարեցված է, և ընկերության՝ որպես գործին մասնակցող անձ, մնալու անհրաժեշտությունն այլևս բացակայում է, քանի որ սույն գործով կայացվող վճիռը չի կարող ազդել կողմերից մեկի հանդեպ նրա ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա և չի կարող հանգեցնել նման իրավունքների և պարտականությունների ծագմանը²⁸⁰:

Մեկ գործով որպես երրորդ անձ ներգրավվելու պատասխանող կողմի միջնորդությունը, որին առարկել է նաև հայցվոր կողմը, մերժվել է: Դատարանը գտել է, որ գործով առկա չէ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքը, քանի որ նշված ֆիզիկական և իրավաբանական անձինք չունեն գրանցված իրավունք բռնազանձման ենթակա գույքերից որևէ մեկի նկատմամբ, հետևաբար կայացվելիք վճիռը չի կարող ազդել կողմերից մեկի հանդեպ նրանց ունեցած

²⁷⁹ ՀԿԴ/0224/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040814477

²⁸⁰ ՀԿԴ/0100/02/23, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040813223

իրավունքների կամ պարտականությունների վրա կամ հանգեցնել նման իրավունքների և պարտականությունների ծագմանը²⁸¹:

Դիտարկված գործերով որպես երրորդ անձ ներգրավելու մասին միջնորդությունները ներկայացվել են հայցը վարույթ ընդունելուց անգամ մեկ տարի անց, և բոլորը, բացառությամբ մեկի, բավարարվել են: Մեկ գործով կողմի նախաձեռնությամբ որպես երրորդ անձ ներգրավելու միջնորդությունը մերժվել է²⁸²: Նշված միջնորդությունը ներկայացվել է հայցը վարույթ ընդունելուց ավելի քան մեկ տարի անց:

Հարցված դատավորները նշել են, որ երրորդ անձանց ներգրավելու տեսանկյունից հիմնական մարտահրավերը վերջիններիս ծանուցելն է, հատկապես օտարերկրյա պետություններում գտնվելու դեպքում: Նշված ծանուցումները թանկարժեք են, մինևույն ժամանակ՝ ոչ միշտ են հասցվում հասցեատիրոջը: Օրինակ՝ Սիրիա ուղարկվող ամեն ծանուցման արժեքը նշվել է 6,000 ՀՀ դրամ, մինևույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ այն, ըստ դատավորի՝ փաստացի չի առաքվել: Հաշվի առնելով գործի մասնակիցների քանակը՝ ծանուցելը ծախսատար է դառնում:

ՀՀ-ից դուրս գտնվող մասնակիցներին որոշ դատական կազմեր ծանուցում են ծանուցումներով, <https://azdarar.am> կայքի միջոցով՝ «Ֆիկցիան ապահովելով», հարցված որոշ դատավորներ նշել են նաև լրացուցիչ միջոցներով, իրենց ջանքերով, նիստի մասին տեղեկություն հայտնելու մասին, օրինակ՝ էլ.փոստի միջոցով:

Դիտարկված գործերով Դատարանը իր նախաձեռնությամբ ծանուցում էր այն անձանց, ում շահերն առնչվում են գործով՝ իրենց՝ որպես երրորդ անձ ներգրավելու իրավունքի մասին²⁸³:

«Երրորդ անձ ներգրավելու ինստիտուտը մեծ թերություն ունի: Մենք բոլորին ծանուցում ենք: Ենթադրենք, կա մի 20 հոգի երրորդ անձ: Չեն գալիս, չեն գալիս, բայց օրենքը նախատեսում է, որ կարող են դատաքննության փուլում էլ գալ: Ու հենց դատաքննության փուլում կարող է ասել՝ խնդրում եմ վերսկսեք գործով քննությունը: Մենք լուծումը գտել ենք՝ իր մասով ենք վերսկսում: Որպես հնարավոր լուծում կարող է նախատեսվել հստակ ժամկետի սահմանում ծանուցված անձի կողմից որպես երրորդ անձ ներգրավվելու համար, որը բաց թողնելու դեպքում համարվի, որ հրաժարվել է իրավունքի պաշտպանությունից»:

²⁸¹ ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

²⁸² ՀԿԴ/0013/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811533

²⁸³ Օրինակ՝ 27.05.2024 թվականին Դատարանը ծանուցում է ուղարկել Մի շարք իրավաբանական անձանց ՀԿԴ/0224/02/23 հակակոռուպցիոն քաղաքացիական գործով որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավվելու նրանց իրավունքի և դրա իրականացման կարգի վերաբերյալ: ՀԿԴ/0210/02/23 գործով 17.01.2024թ. սիստում նույնպես Դատարանը որոշել է ծանուցել այն անձանց, ում շահերին առնչվում է գործը»

➤ *Ուսումնասիրություն կատարելու հայցային վաղեմության սահմանման անհրաժեշտություն.*

Հայցային վաղեմության (հետադարձ ուսումնասիրության) ժամկետների վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել Վենետիկի հանձնաժողովը՝ Սահմանադրական դատարանի միջնորդության հիման վրա տրված կարծիքում: Մասնավորապես՝ ժամկետային սահմանափակումը, ըստ Հանձնաժողովի, կարևոր է ոչ միայն սեփականատիրոջ ակնկալիքների պաշտպանության տեսանկյունից, այլ տնտեսության կայունության ապահովման համար: Այնուհանդերձ, այդ առումով նույնպես առկա են կարևոր սկզբունքներ, որոնց նկատմամբ պետք է հետևողականություն ցուցաբերել:

Նախ, Հանձնաժողովը նշել է, որ սահմանված 10 տարի ժամկետից հետ գնալը, օրինակ 1991 թվական, բավականաչափ հստակեցված և արդարացված չէ, քանզի տպավորություն է ստեղծվում, որ բացառությունը հնարավոր է կիրառել ցանկացած դեպքում, երբ իրավասու մարմնի կողմից որոշ ապացույց է հայտնաբերվում: Ավելին, ժամկետի նման ընդլայնման դեպքում, հետադարձության հնարավորությունը ծայրահեղ երկար է ստացվում, ավելին, ժամանակի ընթացքում այդ ժամկետը ավելի է երկարելու: Հաջորդիվ, ըստ օրենքի նախատեսված կարգավորումների, հետադարձության ժամկետի ընտրությունը թողնված է իրավասու մարմնի հայեցողությանը, որը յուրաքանչյուր գործով առանձին քննարկման առարկա է, ինչը խնդրահարույց է, քանզի ժամկետի ընտրությունը հստակ ամրագրված չէ, այլ թողնված է մարմինների հայեցողությանը:

Ավելին, նախատեսված չեն նաև քաղաքացիական բռնագանձման վարույթի հարուցման հստակ ժամկետները, ինչը համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքին:

Եվրոպական դատարանը այս առնչությամբ դիրքորոշում է ընդունել, որ օրենքի ժամկետային լայն կիրառության սահմանները խնդրահարույց է անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Քանզի վաղ անցյալում տեղի ունեցած իրադարձությունների ապացուցման բեռ դնելը կարող է ոչ համաչափ լինել:

Ժամանակային կիրառության հանգամանքը օրենքի մտահոգիչ հարցերից մեկը կարող է լինել, ինչը, սակայն, որոշիչ չէ ողջ օրենքը և ընդունված մոդելը ոչ համաչափ համարելու համար: Ըստ այդմ՝ միայն այդ հանգամանքի հիման վրա հնարավոր չէ բարձրացնել ամբողջական օրենքի անհամաչափության հարցը: Սակայն կարևոր է հստակեցնել անհասանելի ապացույցների բովանդակությունն ու շրջանակը և բարեխիղճ սեփականատերերի պաշտպանությունը:

Ինչ վերաբերում է այն իրավական հարցին, թե արդյոք Օրենքի գործողությունը կարող է տարածվել Օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ ձեռքբերված գույքերի վրա, ապա Դատարանը գտել է, որ Օրենքով կարգավորված է դրա ուժի մեջ մտնելու պահի դրությամբ առկա (շարունակվող) իրավահարաբերություն, որը ենթադրում է օրենսդրական ընթացակարգերի և երաշխիքների պահպանմամբ, ընդհուպ իրավանորմերի հետադարձությամբ, «գույքի օգտագործման վերահսկում» պետության կողմից ապօրինի ծագմամբ գույքը շրջանառությունից դուրս բերելու համար՝ կանխելով անարդարացի հարստացումը: Դատարանը հանգել է հետևության, որ սույն գործի քննության նկատմամբ կիրառելի է Օրենքի 8-րդ հոդվածը, որով սահմանված ժամկետը տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածով նախատեսվածից:

ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

Պետությունը ունի հայեցողություն ընտրելու հանցավոր ճանապարհով և կոռուպցիայի միջոցով ձեռք բերված գույքի բռնագանձման մեխանիզմը, այնուամենայնիվ, այդ հայեցողությունը բացարձակ չէ: Գույքի բռնագանձումը սեփականության իրավունքի միջամտություն է, և որպեսզի միջամտությունը համապատասխանի ՀՀ Սահմանադրությանը և ՄԻԵԴ-ի կողմից սահմանված պահանջներին, այն պետք է լինի օրինական, իրավաչափ նպատակ հետապնդի և համաչափ լինի հետապնդվող նպատակին:

Վերաբերելի միջազգային կոնվենցիաներով և ՄԻԵԴ-ի դիրքորոշումների համաձայն՝ քաղաքացիական ընթացակարգով բռնագանձման դեպքում գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածն ընդունելի է համարվում, եթե դա համահունչ է պետության իրավական համակարգին: Այդ պարագայում ապացուցման բեռը տեղափոխվում է գույքի սեփականատիրոջ վրա: Մինչև ժամանակ պարտադիր է պետության առավելությունը հավասարակշռող արդյունավետ երաշխիքների առկայությունը և ապահովումը: Առանց մեղադրական դատավճռի բռնագանձման վերաբերյալ գործի շրջանակներում անհրաժեշտ է հիմնավոր կերպով ցույց տալ, որ նշված գույքը հնարավոր է, որ առաջանար հանցավոր գործունեությունից: Մյուս կողմից՝ պարտադիր է գույքի սեփականատիրոջ համար ստեղծված՝ գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը հերքելու և «անհասանելի ապացույցի» կամ բարեխիղճ ձեռքբերողի պաշտպանությունն առաջ քաշելու իրական հնարավորության առկայությունը:

Բացի այդ, հանրային շահի՝ հանցավորության դեմ պայքարի, և սեփականության իրավունքի միջամտության համաչափությունը ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է բռնագանձման ենթակա գույքի և հանցագործության միջև շոշափելի կապի և հարստության օրինականության հետադարձ ստուգման համար (ուսումնասիրվող ժամանակահատվածի) նախատեսված ժամանակային սահմանափակումների առկայությունը: Ինչպես ներկայացվել է զեկույցում, այլ

պետություններում գործում են հիմնականում 5-ից 10 տարի ժամկետային սահմանափակումներ:

Հրապարակված վճիռներում և որոշումներում Դատարանը, նախ, նշել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումն ըստ էության *in rem* վարույթ է, իսկ այլ գործերով, հղում անելով այլ երկրներում գործող առանց դատապարտման գույքի բռնագանձման մոդելների, եզրահանգել է, որ ՀՀ-ում գործում է չբացատրվող (անհիմն) հարստացման հիմքով բռնագանձման մոդելը՝ անկախ ուսումնասիրության հիմքից: Ծեշտադրվում է նշված մոդելին բնորոշ միայն մեկ գործոն՝ գույքի և օրինական եկամտի անհամապատասխանությունը, և չեն քննարկվում այդ մոդելին բնորոշ այլ առանձնահատկություններ:

Ներպետական իրավակարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ Օրենքում սահմանված որոշ դրույթներ և դրանց կիրառման պրակտիկան համահունչ չեն ոլորտը կարգավորող միջազգային կոնվենցիաներին և ՄԻԵԴ-ի կողմից արտահայտված դիրքորոշումներին: Գործող կարգավորումների կիրառումը, հատկապես առանց հանցագործության կամ պաշտոնավարման հետ կապը ցույց տալու գույքի բռնագանձումը, կարող է հանգեցնել սեփականության իրավունքի անհամաչափ միջամտության:

Ամենախնդրահարույց հարցերից է ապօրինի ծագում ունեցող գույքի սահմանումը և բռնագանձման պահանջ ներկայացնելը անձի մոտ օրինական եկամուտների և գույքի արժեքի միջև առկա անհամապատասխանության հիմքով՝ առանց վերագրվող հանցագործության կամ պաշտոնավարման հետ կապի: Դիտարկված բոլոր գործերով և՛ Գլխավոր դատախազությունը, և՛ Դատարանը միանշանակ դիրքորոշում են հայտնել նման կապը հիմնավորելու անհրաժեշտ չլինելու վերաբերյալ:

Ընդհանրական դիրքորոշումը հանգել է նրան, որ ուսումնասիրությունը սկսելու հիմք ծառայած քրեական վարույթը և դրա հիմքում ընկած հանցանքը պարզապես ազդակ են ուսումնասիրությունը սկսելու համար, և որևէ կերպ չեն կաշկանդում իրավասու մարմինն ուսումնասիրել միայն վերագրվող հանցանքի կատարման հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող գույքը, այլ ճանապարհ են բացում ուսումնասիրել անձի գույքային դրությունը Օրենքով թույլատրելի ողջ ժամանակահատվածում, այդ թվում՝ անկախ այդ ժամանակահատվածում պաշտոնատար անձ լինելու հանգամանքից, եթե պահպանվել են գույքի վերաբերյալ ապացույցներ: Նշված մոտեցումը համահունչ չէ ՄԻԵԴ-ի և ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներին:

Դատարանի գործունեության մեկնարկից շուրջ երկուսուկես տարի անց կայացված որոշմամբ՝ Սահմանադրական դատարանը հստակեցրել է, որ պաշտոնատար անձի վերաբերյալ (կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում) սկսված ուսումնասիրության դեպքում բռնագանձման պահանջը պետք է վերաբերի օրինական եկամուտներով չհիմնավորվող այն գույքի բռնագանձմանը, որը ձեռք է բերվել պատասխանողի կողմից իր պաշտոնի ստանձնումից հետո, իսկ

Օրենքով հետապնդվող՝ հանցավորության դեմ պայքարի նպատակի շրջանակում՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ պատասխանողին վերագրվող հանցանքին առնչվող այն գույքի բռնագանձումը, որի ձեռքբերման օրինականությունը չի հիմնավորվում վերջինիս կողմից:

Ուսումնասիրությունն սկսելու ոչ բոլոր հիմքերն են արտացոլում քրեական դատավարության միջոցով դատապարտման և դրանից բխող բռնագրավման անհնարինությունը: Այդպես, հիմքերից մեկով, որը Գլխավոր դատախազության կողմից առավել հաճախակի է կիրառվում ընդհանրապես, իսկ դիտարկված գործերի 100% դեպքերում է հիմք հանդիսացել, անձի քրեական վարույթում մեղադրյալի կարգավիճակ ունենալը ինքնին բավարար է ուսումնասիրությունն սկսելու համար՝ անկախ քրեական վարույթի արդյունքից: Պատասխանող կողմի բոլոր միջնորդությունները՝ քաղաքացիական գործով վարույթը կասեցնելու համար մինչև քրեական վարույթով եզրափակիչ դատական ակտ կայացնելը մերժվել են Դատարանի կողմից: Հիմնական տրամաբանությունն այն է, որ այս երկու վարույթը միմյանց հետ որևէ կապ չունեն: Իսկ քրեական գործով եզրափակիչ դատական ակտ կայացված չլինելու հանգամանքը որևէ կերպ չի բացառում քաղաքացիական գործի քննությունը շարունակելու հնարավորությունը: Հիշեցնենք, որ ոլորտային միջազգային կոնվենցիաներում շեշտադրվում է առանց մեղադրական դատավճռի բռնագանձման մեխանիզմի կիրառելությունը, եթե դատապարտելը հնարավոր չէ՝ հստակ սահմանված դեպքերում:

Դիտարկված գործերի քննության շրջանակներում կիրառվել է որոշ պետությունների իրավական համակարգերին բնորոշ, բայց ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ չնախատեսված հավանականությունների հավասարակշռում ապացուցման ստանդարտը, որը հիշատակվում է ՄԻԵԴ վճիռներում և Վենետիկի հանձնաժողովի կարծիքներում: Այս մոտեցումն ընդունելի է համարվել ոչ միայն Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի, այլև նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից:

Բացի այդ, Օրենքը չի սահմանում վերագրվող դեպքից հետո ուսումնասիրությունը սկսելու սահմանափակող որևէ ժամկետ, իսկ ուսումնասիրվող հնարավոր ժամկետը չափազանց երկար է: Արդյունքում գույքի ծագման վերաբերյալ բացատրություն տալու պարտականությունը անհամաչափ բեռ է դառնում գույքի սեփականատիրոջ կամ ուսումնասիրվող անձի համար, հատկապես ապացույցների անհասանելիության պայմաններում:

Օրենքը չի նախատեսում նաև ուսումնասիրվող ժամկետի տարբերակում՝ կախված ուսումնասիրության հիմքից, այն է՝ վերագրվող հանցագործության կատարման կամ պաշտոնավարման մեկնարկի:

Դատախազության կողմից սահմանվող ուսումնասիրվող ժամանակահատվածը հավասարապես չի կիրառվել բոլոր դեպքերում՝ մնալով Իրավասու մարմնի հայեցողությանը: Դիտարկված գործերով ամենավաղ ուսումնասիրվող

Ժամանակահատվածը սահմանվել է 1992 թվականից սկսած, առավելագույն ուսումնասիրվող ժամանակահատվածը կազմել է 30 տարի: Իսկ ուսումնասիրվող ժամկետը միջինում կազմել է 23 տարի՝ Օրենքով որպես հիմնական ժամկետ սահմանված 10 տարվա փոխարեն:

Ուսումնասիրության հատկապես վերջնական ժամանակահատվածի սահմանումը չի պայմանավորվել անձին վերագրվող հանցանքի կատարման կամ պաշտոնավարման մեկնարկի ժամկետով: Արդյունքում՝ ուսումնասիրվող ժամանակահատվածը բոլոր դեպքերում երկարացվել է՝ անկախ անձի պաշտոնավարման ժամկետից կամ վերագրվող արարքի կատարման պահից: Ստացվում է, որ Իրավասու մարմին՝ ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու հայեցողությունը իրացվում է ոչ թե որպես բացառություն, այլ՝ կանոն: Նշված մոտեցումը նույնպես փաստացի հակասում է Օրենքի սահմանադրականության վերաբերյալ որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը, և ըստ այդմ՝ համատեղելի չէ համաչափության սկզբունքի հետ:

Գործերի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ ուսումնասիրությունը ոչ միշտ է կատարվում սահմանված ուսումնասիրվող ժամկետի ժամանակահատվածի վերաբերյալ, այլ որոշ դեպքերում ներառում է դրանից առաջ ուսումնասիրվող անձի գույքային դրության վերաբերյալ հանգամանքներ և փաստեր: Մինևույն ժամանակ այդ ժամանակահատվածի սահմանումը որևէ կերպ չի կարգավորվում և փաստացի դատախազության հայեցողությամբ է որոշվում: Արդյունքում՝ ցուցաբերվել է ոչ միասնական մոտեցում և որոշ գործերով չեն ներառվել գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ: Արձանագրվել են դեպքեր, երբ դատախազությունը հաշվի չի առել անձի՝ մինչև ուսումնասիրվող ժամանակահատվածի մեկնարկը առկա եկամուտները և հնարավոր խնայողությունները: Դատարանի դիրքորոշման համաձայն՝ նման վերլուծություն պետք է կատարվի, քանի որ “գրոյական” բալանսով ուսումնասիրությունը սկսելու դեպքում կայացված եզրահանգումները՝ գույքը օրինական եկամուտներով ձեռք բերելու հնարավորության մասին կարող են սխալ լինել:

Պահանջի հետադարձության երկար ժամկետի կիրառման համատեքստում լուրջ խնդիր է եղել ապացույցների հասանելիությունը և դատախազության պատշաճ ջանասիրությունը՝ ի օգուտ պատասխանողի ապացույց ձեռքբերելը և հաշվարկներում ներառելը: Նման դեպքում պատասխանող կողմը ստիպված է եղել ապավինել վկաների ցուցմունքների և հայտարարությունների վրա, որոնք հաճախակի եղել են հակասական, այդ թվում՝ երկար ժամանակ անց տալու պատճառով: Դիտարկված 26 գործերից 14-ով (54%) ուսումնասիրվող ժամանակահատվածը ներառել է 1990-ական թվականները: Նշված գործերի համատեքստում ապացույցների հասանելիությունը (պահպանված չլինելը) եղել է խնդրահարույց:

Այս առումով կարևոր է Դատարանի դիրքորոշումն առ այն, որ երբ Իրավասու մարմինը ուսումնասիրության ժամկետի մեջ ներառում է ուսումնասիրությանը նախորդող տասը տարուց առավել երկար ժամանակահատված,

ուսումնասիրության շրջանակներում, մասնավորապես՝ ապացույցների հավաքման գործընթացում, անհրաժեշտ է դրսևորել ջանասիրության («due diligence») առավել բարձր աստիճան՝ հաշվի առնելով, որ ուսումնասիրությունը կարող է վերաբերել առավել քան 30 տարի առաջ ընկած ժամանակահատվածին, ինչն էլ կարող է ենթադրել պատասխանողի աշխատանքային կամ եկամուտ ենթադրող այլ գործունեության ոչ պատշաճ կամ ոչ ամբողջական փաստաթղթավորում, իրավասու պետական մարմիններում փաստաթղթերի չպահպանվածություն կամ ոչնչացում և այլն:

Օրենքի և քաղաքացիական օրենսդրության դիֆուսիվայի արդյունքում, երբ դատախազությունը որոշ դեպքերում դիտարկվում է որպես հատուկ հայցվոր, իսկ որոշ դեպքերում՝ ընդհանուր կարգավիճակ ունեցող հայցվոր, առաջացել են բազմաթիվ իրավական հարցադրումներ, այդ թվում՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելու, ներառյալ ուսումնասիրության ավարտից հետո ձեռք բերված տվյալների հիման վրա, վաղեմության ժամկետի կիրառման, հայցվորի տնօրինչական իրավունքի իրացման առումով և այլն:

Գլխավոր դատախազության և դրա առանձնացված ստորաբաժանման՝ ապօրինի գույքի բռնագանձման հայցով Հակակոռուպցիոն դատարան դիմելու լիազորություն չունենալու հարցը հանդիսացել է հիմնական խնդիրներից մեկը, որը այս խումբ գործերով բարձրացվել է պատասխանողների կողմից: Դիտարկված գործերով պատասխանող կողմը ներկայացրել է գործի քննությունը կարճելու միջնորդություն՝ վիճարկելով հայցվորի առանձնացված ստորաբաժանման իրավասությունը հանրային շահի պաշտպանություն իրականացնելու՝ պետական շահերի պաշտպանության լիազորության իրացման միջոցով: Իրավասությունը վիճարկող միջնորդությունները Դատարանի կողմից բոլոր դեպքերում մերժվել են: Դատարանը գտել է, որ նշված տեսակի հայց բերելու լիազորությունը սահմանված է օրենքով որպես պետական շահերի պաշտպանության տեսակ: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես եզրահանգել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու և նման որոշման կայացմանը հանգեցրած ուսումնասիրություններ անցկացնելու լիազորությունները բխում են Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասից:

Դատախազությունը օժտված է երեք տարի ժամկետով ուսումնասիրություն կատարելու համար, իսկ այդ ժամկետը շատ ավելի երկար է, քան ուսումնասիրված այլ եվրոպական պետություններում: Այնուամենայնիվ, դիտարկված գործերի զգալի մասով հայցը ներկայացնելուց հետո դատախազությունը բազմիցս փոփոխել է հայցի հիմքն ու առարկան և ներգրավել է նոր պատասխանող, որի մասին տվյալները առկա էին մինչև հայց հարուցելը, սակայն այդ անձը ուսումնասիրվող անձ չի հանդիսացել: Եթե որոշ դեպքերում դա օբյեկտիվ հանգամանքներով էր պայմանավորված, ապա այլ դեպքերում նման անհրաժեշտություն ծագել է անփութության պատճառով: Այնուամենայնիվ, դիտարկված բոլոր գործերով նման միջնորդությունները բավարարվել են՝ հղում անելով հայցվորի տնօրինչական իրավունքի իրացմանը՝ անկախ պատասխանողի հակափաստարկներից: Դատարանը ստուգել է օրենքով

սահմանված ձևական պահանջները և բովանդակային քննարկում չի իրականացրել: Ի թիվս այլնի, պատասխանողները հիմնականում պնդել են, որ Գլխավոր դատախազությունը պետք է կաշկանդված լինի ուսումնասիրության եզրահանգման մեջ նշված տվյալներով և Դատարանում հարուցած սկզբնական հայցապահանջով:

Դիտարկված գործերի զգալի մասով բերվել է նաև հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություններ: Միջնորդություններում նշված հիմքերը ներառել են ուսումնասիրության ժամկետի հաշվարկ՝ օրենքի փոփոխության լույսի ներքո, նոր պատասխանող ներգրավելու, հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հանգամանքները: Անկախ հիմքերից՝ բոլոր նման միջնորդությունները մերժվել են: Դատարանը հստակ դիրքորոշում է հայտնել, որ այս տեսակ գործերի դեպքում կիրառելի չէ որևէ այլ հայցային վաղեմության ժամկետ, բացառությամբ Օրենքով նշված ուսումնասիրությունը սկսելուց հետո եռամյա ժամկետը: Պահանջի ավելացումը Դատարանը դիտարկել է որպես նոր հայցապահանջ բերելը և այն քննարկել է այս ժամկետի լույսի ներքո:

Մեկ այլ խնդիր է եղել, մի կողմից, գործը ողջամիտ ժամկետում քննելու և մյուս կողմից՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքների իրացումն ապահովելու անհրաժեշտությունը, որի արդյունքում հաճախակի պատասխանող կողմի ուղղությամբ Դատարանի և հայցվոր կողմի կողմից հնչեցվել է գործը միտումնավոր ձգձգելու և իրավունքի չարաշահման մեղադրանք:

Վերը նշվածի լույսի ներքո կարելի է եզրահանգել, որ գործող օրենսդրական դաշտը պատշաճ կերպով չի կարգավորում առանձնահատկություններ ունեցող ապօրինի գույքի բռնագանձման վերաբերյալ գործերը, և կարևոր է վերադաս դատական ատյանների դիրքորոշումների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրական փոփոխությունների միջոցով համապատասխանեցնել կիրառելի կանոնները գործի բնույթին և միջազգային չափանիշներին:

Պրակտիայի ուսումնասիրության տեսանկյունից առանձին խնդիր է դատական ակտերի չիրապարակումը, հատկապես նախադեպային նշանակություն ունեցող որոշումների: Ներկայումս դռնափակության պայմաններում անցկացված անգամ մեկ նիստի դեպքում եզրափակիչ դատական ակտի ողջ տեքստը չի հրապարակվում, այլ միայն դրա եզրափակիչ մասը: Հաշվի առնելով այս ինստիտուտի նոր լինելը, վերը նշված արձանագրված խնդիրները և դատական պրակտիկայում դրանց լուծում տալու կարևորությունը՝ անհրաժեշտ է նոր լուծում մշակել եզրափակիչ դատական ակտերի հրապարակման առումով՝ ապահովելով արդարացի հավասարակշռում օրենքով պահպանվող տվյալների պաշտպանությունը ապահովելու և դատական ակտերում արձանագրված դիրքորոշումները հրապարակայնացնելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենսդրական փոփոխություններ՝

1. Վերանայել ՀՀ քաղաքացիական դատավարարության օրենսգրքի կարգավորումները՝ արձագանքելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերով դատական պրակտիկայում արձանագրված խնդիրներին՝ միջազգային չափանիշներին համահունչ.
2. Օրենքում հստակեցնել բռնագանձման ենթակա գույքի և անձին վերագրվող հանցագործության միջև կամ պաշտոնավարման ժամանակահատվածի հետ կապի առկայության անհրաժեշտությունը՝ Սահմանադրական դատարանի որոշմանը համահունչ.
3. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով օրենսդրությամբ հստակեցնել ապացուցման պարտականության բաշխման կիրառելի կանոնները.
4. Օրենքով սահմանել ուսումնասիրվող ժամանակահատվածի ողջամիտ սահմանափակումներ՝ բացառելով դատախազության հայցեցողությամբ հետադարձ երկարացման հնարավորությունը՝ Սահմանադրական դատարանի դիրքորոշմանը և միջազգային չափանիշներին համահունչ.
5. Հստակեցնել մինչև ուսումնասիրվող ժամանակահատվածի մեկնարկը առկա տեղեկությունների ուսումնասիրության, վերլուծության և օգտագործման կանոնները՝ բացառելու դրանց կիրառման նկատմամբ դատախազության հայցեցողական մոտեցումը.
6. Կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ ապահովելու ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով դատական ակտերի ամբողջական հրապարակումը՝ միաժամանակ երաշխավորելով օրենքով պահպանվող տվյալների գաղտնիության պահպանումը:

Դատական իշխանության՝

7. Ապահովել միջանկյալ դատական ակտերի հրապարակման միասնական պրակտիկա,
8. Բարելավել Հակակոռուպցիոն դատարանի շենքային պայմանները՝ ապահովելով բավարար թվով դատական դահլիճների առկայություն:
9. Վերանայել և բարձրացնել դատական կազմի աշխատակիցների վարձատրության չափը: